

A. BEKARYAN

ԲԱՅՐՈՆԸ


le Gruy Sprudelwässerchen

BYRON

and Armenian Reality

"... whatever may have been their destiny – and it has been bitter – whatever it may be in future, their country must ever be one of the most interesting on the globe; and perhaps their language only requires to be more studied to become more attractive".

Lord Byron





FUNDAÇÃO CALOUSTE GULBENKIAN

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ
ԳԱԼՈՒՄՏ ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ

ԱՆԱՀԻՏ ԲԵՔԱՐՅԱՆ

ԲԱՅՐՈՆԸ
ԵՎ
ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

[Հայերեն և անգլերեն]

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2013

ARMENIAN SERIES
CALOUSTE GULBENKIAN FOUNDATION

ANAHIT BEKARYAN

**BYRON
AND
THE ARMENIAN REALITY**

[In Armenian and English]

YEREVAN
YSU PRESS
2013

ՀՏԴ 820/89.0

ԳՄԴ 83.3

Բ 590

*Հրատարակության է երաշխավորել
ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի
գիտական խորհուրդը*

Պատասխանատու խմբագիր՝

բան. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր ԱՐՇԱԿ ՄԱՂՈՅԱՆ,

Գրախոսներ՝

բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր ՀԵՆՐԻԿ ԷՂՈՅԱՆ

բան. գիտ. թեկնածու, դոցենտ ԼԻԼԻԹ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Բեքարյան Անահիտ

Բ 590 Բայրոնը և հայ իրականությունը [հայերեն և անգլերեն] / Ա. Բեքարյան.- Եր.: ԵՊՀ հրատ., 2013.- 404 էջ + 4 էջ ներդիր:

Գրքում ներկայացվում են Բայրոնի և Մխիթարյանների առնչությունները, նրանց գիտական համագործակցությունը, ինչպես նաև Բայրոնի դրսևորումը հայ գրականության մեջ: Հանգամանորեն քննվում են Բայրոնի հայագիտական ուսումնասիրություններին, նրա և Մխիթարյանների առնչություններին վերաբերող օտարազգի հեղինակների նյութերը:

Հավելվածներում բերվում են հատվածներ Բայրոնի նամակներից, Թոմաս Մուրի *Լորդ Բայրոնի կյանքը, նամակները և օրագրերը* գրքից, *Հայերեն-անգլերեն քերականության* ձեռնարկի համար Բայրոնի գրած առաջաբանը և հայերենից կատարած նրա թարգմանությունները:

Գրքում զետեղված են մի շարք նկարների վերարտադրություններ, լուսանկարների, գրքերի տիտղոսաթերթերի, Բայրոնի հայերեն ձեռագրի և հայերեն ստորագրության պատճեններ:

Հասցեագրված է հայագետներին, բանասերներին, ասպիրանտներին, ուսանողներին և ընթերցող լայն շրջաններին:

ՀՏԴ 820/89.0

ԳՄԴ 83.3

ISBN 978-5-8084-1809-7

© ԵՊՀ հրատարակչություն, 2013

© Բեքարյան Ա., 2013



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	7
ԳԼՈՒԽ I: ԲԱՅՐՈՆԸ ԵՎ ՎԵՆԵՏԻԿԻ ՄԽԻԹԱՐՅԱՆՆԵՐԸ	15
§ 1.1. Բայրոնը Ս. Ղազար կղզում	16
§ 1.2. Բայրոնի երկերը Վենետիկի Մխիթարյանների մամուլի էջերում	32
§ 1.3. Օտարազգի հեղինակները Բայրոնի և Մխիթարյանների առնչությունների մասին	51
ԳԼՈՒԽ II: ԲԱՅՐՈՆԻ «ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻՆ» ԵՎ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ 18-19-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ	81
§ 2.1. Բայրոնի «հայկական» նամականիմ	83
§ 2.2. Հայագիտության ծնավորումը և զարգացումը Եվրոպայում (ըստ Բայրոնի նամականիի)	94
§ 2.3. Բայրոնի հայագիտական ուսումնասիրությունները	113
ԳԼՈՒԽ III: ՀԱՅ ԳՐԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻՏՔԸ ԲԱՅՐՈՆԻ ՄԱՍԻՆ	121
§ 3.1. Ներբողներ Բայրոնին հայ բանաստեղծներից	123
§ 3.2. Հայ մամուլը Բայրոնի մասին	137
§ 3.3. Բայրոնիզմի արտացոլումը հայ գրականության մեջ	163
ԱՄՓՈՓՈՒՄ	177
ՀԱՎԵԼՎԱԾ I: ՀԱՏՎԱԾՆԵՐ ԲԱՅՐՈՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ	183
ՀԱՎԵԼՎԱԾ II: [ՈՒՈՋԱԲԱՆ՝ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՅԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ]	189

ՀԱՎԵԼՎԱԾ III: ՀԱՅՎԱԾՆԵՐ Թ. ՄՈՒՐԻ «ԼՈՐԴ ԲԱՅՐՈՆՆԻ ԿՅԱՆՔԸ, ՆԱՄԱԿՆԵՐԸ ԵՎ ՕՐԱԳՐԵՐԸ» ԳՐՔԻՑ	191
1. Ծանոթագրություն՝ 31 մարտի 1817 թվակիր նամակի.....	191
2. Թ. Մուրի մեջքերումը կոմսուհի Իզաբելա Ալբրիցիի «Դիմանկարներ» գրքից	192
3. Ծանոթագրություն՝ 17 մայիսի 1823 թվակիր նամակի.....	192
ՀԱՎԵԼՎԱԾ IV: ԲԱՅՐՈՆՆԻ ԹԱՐԳԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՆԻՑ	193
1. Հատվածներ Մովսես Խորենացու <i>Հայոց պատմությունից</i>	193
2. Հատվածներ Ներսես Լամբրոնացու <i>Ատենաբանությունից</i>	193
3. Ս. Պողոսի նամակները կորնթացիներին	193
4. Հատվածներ Ղ. Ինճիճյանի <i>Ամարանոց Բիւզանդեան</i> պոեմից	193
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	194
ԱՆՎԱՆԱՑԱՆԿ	208

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անգլիացի մեծ բանաստեղծ Ջորջ Գորդոն Բայրոնը (1788-1824), դեռևս պատանեկան տարիներին, մինչև իր առաջին ճանապարհորդությունը (1809-1811), մեծ հետաքրքրություն է ցուցաբերել արևելյան ժողովուրդների պատմության, գրականության ու ավանդույթների նկատմամբ: Նա անգլերեն և ֆրանսերեն շատ ստեղծագործություններ է կարդացել Արևելքի մասին՝ օգտվելով ինչպես իր անձնական գրադարանում եղած հայտնի ճանապարհորդների գրքերից, այնպես էլ այն ժամանակվա մի շարք հանդեսներում արևելյան երկրների մասին տեղ գտած բազմաբնույթ նյութերից: Մեր կարծիքով, դեռևս մինչև իր առաջին ճանապարհորդությունը, Բայրոնն ամենայն հավանականությամբ որոշ տեղեկություններ ունեցել է նաև հայերի ու հայոց պատմության մասին, իսկ երկրորդ ճանապարհորդության ընթացքում արդեն անմիջապես առնչվել է հայ մշակութային գործիչների հետ:

1816-ի աշնանը Վենետիկում տեղի է ունենում Բայրոնի առնչությունը հայ իրականության հետ՝ Ս. Ղազար կղզում հանգրվանած Մխիթարյան միաբանության եկեղեցական-մտավորականների միջոցով: Բայրոնի և Մխիթարյանների առնչություններին իրենց աշխատություններում բազմիցս անդրադարձել են ինչպես հայ, այնպես էլ օտարազգի գրողներ և բանասերներ (Յ. Ավգերյան, Ղ. Տայան, Ե. Փեչիկյան, Ռ. Որբերյան, Է. Պետրոսյան, Խ. Դաշտենց, Թ. Մուր, Գ. Շրումպֆ, Ա. Մորուա, Զ. Ջեֆրսոն, Զ. Օ'Բրայեն, Ս. Գրեգորի, Լ. Մարշանդ, Ա. Վինոգրադով, հայր և որդի Վեսելովսկիներ և շատ ուրիշներ):

Բայրոնի՝ իր դարաշրջանի ամենապայծառ դեմքերից մեկի, երկարատև «ինքնական աքսորը» դարձավ նրա նամակներ գրելու շարժառիթը: Բայրոնի հարուստ նամականին անգնահատելի արժեք է ներկայացնում՝ դարաշրջանի գրական-հասարակական կյանքի արտացոլման առումով: Գրական այդ հուշարձանը խոր հետք թողեց եվրոպական գրականության մեջ՝ ընդլայնելով ժամանակակիցների պատկերացումները բանաստեղծի անձի և ստեղծագործական մտահղացումների վերաբերյալ: Կարդալով Բայրոնի նամակները և օրագրերը՝ կարելի է հետևել նրա հասարակական, քաղաքական, գեղագիտական, փիլիսոփայական ու գրական հայացքների ձևավորման ու զարգացման ընթաց-

քին, բազմաթիվ հավաստի տեղեկություններ ստանալ 18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին Արևմտյան Եվրոպայի հասարակական, քաղաքական ու գրական կյանքի վերաբերյալ: Բայրոնի նամակներն ու օրագրերը, որոնք սքանչելիորեն զուգակցում են իրենց մեջ պատմական և գրական հուշարձանի բոլոր արժանիքներն ու բարենասնությունները, լայն հնարավորություն են ընձեռում խորամուխ լինելու բանաստեղծի անձնական կյանքի և ստեղծագործության ամենամվիրական գաղտնարանների մեջ:

Բայրոնի նամականու մեջ իրենց ուրույն տեղն ունեն հայերին և հայ մշակույթին վերաբերող էջերը: Դրանց մեջ արտացոլված են այն ջերմ սերն ու հարգանքը, որ տածել է համճարեղ բանաստեղծը հայ ժողովրդի և նրա հարուստ մշակույթի նկատմամբ: Հայ մշակույթին, պատմությանն ու լեզվին վերաբերող Բայրոնի նամակները (թվով՝ տասնչորս) ուղղված Թոմաս Մուրին և Ջոն Սըրրեին, գրվել են 1816-1821 թվականներին: Դժվար է գերազնահատել այդ նամակների մշակութային: Հիացմունք ու զարմանք են պատճառում Բայրոնի հետազոտությունների բազմազանությունն ու խորությունը:

1816-1818 թվականներին ապրելով Վենետիկում՝ Բայրոնը գրել է բազմաթիվ նամակներ, որոնցում տվել է վենետիկյան կյանքի վառ և մանրամասնություններով լի պատկերը, ներառյալ Վենետիկի Միսիթարյանների ծավալած գիտական ու լուսավորական գործունեության նկարագրությունը: Շփվելով հայ մշակույթի կարկառուն գործիչների հետ՝ Բայրոնը պատմությանն է թողել արժանահավատության ու նորության տեսակետից հազվագյուտ փաստեր պարունակող և իր տեսակի մեջ միակը հանդիսացող հարուստ նյութ Միսիթարյանների գործունեության վերաբերյալ: Մյուս կողմից, նրա «հայկական» նամակներն ինքնին արժեքավոր են և վառ ապացույցն այն մեծ դերի, որ կատարել է անգլիացի բանաստեղծը հայ մշակույթն օտարներին ծանոթացնելու գործում: Մեր հետազոտությունները բերում են այն եզրահանգման, որ Բայրոնի նամակների միջոցով է անգլիախոս ընթերցողն առաջին անգամ ծանոթանում դեռևս 18-րդ դարի սկզբից ամբողջ Եվրոպայում մեծ համբավ ու հռչակ վայելած հայագիտական խոշոր կենտրոնի՝ Վենետիկի Միսիթարյանների գիտական ու լուսավորական աշխատանքին և գաղափար կազմում նրա կարկառուն դեմքերի՝ Հարություն Ավգերյանի, Ազոնց Գյուվերի, Սարգիս Թեոդորյանի, Սուքիաս Սոմալյանի և ուրիշների մասին:

Բայրոնի նամակներից որոշակի տեղեկություններ ենք քաղում նաև 18-19-րդ դարերում Արևմտյան Եվրոպայում (հատկապես Անգլիայում և

Ֆրանսիայում) հայագիտության ձևավորման ու զարգացման պատմության առանձին դրվագների վերաբերյալ: Բայրոնը, զովեստով խոսելով Միսիթարյանների ծավալած գործունեության մասին, նշում է, որ «նրանք այստեղ ներկայացնում են մի շատ հարգելի և ուսումնասեր միաբանություն, և դեռ Բոնապարտի օրոք ֆրանսիացի մի քանի գիտնականներ մեծ եռանդով ձեռնամուխ են եղել նրանց լեզվի ուսումնասիրությանը»¹: Այդ «մի քանի գիտնականներից» առաջին հերթին կարելի է առանձնացնել «պարագլուխն արեւելագիտաց»² Սեն-Մարտենին, բժշկագիտության դոկտոր Ս. Բելոյին և Լը Վայան դը Ֆլորիվալին, ովքեր հետագայում դարձել են անվանի հայագետներ և հայագիտության վերաբերյալ ունեն մի շարք աշխատություններ: Հայերին վերաբերող Բայրոնի նամակները բացառիկ կարևոր նշանակություն ունեն, քանի որ իրենց տեսակի մեջ միակն են նորության ու արժանահավատության առումով և պարունակում են հավաստի տեղեկություններ ու փաստեր ինչպես Միսիթարյանների գրական ու լուսավորական գործունեության, այնպես էլ եվրոպացի գիտնականների հայագիտական ուսումնասիրությունների վերաբերյալ: Այդ նամակների ուսումնասիրությունը թույլ է տալիս նոր և արժեքավոր տեղեկություններ ձեռք բերել 18-19-րդ դարերի հայ-եվրոպական գրական կապերի մասին:

Հայ-անգլիական գրական առնչությունների պատմության մեջ նշանակալի տեղ են գրավում նաև հայագիտության ասպարեզում Բայրոնի կատարած ուսումնասիրությունները: 1817-ին Հարություն Ավգերյանն ու Բայրոնը միացյալ ջանքերով հրատարակում են *Անգլերեն-հայերեն քերականության* ձեռնարկը՝ հայերի օգտագործման համար, իսկ 1819-ին՝ ձեռնամուխ լինում *Հայերեն-անգլերեն քերականության* ձեռնարկի հրատարակմանը՝ անգլիախոս ուսանողության համար: Բայրոնը կատարել է նաև թարգմանություններ հայ մատենագրությունից (հատվածներ Մովսես Խորենացու *Հայոց պատմությունից*, Ներսես Լամբրոնացու *Ատենաբանութիւնից*, Ս. Պողոսի՝ կորնթացիներին ուղղված երկու առաքելական թղթերը, որոնց բնագիրը չի պահպանվել, իսկ թարգմանությունը հայտնի է եղել միայն հայ մատենագրության մեջ, և այլն):

Բայրոնի Ս. Ղազար կղզում ունեցած հանդիպումներն օժանդակեցին, որպեսզի հայ մտավորականությունը շատ վաղ, սկսած դեռևս

¹ Th. Moore, *The Life, Letters and Journals of Lord Byron*, London, John Murray, 1908, p. 336.

² Գ. Շրումպֆ, *Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան Յարենմուտս (ԺԴ-ԺԹ դար)*, թարգմ. և լրաց. Գ. Զարբանալյանի, Վենետիկ, Միսիթարեան տպարան, 1895, էջ 172:

19-րդ դարի սկզբից ծանոթանա Կոստանդնուպոլսի, Ջնյունիայի, Մոսկվայի, Թիֆլիսի, Վենետիկի, Վիեննայի և հայ մշակութային այլ կենտրոններում լույս տեսնող բազմաթիվ օտարալեզու պարբերականներում բանաստեղծի մասին տեղ գտած հոդվածներին, ինչպես նաև նրա ստեղծագործություններին: Բայրոնի ստեղծագործությունների հայերեն թարգմանությունները և նրա մասին հայերեն գրված հոդվածները հրատարակման առումով նույնպես ունեն լայն աշխարհագրություն՝ Յնդկաստան (Կալկաթա), Ռուսաստան (Մոսկվա, Ս. Պետերբուրգ, Ռոստով), Իտալիա (Վենետիկ), Ավստրիա (Վիեննա), Վրաստան (Թիֆլիս), Թուրքիա (Կ. Պոլիս), Ադրբեջան (Բաքու, Շամախի), Պարսկաստան (Թեհրան), Չայնաստան և այլուր, որտեղ որ գործել են հայ մշակութային կենտրոններ:

Նշենք, որ շատ հայ բանաստեղծներ բազմաթիվ սրտառուչ տողեր են նվիրել հայ ժողովրդի անկեղծ բարեկամ Բայրոնին, որոնց միջոցով բնորոշել են ազատության համար մարտնչող Բայրոն-մարտիկին, ինչպես նաև հայոց լեզուն, հայ գրականությունն ու մշակույթն ուսումնասիրող մեծ անհատին՝ տալով նրա խռովահույզ հոգու, խոհերի և պոռթկումների իրական նկարագիրը: Իսկ հայ գրական-հասարակական միտքը Բայրոնին և նրա ստեղծագործություններին անդրադարձել է սկսած դեռևս XIX դարի առաջին կեսից: Առ այսօր հայ մամուլում (թե՛ պարբերական, թե՛ առանձին ժողովածուներում), առանձնապես Մխիթարյանների մամուլում, զետեղվել են բազմաթիվ հոդվածներ Բայրոնի և նրա ստեղծագործությունների մասին: Կան նաև մենագրություններ: Բայրոնին, ում ստեղծագործությունները հարուստ ու բազմազան արձագանք են ստացել հայ գրական կյանքում և առ այսօր շարունակում են հուզել հայ ընթերցողին, որպես բարձր արվեստի կերտողի՝ անդրադարձել են նաև հայ նկարիչները (Մկրտիչ Ճիվանյան, Հովհաննես Այվազովսկի):

Ընդհանրապես, 19-րդ դարի Եվրոպայի բանաստեղծներից ոչ մեկն իր ժամանակակիցների վրա չի ունեցել այնպիսի մեծ ազդեցություն, ինչպես Բայրոնը: 19-րդ դարում բայրոնիզմը որպես մի հզոր ուժ՝ ազատության, կենսասիրության, անհոգության ու սիրո գովքով՝ իր ոլորտի մեջ էր ներառել Արևմուտքի և Արևելքի տարբեր լեզուներով ստեղծագործող բանաստեղծներին (Ալֆրեդ դը Մյուսե, Հայնրիխ Հայնե, Ալեքսանդր Պուշկին, Միխայիլ Լերմոնտով, Ադամ Միցկևիչ, Շանդոր Պետեֆի և ուրիշներ), ինչպես նաև արվեստագետներին (Էժեն Դելակրուա, Դոմենիկո Մորելլի, Ռոբերտ Շուման, Պյոտր Չայկովսկի, Հեկտոր Լուի Բերլիոզ և ուրիշներ): Հատկանշական է, որ բայրոնիզմը հայ գրականության մեջ նույնպես ներթափանցել, տարածվել և զարգացել է անընդ-

հատորեն՝ տարիների, տասնամյակների ընթացքում՝ հարստանալով, խորանալով և ընդգրկելով հայ բանաստեղծների նորանոր սերունդներ ու անուններ՝ Ղևոնդ Ալիշան, Սմբատ Շահագիզ, Միքայել Նալբանդյան, Ռուբեն Որբեյան, Յովհաննես Թումանյան, Ավետիք Իսահակյան, Վահան Տերյան, Սիամանթո, Դանիել Վարուժան, Ռուբեն Սևակ, Եղիշե Չարենց, Հրաչյա Յովհաննիսյան, Պարույր Սևակ, Վահագն Դավթյան և շատ ուրիշներ, որոնք այս կամ այն չափով կրել են Բայրոնի անձի և ստեղծագործության ազդեցությունը, ինչպես նաև ունեցել բազմաթիվ նմանություններ և ընդհանրություններ Բայրոնի կյանքի և ստեղծագործությունների հետ:

Սույն աշխատանքի **նպատակն է՝**

- քննել Բայրոնի և Մխիթարյանների առնչությունների առանձին դրվագներ՝ ներառյալ Մխիթարյանների կողմից հրատարակված Բայրոնի երկերը.
- վերլուծել օտարազգի հեղինակների այն աշխատությունները, որոնք վերաբերում են Բայրոնի և Մխիթարյանների առնչություններին.
- քննել Բայրոնի «հայկական» նամականին և դրա հիման վրա բացահայտել 18-19-րդ դարերում Արևմտյան Եվրոպայում (հատկապես Անգլիայում և Ֆրանսիայում) հայագիտության ձևավորման ու զարգացման պատմության առանձին դրվագներ.
- լուսաբանել հայագիտության ասպարեզում Բայրոնի կատարած ուսումնասիրությունները.
- լուսաբանել հայ մամուլում Բայրոնի և նրա ստեղծագործությունների մասին տեղ գտած հոդվածները, ներբողները և ուսումնասիրությունները.
- քննել հայ գրականության մեջ բայրոնիզմի արտացոլման առանձին դրվագներ և զուգահեռներ անցկացնել Բայրոնի և որոշ հայ բանաստեղծների ստեղծագործությունների միջև.
- բացահայտել հայ մամուլում Բայրոնի մասին տպագրված և հաճախ կրկնվող անճշտությունները, սխալներն ու վրիպումները և, օգտվելով միայն սկզբնաղբյուրներից, ուղղել դրանք:

Հետազոտված **փաստական նյութը** Բայրոնի և նրա ստեղծագործությունների մասին հայ մամուլում (ինչպես առանձին գրքերով ու ժողովածուներում, այնպես էլ պարբերական մամուլում) լույս տեսած ուսումնասիրություններն են, ինչպես նաև արտասահմանյան մամուլից

քաղված բազմաթիվ դրվագներ, որոնք առնչվում են հետազոտվող նյութին:

Շատ անգլիական բանաստեղծներ են թարգմանվել հայերեն, բայց, այնուամենայնիվ, Բայրոնը թերևս անգլիացի միակ բանաստեղծն է, որ, հայերի նկատմամբ ունեցած իր սիրո ու հարգանքի համար, միշտ հիշվում և արժանանում է բարձր գնահատականի հայ իրականության մեջ: Սակայն, ցավոք, մինչև այժմ գոյություն չունի Բայրոնի և հայ իրականության առնչությունների վերաբերյալ համապարփակ, ամբողջական գիտական հետազոտություն: Իսկ եղած հետազոտությունների մեծ մասն էլ կրում են սիրողական բնույթ և զերծ չեն առանձին անճշտություններից ու թերություններից: Մեր առջև դրված խնդիրը կայացել է հետևյալում. կատարել ընտրված թեմայի համակողմանի ուսումնասիրություն՝ հենվելով հիմնականում սկզբնաղբյուրների վրա: Այսպես, օրինակ, համեմատական վերլուծության միջոցով բացահայտվել է, որ Բայրոնի ստեղծագործությունը հայերեն առաջին անգամ տպագրվել է 1846-ին «Բազմավեպ» հանդեսում, որի էջերում հանդիպում ենք *Սուրբ Պետրոս ի Հռոմ* վերնագրով մի բանաստեղծության, որի ոչ հեղինակն է նշված, ոչ էլ թարգմանիչը: Սանրազնին ուսումնասիրությունից պարզվում է, որ այդ բանաստեղծությունն իրենից ներկայացնում է Բայրոնի *Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը* պոեմի չորրորդ նվագի 153-159 իննյակների հայերեն թարգմանությունը, որը կատարել է Ղ. Ալիշանը: 1858-ին «Բազմավեպում» լույս է տեսել մի հատված Բայրոնի *Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը* պոեմի չորրորդ նվագից (178-184 իննյակները)՝ *Առ Ովկեան* վերնագրով, որտեղ թարգմանիչը նույնպես չի նշված: Մեր պրպտումները բերում են այն համոզման, որ այդ թարգմանությունը նույնպես պատկանում է Ղ. Ալիշանին: Բացի դրանից, սույն աշխատանքում առաջին անգամ մանրազնին քննվել են օտարազգի հեղինակների աշխատություններում (ընդ որում, ոչ միայն գիտական, այլև գեղարվեստական գրականության մեջ) զետեղված՝ Բայրոնի հայագիտական ուսումնասիրություններին, նրա և Մխիթարյանների առնչություններին վերաբերող նյութերը: Առաջին անգամ հայ գրականագիտության մեջ համատեքստային, համեմատական, գրականագիտական և մատենագիտական վերլուծության, ինչպես նաև համակարգման մեթոդների կիրառմամբ բազմակողմանի, ամբողջականորեն քննվել և ամփոփ ու համապարփակ ձևով ներկայացվել են Բայրոնի և Մխիթարյանների առնչությունները, նրանց գիտական համագործակցությունը, ինչպես նաև բայրոնիզմի դրսևորումը հայ գրականության մեջ: Աշխատանքի արդյունքում առաջադրված շատ հարցադրումներ

կարող են կարևոր դեր խաղալ հայ-եվրոպական (առաջին հերթին՝ հայ-անգլիական և հայ-ֆրանսիական) գրական կապերի ոլորտում հետագա ուսումնասիրությունների զարգացման համար: Բացի դրանից, աշխատանքում քննվել և վեր են հանվել ուսումնասիրվող նյութի վերաբերյալ հայ գրականագիտության մեջ տեղ գտած և բազմիցս կրկնվող թերությունները, անճշտություններն ու սխալները, որոնց ուղղումը, հուսով ենք, կբացառի հետագայում դրանց կրկնումը և թյուրիմացություն չի առաջացնի ընթերցողների մոտ:



Ս. Ղազար. Լորդ Բայրոնին նվիրված հուշաքար
St.Lazarus: A memorial plaque to Lord Byron

ԳԼՈՒԽ I

ԲԱՅՐՈՆԸ ԵՎ ՎԵՆԵՏԻԿԻ ՄԽԻԹԱՐՅԱՆՆԵՐԸ

«...այդ դարը (18-րդ դարի կեսից մինչև 19-րդ դարի կեսը - Ա. Բ.) մեր մտավոր զարգացման պատմության մեջ կարելի է և պետք է անվանել **Մխիթարյան դար**»:

Լեո³

«...մի վիթխարի անհատականություն (խոսքը Բայրոնի մասին է - Ա. Բ.), որի նմանը դեռևս չի եղել և դժվար թե ապագայում կրկնվի»:

Գյոթե⁴

Չորջ Գորդոն Բայրոնը, դեռևս պատանեկան տարիներին, արդեն ծանոթ է եղել *Յազար ու մի գիշեր* արաբական հեքիաթների Ա. Գալանի⁵ ֆրանսերեն թարգմանությանը, Մոնտեսքյուի⁶ *Պարսկական նամակների*ն, Ու. Բեկֆորդի⁷ *Վատեկին*, Ու. Ջոնսի⁸ արևելագիտական ուսումնա-

³ Լեո, *Երկերի ժողովածու*, տասը հատորով, երրորդ հատոր, գիրք երկրորդ, «Հայաստան», Երևան, 1973, էջ 495:

⁴ Էքերման, *Չրույցներ Գյոթեի հետ. նրա կյանքի վերջին տարիներին. 1823-1832*, թարգմանությունը Հակոբ Վակոբյանի, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1975, էջ 23:

⁵ Գալան, Անտուան (Galland, Antoine, 1646-1715), ֆրանսիացի գիտնական, գրող: Միջնադարյան արաբական հուշարձան *Յազար ու մի գիշեր* հեքիաթների շարքը եվրոպային հայտնի է դարձել Ա. Գալանի ֆրանսերեն փոխադրությամբ (12 հատոր, 1704-1717), ըստ որի հետագայում կատարվել են ռուսերեն, անգլերեն, գերմաներեն առաջին թարգմանությունները:

⁶ Մոնտեսքյու (Montesquieu), Շառլ Լուի դը Սեկոնդա, բարոն դը Լա Բրեդ (Brède, 1689-1755), ֆրանսիացի լուսավորիչ, փիլիսոփա, իրավագետ, գրող: Որպես գրող ծանաչվել է *Պարսկական նամակներ* (1721) վեպով, որը 18-րդ դարին բնորոշ փիլիսոփայական ժանրի լավագույն ստեղծագործություններից է:

⁷ Բեկֆորդ, Ուիլյամ (Beckford, William, 1760-1844), անգլիացի գրող, գլխավոր ստեղծագործությունն է՝ *Վատեկ. արաբական հեքիաթ* ֆանտաստիկական պատմվածքը, որը գրել է 1782-ին ֆրանսերեն: Այն հրատարակվել է անգլերեն 1786-ին, իսկ բնագրով (ֆրանսերեն) 1787-ին:

⁸ Ջոնս, Ուիլյամ (Jones, William, 1746-1794), անգլիացի լեզվաբան և իրավագետ, որը համարվել է արևելյան ուսումնասիրությունների հայրը Բրիտանիայում: Նա ուսումնա-

սիրություններին ու թարգմանություններին, Է. Գիբոնի⁹ աշխատությանը և այլն:

Մեր կարծիքով, դեռևս մինչև իր առաջին ճանապարհորդությունը (1809-1811), Բայրոնն ամենայն հավանականությամբ որոշ տեղեկություններ ունեցել է հայերի և հայոց պատմության մասին, իսկ երկրորդ ճանապարհորդության ընթացքում արդեն անմիջապես առնչվել է հայ մշակութային գործիչների հետ: Սույն գլխում մենք կանդրադառնանք Բայրոնի և Մխիթարյանների առնչությունների առանձին դրվագներին, Մխիթարյանների կողմից Բայրոնի երկերի հրատարակություններին, ինչպես նաև օտարազգի հեղինակների այն աշխատություններին, որոնք վերաբերում են Բայրոնի և Մխիթարյանների առնչություններին:

§ 1.1. Բայրոնը Ս. Ղազար կղզում

Եթե Բայրոնի առաջին ճանապարհորդությունը հիմնականում Եվրոպայի արևելյան երկրների ժողովուրդների ավանդույթները, բարքերն ու սովորույթներն ուսումնասիրելու, իր կրթությունն ավարտելու և բարձր հասարակություն մուտք գործելու միտում ուներ, ապա երկրորդ ճանապարհորդությունը երկարատև, «ինքնակամ աքսոր» էր, քանի որ, ինչպես հայտնի է, արդեն իսկ մեծ ճանաչման ու համբավի տեր, բազմաթիվ բանաստեղծությունների և պոեմների¹⁰ հեղինակ Ջորջ Գորդոն Բայրոնն իր հայրենիքում անընդհատ ենթարկվելով հալածանքի ու վիրավորանքի՝ հանդուգն էպիգրամների և պառլամենտական ելույթների համար, խորապես դժգոհ իր միջավայրից, 1816-ի գարնանը հեռանում է Անգլիայից՝ այլևս չվերադառնալու որոշմամբ: Նույն թվականի հունիսին Բայրոնն այցելում է Շիլիոնի հռչակավոր դղյակ, իսկ հոկտեմբերի

սիրել է 28 լեզու (լատիներեն, հունարեն, եբրայերեն, արաբերեն, պարսկերեն, չինարեն և այլն)՝ մեծավ մասամբ ինքնուրույն:

⁹ Գիբոն, Էդուարդ (Gibbon, Edward, 1737-1794), անգլիացի պատմաբան: Հիմնական աշխատությունն է *Հռոմեական կայսրության անկման և կործանման պատմությունը* (1776-1788):

¹⁰ Այդ ժամանակ արդեն լույս էին տեսել բանաստեղծի *Պարապոթյան ժամեր* խորագիրը կրող բանաստեղծությունների ժողովածուն (1807), *Չայլդ Ֆարոլդի ուխտագնացությունը* պոեմի առաջին և երկրորդ նվագները (1812), *Անգլիական երգիչներ և շոտլանդական տեսաբաններ* (1809), *Գլավուր* (1813), *Ծովահենը* (1814), *Լարա* (1814) պոեմները և այլն:

սկզբին՝ Ջ. Յոքհաուզի¹¹ հետ Շվեյցարիայից մեկնում Իտալիա: Նախ այցելում է Միլան և Վերոնա, իսկ այնուհետև՝ Վենետիկ, որտեղ որոշում է ավելի երկար մնալ: «Վենետիկն ինձ դուր է գալիս այնքան, ինչքան սպասում էի, իսկ իմ սպասածը շատ էր: Սա այն վայրերից մեկն է, որը ես ճանաչել եմ առանց տեսնելու, և որը, Արևելքից հետո, ինձ միշտ ամենից շատ է կախարդել: Ես սիրում եմ նրա մակույկների թախծալից զվարթությունն ու ջրանցքների լուրջությունը»¹², - 1816-ի նոյեմբերի 25-ին գրում է Բայրոնը Ջ. Սըրրեին¹³: Հենց Վենետիկում, գրեթե իր ժամանումից անմիջապես հետո, տեղի է ունենում Բայրոնի առնչությունը հայ իրականության հետ՝ Մխիթարյան միաբանության եկեղեցական-մտավորականների միջոցով, որոնք հանգրվանել էին Վենետիկի մոտ գտնվող Ս. Ղազար կղզում: Ինչպես ինքն է նշում. «Երբ 1816 թվականին ժամանեցի Վենետիկ, ... ես նույնպես, շատ ճանապարհորդների նման, խիստ տարված էի Ս. Ղազար վանքի միաբանությամբ, որը միավորում է կղերական հաստատության բոլոր առավելությունները՝ առանց դրա մոլորություններից որևէ մեկի»¹⁴:

Մխիթարյան միաբանությունը (Մխիթարյաններ) հայ կրոնական (կաթոլիկ) և մշակութային կազմակերպություն է, որը հիմնադրել է հայ հասարակական, գիտական, մշակութային և եկեղեցական նշանավոր գործիչ Մխիթար Սեբաստացին (1676-1749) 1700-ին Կ. Պոլսում¹⁵: 1706-ին միաբանությունը տեղափոխվել է Մեթոն (Հունաստան), իսկ 1717-ից հաստատվել Վենետիկի մոտ գտնվող Ս. Ղազար կղզում,

¹¹ Յոքհաուզ, Ջոն Քեմ (1786-1869), անգլիացի գրականագետ և քաղաքագետ, Բայրոնի մտերիմ ընկերը: 1809-1810 թվականներին ճանապարհորդել է Բայրոնի հետ, հետագայում նրա հետ եղել է նաև Շվեյցարիայում և Իտալիայում:

¹² *The Letters of George Gordon, 6th Lord Byron*, selected by R. G. Howarth, with an Introduction by André Maurois, London-Toronto-New York, 1933, p. 167.

¹³ Սըրրե, Ջոն (1778-1843), Բայրոնի ստեղծագործությունների հրատարակիչը: Բայրոնը Սըրրեի հետ պահպանել է մշտական նամակագրություն՝ սկսած 1811-ից մինչև իր մահը:

¹⁴ Th. Moore, *The Life, Letters and Journals of Lord Byron*, John Murray, London, 1908, p. 337.

¹⁵ Մինչև վերջերս Մխիթարյան միաբանության հիմնադրման տարեթիվ համարվում էր 1701 թվականը (տե՛ս, օրինակ, Դ. Յովհաննես Վրդ. Թորոսեան, *Վարք Մխիթարյայ Աբբայի Սեբաստացույ*, Ս. Ղազար, Վենետիկ, 1901: - *Հայկական համառոտ հանրագիտարան*, չորս հատորով, հ. 3, Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, Երևան, 1999, էջ 739): Միայն XX դարի վերջերին, Մխիթարյան միաբանության մայրավանքի արխիվային փաստաթղթերի մանրագին ուսումնասիրության արդյունքում ճշտվեց միաբանության հիմնադրման տարեթիվը (դրա մասին ավելի մանրամասն տե՛ս Դ. Սերոբ Չամուրլեան, *Մխիթարեան միաբանութեան հիմնադրման թուականը եւ պարագաները*. «Քազմավեպ», 2001, թիւ 1-4, էջ 82-98), իսկ 2000-ին նշվեց հիմնադրման 300-ամյակը:

որտեղ և գործում է առ այսօր: Հետագայում, կանոնադրության փոփոխման կապակցությամբ ծագած վեճի պատճառով, միաբանների մի խումբ, թողնելով Վենետիկը, հաստատվեց նախ Տրիեստում (1773), իսկ այնուհետև՝ Վիեննայում (1811): Վերստին միավորվել են 2000-ին:

18-րդ դարում հայ մշակույթը, շնորհիվ Մխիթար աբբաիոր հիմնած հաստատության, վերելք է ապրում, և Վենետիկը դառնում է հայկական տպագրության կարևորագույն կենտրոն: «Վստահ կարելի է ասել, որ մի ամբողջ դար, մինչև XIX դարի կեսը, դա միակ հիմնարկությունն էր, որ լույս և գիտություն էր մատակարարում հայերին: Մի անօրինակ բեղմնավոր գրական գործունեությամբ ս. Ղազարի վանքը դարձավ մի երևույթ, որի նմանը չէ տեսել մեր պատմությունը: Հայերը շատ տեղեր էին աշխատում ծաղկեցնել մայրենի գրականությունը, բայց ոչ մի տեղ չկարողացան հավասարվել Վենետիկի հայ կրոնավորներին, որոնք երկար ժամանակ անհաղթելի և աննկուն տիտանների նման էին երևում ազգի աչքին»¹⁶, - գրում է հայ ականավոր պատմաբան և գրող Լեոն (Առաքել Բաբախանյան, 1860-1932) իր *Հայկական տպագրություն* աշխատության երկրորդ հատորում:

Հայագիտական այդ կենտրոնը տարիներ շարունակ եղել է մեր մշակույթի ու գրականության ավանդապահը՝ ծանոթացնելով այն քաղաքակիրթ աշխարհին: Լեոն իր *Հայոց պատմություն* ծավալուն աշխատության երկրորդ գրքի երկրորդ մասում գրում է. «Ս. Ղազարը մի ժիր և անխոնջ աշխատանոց էր: Նրա անդամները շրջում էին Հայաստանի զանազան կողմերը՝ հոգիներ փրկելու համար, բայց հոգիներից ավելի կորստից փրկում էին հայ մտքի դարավոր պտուղները, հայոց անցյալ գրականությունը, որ դեռ ձեռագրերի մեջ էր և ցրված վանքերում, եկեղեցիներում, մասնավոր մարդկանց տներում: Մխիթարյան վարդապետները մեղվի պես հավաքում էին ազգային մշակույթի այդ ծաղկահյութերը, խնամքով տանում էին Իտալիա՝ Վենետիկի առջև գտնվող փոքրիկ, մի ափի չափ փոքրիկ կղզու վրա պահել-պահպանելու համար: Այստեղ, հայրենիքից եկած զանձերի շուրջը և նրանց ազդեցությամբ, սերունդների մի անընդհատ մշակություն ստեղծվեց այդ աշխատանոցում: Հսկա աշխատողներ երևան եկան: Անփույթ ճոռչալ սկսեց մի մեծագործ տպագրական մամուլ և աշխարհի բոլոր կողմերի հայությունը հեղեղել սկսեց վենետիկյան ոսկեզօծ գրքերի տարափը: Ս. Ղազարը մի փոքրիկ, մանրանկարչական Հայաստան դարձավ, մի Հայաստան,

¹⁶ Լեո, *Երկերի ժողովածու*, տասը հատորով, հինգերորդ հատոր, «Հայաստան», Երևան, 1986, էջ 360:

սակայն, որ ավերանքների ու ստրկության հայրենիք չէր, այլ գրքերի հայրենիք»¹⁷:

Մխիթարյան միաբանության գիտնական-վանականների կատարած ազգագույն ծավալուն աշխատանքներին, գրականությանը նրանց անմնացորդ նվիրվածությանն անդրադարձել է նաև հայ մեծ վիպասան Ռաֆֆին (Յակոբ Մելիք-Յակոբյան, 1835-1888)՝ *Հեղինակների վիճակը* հոդվածում միանգամայն իրավացիորեն նշելով, որ Մխիթարյանները «ոչ միայն ազատեցին մեր հին մատենագրությունը Հայաստանի վանքերի խորշերում փտելուց, այլև ընծայեցին մեզ թվով շատ ինքնուրույն և թարգմանական հեղինակություններ: Նոքա մի կողմից տարածեցին մեր հասարակության մեջ ընթերցասիրությունը, ծանոթացրին եվրոպական գիտությունների հետ, մյուս կողմից, հարստացրին յուրյանց վանքը»¹⁸:

Այստեղ անհրաժեշտ ենք համարում նշել, որ Մխիթարյանների ազգանպաստ գիտական գործունեությանն անդրադարձել են ոչ միայն հայ մտավորականները, այլև բազմաթիվ օտարազգի քաղաքական գործիչներ, պատմաբաններ, լեզվաբաններ, գրաքննադատներ և գրողներ, որոնք բարձր են գնահատել Մխիթարյանների կատարած բազմաբնույթ ու ծավալուն աշխատանքները: Այսպես օրինակ, ֆրանսիացի պատմաբան և արևելագետ Վիկտոր Լանգլուան (1829-1869) *Վենետիկի Ս. Ղազար վանքի պատմությունը* աշխատության մեջ գրում է. «... մի դարի ընթացքում նրանց վանքը դարձավ ազգի մտավոր կենտրոն, հին Հայաստանի ուղեցույց աստղ, առաջնորդելով իրենց ազգին դեպի քաղաքակրթության արահետները»¹⁹: Իսկ անգլիացի քաղաքական գործիչ, լորդ Ռոբերտ Զրդզոնը (1810-1873) *Հայաստան. մեկ տարի էրզրումում և Ռուսաստանի, Թուրքիայի ու Պարսկաստանի սահմանների վրա* գրքում, խոսելով Եվրոպայում Մխիթարյանների ունեցած մեծ հեղինակության և նրանց ծավալած օգտակար գործունեության մասին, նշում է, որ 1810-ին, երբ Վենետիկում կասեցված էր մյուս բոլոր կրոնական հաստատությունների գործունեությունը, Ս. Ղազարին հատուկ որոշմամբ²⁰ շնորհվում են «նախկին անկախության բոլոր արտոնություններ-

¹⁷ Նույնի երրորդ հատոր, գիրք երկրորդ, 1973, էջ 502-503:

¹⁸ Ռաֆֆի, *Երկերի ժողովածու*, տասը հատորով, իններորդ հատոր, Հայպետհրատ, Երևան, 1958, էջ 88:

¹⁹ Մենք օգտվել ենք Վ. Լանգլուայի գրքի անգլերեն թարգմանությունից. V. Langlois, *History of the Armenian Monastery of St. Lazarus-Venice* (trans. from French by Frederick Schröder), Typography of St. Lazarus, Venice, 1899, p. 21.

²⁰ Խոսքը Նապոլեոնի 1810-ի օգոստոսի 17-ի կայսերական հրամանագրի մասին է, որով թուլատրվում է Մխիթարյան միաբանության Մայրավանքի գոյությունն ու

րը»²¹: Այստեղ հատկանշական է նաև այն փաստը, որ օտարազգի հեղինակը, ինչպես Լեոն և Բաֆֆին, միանգամայն իրավացիորեն նկատում և շեշտում է, որ ի տարբերություն որոշ վանքերի «Վենետիկի Ս. Ղազար վանքը ոչ միայն պահպանում, այլև լավագույն ձևով օգտագործում է հայկական ձեռագրերի առկա հավաքածուն...»²², որը բավականին հարուստ է: Այնուհետև լորդ Քրոզոնը ավելացնում է, որ այդ ձեռագրերում հայոց պատմության ու հայ հեղինակների աշխատությունների վերաբերյալ զետեղված գրառումներից Մխիթարյանները «տպել են բազում հատորներ, որոնց էջերում լուսաբանվում են այնպիսի բարքեր ու իրադարձություններ (հայ իրականության - Ա. Բ.), որոնք կատարելապես մոռացության էին մատնվել մինչև Ս. Ղազարի վարդապետների կողմից դրանց փրկելը մոռացումից»²³:

Մխիթարյանների այդ տքնաջան ու բեղմնավոր գործունեությունն էլ առիթ դարձավ, որպեսզի Բայրոնը հետաքրքրվեր հայերով ու հայ մշակույթով: Ինչպես նշում է ռուս անվանի գրականագետ Յու. Ա. Վեսելովսկին (1872-1919). «Արևելյան այդ հին ժողովրդի կրոնը, գրականությունը, պատմությունը՝ այս ամենը, հետաքրքրեցին նրան (Բայրոնին - Ա. Բ.), իսկ կղզու բնակիչների հեզահամբույր, սրտաբաց վերաբերմունքը առավել ևս կապեց նրան յուրատիպ գաղութին: Նա ավելի հաճախ, քան առաջ, սկսեց այցելել իր նոր ծանոթներին: Եվ մի անգամ չէ, որ դիմակահանդեսի ամենաեռուն պահին, թեթև մակույկը տարել է նրան Ս. Ղազարի խաղաղ մենաստան: Ճիշտ է, այստեղ ամեն ինչ չափազանց հեռու էր կյանքից, բայց, իբրև հակադրություն վենետիկյան եռուզեռին, այս խաղաղությունն ու անդորրը ոչ միայն տհաճ չէին թվում, այլև երբեմն ուղղակիորեն բերկրանք էին պատճառում խոնջացած բանաստեղծին»²⁴: Դրա մասին է վկայում նաև Բայրոնի գործունեության իտալական շրջանի մասին Թոմաս Մուրի²⁵ հետևյալ մեջբերումը՝ քաղված կոմսուհի Իզաբելա Ալբրիցիի «Դիմանկարներ» գրքից. «Ամբողջ ձմեռ, ամեն առավոտ նա դուրս էր գալիս, մակույկով մեն-մենակ ճեղ-

գործունեությունը որպես ակադեմիական հաստատություն (իրամանագրի պատճենը տե՛ս, օրինակ, «Վենետիկ եւ հայերը, Վենետիկ – Սբ. Ղազար, 1990» գրքում, էջ 111):

²¹ R. Curzon, *Armenia: a year at Erzerum, and on the frontiers of Russia, Turkey, and Persia*, John Murray, Albemarle street, London, 1854, p. 229.

²² Անդ, էջ 241:

²³ Անդ, էջ 242:

²⁴ Ю. Веселовский, *Очерки армянской литературы, истории и культуры*, Ереван, "Айастан", 1972, с. 393.

²⁵ Մուր, Թոմաս (1779-1852), իռլանդական ծագումով անգլիացի ռոմանտիկ բանաստեղծ: 1811-ին ծանոթանում է Բայրոնի հետ և դառնում նրա մտերիմ ընկերը: Մուրը Բայրոնի առաջին կենսագիրներից է:

քում էր ջուրը՝ հայոց կղզի գնալու համար (կղզյակ մի խաղաղ լճակի մեջ և Վենետիկից մոտավորապես կես լյո հեռու), գնում էր վայելելու տեղի գիտուն և հյուրասեր վանականների ընկերակցությունը, սովորելու նրանց դժվարին լեզուն: Իսկ երեկոյան, դարձյալ մակույկով, վերադառնում էր, հյուր գնում, սակայն մի քանի ժամով միայն»²⁶:

Բայրոնը մտերմանում է Մխիթարյանների հետ, սիրահարվում նրանց ձեռնարկած գործին և նպատակին, հայոց հին լեզվին և մատենագրությանը: Հենց այստեղ, հայրենիքից հեռու գտնվող այդ գողտրիկ կղզյակի Ս. Ղազար մայրավանքում եվրոպական քաղաքակրթությունից հոգնած բանաստեղծն սկսում է ուսումնասիրել հայերենը՝ երազելով ներթափանցել արևելյան պոեզիայի գաղտնարանները: «Կարևորը այն չէ, - գրում է հայ անվանի գրող Խաչիկ Դաշտենցը, - թե Բայրոնը որչափով է սովորել հայերենը: Կարևորը երևույթն է, այն ջերմ համակրանքը, որ նա տածել է մեր երկրի պատմության ու գրականության հանդեպ, այն խանդավառ հափշտակությունը, որ նա ամեն օր Ադրիականի փոթորկոտ ջրերը ճեղքելով գնացել է Հայոց կղզին՝ մի ազնիվ նպատակով համակված՝ սովորելու հայոց լեզուն»²⁷:

Բայրոնն սկսում է կանոնավոր հաճախել Ս. Ղազար կղզի և ուսումնասիրել հայոց լեզուն: Հայերեն սովորելու նպատակով նա ստիպված է եղել ամեն օր առավոտյան գնալ Ս. Ղազար, իսկ երեկոյան վերադառնալ Վենետիկ, քանի որ Մխիթարյան միաբանության խստաբարո հայրերը չեն թույլատրել բանաստեղծին ժամանակավոր բնակություն հաստատել վանքում: Դրա մասին համապատասխան գրառում կա Հ. Ավգերյանի²⁸ *Ինքնապատում օրագրությունում*. «Lord Byron գերահռչակ և աշխարհաքարոզ բանաստեղծ Անգլիացի՝ զորոյ զգրուածս գնէին ի կշիռ ոսկոյ, եկեալ ի տեսութիւն վանացս՝ խնդրեաց ուսանել ի նմանե՝

²⁶ Th. Moore, *The Life, Letters and Journals of Lord Byron*, London, John Murray, 1908, p. 414.

²⁷ Խ. Դաշտենց, *Բայրոնը և հայերը*, Հայպետհրատ, Երևան, 1959, էջ 174-175:

²⁸ Ավգերյան, Հարություն (1774-1854), ծնվել է Անկարայում, 12 տարեկան հասակում տեղափոխվել է Ս. Ղազար և 1798-ին ձեռնադրվել քահանա: Ավգերյանը զարգացած մարդ էր, լեզվաբան, բառարանագիր և հմուտ թարգմանիչ: Տիրապետել է հունարենին, լատիներենին, եբրայերենին, իտալերենին, ֆրանսերենին, անգլերենին, հունգարերենին, գերմաներենին և թուրքերենին: Նա Բայրոնի հետ միասին կազմել և հրատարակել է *Անգլերեն-հայերեն* (1817), *Հայերեն-անգլերեն քերականության* (1819) ձեռնարկներ, առաջին անգամ հայերեն (գրաբար) է թարգմանել Ջոն Միլթոնի *Դրախտ կորուսյալը* (1824), իտալերեն Ներսես Լամբրոնացու *Ատենաբանությունը* (1812), Ներսես Շնորհալու *Հավատով խոստովանիմը* (1823) և այլն: Ավգերյանը նաև ուրիշ բազմաթիվ արժեքավոր աշխատությունների հեղինակ է:

* Միշտ երրորդ դեմքով կը խոսի Հ. Յարութին իր անձի մասին (ծանոթագրությունը Հ. Դեռոնդ Տայեանի):

զՀայկական բարբառ. և կամեր ևս բնակել ի վանս: Բայց քանզի ոչ որ ի Միաբանից ճանաչեր զնա ցայնժամ, ասացաւ նմա զալ ի Վեներտկոյ զօր ամենայն, և այնպէս ուսանել: Եւ նա սկսաւ զալ աւուրս յիսուն, և ուսանէր ժամս երկուս կամ երիս, մանաւանդ թէ անցուցանէր ի զրոյցս ի սփոփանս անձին: Եր նա երիտասարդ աշխոյժ, զուարթաբարոյ և բոցակն. և թպէտ կաղ էր միով ոտամբ, բայց գեղեցիկ էր դիմօք»²⁹:

Բայրոնի հայերենի ուսուցիչը՝ Հարութիւն Ավգերյանը, մի ընդարձակ, հատուկ սրահ էր հատկացրել բանաստեղծին: Այն մինչև օրս էլ կրում է «Բայրոնի սենյակ» անվանումը: Եվ հենց այդ սրահում, որը, Յու. Վենետկսկու արտահայտությամբ, «շնչում էր արևելքով ու հնությամբ»³⁰, սկսվեցին Բայրոնի հայերենի առաջին դասերը:

Իսկ ի՞նչն է հանդիսացել Բայրոնի հայերեն սովորելու ցանկության շարժառիթը: Նրա հայերենի ուսուցիչ Հ. Ավգերյանը մի առիթով ասել է, որ Բայրոնը հայերեն է սովորել հատկապես հայ պատմիչների երկերը թարգմանելու համար, իսկ Ղ. Ինճիճյանն³¹ ավելացրել է, որ Բայրոնը հայերեն էր սովորում հատկապես հայ բանաստեղծական արվեստին ծանոթանալու համար: Մեր կարծիքով այս երկու տեսակետներն էլ համապատասխանում են իրականությանը: Միանգամայն բնական է, որ հոգով ու էությամբ դեպի Արևելք ձգտող բանաստեղծը, Մխիթարյանների միջոցով ծանոթանալով հայ բազմադարյան հարուստ մշակույթին ու գրականությանը, պետք է որ ձգտեր ավելի խորամուխ լինել և ուսումնասիրել այն, իսկ առանց լեզվի իմացության դա գրեթէ անհնարին էր:

Այստեղ արժէ նշել, որ Բայրոնի հետաքրքրասիրությունը Ս. Ղազար կղզու և դրա բնակիչների նկատմամբ չի սահմանափակվել սոսկ սովորական ճանապարհորդի կամ զբոսաշրջիկի ցուցաբերած հետաքրքրությամբ, այլ հիմք է հանդիսացել Մխիթարյանների և Բայրոնի բեղուն համագործակցության: Այցելելով Ս. Ղազար՝ Բայրոնը օրըստօրե ավելի է ոգևորվում «Հայոց կղզիով», համակվում սիրով և հարգանքով հայ ազգի

²⁹ Հ. Դեւոնդ Տայեան, *Լորտ Պայրըն ի Ս. Ղազար*. «Բազմավէպ», 1924, № 4, էջ 135-136:

³⁰ Ю. Веселовский, *Очерки армянской литературы, истории и культуры*, 1972, с. 395.

³¹ Ինճիճյան, Ղուկաս (Միքայելյան, 1758-1833), հայ աշխարհագրագետ, պատմաբան, բանասեր, 1799-ից Մխիթարյան միաբանության անդամ: Ունի մի շարք աշխատություններ՝ *Նոր Հայաստան* (1806), *Ստորագրութիւն հին Հայաստանեայց* (1822), *Չնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի* (երեք հատոր, 1835), *Դարապատում* (ութ հատոր, 1824-1827) և այլն: Հիմնել է «Արշարունեաց ընկերութիւն» գրական-հասարակական կազմակերպությունը (1812-1819):

ՎԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
ԱՆԳՂԻԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԵՐԵՆ

ՅՕՐԻՆԵԱԼ Դ Հ. ՅԱՐՈՒԹԻՒՆ
ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՒԳԵՐԵԱՆ

Յաշակերտութիւն Մեծին Մեխիթարայ Բաբունապետի :

Դ ՎԵՆԵՏԻԱ

ՏՊԱԳՐԵԱԼ

Դ ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1817

1817-ին Վենետիկում տպագրված
Անգլերեն-հայերեն քերականության տիտղոսաթերթը
The title-page of *Grammar English and Armenian*
published in Venice, in 1817

ԳԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
ՀԱՅԵՐԵՆ ԵՒ ԱՆԳՂԻԱԿԱՆ

ՅՕՐԻՆԵԱԼ

Դ Հ. ՅԱՐՈՒԹԻՒՆ
ՎԱՐԳԱՊԵՏԻ ԱԻԳԵՐԵԱՆ

ՅԱՀԱԿԵՐՏՈՒԹԵՆԻ ՄԵԾԻՆ ՄԻԻԹԱՐԱՅ
ՐԱԲՈՒՆԱՊԵՏԻ.



Դ ՎԷՆԵՏԻԿ
Դ ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

ՌՄԿԸ

1819-ին Ս. Ղազարուն տպագրված
Հայերեն-անգլերեն քերականության տիտղոսաթերթը
The title-page of *Grammar Armenian and English*
published in St. Lazarus, in 1819

նկատմամբ, հետաքրքրվում նրա պատմությամբ ու մշակույթով: Անշուշտ այս գործում իր զգալի ներդրումն է ունեցել Հարություն Ավգերյանը, ինչպես Բայրոնն է նշում՝ այդ «զարգացած ու բարեպաշտ մարդը»: Ավգերյանի շնորհիվ Վենետիկում անցկացրած երեք տարին (1816-1818) Բայրոնի համար գիտական համագործակցության արգասալից շրջան է եղել: Բայրոնի օգնությամբ Հ. Ավգերյանը պատրաստել և հրատարակել է *Անգլերեն-հայերեն, Հայերեն-անգլերեն քերականության ձեռնարկները*³² և *Անգլերեն-հայերեն բառարանը*: Բայրոնը կատարել է նաև որոշ թարգմանություններ հայ մատենագրությունից, որոնք նրա նամակներից քաղված առանձին հատվածների և այլ արժեքավոր փաստաթղթերի հետ մեկտեղ Մխիթարյաններն ամփոփել են 1870-ին Ս. Ղազարում տպագրված (իսկ 1907-ին վերահրատարակված) *Lord Byron's Armenian Exercises and Poetry* խորագիրը կրող ժողովածուի (անգլերեն և հայերեն) մեջ: Ինքը՝ Բայրոնը, Վենետիկում անցկացրած իր առաջին ամիսների մասին նշում է 1816 թվականի դեկտեմբերի 24-ին Թոմաս Սուրին ուղղված նամակում. «...ին «կյանքի ընթացքը» խիստ կարգավորվում է: Առավոտները մակույկով գնում եմ Ս. Ղազար վանքի հայրերի հետ հայերեն թոթովելու և օգնելու նրանցից մեկին (խոսքը Հ. Ավգերյանի մասին է - Ա. Բ.) անգլերենը ուղղելու անգլերեն-հայերեն քերականության մեջ, որը շուտով հրատարակվելու է»³³:

Ուշագրավ է, որ Բայրոնի քնարերգության այս շրջանը, երբ բանաստեղծը բուռն ոգևորությամբ տարված էր հայերենով, հայ գրականության մշակույթով, նշանավորվում է վառ ու համարձակ քնարական նորարարությամբ (*Մանֆրեդ, Տաստիի գանգատը, Չայլդ Հարոլդի ուխտագնացության* վերջին նվագը, *Սարդանապալ, Կայեն* և այլն): «Ես մտադիր էի հետևել Ս. Գրքի հայերեն թարգմանությանը և Կայենի ոճի շարադրել որպես իր համամայր քրոջ նկատմամբ ունեցած խանդ ու սեր, սակայն, չնայած դա բանավեճի ավելի հավանական պատճառ էր, ես հրաժարվեցի այդ մտքից, քանի որ այն ուղղափառ չէր»³⁴, - ասում է Բայրոնը Թ. Մեդլինին: Իսկ *Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը* պոեմի չորրորդ նվագի իննյակ 8-ում բանաստեղծը գրում է.

³² Father Paschal Aucher, *Grammar English and Armenian*, 1817; *A Grammar Armenian and English*, 1819, Venice, Printed at the Press of the Armenian Academy. – Հ. Յարութին վարդապետ Ավգերեան, *Քերականութիւն անգղիական եւ հայերէն, ՌՄԿԶ. Քերականութիւն հայերէն եւ անգղիական, ՌՄԿԸ, ի Վենետիկ, ի վանս Սրբոյն Ղազարու*:

³³ Th. Moore, *The Life, Letters and Journals of Lord Byron*, London, John Murray, 1908, p. 330.

³⁴ Th. Medwin, *Journal of the Conversations of Lord Byron, noted during a Residence with his Lordship at Pisa, in the 1821 and 1822*, vol. I. Paris, L. Baudry, 1825, p. 152.

**Եվ ես ուսեցի լեզուներն այլոց.-
Հարազատ դարձա օտարի աչքին...**³⁵
(թարգմ. Դ. Սևան)

և, անշուշտ, այդ լեզուներից մեկը հայերենն է:

Երբ 1821-ին Դ. Ավգերյանը գտնվում էր Անգլիայում, Ջ. Սըրրենցիան գլխից Բայրոնի բանաստեղծությունների գեղակազմ հատորները: 1836-ի ապրիլի 18-ին Ավգերյանը Լոնդոնից ստանում է տասնյոթ փոքրադիր հատորների մեջ ամփոփված Բայրոնի ստեղծագործությունների լիակատար ժողովածուն: Բանաստեղծի այդ բոլոր ստեղծագործություններն այժմ մեծ խնամքով ու հոգատարությամբ պահվում են Մխիթարյան միաբանության մատենադարանում:

Հարկ է նշել նաև, որ բանաստեղծի մահվանից շատ տարիներ հետո բազմաթիվ անգլիացիներ (և ոչ միայն անգլիացիներ) գալիս էին վանք տեսնելու Բայրոնի հայերենի ուսուցչին: Դ. Ավգերյանը, որը, թե՛ մինչև Բայրոնի հետ ծանոթանալը, թե՛ դրանից հետո, մեծ հեղինակություն ու հարգանք էր վայելում իր շրջապատում, մեզ հասած տեղեկությունների համաձայն, իրեն դրսևորել է նաև որպես համեստ անձնավորություն: Այսպես, 1833-ի հունիսի 3-ին իր օրագրում կատարած գրառումից պարզվում է, որ մի անգլիացի առաջարկել է Ավգերյանին նկարվել դասավանդության պահին Բայրոն-աշակերտի հետ: Վերջինիս փոխարեն այդ անգլիացին համձն է առնում համդես գալ որպես բնորդ, սակայն Դ. Ավգերյանը կտրականապես հրաժարվում է այդ մտահղացումից: Մի ուրիշ անգամ Վերոնայի շրջակայքում Դ. Ավգերյանին հանդիպում են երեք ամերիկացի, որոնք հետաքրքրվում են նրա անձնավորությամբ, «ու երբ կ'իմանան թե՛ նա Վենետիկն է՝ կը հարցնեն թե՛ տեսա՞ծ է արդեօք Պայրոնի ուսուցիչ Դ. Յարութիւնը, որուն անունը Նիւ-Եորքի լրագիրներեն լսած են»³⁶: Նրանց համար իսկապես մեծ անակնկալ էր, երբ կռահում են, որ խոսում են հենց Բայրոնի հայերենի ուսուցչի՝ Դ. Ավգերյանի հետ, և ցանկանում են այդ հանդիպման մասին հաղորդել նաև ամերիկյան լրագրողներին:

Մեզ համար շատ էական է և կարևոր նաև այն հանգամանքը, որ Բայրոնի 1816-1818 թվականների «հայկական» հանդիպումները նպաստեցին թե՛ բանաստեղծի, թե՛ Մխիթարյանների փառքի տարածման ամբողջ Եվրոպայում: Նույնիսկ անգլիական հասարակության

³⁵ Բայրոն, *Երկերի ժողովածու*, «Հայաստան», Երևան, 1965, էջ 215:

³⁶ Դ. Ղեւոնդ Տայեան, *Լորտ Պայրոն ի Ս. Ղազար*, էջ 139:

բարձր շրջանները, որոնք մինչ այդ խիստ բացասական և արհամարհական վերաբերմունք ունեին Բայրոնի նկատմամբ, սկսեցին հետաքրքրվել նրա հայկական ուսումնասիրություններով: Այստեղ արժե նշել այն փաստը, որ Հ. Ավգերյանը հետագայում ծանոթացել ու բարեկամություն է հաստատել երկու ուրիշ անգլիացիների՝ Ջոն Բրանդի և Էդուարդ Լոմբի հետ, որոնց նույնպես ուսուցանել է հայերեն: Դրա մասին հիշատակում է ինքը՝ Հ. Ավգերյանը: Նա իր օրագրում արտագրում է 1817-ի սեպտեմբերի 9-ի՝ Հ. Չ. Տյուզյանին³⁷ ուղղված նամակը, որտեղ, խոսելով իր նոր անգլիացի աշակերտի՝ Ջոն Բրանդի մասին, գրում է. «Սա ինքն ազնուաբարոյ անգլիացին՝ երեք ամիսք են զի ուսանի յինն զմերս բարբառ. որ և ի սակաւ աւուրս յառաջադէմ գտաւ բազմօք քան զMy Lord Byron երբեմն աշակերտն իմ»³⁸: Իսկ 1819-ի հունիսի 28-ի դիմաց օրագրում գրված է. «Եկն յաշակերտութիւն նմին (այսինքն Հ. Աւգերեանի) Mr. Edward Lombe, աշխոյժ և սրամիտ երիտասարդ Անգլիացի: Ուսալ նա ի նմանէ իբր ամիս մի զՀայկական բարբառ, բայց յաջողակ գտաւ ի նմա քան զԼօրտ Պայրըն և զՊրենտ»³⁹: Այստեղ նշենք նաև, որ Է. Լոմբն օգնել է Հ. Ավգերյանին *Հայերեն-անգլերեն քերականության* ձեռնարկի հրատարակմանը, իսկ Ջ. Բրանդի օժանդակությամբ ու աջակցությամբ նա հրատարակել է *Անգլերեն-հայերեն, Հայերեն-անգլերեն բառարաններ*⁴⁰, որոնք շատ արժեքավոր են ու, թեև գրաբար, այսօր էլ չեն կորցրել իրենց արդիականությունը:

Այսպիսով, 19-րդ դարում Ջ. Գ. Բայրոնը հայ գրականություն մուտք գործեց ոչ միայն իր երկերով, այլև անձամբ մասնակից դարձավ հայոց լեզվի և հայ մշակույթի վերհանմանը, զնահատմանն ու տարածմանը եվրոպացիների հետաքրքրությունների շրջանակի մեջ: Բայրոնի և Մխիթարյանների հանդիպումներն առիթ հանդիսացան, որ Ս. Ղազար այցելեն բազմաթիվ օտարերկրացիներ⁴¹ և, ինչպես նշում է Բայրոնի

³⁷ Տյուզյան, Հակոբ Չելեբի (1793-1847), հայ գրասեր և ազնվական, Թուրքիայի «արքունի փողերանոցի տնօրեն»: Կ. Պոլսում հիմնել է դրամահատ գործարան և կտրել ոսկյա ու արծաթյա դրամներ:

³⁸ Հ. Ղեւոնդ Տայեան, *Լորտ Պայրըն ի Ս. Ղազար*, էջ 138:

³⁹ Անդ:

⁴⁰ Տե՛ս Յ. Աւգերեան, *Բառարան անգլիերէն և հայերէն – Dictionary English and Armenian*, Վենետիկ, 1821. - *Բառարան հայերէն և անգլիական – Dictionary Armenian and English*, Վենետիկ, 1825:

⁴¹ Բայրոնից հետո Ս. Ղազար են այցելել այնպիսի նշանավոր մարդիկ, ինչպիսիք են Թոմաս Մուրը (1819), Լը Վայան դը Ֆլորիվալը (1828), Վալտեր Սկոտը (1832), Հայնրիխ Պետերմանը (1833), Ալֆրեդ դը Սյուսեն (1834), Ժորժ Սանդը (1834), Հովհաննես Այվազովսկին (1840), Էդուարդ Թեյլորը (1851), Ժակ Օֆենբախը (1870), Էլենորա Դուզեն (1886) և շատ ուրիշներ:

հայոց լեզվի ուսուցիչը, «ի սակս ուսանելոյ նորա ի վանս՝ հռչակեցաւ և անուն Վանացս»⁴²: Դրա վառ ապացույցն է նաև այն փաստը, որ այդ հանդիպումներից տասնյակ տարիներ անց (առ այսօր) նույնպես բազմաթիվ օտարազգի մտավորականներ են այցելում Ս. Ղազար և հետաքրքրվում Բայրոնի և Մխիթարյանների առնչություններով: Այսպես օրինակ, ինչպես տեղեկանում ենք «Բազմավեպից», վաճառ են այցելել բազմաթիվ մտավորականներ Անգլիայի «Բայրոնյան ընկերությունից»: «Անոնք կու գային ուխտաւորի մեծ յարգանքով Հայոց կղզին՝ ուր անելի քան դար մը առաջ ապրած էր ու խորհած իրենց ցեղի հանճարեղ մէկ զաւակը, - գրում է «Բազմավեպը», - անցեալ դարու մեծագոյն քերթողներէն մին՝ Լորտ Պայրըն, և ուր ոչ միայն Արեւելքի հիմաւորք քաղաքակրթութեան մը ջահը կը տեսնէր բոցավառ, այլ և սիրած ու սորված էր Հայ դասական լեզուն»⁴³: Այցելումներին առաջնորդում են դեպի Գրատուն, Ձեռագրատուն, Թանգարան, կանգ են առնում Բայրոնի սենյակում, որտեղ բանաստեղծը խոսել է հայ հայրերի հետ, ուսումնասիրել հայոց լեզուն, ցուցադրում են բանաստեղծի իրերը: Այնուհետև այցելումներին ուղեկցում են Տպարան, ինչպես նաև ցույց են տալիս Բայրոնյան ձիթենիները, որոնցից ուխտավորները մեկ ճյուղ պոկում և տանում են որպես հիշատակ:

Բայրոնի և Մխիթարյանների միջև եղած մտերմության վկայությունն են Ս. Ավգերյանի⁴⁴ Ագոնց արքահորն ուղղված 1817-ի փետրվարի 15-ի նամակի հետևյալ տողերը. «Ուրախ ենք ընդ բարի բարի խորհուրդս լօրտին»⁴⁵: Իսկ Ղուկաս Ինճիճյանը նույն թվականին Կ. Պոլսից արքահորը խնդրում է, որ նա առաջարկի Բայրոնին «...գրել ինչ անգղերէն ի վերայ Միաբանութեան մերոյ, զոր ինչ ետես աջօք, թէ զինչ նպատակ ունի Միաբանութիւն մեր, և զինչ գանձ արևելեան ձեռագրաց ժողովեալ ունի ի մենաստանի և այլն...»⁴⁶ և ավելացնում, որ խորհրդարանի անդամները, իմանալով Բայրոնի Ս. Ղազար կատարած այցելությունների մասին, Ազգային ժողովում նպաստավոր դիրք են բռնել Մխիթարյան միաբանության հանդեպ: Մեծ հետաքրքրություն է առաջացնում նաև Ղ. Ինճիճյանի մեկ այլ նամակ. «Մեծ համարեսցուք

⁴² Հ. Ղեւոնդ Տայեան, *Լորտ Պայրըն ի Ս. Ղազար*, էջ 136:

⁴³ *Պայրոնի յիշատակը փառաւորուած*. «Բազմավեպ», 1937, № 2-5, էջ 128:

⁴⁴ Ավգերյան, Սկրտիչ (1762-1854), հայ լեզվաբան, բառարանագիր, աստվածաբան, բարգմանիչ: Մխիթարյան միաբանության անդամ: Ծավալել է բեղմնավոր գրական գործունեություն, թողել ինքնուրույն և թարգմանական աշխատությունների հարուստ ժառանգություն:

⁴⁵ Հ. Ղեւոնդ Տայեան, *Լորտ Պայրըն ի Ս. Ղազար*, էջ 137:

⁴⁶ Անդ:

զանգղիացիին զայն Լօրտ Պայրըն, քանզի անգղիացիք՝ որք աստ ի Պօլիս՝ վարկունն մեծ ունին ի վերայ նորա, և ասեն լինել առաջին բանաստեղծ ընդ համօրէն Անգղիա. ճանաչեն ոմանք և զայրն, զի ամօք ինչ յառաջ եկեալ է աստ ի Պօլիս, զորմէ ետուն և նշան՝ միոյ ոտին նորա լինել թիրեալ...: Որովհետև այսպէս հռչակեալ է ի բանաստեղծութեան, յայտնի խնդրեսցիք ի նմանէ ոտանաւոր...: Ես ահա յինէն կողմանէ առաջարկից նիւթ ի զարթուցանել զերևակայութիւն նորա: Միներվան կամեցաւ ճանապարհորդել անցանել յԵրուպիոյ յԱսիա, նախ զոտս իւր ամբարծեալ կոխել ի Հայաստան. ընտրեաց զճանապարհ ծովու քան զցամաքի, բայց իմացեալ թէ Նէփոլոնոսն հակառակ է իւրոյ ճանապարհորդութեան, քանզի տգիտութեամբ Ասիոյ առաւել ծաղկէր իւր ծովն նաւարկութեամբ, եկն եմուտ յԱդրիական խորշ ծովու ի կղզեակ ինչ փոքրիկ՝ ծայտեալ կերպարանօք ի կերպարանս արևելեան մօրուսաւոր ծերունեաց, որպէս զայլ ոմն մէնդօռ յաւուրս Տէլէմաքայ: Նէփոլոնոսն իմացեալ ել ընդդէմ ի ճակատամարտիլ իւրով եռաժանեօք, որ են Տգիտութիւն, Նախապաշարունն և Ֆանադիզմօն: Միներվան բազումս տաժանեալ ի ձեռն այսոցիկ մօրուսաւորաց, զամս հարիւր անընդիստ պատերազմելով, յոյժ սակաւ յառաջ խաղաց. զի այն եռաժանին նորա բազում վնաս տայր, և պարտասէր զնա: Հուսկ յետոյ յայսոսիկ վերջին աւուրս անկարացեալ, զաչս իւր դարձոյց յԱնգղիա, ծանեալ զի տիրօղ և բարեկամ Նէփոլոնոսի՝ է կղզին անգղիական. խնդրեաց օգնութիւն յԱնգղիոյ, Անգղիան ունի հեծանել տալ զՄիներվան ի վերայ առիւծուն և միեղջերուին իւրոյ, նոցա զօրութեամբն ունի համարձակ խաղալ Միներվան ի Հայաստան նն. հրաւիրելով հուսկ յետոյ զաքատէմեայս այս Անգղիոյ ծանօթանալ ընդ այսր կղզեակի, և զիւր օքսֆըրտեանս ընդ հելլենականին ուսանել և գիայկականն, ուր գտցէ թաքուցեալ զիւր խնդրելին և այլն...»⁴⁷:

Ամփոփելով ասվածը, մի անգամ ևս նշենք, որ Մխիթարյանները, կարելի է ասել, առաջինն էին, որ հայ ժողովրդին ծանոթացրին ինչպէս անտիկ, այնպէս էլ եվրոպական արվեստին ու գրականությանը: Ինչպէս նշում է հայ անվանի գրող, հասարակական գործիչ և թարգմանիչ Արշակ Զոպանյանը (1872-1954), «Մխիթարյան միաբանության Վենետիկի մայր ճյուղին պատկանող վանականներեն ոմանք մեծ բանաստեղծներ, հանճարեղ թարգմանիչներ եղան, իրենց ղեկավարած Մուրատ-Ռաֆայելյան վարժարանն ելած բազմաթիվ մտավորականներ հայ գրականության և հայ արվեստի առաջնակարգ դէմքեր հանդիսա-

⁴⁷ Անդ, էջ 137-138:

ցան, և բազմավաստակ բանասերներն ու հմուտ ուսումնասիրողները զոր Վենետիկի և Մխիթարյան միաբանությունը իր Վենետիկի և Վիեննայի ճյուղերով մեր ժողովուրդին <համար> մեծ դեր կատարեցին և դեռ կկատարեն հայոց պատմության, գրականության, լեզվի, մշակույթի, քննության և մեկնաբանության փափուկ ու կարևոր գործին մեջ»⁴⁸։ Իրոք, Մխիթարյանները հանդես եկան հույն և հռոմեացի դասականների թարգմանությամբ՝ հայ ժողովրդի սեփականությունը դարձնելով Հոմերոսի, Վերգիլիոսի, Սոփոկլեսի, Օվիդիոսի և այլոց ստեղծագործությունները։ Ինչպես գրել է Ա. Չոպանյանը. «Մխիթարեաններն ամբողջ Արեւմուտքը բացին հայ մտքին առջեւ՝ իր հին և *ամեն տեսակ ճոխութիւններովը*»⁴⁹։

Այստեղ անհրաժեշտ է նշել, որ Մխիթարյանները ոչ միայն հայ ժողովրդին ծանոթացրին համաշխարհային գրականության գանձերին, այլև եվրոպական գրական հասարակայնությանը լատիներեն թարգմանությամբ ներկայացրին եվսեբիոսի⁵⁰ բնագրային տարբերակ չունեցող *Քրոնիկոնը*, Հովհան Ոսկեբերանի⁵¹ և Եփրեմ Ասորու⁵² աշխատությունները, Փիլոն Եբրայեցու⁵³ ճառերը և այլն։

Այսպիսով, եզրափակելով մեր խոսքը Բայրոնի և Մխիթարյանների ծանոթության ու համատեղ գործունեության վերաբերյալ, նշենք, որ հանգամանքների բերումով անգլիացի տարաբախտ բանաստեղծը հանդիպեց տարաշխարհիկ ժողովրդի իր ժամանակակիցներին՝ հայ մտավորական-եկեղեցականներին, որոնք հանգրվան էին գտել Եվրո-

⁴⁸ Արշակ Չոպանյան, *Նամակահի*, «Սովետական գրող», 1980, էջ 344։

⁴⁹ Արշակ Չոպանյան, *Դեմքեր*, Փարիզ, Գեղարուեստական տպարան, 1924, էջ 50։

⁵⁰ Եվսեբիոս Կեսարացի (մոտավորապես 263-339), հռոմեական եկեղեցական գրող, Պաղեստինյան Կեսարիայի եպիսկոպոս (մոտավորապես 314-ից)։

⁵¹ Հովհան Ոսկեբերան (մոտավորապես 347-407), հույն եկեղեցական գործիչ։ Փայլուն հռետոր (այստեղից էլ նրա մականունը)։ Բազմաթիվ խրատների, ներբողների, Ավետարանի մեկնությունների հեղինակ։ Խրատներում վառ կերպով պատկերում է իր ժամանակի հասարակական և կրոնական կյանքը։ Նրա գործերից հայերեն թարգմանվել են դեռևս 5-րդ դարում։

⁵² Եփրեմ Ասորի (306-373), ասորի մատենագիր։ Նրա ստեղծագործությունները գրեթե ամբողջությամբ ներկայացված են հնագույն հայերեն թարգմանություններում։ *Տապախոսի Ավետարանի մեկնության* զգալի մասը, *Պողոսի թղթերի մեկնությունը* և մի քանի այլ երկեր պահպանվել են միայն հայերեն թարգմանությամբ։

⁵³ Փիլոն Եբրայեցի (Ալեքսանդրացի, մոտավորապես մ. թ. ա. 20-մ. թ. 50), եբրայական-հունական փիլիսոփա։ Փիլոն Եբրայեցին զգալի ազդեցություն է ունեցել միջնադարյան հայ փիլիսոփայական մտքի ձևավորման վրա։ 5-րդ դարի հունաբան դպրոցի ներկայացուցիչները նրա գործերից տասնչորսը թարգմանել են հայերեն, որոնցից յոթը պահպանվել է միայն հայերեն և միմիայն դրա շնորհիվ դարձել համաշխարհային դասական բանասիրության ու փիլիսոփայության ուսումնասիրության առարկա։

պայի մի գողտրիկ անկյունում՝ Վենետիկի Ս. Ղազար կղզում, որտեղ ստեղծել էին մի փոքր Հայաստան և ուսումնասիրում ու զարգացնում էին իրենց հիմնավորց ժողովրդի բազմադարյան մշակույթը և ծավալում լուսավորական լայն աշխատանք հայ ազգի մեջ:

Ս. Ղազար կղզում կայացած հանդիպումները մեծ ազդեցություն ունեցան Բայրոնի վրա, և 1823-ի հուլիսին նա, նախքան Իտալիայից Հունաստան մեկնելը, վերջին անգամ այցելում է իր հայ բարեկամներին: Շատ հուզիչ է եղել բանաստեղծի բաժանումը Մխիթարյաններից: Երբ բանաստեղծի մակույկը հեռացել է տեսադաշտից, Հարություն Ավգերյանը և Սուքիաս Սոմայանը, այս «երկու ալեփառ ծերունիներն իրարու երես նայեցան... մեկնա՛ծ էր այն զոր տարիներով սիրած էին իրենց անառակ որդւոյն պէս. ան պիտի մեկնէր դէպ ի Արեւելք... և երկուքին ալ աչքերէն զոյգ մը արցունքի կաթիլներ գլորեցան ու տղու պէս լացին»⁵⁴:

Իտալիայում անցկացրած տարիները Բայրոնի համար դարձան ստեղծագործելու մի նոր, արտակարգ բեղմնավոր շրջան: Բացի դրանից, Վենետիկում նա առաջին անգամ հանդիպեց հեղափոխական շարժման իսկական մասնակիցներին՝ կարբոնարներին, և դառնալով նրանց համախոհ ընկերը, իր անձն ու կարողությունը տրամադրեց իտալական հեղափոխությանը: Հունաստան մեկնելու որոշումը Բայրոնը վերջնականապես իրականացրեց 1823-ի ամռանը: «Բոլորն ասում են, որ ես կարող եմ շատ օգտակար լինել Հունաստանին: Ոչ ես, ոչ էլ նրանք չգիտեն, թե ինչպես, բայց համենայն դեպս փորձենք»⁵⁵, - խոստովանում է Բայրոնը 1823-ի հունիսի 15-ին Էդվարդ Ջոն Թրելոնիին ուղղված նամակում: Վերոհիշյալ նամակում բանաստեղծն առաջարկում է Թրելոնիին իրեն ուղեկցել այդ ճանապարհորդության ընթացքում: 1823-ի հուլիսի 16-ին «Հերկուլես» նավը բանաստեղծին, Պ. Գամբայի և Է. Թրելոնիի ուղեկցությամբ, ընդմիջտ հեռացրեց Իտալիայի ափերից դեպի նրա կյանքի վերջին արկածների երկիրը՝ Հունաստան: Դժվար է ասել, թե ինչն առաջնորդեց բանաստեղծին, երբ նա ընդունեց այդ որոշումը: Անկասկած նրա ցանկությունների մեջ մեծ դեր խաղացին ազատության հանդեպ տաժած նրա ռոմանտիկ սերը, իր նախնիներից ժառանգած արկածասիրությունը, պատանեկան հիշողու-

⁵⁴ Ռ. Որբերյան, *Լորտ Պայրըն (Ի Ս. Ղազար)*, «Բազմավեպ». 1932, № 6-7, էջ 272:

⁵⁵ *Lord Byron in His Letters*, selections from his letters and journals, edited by V. H. Collins, Charles Scribner's Sons, N. Y. 1927, p. 265. Այդ մասին տե՛ս նաև Th. Medwin, *Journal of the Conversations of Lord Byron, noted during a Residence with his Lordship at Pisa, in the years 1821 and 1822*, in two volumes, vol. II. Paris, L. Baudry, 1825, p. 175.

թյունները կամ, ինչպես շատերն են կարծում, փառքի ծարավը: Ինչպես էլ որ բացատրվի, Բայրոնը, համեմայն դեպս, ցուցաբերեց անսահման մեծ խիզախություն: Այնտեղ էլ, Յունաստանում, նա մահացավ 1824-ի ապրիլի 19-ին՝ դեռևս չբոլորած իր երեսունյոթ տարին: Բայրոնի մահը Յունաստանում նշվեց որպես համազգային սուգ: «Նա մահացավ օտար երկրում, օտարների մեջ, - հիշում էր նրա ընկեր Փամբան, - բայց ոչ մի տեղ նրան չէին կարող այնպես սիրել և անկեղծորեն ողբալ, ինչպես Յունաստանում»⁵⁶: Յույն ժողովրդի ազատագրության անձնվեր մասնակցի մահը ողբաց Յունաստանը, նրա ետևից ողբաց և ողջ եվրոպան: «Իտալիան առաջին երկիրն էր, որ իմացավ Բայրոնի տխուր վախճանի մասին, որովհետև այն ամենամերձակա երկիրն էր: Այդ նորությունը հավանաբար ամենաուժեղ ազդեցություն թողեց Վենետիկում: Այդ երեկո, երբ զանգը դողամջեց Ս. Ղազար կղզի-վանքից, շատ Մխիթարյաններ խորհեցին «ընկած հրեշտակի» ճակատագրի մասին, հանճար ու հերոս, բայց նաև մարդկային արարած, որը երջանիկ պատահակա-նությամբ եղել էր իրենց ընկերը»⁵⁷: Բայրոնի մահով փակվեց ռոմանտիզմի ամենալուսաշող էջերից մեկը:

Իտալիայից մեկնելով Բայրոնն իր հետ տարավ ջերմ տպավորու-թյուններ և հիշողություններ հայ նշանավոր մարդկանց հետ ունեցած հանդիպումներից ու զրույցներից: Դժվար է հավանաբար հիշատակել եվրոպացի մեկ այլ բանաստեղծի, ով մինչ Բայրոնը այդքան սերտ անձնական առնչություն ունենար հայ իրականության հետ:

§ 1.2. Բայրոնի երկերը Վենետիկի Մխիթարյանների մամուլի էջերում

Հայ մտավորականությունը շատ վաղ, սկսած դեռևս 19-րդ դարի 10-20-ական թվականներից, ծանոթ է եղել Ջորջ Բայրոնի ստեղծագոր-ծություններին: Կոստանդնուպոլսի, Ջմյուռնիայի, Սոսկվայի, Թիֆլիսի, Վենետիկի և Վիեննայի մշակութային օջախներում լույս տեսնող բազ-մաթիվ պարբերականներում տեղ են գտել մի շարք հոդվածներ բանա-ստեղծի մասին, ինչպես նաև թարգմանություններ նրա բանաստեղծու-թյուններից: Գիշտ է, վերջիններս հայերեն չեն թարգմանվել մինչև 1840-ական թվականները, իսկ անգլիացի բանաստեղծի մասին հայ մամուլի

⁵⁶ Байрон, *Избранные произведения*, Художественная литература, М., 1953, с. 21.

⁵⁷ A. Terzian, *Island Monastery in the Venetian Lagoon with Memories of Lord Byron (on the Occasion of the Mekhitarist Founder's Tricentenary)*, «Հայ ընտանիք», 1976, № 11-12, էջ 61:

էջերուն առաջին անգամ գրվել է նույնպէս այդ թվականներին, սակայն հայ առաջադէմ հասարակությունը ծանոթ է եղել Բայրոնի ստեղծագործություններին:

Սկսած 1840-ական թվականներից՝ Բայրոնի քնարերգությունը հայ մամուլում ձեռք է բերում առանձնակի հետաքրքրություն: Արագ թափով աճում է նրա ստեղծագործությունների հայերեն թարգմանությունների թիվը, որոնք սկզբում կատարվել են ֆրանսերենից, իսկ հետագայում՝ ավելի հաճախ բնագրից: Հանդեսները տպագրում են հոդվածներ նրա մասին, ինչպէս նաև թարգմանություններ նրա ստեղծագործություններից: Հայ իրականության մէջ հետաքրքրությունը Բայրոնի անհատականության, նրա գրական ժառանգության նկատմամբ պատահական երևույթ չէր, այլ պայմանավորված էր, մի կողմից, այն մեծ դերով, որ ուներ անգլիական մշակույթը (Շեքսպիր, Միլթոն, Սկոտ և ուրիշներ) հայ գրական կյանքում, իսկ մյուս կողմից՝ հայ մտավորականության ներկայացուցիչների հասարակական և քաղաքական դժգոհությամբ, քանի որ Բայրոնի իտալական շրջանի բանաստեղծությունները նրանց մէջ արթնացնում էին ազատագրական ձգտումներ և պատասխանում նրանց հետաքրքրող հարցերին: Բայրոնի ստեղծագործությունների լայն արձագանքին հայ հասարակության մէջ նպաստեց նաև այն հանգամանքը, որ Բայրոնը 1816-1817 թվականներին Վենետիկի Ս. Ղազար կղզում սովորել էր հայերեն, և Մխիթարյանները գրառումներ էին կատարել նրա մասին:

Անկասկած, եվրոպացի գրողներից միայն Բայրոնն է, որ ծանոթութուն և անձնական շփումներ է ունեցել Մխիթարյանների հետ, բարձր է գնահատել նրանց կատարած հայրենամկեր աշխատանքը, ինչպէս նաև սովորել է հայոց լեզուն և հետաքրքրվել հայ մշակույթով: Ինչպէս հայտնի է, մինչ Մխիթարյանների հետ ծանոթանալը, Բայրոնին համակել են հուսահատությունն ու թախիծը, ատելությունն իր հայրենիքի և անգլիացիների նկատմամբ: Իրենց հայրենիքից հեռու գտնվող, բայց հանուն հայրենիքի և ազգի, Իտալիայի այդ գողտրիկ անկյունում քրտնաջանորեն գործող հայ վանական-մտավորականները Բայրոնին ոչ միայն հայերեն էին սովորեցնում, այլև իրենց հոգատարությամբ ու վարվելակերպով ջանում էին բուժել բանաստեղծի սիրտն ու հոգին, նրան հաղորդել ստեղծագործական նոր լիցք և մղել նոր խիզախումների: Դժվար է ասել, թե ինչպիսին կլինէր Բայրոնի հետագա ստեղծագործական կյանքը, եթե նա չհանդիպեր Մխիթարյաններին: Բայրոնի մտքի այն բազմազանությունը և խորությունը, իրականությունը ճանաչելու նրա փիլիսոփայական որոնումները, առասպելի և իրականության

միացումը, անկախության ձգտումը, մտքի հաղթանակը կապ ունեն բայրոնի հայկական ուսումնասիրությունների հետ: Դրա մասին բազմիցս նշել են ինչպես հայ, նույնպես և օտար հեղինակները: Այսպես, ֆրանսիացի ռոմանտիկ բանաստեղծ, քաղաքական գործիչ, պատմաբան Ալֆոնս Մարի Լուի դը Լամարթինը (1790-1869) 1848-ին Փարիզի Մուրատյան վարժարանի աշակերտների մրցանակաբաշխության հանդեսի ժամանակ արտասանած ճառում նշում է. «Լորտ Պա՛յրըն մեծ բանաստեղծն անգլիացի, և ուր որ ինքն ալ այնչափ անգամ ամփոփեր ու լուսաւորեր էր իր գեղեցիկ երևակայութիւնը ձեր գրականութեան լուսովը»⁵⁸:

Ինչպես արդեն նշել ենք, 1817-ին Հարություն Ավգերյանը և Բայրոնը միացյալ ջանքերով պատրաստում և հրատարակում են *Անգլերեն-հայերեն քերականության ձեռնարկ*՝ հայերի օգտագործման համար, իսկ այնուհետև ձեռնամուխ են լինում անգլիախոս ուսանողության համար *Հայերեն-անգլերեն քերականության ձեռնարկի* կազմմանը, որը հրատարակվում է 1819-ին⁵⁹:

Եվ պատահական չէ, որ Մխիթարյաններն առաջիններից էին, որ անդրադարձել են Բայրոնին ու նրա ստեղծագործությանը: Բայրոնի բազմաթիվ ստեղծագործություններ և նրա մասին հոդվածներ տեղ են գտել Մխիթարյանների հրատարակած գրքերում, ժողովածուներում և գրական հանդեսներում: Քննենք Վենետիկի Մխիթարյանների հրատարակած՝ Բայրոնի երկերը (առանձին գրքերով ու ժողովածուներում, «Բազմավեպ», «Գեղունի» և «Հայ ընտանիք» հանդեսներում), իսկ նրա մասին լույս տեսած աշխատանքներին կանդրադառնանք սույն աշխատության վերջին գլխում:

1.2.1. Առանձին գրքերով ու ժողովածուներում: 1832-ին վերահրատարակված *Հայերեն-անգլերեն քերականության ձեռնարկի*⁶⁰ մեջ Հարություն Ավգերյանը որպես հայոց լեզվի վարժություններ զուգահեռ գետեղում է նաև Ս. Պողոսի՝ կորնթացիներին ողջված երկու թղթերը, Մովսես Խորենացու *Հայոց պատմության* որոշ հատվածներ, մի հատված Ներսես Լամբրոնացու *Ատենաբանությունից* և դրանց անգլերեն թարգմանությունները՝ կատարված Բայրոնի կողմից:

⁵⁸ Մուրատեան Վարժարանին պարգևաբաշխութիւնը. «Բազմավեպ», 1848, № 23, էջ 357-358:

⁵⁹ Այդ ձեռնարկը ճշգրտված և ավարտուն ծևով վերահրատարակվում է 1832-ին, որի մեջ վարժությունների տեսքով ներառվում են նաև հայկական քնարերգության (անգլերեն թարգմանության հետ մեկտեղ) և հայերենից անգլերեն Բայրոնի կատարած որոշ թարգմանությունների (բնագրի հետ միասին) նմուշներ:

⁶⁰ St' u P. Paschal Aucher, *A Grammar Armenian and English*, Venice, of St. Lazarus, 1832.

1852-ին լույս է տեսնում *Ծաղկաքաղ քերթողաց անգղիացուց* ժողովածուն (անգլերեն և հայերեն)⁶¹, որտեղ, ի թիվս այլ ստեղծագործությունների, տեղ են գտնում նաև Բայրոնի որոշ ստեղծագործություններ: Այստեղ *Ի թղթոց Լորտ Պայրընի* խորագրի տակ ամփոփված են *Հայերեն-անգլերեն քերականության* ձեռնարկի համար բանաստեղծի գրած առաջաբանը և հատվածներ նրա երկու նամակից, իսկ *Հատուածք Պատմութեանն Հայոց. թարգմանեալք ի Լորտ Պայրընէ ի հրահանգս անձինն ի հայ բարբառ* խորագրի տակ բնագրի հետ միասին տեղ են գտել Ս. Խորենացու *Հայոց պատմության* որոշ հատվածների (առաջին գրքի Ը. գլուխը և Թ. գլխի մեծ մասը) անգլերեն թարգմանություններ՝ կատարված բանաստեղծի կողմից: Ժողովածուում զետեղվել են նաև մի հատված Ներսես Լամբրոնացու *Ատենաբանությունից*, Ս. Պողոսի՝ կորնթացիներին ուղղված երկու թղթերը և դրանց անգլերեն թարգմանությունները, որոնք կատարել է Բայրոնը: Ժողովածուում *Լորտ Պայրընի Քերթուածք* խորագրով տեղ են գտել (բնագրով և հայերեն թարգմանությամբ) *Կոտորած բանակին Սենեքերիմայ* (*The Destruction of Sennacherib*), *Ուղերձ առ Ովկիանոս* (*Address to the Ocean*), *Ի Վադերլու* (*On Waterloo*), *Առ ժամանակ* (*To Time*), *Տաղ երգեալ ի շանթածիզ մրրկի* (*Stanzas Composed During a Thunder-Storm*) և *Տաճար Ս. Պետրոսի* (*Church of St. Peter*) բանաստեղծությունները, ինչպես նաև լրդ Բայրոնի անգլերեն և հայերեն ստորագրությունները: Այդ բանաստեղծություններից առաջինը *Հրեական մեղեդիներ* շարքից է, իսկ երկրորդը, երրորդը և վերջինը հատվածներ են *Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը* պոեմից (համապատասխանաբար՝ չորրորդ, երրորդ և չորրորդ նվագներից), որը գրված է սպենսերյան տներով՝ իննյակներով⁶²: Ցավոք, այդ բանաստեղծությունների թարգմանիչները չեն նշվել: Սակայն, մեր կարծիքով, կասկածից վեր է, որ դրանք թարգմանել է Ղ. Ալիշանը: Դրանում համոզվելու համար բավական է *Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը* պոեմի չորրորդ նվագի վերոհիշյալ երկու հատվածները՝ 178-184 (*Ուղերձ առ Ովկիանոս*) և 153-159 (*Տաճար Ս. Պետրոսի*) իննյակները, համեմատել Մխիթարյանների հետագա հրատարակությունների հետ, որտեղ զետեղվել են այդ հատվածները (ԳՅԸ-ԳԶԲ և ԳԾԳ-ԳԾԹ իննյակներ) և նշվել է թարգմանիչը՝ Ղ. Ալիշան: Պարզվում է, որ չնայած հետագա հրատարակություններում կան որոշ, հիմնականում խմբա-

⁶¹ St'e u Beauties of English Poets – *Ծաղկաքաղ քերթողաց անգղիացուց*, Venice, In the Island of S. Lazzaro, 1852.

⁶² Անգլիացի բանաստեղծ Էդմունդ Սպենսերը (1552-1599) տաղաչափության մեջ ավանդական ութնյակի փոխարեն մտցրել է ինը տողանոց տուն:

գրական բնույթի, փոփոխություններ, թարգմանության կառուցվածքը, ոճը և արվեստն ընդհանուր առմամբ նույն ձեռագիրն ունեն: Բացի դրանից, 1974-ին «Հայ ընտանիք» ամսագրում զետեղված մի անստորագիր հոդվածից (հայերեն և անգլերեն) տեղեկանում ենք (մեր կարծիքով տեղեկությունը միանգամայն հավաստի է), որ Ղ. Ալիշանը թարգմանել է Բայրոնի «քանի մը քնարերգութիւններ, որոնք ամփոփուած են մէկ հատորի մէջ եւ լոյս տեսած՝ 1870-ին»⁶³: Այստեղ խոսքը 1870-ին հրատարակված *Lord Byron's Armenian Exercises and Poetry* ժողովածուի մասին է (նշված հոդվածի անգլերեն տարբերակում բերված է «մեկ հատորի մեջ ամփոփված» նյութերի, այդ թվում և բանաստեղծությունների լրիվ ցանկը), որի մեջ համարյա անփոփոխ զետեղված են *Ծաղկաքաղում* ընդգրկված Բայրոնի բոլոր (թվով՝ վեց) բանաստեղծությունները:

1860-ին Վենետիկում լույս է տեսել Բայրոնի *Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը* պոեմի չորրորդ երգը՝ *Իտալիա* վերնագրով (անգլերեն և հայերեն)⁶⁴: Պոեմի այդ նվագի թարգմանությունը կատարել է Բայրոնի հայ առաջին թարգմանիչներից մեկը՝ հայ նոր քնարերգության նահապետ Ղևոնդ Ալիշանը (1820 - 1901), որը հիացել է Բայրոնով և մեծարել նրան՝ անվանելով ոչ միայն դարի նշանավոր բանաստեղծ, «այլ եւ առաջին ի նոսին վկայեալ է ի յոլովից գիտնոց»⁶⁵: Չնայած դրան, Ղ. Ալիշանը համամիտ չէր Բայրոնի պոեմում տեղ գտած թախծամոլության ու մեղամաղծության արտահայտություններին և իր թարգմանության մեջ դրանք կամ զեղչել է, կամ իր վերաբերմունքն է ցույց տվել ծանոթագրությունների և մեկնաբանությունների միջոցով: Այնուհետև այդ թարգմանությունը նույնությամբ վերահրատարակվել է 1889-ին, 1891-ին և 1901-ին: Նշենք նաև, որ այս պոեմին, բացի Ղ. Ալիշանից, անդրադարձել են ևս հինգ հայ թարգմանիչներ՝ Վ. Անտոնյանը, Լեռնցը, Հ. Միրզայանը, Հովհ. Թումանյանը և Հ. Սևանը:

Ինչպես արդեն նշել ենք, 1870-ին Մխիթարյանները հրատարակում են *Լորդ Բայրոնի հայերեն վարժությունները և բանաստեղծությունները*

⁶³ *Լորտ Պայրըն հայ գրականութեան մէջ* (անստորագիր). «Հայ ընտանիք», 1974, № 11-12, էջ 8:

⁶⁴ Տե՛ս Lord Byron, *Childe Harold's Pilgrimage*, Canto the fourth, Venice, In the Island of S. Lazarus, 1860. - Բայրոն, *Իտալիա*, թարգմ. Ղ. Ալիշան, Վենետիկ, ի տպարանի Սրբոյն Ղազարու, 1860:

⁶⁵ Անդ, Ազդ:

Ի Տ Ա Լ Ի Ա



ՎԵՆԵՏԻԱ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1860

1860-ին Ս. Ղազարուն տպագրված *Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը* պոեմի չորրորդ նվագի (*Իտալիա* խորագրով՝ անգլերեն և հայերեն) տիտղոսաթերթը

The title-page of the fourth canto of *Childe Harold's Pilgrimage* (entitled *Italy*, in English and Armenian) published in St. Lazarus in 1860

ժողովածուն (անգլերեն և հայերեն)⁶⁶, որտեղ գրեթե նույնությամբ (փոխվել են հատ ու կենտ բառեր) արտատպվել են 1852-ին հրատարակված *Ծաղկաքաղ քերթողաց անգղիացւոց* ժողովածուում զետեղված՝ Բայրոնին վերաբերող նյութերն ամբողջությամբ, որոնց ավելացվել է ընդամենը չորս բանաստեղծություն՝ *Ի մահ օրհորդի միոյ քեռորդի քերթողին եւ սիրելի յոյժ նմա* (*On the Death of a Young Lady*), *Առ Դուքսն Տորսեյ* (*To the Duke of Dorset*), *Արտասուք* (*The Tear*) և *Յետին տողք Պայքընի* (*On this Day I Complete My Thirty-sixth Year*): Դրանցից առաջին երեքը *Պարսպության ժամեր* շարքից են: Թեև այդ ժողովածուում զետեղված բանաստեղծությունների թարգմանիչները նույնպես նշված չեն, վստահորեն կարող ենք պնդել, որ դրանք թարգմանել է Ղ. Ալիշանը, ընդ որում, վերջին բանաստեղծության թարգմանության տեքստը բառացիորեն նույնն է, ինչ որ տպագրված է 1905-ին «Բազմավեպում», որտեղ թարգմանիչը նշված է: Վերոհիշյալ ժողովածուն նույնությամբ արտատպվել է 1907-ին:

1880-ին Մխիթարյանները հրատարակում են օտարազգի բանաստեղծների ստեղծագործություններից կատարված թարգմանությունների ժողովածուի երկրորդ մասը, որտեղ *Նկարագրականք* խորագրի տակ զետեղվել են նաև Բայրոնի երկու բանաստեղծությունները՝ *Գերեզմանք հանճարեղացն յիտալիա* և *Ցլամարտ ի Սպանիա* վերնագրերով⁶⁷: Այդ ժողովածուն նույնությամբ վերահրատարակվել է 1883-ին: Բացի դրանից, նույն 1880-ին հրատարակվել է այդ ժողովածուի համառոտ տարբերակը, որի մեջ տեղ է գտել Բայրոնի վերոհիշյալ բանաստեղծություններից միայն առաջինը⁶⁸: Այդ բանաստեղծությունները հատվածներ են Բայրոնի *Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը* պոեմի չորրորդ (54-60 իննյակներ) և առաջին (72-80 իննյակներ) նվազներից: Ավելացնենք նաև, որ չնայած վերոհիշյալ ժողովածուներում թարգմանիչները նշված են հավաքական անունով (*Մխիթարեան միաբանից*), սակայն ակնհայտ է, որ Բայրոնի բանաստեղծություններից առաջինը թարգմանել է Ղ. Ալիշանը (տե՛ս 1860-ի հրատարակության ԾԴ-Կ իննյակները), իսկ երկրորդը՝ Խ. Գալֆայանը (տե՛ս «Բազմավեպի» 1853-ի № 21-ում բերված ՀԲ-Ձ իննյակները):

⁶⁶ Տե՛ս Lord Byron's *Armenian Exercises and Poetry*, Venice, In the Island of S. Lazzaro, 1870.

⁶⁷ Տե՛ս *Ծաղկաքաղ հատուածք յօտարազգի մատենագրաց*, թարգմ. Մխիթարեան միաբանից, մասն երկրորդ. *Քերթուածք*, Վենետիկ, ի վանս Ս. Ղազարու, 1880, էջ 132-136:

⁶⁸ Տե՛ս *Համառօտ ծաղկաքաղ հատուածոց ի քերթութեանց օտարազգի մատենագրաց*, Վենետիկ, Վանք Մխիթարեանց, 1880, էջ 78-80:

1895-ին Մխիթարյանները հրատարակում են ծագումով գերմանացի, ֆրանսիական բանասեր, հայագետ Գ. Ա. Շրումպֆի (1844-1892) *Ուսումնասիրությունը հայ լեզուի եւ մատենագրութեան յԱրեւմուտս (ԺԴ-ԺԹ դար)* աշխատությունը: Դրա հիմքում ընկած է հեղինակի 1890-ին Լոնդոնում հրատարակած *Հայագիտությունը եվրոպայում* (*Études Arméniennes en Europe*) հոդվածաշարը, որտեղ ներկայացվել են XIV-XIX դարերում եվրոպացի հայագետների համառոտ կենսագրությունները և քննության ենթարկվել նրանց գործերը: Հոդվածաշարը ֆրանսերենից հայերեն է թարգմանել և անհրաժեշտ լրացումներով հրատարակության պատրաստել հայ մատենագետ և թարգմանիչ Գ. Ջարբխանյանը (1827-1901): Աշխատությունում զետեղվել է նաև *Լորտ Պայրոն* հոդվածը⁶⁹, որտեղ բերվում են հայերին վերաբերող հատվածներ Բայրոնի մամակներից (ընդհանուր թվով՝ տասը), ինչպես նաև *Հայերեն-անգլերեն քերականության* ձեռնարկի համար Բայրոնի գրած հայտնի առաջաբանը:

1966-ին Մխիթարյանները հրատարակում են պատկերազարդ տեղեկագիրք (հեղինակը չի նշված) Մխիթարյան միաբանության Մայրավանքի վերաբերյալ, որի մեջ տեղ են գտնում նաև Բայրոնի սենյակի նկարագրությունը, մի հատված *Անգլերեն-հայերեն քերականության* ձեռնարկի համար Բայրոնի գրած առաջաբանից և Բայրոնին պատկերող որոշ գեղանկարների (այդ թվում՝ Հ. Այվազովսկու՝ *Բայրոնի այցը Մխիթարյաններին Ս. Ղազար կղզում* գեղանկարի) վերարտադրություններ⁷⁰:

Բացի վերոհիշյալ գրքերից ու ժողովածուներից, Մխիթարյանները, Բայրոնի՝ Ս. Ղազար կատարած այցելության հիշատակի առթիվ, կանոնավոր կերպով հրատարակել են գրեթե նույնատիպ պատկերազարդ ծողովածու-գրքույկներ (անգլերեն՝ հաճախ չնշելով հրատարակման տարեթիվը)⁷¹: Այդ ժողովածուներում գրեթե միշտ զետեղվել են հայերին վերաբերող հատվածներ Բայրոնի մամակներից՝ կենսագրական ծանոթագրություններով, Մխիթար Աբբահոր, Ս. Ղազարի տեսարժան

⁶⁹ Տե՛ս Գ. Ա. Շրումպֆ, *Ուսումնասիրությունը հայ լեզուի եւ մատենագրութեան յԱրեւմուտս (ԺԴ - ԺԹ դար)*, թարգմ. և լրաց. Գ. Ջարբխանյանի, Վենետիկ, Մխիթարեան տպարան, 1895, էջ 339-347:

⁷⁰ Տե՛ս Սուրբ Ղազար: *Մայրավանք Մխիթարեան միաբանութեան*, Վենետիկ, Ս. Ղազար, 1966, էջ 50-53:

⁷¹ Տե՛ս, օրինակ, *Armenian Album on Byron*, In Memory of Lord Byron's Sojourn at St. Lazarus, Venice, San Lazzaro, 1955. – *Lord Byron and the Armenians*. Venice, San Lazzaro (հրատարակման թվականը բացակայում է) և այլն:

վայրերի, Բայրոնի հայերեն և անգլերեն ստորագրությունների, ինչպես նաև նրա լուսանկարների և գեղանկարների վերադարձություններ:

1.2.2. «Բազմավեպ» հանդեսում: «Բազմավեպը» իբրև գրական, հայագիտական պարբերական (գործում է 1843-ից առ այսօր) ընթերցող հասարակությանը ծանոթացնում է ոչ միայն հայ, այլև եվրոպական գրականության հետ: Տարիներ շարունակ «Բազմավեպի» էջերում գետեղվել են Շեքսպիրի, Միլթոնի, Գյոթեի, Պուշկինի, Լերմոնտովի և, վերջապես, Բայրոնի ստեղծագործությունները:

Հանդեսի հիմնադրումից երեք տարի անց, դեռևս 1846-ին, դրա էջերում հանդիպում ենք մի բանաստեղծության, որի ոչ հեղինակը, ոչ էլ թարգմանիչը նշված չեն⁷²: Առաջին իսկ ընթերցումից զգացվում է, որ դա մի հատված է Բայրոնի *Չայլդ Ֆարուդի ուխտագնացությունը* պոեմից, իսկ ավելի մանրամասն ուսումնասիրությունից պարզվում է, որ այդ բանաստեղծությունը նշված պոեմի չորրորդ նվագի 153-159 իննյակներն են՝ Ղ. Ալիշանի թարգմանությամբ, որոնք աննշան փոփոխություններով 1852-ին ընդգրկվել են *Ծաղկաքաղում*: Փաստորեն, դա Մխիթարյանների կողմից Բայրոնի ինքնուրույն ստեղծագործության առաջին հրատարակությունն է (ինչպես նշել ենք, հայերենից նրա որոշ թարգմանություններ տեղ են գտել 1832-ին հրատարակված *Հայերեն-անգլերեն քերականության* ձեռնարկում), սակայն անհասկանալի պատճառներով հեղինակի անունը չի նշվում:

Անհրաժեշտ է հիշել, որ Մխիթարյաններն, ընդհանրապես մեծ տեղ էին տալիս թարգմանություններին: Երբեմն Բայրոնից կատարված թարգմանություններն ուղեկցվում են նաև կենսագրական բնույթի առաջաբաններով և ակնարկներով: Այսպես, «Բազմավեպի» 1853-ի համարներից մեկում տպագրվել է մի հոդված ցլամարտի մասին⁷³: Ցլամարտի ընթացքը մանրամասն նկարագրելուց հետո, հոդվածի վերջում, հեղինակը նշում է, որ իսպանական ազգային այդ հանդիսախաղին ականատես են եղել եվրոպացի շատ գրողներ, որոնք հետագայում այն նկարագրել են իրենց չափածո և արձակ ստեղծագործություններում, և «իբրև նկարագրական մասին ամենագեղեցիկ օրինակ» բերում է «Լոռտ Պա՛յրըն անգղիացի մեծ քերթողին տուած վառվուռն նկարագիրը իր Չայլտ Ֆարուլտ ըսուած հռչակաւոր բանաստեղծութեանը մէջ»⁷⁴: Այստեղ բերված է մի հատված Բայրոնի *Չայլդ Ֆարուդի ուխտագնացությունը* պոեմի առաջին նվագից՝ ԶԲ-Ձ (72-80) իննյակները Խ. Գ.-ի

⁷² Տե՛ս Սուրբ Պետրոսի *Ի Դռովն*. «Բազմավեպ», 1846, № 16, էջ 247-248:

⁷³ Տե՛ս Խ. Գ., *Ցլամարտութիւն*. «Բազմավեպ», 1853, № 21, էջ 326-331:

⁷⁴ Անդ, էջ 329:

թարգմանությամբ: Մեր կարծիքով Խ. Գ.-ն նույն ինքը՝ հայ բանաստեղծ, դրամատուրգ, թարգմանիչ, հրապարակախոս և եկեղեցական գործիչ Խորեն Գալֆայանն (1832-1892) է, որը հաճախ ստորագրել է՝ Յ. Խ. Գ., Խ. Վ. Գ., Խ. Նար-Պեյ, Խորեն Նար-Պեյ և այլն: Նշենք, որ այդ իննյակներից առաջինի և վերջինի թարգմանությունը լրիվ չէ (բերված է միայն դրանց առաջին քառատողերի թարգմանությունը):

Շատ հաճախ նույն ստեղծագործությունը թարգմանել են տարբեր հեղինակներ՝ թե՛ Մխիթարյաններ, թե՛ այլ թարգմանիչներ: Այսպես, օրինակ, 1858-ին ծովին նվիրված մի քանի բանաստեղծությունների շարքում «Բազմավեպում» լույս է տեսնում մի հատված *Չայլդ Չարոլդի ուխտագնացությունը* պոեմի չորրորդ նվագից (178-184 իննյակները)՝ *Առ Ովկէան* վերնագրով⁷⁵, իսկ 1922-ին այդ հատվածը Յովհ. Մասեհյանի թարգմանությամբ հրատարակվում է Վիեննայում լույս տեսնող «Արեգ» ամսագրում *Ովկիանոսին* վերնագրով⁷⁶: Առաջին թարգմանության մեջ, որտեղ չի նշված թարգմանիչը, պահպանվել է բնագրի կառուցվածքը (իննյակները թարգմանության մեջ նույնպես մնացել են իննյակներ), իսկ երկրորդ թարգմանության մեջ այն խախտվել է (իննյակները հիմնականում թարգմանվել են 10-11 տողով, իսկ մեկական իննյակ՝ նույնիսկ 12 և 13 տողով): Առաջին թարգմանությունը պատկանում է Ղ. Ալիշանին: Դրանում մենք համոզվում ենք, երբ այն համեմատում ենք Ղ. Ալիշանի թարգմանությամբ *Չայլդ Չարոլդի ուխտագնացությունը* պոեմի չորրորդ նվագի հետագա հրատարակություններում⁷⁷ զետեղված համապատասխան հատվածի հետ: Համեմատությունից պարզվում է, որ պոեմի չորրորդ նվագի առանձին գրքով լույս տեսած տարբերակում կան չնչին, շատ աննշան փոփոխություններ և շտկումներ: Այսպես, օրինակ, 1858-ի հրատարակության մեջ 178-րդ իննյակի առաջին տողում բերված «անտառք անմարդաձայնք եւ անկոխք» արտահայտությունը 1860-ի հրատարակության մեջ փոխարինվել է «անտառք անճանապարհք եւ անկոխք» արտահայտությամբ, որը, նախ, ավելի լավ է հնչում հայերեն և, երկրորդ, ավելի մոտ է բնագրին (անգլերեն՝ pathless woods): Այնուհետև, 182-րդ իննյակի «եւ բըռնաբար զահի իւրեանց արկանէին թագազարդ. // Յեկաց խըժից եւ ստըրկաց նըլաճեցան ափունքն այն.» երկտողը փոխարինվել է «Որպէս յետոյ արկին անդ

⁷⁵ Տե՛ս Բայրոն, *Առ Ովկէան*. «Բազմավեպ», 1858, № 6, էջ 173-174:

⁷⁶ Տե՛ս Բայրոն, *Ովկիանոսին*, թարգմ. Յովհ. Մասեհյան. «Արեգ», 1922, № 5, էջ 287-289:

⁷⁷ Տե՛ս Բայրոն, *Խտալիա*. *Չայլդ Չարոլդ* պոեմի 4-րդ երգը, թարգմ. Ղ. Ալիշան, Վենետիկ, Ս. Ղազար, 1860, 1890, 1891, 1901 (անգլերեն և հայերեն):

ըրռնաւորաց ձեռք աղարտ: // Ափունքն այն խուժք եւ սըտրուկք նըւաճեցան յօտարաց.» երկտողով, որն արտահայտելով նույն միտքը, կարծես, հնչում է ավելի անկաշկանդ (անգլերեն՝ And many a tyrant since; their shores obey // The stranger, slave, or savage; their decay), և այդպիսի մի քանի ոչ էական փոփոխություններ ևս: Դա միանգամայն բնական է և բացատրելի, քանի որ այնպիսի մի քնարերգու, ինչպիսին էր Ղ. Ալիշանը, նոր, այն էլ պոեմի մի ամբողջ նվազի, հրատարակության ժամանակ, չէր կարող չանդրադառնալ թեկուզև իր իսկ թարգմանությանը և կատարել որոշ հղկումներ, խմբագրական ուղղումներ ու շտկումներ: Միաժամանակ նշենք, որ *Չայլդ Դարուլդի ուխտագնացությունն* ամբողջությամբ հայերեն հրատարակվել է միայն 1965-ին՝ Զենրիկ Սևանի թարգմանությամբ⁷⁸, որտեղ թարգմանիչը նույնպես պահպանել է հեղինակի ընտրած կառուցվածքը՝ իննյակները:

«Բազմավեպի» 1904-ի տարբեր համարներում Զովի. Պալյանի թարգմանությամբ լույս են տեսնում Բայրոնի որոշ բանաստեղծություններ *Յրեական մեղեդիներ* շարքից՝ *Տեսիլն Պաղտասարի* (*Vision of Belshazzar*) - № 7, *Կործանումն Սենեքերիմի* (*The Destruction of Sennacherib*), *Լացեք ի վրայ...* (*Oh! Weep for those*) և *Բաբելոնեան ջրրոց մօտ...* (*By the Rivers of Babylon We Sat Down and Wept*) - № 8, *Մեռար, հեռացար...* (*Thy Days are Done*) - № 11: Նշենք, որ Զովի. Պալյանը ինչպես «Բազմավեպում», այնպես էլ այլ պարբերականներում, բացի Բայրոնի ստեղծագործություններից, հանդես է եկել նաև Գյոթեի, Չեխովի, Պուշկինի, Լերմոնտովի և այլ գրողների ստեղծագործությունների թարգմանությամբ:

«Բազմավեպի» 1905-ի երրորդ համարում լույս է տեսնում Բայրոնի *Յետին տողք Պայռընի* (*On This Day I Complete My Thirty-sixth Year*) բանաստեղծությունը (թարգմ. Ղ. Ալիշան), որի վերնագրից անմիջապես հետո թույլ է տրվել անճշտություն՝ գրվել են «ի փետրուարի, 1824» բառերը (ի միջի այլոց, այդ անճշտությունը բացակայում է բանաստեղծության 1870-ի, այսինքն, հայերեն առաջին հրատարակության մեջ, որտեղ նշված է՝ «ի յունուար, 1824»): Բացի դրանից, բանաստեղծությունից անմիջապես հետո նշվում է, որ այն անտիպ թարգմանություն է: Դա նույնպես անճշտություն է, քանի որ այն, ինչպես արդեն նշել ենք, դեռևս 1870-ին տեղ է գտել Մխիթարյանների հրատարակած Բայրոնի *Հայերեն վարժությունները և բանաստեղծությունները* ժողովածուում: Ինչպես հայտնի է, սա Բայրոնի վերջին բանաստեղծությունն է, որը բանաստեղծը գրել է իր ծննդյան երեսունվեցերորդ տարեդարձի օրը՝

⁷⁸ Տե՛ս Բայրոն, *Երկերի ժողովածու*, «Հայաստան», Երևան, 1965, էջ 99-275:

ԲԱՅՐՈՆ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ



„Հայաստան“
Հրատարակչություն
Երևան — 1965

1965-ին Երևանում հրատարակված *Երկերի ժողովածուի* տիտղոսաթերթը
The title-page of *Poetical Works* published in Yerevan in 1965

1824-ի հունվարի 22-ին: Բայրոնի զինակից, Իտալիայի կարբոնարական շարժման մասնակից, կոմս Պիետրո Գամբայի վկայությամբ, «Այդ առավոտյան Լորդ Բայրոնը դուրս գալով իր ննջարանից և մտնելով այն սենյակը, որտեղ հավաքվել էին զնդապետ Ստանհոփն ու իր ընկերներից ոմանք, ժպտալով ասաց. «Անցյալ օրը Դուք դժգոհում էիք, որ ես այժմ բանաստեղծություններ չեմ գրում: Այսօր իմ ծննդյան օրն է, և ես հենց նոր ավարտեցի մի բան, որը, կարծում եմ, ավելի լավն է, ինչ սովորաբար գրում եմ»: Այնուհետև նա ներկայացրեց այս հրաշալի և հուզիչ բանաստեղծությունը»⁷⁹: Այս բանաստեղծության մեջ Հունաստանի ազատության համար պայքարող բանաստեղծը կարծես թե հանրագումարի է բերում իր ապրած երեսունվեց տարիները, ապրելու իմաստը, կանխագգում իր մոտալուտ մահը: Նրա կյանքի օրերը նմանվել են դեղնած տերևների, սիրո ծաղիկները և պտուղները գնացել են, մնացել են միայն տանջանքն ու ցավը.

Ժամ է սըրտիս առնուլ արդ դուլ և դադար,
Ձի շարժել զայլս այսուհետև ոչ զօրէ.
Եւ թէպէտ չիք որ յիս հայի սիրաբար,
Այլ սիրել՝ միշտ ինձ քաղցր է:
Եկեալ հասին սաղաթք կենաց ազագուն
Ի թօթափել մըրգաց սիրոյն և ծաղկան.
Որդն և երբ արդ և ցաւալից անձկութիւն.
Սոքա եւեթ ինձ մընամ⁸⁰:

Սակայն բանաստեղծի համար կա Հունաստանի ազատության համար մղվող պայքարը.

Ձարթի՛ր. – չասեմ քեզ, Յունաստան, զարթեար դու –
Ձարթի՛ր հոգիդ իմ. օ՛ն, հայեա՜րց տես, ընդ ո՞ր
Արիւն սըրտիս ի լիճն իւր մայր հեղուցու.
Եւ ապա հաճր, հար ի խոր⁸¹:

⁷⁹ *The Complete Works of Lord Byron*, in one volume, Paris, Published by A. and W. Galignani and Co., 1835, p. 906.

⁸⁰ *Յետին տողք Պայռընի. ի Միստոլունկի, ի փետրուարի, 1824*, թարգմ. Հ. Ղ. Վ. Ալիշան. «Բազմավեպ», 1905, № 3, էջ 128:

⁸¹ Անդ:

Կոմս Պ. Գամբայի վկայությամբ՝ «Այս տողերից, ինչպես նաև նրա առօրյա խոսակցություններից, մենք գիտակցում ենք, որ նրա ձգտումն ու հույսը անփոփոխ սևեռված էին դեպի Յունաստան իր արշավի փառապանծ նպատակի վրա, և որ նա ուներ անհրապեհ ցանկություն՝ վերադառնալ հաղթանակած, կամ չվերադառնալ»⁸²։ Մահվանից ընդամենը երեք ամիս առաջ գրված այս բանաստեղծությունը⁸³ լի է անսահման թախիծով ու տխրությամբ։ Սակայն այդ տխուր տողերի միջից մեր առջև վեր է հանում Բայրոնն իր համարձակ ոգով, որը պատրաստ է իրեն զոհել հանուն Յունաստանի։ Այս բանաստեղծության մեջ, ինչպես նշվեց վերևում, Բայրոնը կարծես թե մարգարեաբար գուշակում է իր մոտալուտ մահը։ Բանաստեղծը մահանում է 1824-ի ապրիլի 19-ին։ Խոր վիշտը, որ համակել է հույներին իրենց ազնիվ բարեկամի, ազատության պայքարի երգչի ու մարտիկի մահվան կապակցությամբ, զգացվում է այն պաշտոնական հայտարարությունից, որ հրապարակել են հունական ազգային-ազատագրական շարժման ղեկավարները։ Համաձայն այդ հայտարարության, հրանոթներից արձակվում են երեսունյոթ համազարկ, որոնց թիվը համապատասխանում է բանաստեղծի տարիքին։ Հասարակական գրասենյակները, խանութները՝ բացառությամբ մթերային խանութների ու դեղատների, փակվում են, իսկ բոլոր տեսակի տոմախմբությունները և համերգները՝ հետաձգվում։ Հայտարարվում է նաև 21-օրյա սուգ, եկեղեցիներում տեղի են ունենում սգո արարողություններ⁸⁴։

«Բազմավեպի» 1924-ի ապրիլյան համարում մի անգամ ևս հանդիպում ենք Բայրոնի վերջին բանաստեղծությանը⁸⁵։ Այստեղ արդեն ուղղված են հանդեսի 1905-ի երրորդ համարում տեղ գտած անճշտությունները՝ նշվում է, որ բանաստեղծությունը գրվել է «ի յունուար, 1824» և հայերեն տպագրվել է դեռևս 1870-ին Վենետիկում։ Այս համարում բերվում են նաև հատվածներ Բայրոնի՝ հայ մշակույթին, պատմու-

⁸² *The Complete Works of Lord Byron*, p. 906.

⁸³ Բայրոնի վերջին՝ *Այսօր լրանում է իմ երեսուներեքերորդ տարին*, բանաստեղծության թարգմանությամբ հանդես են եկել տարբեր թարգմանիչներ։ Այսպես, օրինակ, այս բանաստեղծության թարգմանությունը 1847-ին տպագրվել է «Ազգասերի» № 91-ում՝ Օ. Ֆ. ստորագրությամբ, 1905-ին՝ «Մուրճ» ամսագրի հինգերորդ համարում Դովի. Մասեխյանի թարգմանությամբ։ Այս բանաստեղծության թարգմանության այլ տարբերակներ երևում են նաև «Մասյաց աղավինում» (1860, № 12. թարգմանիչը չի նշվում) և «Արագածում» (1926, № 11՝ Լիսի ստորագրությամբ)։

⁸⁴ Տե՛ս, օրինակ, Алексеев М. П., *Русско-английские литературные связи (XVIII век-1-я половина XIX века)*, «Наука», М., 1982 (серия «Литературное наследство», том 91).

⁸⁵ Տե՛ս Բայրոն, *Այսօր լինիմ ամաց երեսնից եւ վեցից (Յետին Տոռք Պայրընի)*, թարգմ. Զ. Ղեւոնդ Ալիշան. «Բազմավեպ», 1924, № 4, էջ 119։

թյանն ու լեզվին վերաբերող նամակներից և օրագրություններից (անգլերեն և հայերեն, թվով՝ տասնհինգ)⁸⁶: Նամակները, որոնք գրվել են 1816-1821 թվականներին, հասցեագրվել են Թ. Մուրին (երկու նամակ) և Ջ. Մըրրեին (տասներկու նամակ): Բացի դրանից, զետեղվել են *Հայերեն-անգլերեն քերականության* ձեռնարկի համար նախատեսված՝ Բայրոնի գրած առաջաբանը և Թ. Մուրի՝ Բայրոնի որոշ նամակների վերաբերյալ կենսագրական ծանոթագրությունները:

«Բազմավեպի» 1924-ի հինգերորդ համարում հանդիպում ենք Բայրոնի *Երրայական մեղեդիներին* (*Ո՛հ լացեք, Յորդանանու ափերուն վրայ, Յեփթայի աղջիկը, Բաղդասարի տեսիլքը, Կոտորած Սենեքերիմի բանակին*)՝ Արսեն Ղազիկյանի թարգմանությամբ⁸⁷: «Աշխարհաբար հայերենի պահակ կամ պահապան» - այսպես է կոչել հայ մամուլը դասական և եվրոպական գլուխ-գործոցների թարգմանիչ Ա. Ղազիկյանին⁸⁸, որը հանդես է եկել Վերգիլիոսի, Յոմերոսի, Սոփոկլեսի ստեղծագործությունների, ինչպես նաև ֆրանսիական, անգլիական և գերմանական գրականության թարգմանությամբ:

1.2.3. «Գեղունի» և «Հայ ընտանիք» հանդեսներում: «Գեղունին» Վենետիկի Մխիթարյան միաբանության հրատարակած պատմաբանասիրական և գրական-գեղարվեստական պատկերազարդ երկամսյա հանդես է, որը լույս է տեսել 1901-1906, 1909, 1927, 1947 և 1949 թվականներին, իսկ «Հայ ընտանիքը»՝ սփյուռքահայության համար նախատեսված, Վենետիկի Մխիթարյան միաբանության պատկերազարդ ամսագիր է, որը լույս է ընծայվել 1969-1987 թվականներին: Սինչ այդ՝ 1947-1967 թվականներին այն լույս է տեսել «Մխիթարյան ընտանիք» (1960-1962-ին՝ «Ընտանիք») անվանմամբ:

1906-ին «Գեղունի» հանդեսում առաջին անգամ հայերեն լույս է տեսնում Բայրոնի *Սանֆրեդ* դրամատիկական պոեմը՝ հրապարակախոս Ա. Եզեկյանի (1849-1916) թարգմանությամբ⁸⁹: Թարգմանիչը չի

⁸⁶ Տե՛ս Byron's Letters and Journals: with Biographical Notes. - Նամակներ եւ օրագրութիւններ Լորտ Պայրոնի. հանդերձ կենսագրական ծանօթութիւններով. «Բազմավեպ», 1924, № 4, էջ 122-132:

⁸⁷ Տե՛ս Բայրոն, *Երրայական մեղեդիներ*. «Բազմավեպ», 1924, № 5, էջ 173-175:

⁸⁸ Ղազիկյան, Արսեն (1870-1932), հայ թարգմանիչ: Թարգմանություններից բացի ունի նաև եմբագրություններ, ինչպես օրինակ, *Դաստյ էւ իր թարգմանիչները* (1912), *Հայ լեզուի ուղղագրական դասեր* (1923): Ծրագրել էր հիսուն հատոր նվիրել հայ արդի թարգմանական գրականությանը, սակայն իր վիթխարի աշխատությունը *Հայկական նոր մատենագիտություն* (1905-1912), իրենից խլեց երկար տարիներ:

⁸⁹ Տե՛ս Լորտ Պայրոն, *Սանֆրեդ*, թարգմ. Ա. Եզեկեան, «Գեղունի», 1906, № 1-10, էջ 18-62:

Կովկասի Հայոց Հրատարակչական Ընկերություն



ԼՈՐԴ ԲԱՅՐՈՆ

Մ Ա Ն Ֆ Ր Է Դ

ՈՂՐՈՐԴԱԿԱՆ ՊԵՐՔՈՒՄՆ

(Երկը արարուածով)

Քաղաքանկ անգղիերէն ընագրից
ՏԻՐԱՅՐ ՎԱՐԴ.

Թ Ի Ֆ Լ Ի Ջ
Էլէկտրատպ. Օր. Ն. Աղանեանի, Պոլից. 7
1913

1913-ին Թիֆլիսում տպագրված *Մանֆրեդ* դրամայի տիտղոսաթերթը
The title-page of *Manfred* published in Tiflis in 1913

պահպանել բնագրի բանաստեղծական կառուցվածքը՝ կատարելով արձակ թարգմանություն: Չնայած դրան, այդ թարգմանությունը բավականին հաջող է, հնչում է հայերեն և կարդացվում մեծ հետաքրքրությամբ: Ա. Եզեկյանը կրթություն է ստացել Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում, պաշտոնավարել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, աշխատակցել «Մշակ», «Տարազ», «Աղբյուր» և այլ պարբերականների, հանդես եկել Շեքսպիրի, Բայրոնի և այլոց ստեղծագործությունների թարգմանություններով:

Հարկ է նշել, որ Բայրոնի *Մանֆրեդ* դրամատիկական պոեմի թարգմանությանը հետագայում անդրադարձել է նաև պետական և հասարակական գործիչ Յովհաննես Մասեիյանը (1864-1931), որը չնայած հայ իրականության մեջ հայտնի է որպես Շեքսպիրի երկերի ամենաականավոր թարգմանիչ, հանդես է եկել նաև այլ հեղինակների ստեղծագործությունների թարգմանությամբ, որոնց մեջ իրենց ուրույն տեղն են գրավում Բայրոնից կատարած թարգմանությունները: Հ. Մասեիյանի՝ *Մանֆրեդի* թարգմանությունը բազմիցս հրատարակվել է⁹⁰: Բայրոնի և Մխիթարյանների միջև տեղի ունեցած զրույցների որոշ դրվագներ, ինչպես նշվում է հայ մամուլում⁹¹, իրենց արտացոլումն են գտել *Մանֆրեդի* երրորդ գործողության մեջ: Դրա մասին հիշատակում է նաև Ա. Մորուսն իր գրքում. «Ո՛վ գիտե, թերևս այս արարը հայ վանականների հետ Բայրոնի ունեցած զրույցների արծագանքն էր»⁹²: Մանֆրեդը հիվանդ է, և վանահայրը փորձում է նրան հաշտեցնել ինքն իր հետ: Կաթոլիկ քահանան (Հ. Ավգերյանը կամ Ս. Սոմայլյանը) ապաշխարանքի և թողության ճանապարհին են ցույց տալիս Մանֆրեդին (Բայրոնին)։

Որդիս,

ես չխոսեցի պատժելու մասին,

Այլ ապաշավի և ներողության.

Եվ քեզ է մնում դրա ընտրելը. գալով թողության՝

.....
Իսկ առաջինը երկնքին թողնեմք...⁹³։


(թարգմ. Հ. Մասեիյան)

⁹⁰ Տե՛ս, օրինակ, Լորդ Բայրոն, *Մանֆրեդ*, թարգմ. Յովհաննես Մասեիյան, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1922:

⁹¹ Տե՛ս, օրինակ, Ռ. Որբերեան, *Լորտ Պայրըն*. «Բազմավեպ», 1932, № 6-7, էջ 268-270:

⁹² Անդրե Մորուս, *Դոն ժուան կամ Բայրոնի կյանքը*, թարգմ. Աբրահամ Ալիքյան, «Սովետական գրող», Երևան, 1980, էջ 328:

⁹³ Բայրոն, *Երկերի ժողովածու*, «Հայաստան», Երևան, 1965, էջ 463:



1922-ին Վիեննայում տպագրված *Մանֆրեդ* պոեմի տիտղոսաթերթը
 The title-page of *Manfred* published in Vienna in 1922

«Հայ ընտանիք» հանդեսը 1970-1980-ական թվականներին բավականին հաճախ է անդրադարձել Բայրոնի Ս. Ղազար կղզում անցկացրած օրերին՝ տպագրելով ինչպես հայ, այնպես էլ օտարազգի հեղինակների հոդվածներ, ընդ որում, այդ նյութերի մեծ մասը բերվել է երկու լեզվով՝ հայերեն և անգլերեն, երբեմն միայն անգլերեն: Այս տեսակետից բավականին հարուստ է ամսագրի 1974-ի 11-12 միացյալ համարը, որի շատ նյութեր վերաբերում են Բայրոնին: Սույն համարում Բայրոնի մահվան 150-ամյակի առթիվ լույս է տեսել մի ամստորագիր հոդված (հայերեն և անգլերեն)⁹⁴, որտեղ խոսվում է բանաստեղծի՝ Մխիթարյան հայրերին այցելելու մասին, ինչպես նաև բերվում են հատվածներ *Հայերեն-անգլերեն քերականության* ձեռնարկի համար գրված նրա առաջաբանից:

Ընդհանրացնելով մեր ուսումնասիրության արդյունքները՝ վստահորեն կարող ենք պնդել, որ Մխիթարյաններն իրենց հրատարակություններում եվրոպացի գրողներից ամենից շատ անդրադարձել են Բայրոնին: Դա միանգամայն բնական է, հասկանալի և արդարացուցիչ, քանի որ, նախ, եվրոպացի գրողներից ինքը՝ Բայրոնն է ամենից շատ անձնական առնչություն ունեցել Մխիթարյանների հետ, հիացել նրանց ազգանվեր աշխատանքով, ինչպես նաև ուսումնասիրել հայոց լեզուն ու հայ մշակույթը, և երկրորդ, ինչպես իր գրույցներում, դրվատանքով խոսելով Բայրոնի մասին, նշում է իր փառքի գագաթնակետին հասած և Բայրոնի հախտուն քնարերգությամբ ոգևորված գերմանացի մեծ բանաստեղծ Գյոթեն. «Նա մեծ տաղանդ է: Իմ կարծիքով ոչ ոք չունի բանաստեղծական այն ուժը, ինչպիսին որ նա ունի: Արտաքին աշխարհը ճշմարիտ ընկալելու, անցյալը պարզորոշ թափանցելու իր կարողությամբ նա մեծ է, ինչպես Շեքսպիրը»⁹⁵:

⁹⁴ Տե՛ս *Լորտ Պայրըն եւ Մխիթարեան հայրերը. բանաստեղծին մահուան 150-ամեակին առիթով (1824-1974)*: - *Byron and the Mekhitarist Fathers: on the 150th Anniversary of his Death (1824-1974)*: «Հայ ընտանիք», 1974, № 11-12, էջ 6-7:

⁹⁵ Էքերման, *Ջրույցներ Գյոթեի հետ. նրա կյանքի վերջին տարիներին. 1823-1832*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1975, էջ 118:

§ 1.3. Օտարազգի հեղինակները Բայրոնի և Մխիթարյանների առնչությունների մասին

Բայրոնի հայագիտական ուսումնասիրություններին, նրա և Մխիթարյանների առնչություններին անդրադարձել են ոչ միայն Մխիթարյաններն ու մյուս հայ բանասերները, այլև բանաստեղծի համերկացիներ և շատ օտարազգի հեղինակներ (նույնիսկ սովորական զբոսաշրջիկներ), ընդ որում, ոչ միայն գիտական, այլև գեղարվեստական գրականության մեջ: Այդ առնչություններին անդրադարձել են Ջոն Ջեֆրսոնը (*Լորդ Բայրոնը ինչպիսին որ կա*, հ. II, 1883), Յուրի Վեսելովսկին (*Բայրոնը Ս. Ղազար կղզում*, 1893), Ս. Մ. Գրեգորին (*Արարատի երկիրը*, 1920), Անդրե Մորուան (*Բայրոն*, 1930), Անատոլի Վինոգրադովը (*Բայրոն*, 1936), Վիկտոր Ժիրմուսկին (*Բայրոն*, 1940), Ջոն Օ Բրայենը (*Լորդ Բայրոնը, Ֆրիդրիխ ֆոն Շիլլերը և խորհրդավոր Հայը*, 1966), Իրվինգ Ուոլլեսը (*Դավը*, 1967), Լեսլի Մարշանդը (*Բայրոն. դիմակար*, 1979) և շատ ուրիշներ: Այդ առնչություններին օտարազգի հեղինակներն անդրադարձել են ինչպես իրենց առանձին աշխատություններում, այնպես էլ պարբերական մամուլում (թե՛ հայ, թե՛ օտար) տպագրված հոդվածներում: Այստեղ մենք, ժամանակագրական կարգով, առանձին-առանձին կանդրադառնանք միայն որոշ հրատարակությունների, որոնք մեր կարծիքով առավել հետաքրքրական են և ընդգրկում են Բայրոնի և Մխիթարյանների առնչությունների հիմնական գծերը: Դրանք զետեղվել են ինչպես առանձին գրքերում ու ժողովածուներում, այնպես էլ պարբերական մամուլում:

1.3.1. Առանձին գրքերում ու ժողովածուներում: Այսպես, Բայրոնի հայագիտական ուսումնասիրություններին անդրադարձել է անգլիացի գրող Ջոն Քորդի Ջեֆրսոնը (1831-1901) իր *Լորդ Բայրոնը ինչպիսին որ կա* հանրահայտ եռահատոր աշխատության մեջ: Նա գրում է. «Միաժամանակ նա (Բայրոնը - Ա. Բ.) իր մտքի շեղման ուշագրավ բնագավառ գտավ Ս. Ղազար վանքում, ուր ամեն օր իր մակույկով գնում էր գրուցելու վանականների հետ և օգնելու նրանց անգլերեն-հայերեն քերականության ստեղծման գործում, որի հրատարակման համար նա նվիրաբերեց հազար ֆրանկ»⁹⁶:

Բայրոնի և Մխիթարյանների առնչություններին բազմիցս անդրադարձել են ռուս անվանի գրականագետներ, հայր և որդի Վեսելովսկի-

⁹⁶ J. C. Jeaffreson, *The Real Lord Byron. New views of the poet's life*, in three volumes, vol. II, Leipzig, Bernhard Tauchnitz, 1883, p. 203.

ները: Մոսկվայի համալսարանի և Լազարյան Ճեմարանի պրոֆեսոր, պատմահամեմատական գրականագիտության կարկառուն ներկայացուցիչ Ալեքսեյ Վեսելովսկու (1843-1918) գիտական ուսումնասիրությունները հիմնականում նվիրված են արևմտաեվրոպական գրականության պատմությանը: 1889-ին Վեսելովսկիների ընտանիքի ուղևորությունը Վենետիկ և այցելությունը Ս. Ղազար կղզի առիթ հանդիսացան ոչ միայն որդու, այլև հոր համար, որպեսզի նրանք բազմաթիվ ջերմ տողեր նվիրեն Բայրոնի և Մխիթարյանների առնչություններին: Ա. Վեսելովսկու *Բայրոնը Վենետիկում* հոդվածը առաջին անգամ լույս է տեսնում «Вестник Европы» ամսագրում⁹⁷, իսկ հետագայում որպես առանձին գլուխ զետեղվում է հեղինակի *Բայրոն. կենսագրական ակնարկ* մենագրության մեջ⁹⁸: Նկարագրելով Բայրոնի այցելությունը Ս. Ղազար կղզի, Ա. Վեսելովսկին նկատում է, որ դրանով «և մի արտասովոր երանգ ավելացավ նրա բարդ հոգեկան կյանքում»⁹⁹: Այնուհետև հեղինակն անդրադառնում է այդ «էկզոտիկ հայկական անկյունով» Բայրոնի հրապուրվելուն, այնտեղ անցկացրած օրերին, նրա և Մխիթարյան հայրերի մտերմության ու համագործակցության հարցերին: Իսկ Ա. Վեսելովսկու որդու՝ անվանի գրականագետ և հայագետ, բազմաթիվ հայագիտական աշխատությունների հեղինակ Յուրի Վեսելովսկու առաջին արտասահմանյան ուղևորության տպավորությունները տեղ են գտել *Բայրոնը Ս. Ղազար կղզում* ակնարկում, որը լույս է տեսել 1893-ին «Семья» հանդեսում¹⁰⁰: Վերոհիշյալ ակնարկը հետագայում, Յու. Վեսելովսկու այլ ակնարկների հետ միասին, ամփոփվել է հեղինակի *Գրական ակնարկներ* գրքում¹⁰¹: Այս ակնարկում Յու. Վեսելովսկին, ինչպես Բայրոնի և Մխիթարյանների առնչություններին անդրադարձող ուրիշ հեղինակներ, խոսելով Ս. Ղազար վանքի մասին նշում է, որ «այն չի ծառայում որպես կրոնական կամ լուսավորական կենտրոն իտալական ժողովրդի համար. ո՛չ, դա տարաշխարհիկ ժողովրդի մի

⁹⁷ Ст'у А. Веселовский, *Байрон в Венеции*, «Вестник Европы», 1901, т. 2, кн. 4, с. 645-691.

⁹⁸ Ст'у А. Веселовский, *Байрон: биографический очерк*, М., 1914.

⁹⁹ Ամր, էջ 188:

¹⁰⁰ Ст'у Ю. Веселовский, *Байрон на острове св. Лазаря*, «Семья», 1893, № 54, с. 2-4, № 55, с. 2-4. Այս ակնարկը հայերեն (թարգմ. Դ. Մելքոնյանց) *Բայրոնը Մխիթարեանների մօտ* վերտառությամբ լույս է տեսնում Մոսկվայում հրատարակվող «Հանդես գրականական եւ պատմական» տարեգրքի 1894-ի համարում (հինգերորդ գիրք, էջ 158-174), որտեղ թարգմանիչը ոչ միայն փոխել է հոդվածի վերնագիրը, այլև թարգմանել է հեղինակի անունը՝ Յուրի Վեսելովսկու փոխարեն նշելով Գեորգ Վեսելովսկի:

¹⁰¹ Ст'у Ю. Веселовский, *Литературные очерки*, Типография А. В. Васильева, М., 1900, с. 214-225.

յուրահատուկ գաղութ է, ինչ-որ հրաշքով իտալական միջավայր տեղափոխված հեռավոր արևելքի մի անկյուն, դա իր լուսավորական գործունեությամբ հայտնի հայ-մխիթարյանների վանքն է»¹⁰²: Այնուհետև Յու. Վեսելովսկին խոսում է Բայրոնի Ս. Ղազար կղզի առաջին այցելության, կղզու բնակիչների հետ նրա առաջին ծանոթության, հայերենի առաջին դասերի, բանաստեղծի և Ավգերյանի բարեկամական առնչությունների մասին, ինչպես նաև անդրադառնում Մխիթարյանների կողմից Բայրոնին հատկացված աշխատասենյակին, որտեղ բանաստեղծը ոչ միայն հայերենի դասեր է առել Չարություն Ավգերյանից, նամակներ գրել իր ընկերներին, այլև այստեղ է «կազմվել և այն առաջին բանասիրական աշխատությունը, որին մասնակցել են և Ավգերյանը, և Բայրոնը. դա անգլերեն քերականությունն էր հայերի համար»¹⁰³: Ապա Յու. Վեսելովսկին ավելացնում է, որ այս սենյակում է բանաստեղծը գրել վերոհիշյալ քերականության համար նախատեսված հայտնի առաջաբանը, թարգմանել կորնթացիներին ուղղված Ս. Պողոսի թղթերը, ինչպես նաև այլ գործեր հայերենից: Այդ առաջաբանը, որն անգլերենից ռուսերեն է թարգմանել Յու. Վեսելովսկու մայրը՝ Ռուսական խոսքարվեստի սիրողների միության (Союз любителей русской словесности) անդամ, «Русские ведомости» հանդեսի աշխատակցուհի, բազմաթիվ ստեղծագործությունների հեղինակ, տաղանդավոր թարգմանչուհի Ալեքսանդրա Ադոլֆովնա Վեսելովսկայան (1840-1910), նույնպես տեղ է գտել ակնարկում: Յու. Վեսելովսկին մեծ ակնածանքով է խոսում նաև վանքի հարուստ գրադարանի, այնտեղ պահվող գրքերի մասին, որոնք վանականների ջանքերով ձեռք են բերվել մի ամբողջ դարի ընթացքում: Բայրոնի և Ավգերյանի զրույցները մեծ հետաքրքրություն են առաջացնում բանաստեղծի մոտ այն ազգի նկատմամբ, որի լուսավորությանը, մշակույթի պահպանմանն ու զարգացմանն են ծառայում Մխիթարյանները. «Բայրոնը ազահությամբ լսում է ծերունու խոսքերը, և նրան թվում է, թե իրեն վաղուց է ծանոթ ու մերձավոր այդ հեռավոր երկիրը, որի մասին նրան պատմում է ծերունին, այն երկիրը, որտեղ հնադարյան ավերակները պահպանում են անցյալի փառքի և կորուսյալ երջանկության վեհասքանչ պատմությունը»¹⁰⁴: Յետագայում Յու. Վեսելովսկու

¹⁰² Անդ., էջ 215:

¹⁰³ Անդ., էջ 218:

¹⁰⁴ Անդ., էջ 225:

այս ակնարկը գետեղվել է նաև նրա երկերի *Հայ գրականության, պատմության և մշակույթի ուրվագծեր* ժողովածուում¹⁰⁵:

Ֆրանսիացի գրող Անդրե Մորուան (1885-1967) գրում է. «...ամեն օր Բայրոնն իր գոնդոլն էր կանգնեցնում հայկական վանքի մոտ: Կապվել էր հոգևոր հայերին և սիրում էր այցելել նոճիներով, Հուդայի ծառերով և նարնջենիներով կանաչապատված նրանց փոքրիկ կղզին: Անցնելով ծաղկավետ ճեմելիքով, մտնում էր ամբողջովին սրբապատկերներով զարդարված մի սենյակ, ուր օգնում էր հայր Պասկալ Ավգերին¹⁰⁶ պատրաստելու Անգլերեն-հայերեն մի քերականություն»¹⁰⁷: Այստեղ խոսքը վերաբերում է Հ. Ավգերյանի և Բայրոնի միացյալ ջանքերով 1817-ին հրատարակված *Անգլերեն-հայերեն քերականության* ձեռնարկին՝ հայերի օգտագործման համար: 1939-ին «Բազմավեպում» արտատպվում է Ա. Մորուայի՝ Բայրոնին նվիրված վեպից մեկ հատված¹⁰⁸, որտեղ հեղինակը նկարագրում է Բայրոնի այցը Մխիթարյան միաբանություն, Ս. Ղազար կղզու գեղեցկությունը, Հ. Ավգերյանի օգնությամբ Բայրոնի հայերեն սովորելը և *Անգլերեն-հայերեն քերականության* ձեռնարկի վրա նրանց համատեղ աշխատանքը: Բացի դրանից, բերված է նաև Ա. Մորուայի վեպի այն հատվածը, որտեղ նշվում է, որ *Մանֆրեդի* երրորդ արարի մի տեսարան «արձագանգն էր Պայրոնի եւ հայ Վարդապետներուն միջեւ տեղի ունեցած խօսակցութեանց»:

Ռուս անվանի գրող Անատոլի Վինոգրադովի (1888-1946) նկարագրմամբ «...նակույկավար Տիտոն տարել է նրան (Բայրոնին - Ա. Բ.) Ս. Ղազար կղզի, որտեղ ծառերով ստվերապատված ոչ մեծ խումբ կազմող շենքերի մեջ երևում էին ոսկեգծված խաչերով գմբեթները և զանգակատները: Դա գիտնական վանականների՝ Հայաստանի վտարանդիների, այսպես կոչված «մխիթարյանների» ապաստանն էր: Ի տարբերություն այն ժամանակվա վենետիկյան վանքերի, որոնք Վենետիկի բարձրաշխարհիկ երիտասարդությանը գրավում էին որպես զվարճության բազմապիսի արգելված ձևերի տեղեր, վենետիկյան այդ փոքրիկ վանքը հանդիսանում էր հայկական անկախության քողարկված ղեկավար

¹⁰⁵ Ст'ю Веселовский Ю. А., *Очерки армянской литературы, истории и культуры*, «Ай-астан», Ереван, 1972, с. 391-402.

¹⁰⁶ Խոսքը Հայրություն Ավգերյանի մասին է:

¹⁰⁷ Անդրե Մորուա, *Դոն ժուան կամ Բայրոնի կյանքը* (թարգմ. Աբրահամ Ալիքյան), «Սովետական գրող», Երևան, 1980, էջ 324: - А. Maurois, *Byron*, tome II, Paris, Bernard Grasset, 1930, էջ 118 (ֆրանսերեն):

¹⁰⁸ Անտրե Մորուա, *Պայրոնի եւ Ս. Ղազարու մասին*, թարգմ. Հ. Բ.. «Բազմավեպ», 1939, № 1-2, էջ 34:

կենտրոն»¹⁰⁹: Իհարկե, այդ խոսքերը մի փոքր չափազանցված են և գեղարվեստորեն ազատ արտահայտվելու արդյունք, սակայն հեռու չեն ճշմարտացիությունից, քանի որ XVIII դարի սկզբներին, երբ հայերը տառապում էին մի կողմից սուլթանական թուրքիայի, իսկ մյուս կողմից՝ շահական Պարսկաստանի լծի տակ, Վենետիկից ոչ հեռու գտնվող Ս. Ղազար փոքրիկ կղզին թերևս միակ վայրն էր աշխարհում, որտեղ ազատ ու անկաշկանդ հնչում էր հայոց լեզուն և հանգամանորեն ուսումնասիրվում հայ հինավուրց մշակույթն ու ստվարածավալ գրականությունը:

Ս. Ղազար կղզում Բայրոնի հայերեն սովորելուն անդրադարձել է նաև ռուս անվանի գրականագետ, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Վիկտոր Ժիրմունսկին (1891-1971) իր *Արևմտանվորոպական գրականությունների պատմությունից* ժողովածուում զետեղված *Բայրոն* հոդվածում. «...վենետիկյան տոնախմբության զվարճությունների միջև ընկած ժամանակամիջոցում Ս. Ղազար հայկական վանքի վանականների մոտ ուսումնասիրում է հայոց լեզուն՝ երազելով խորամուխ լինել արևելյան պոեզիայի գաղտնիքների մեջ, և իր նոր բարեկամների կողմից հրատարակված հայերեն քերականության առաջաբանում բացեիբաց արտահայտում է իր համակրանքը թուրքական լծից հայ ժողովրդի ազատագրության գործին»¹¹⁰:

Ամերիկացի ժամանակակից ականավոր գրող Իրվինգ Ուոլլեսը (1916-1990) առաջին անգամ Ս. Ղազար է այցելել 1964-ին: Այդ այցելության մասին որոշ տեղեկություններ կարելի է քաղել 1974-ին «Հայ ընտանիք» հանդեսում զետեղված Զ. Լևոնյանի հոդվածից, որը Իրվինգ Ուոլլեսի Ս. Ղազար կատարած հերթական այցելության մասին է (գրողի այցի վերաբերյալ որոշ տեղեկություններ հակիրճ ներկայացվել են նաև անգլերենով), ինչպես նաև հոդվածագրի հարցազրույցից՝ գրողի հետ (անգլերեն և հայերեն)¹¹¹: Ինչպես նշում է ինքը՝ գրողը, իր հարցազրույցում, «Կը փափաքեի ճանչնալ վանականներու այս փոքրիկ խումբը, նաեւ անոր համար որ Պայրընեան հրատարակութիւններու եւ նկարներու մեծ հաւաքածոյ մը ունին: Օր մը կ'նոջս հետ որոշեցինք, 1964-ին էր, Ս. Ղազար երթալ: Ժամադրութիւն չառինք եւ վարդապետ մը

¹⁰⁹ А. Виноградов, *Сборник сочинений в трех томах*, т. III, М., «Художественная литература», 1988, с. 466.

¹¹⁰ В. М. Жирмунский, *Из истории западно-европейских литератур*, «Наука», Ленинградское отделение, Ленинград, 1981, с. 197.

¹¹¹ Տե՛ս Զ. Լևոնեան, *Իրվինկ Ուալլըս Ս. Ղազարի մէջ*. «Հայ ընտանիք», 1974, № 11-12, էջ 28-31: - *An Interview with Irving Wallace for "Hye Endanik"*. - *Հարցազրույց մը Իրվինկ Ուալլըսի հետ*, ամի, էջ 31-35:

մեզ առաջնորդեց: Հետաքրքրուած էի իրենց պատմութեամբ, թէ ի՞նչպէս հոս եկած էին, եւ Հայաստանի մասին»¹¹²: Այսպիսով, դեռեւս մինչև իր առաջին այցելութիւնը Ս. Ղազար, Իրվինգ Ուոլլեսը, ամենայն հավանականութեամբ, որոշ տեղեկութիւններ ունեցել է Բայրոնի և Մխիթարյանների առնչութիւնների մասին: Իսկ այդ այցելութեան ընթացքում հայ մշակույթի և հոգևոր կյանքի հիմնավորը կենտրոնն այնպիսի խոր տպավորութիւն ու ազդեցութիւն են թողել գրողի վրա, որ նա հետագայում իր նշանավոր և ծավալուն ստեղծագործութիւններից մեկի՝ *Ղազը*¹¹³ վեպի, էջերում զգալի տեղ է հատկացրել Ս. Ղազար կղզյակին, Մխիթարյաններին և Բայրոնի՝ Ս. Ղազարում անցկացրած օրերին: Իր գրքի առաջին իսկ հրատարակութիւնից անմիջապէս հետո, 1967-ի աշնանը, Ի. Ուոլլեսն անմիջապէս «կը փութայ Ս. Ղազար զայն անծամբ ծօնելու Միաբանութեան Գրադարանին իբրեւ նշան խոր համակրանքի»¹¹⁴:

Ի. Ուոլլեսի վեպի գլխավոր հերոսը՝ Մաթ Բրեննանը, դատաւսումից, ամուսնալուծութիւնից, արդարացի վրդովմունքից և հուսահատութիւնից հետո, դժգոհելով միջավայրից ու շրջապատից, փախուստի է դիմում իր հայրենիքից և աննպատակ թափառելով Եվրոպայի տարբեր վայրերում, ի վերջո հայտնվում է Վենետիկում, որտեղ իրեն զգում է ավելի պակաս ճնշված, քան որևէ այլ տեղում: Դրա պատճառով էլ մտադրվում է այստեղ մնալ ավելի երկար՝ երեք շաբաթ կամ երեք ամիս, բայց մնում է ավելի քան երեք տարի: Ուշադրութեամբ ծանոթանալով արտասովոր քաղաքի պատմութեանը՝ Բրեննանը հանդիպում է Լորդ Բայրոնի անվանը և անսպասելիորեն իմանում բանաստեղծի Ս. Ղազար կղզու հետ ունեցած առնչութեան մասին: Եվ որևէ լավ բան անելու ցանկութիւնից դրդված՝ Բրեննանը այցելում է հայկական կղզի և առաջին իսկ հայացքից սիրահարվում այդ կղզուն՝ ձիթենիների պուրակները և նոճիների շարքերը, արտասովոր խաղաղութիւնը ոյութում են նրան, գրավում նրա անհանգիստ միտքն ու հոգին, իսկ համեստ, բարյացակամ, նրբակիրթ Մխիթարյան հայրերի ջերմ վերաբերմունքը, որոնք ընթերցումով են մոտենում Բրեննանի տանջանքին ու հոգսերին և փորձում օգնել նրան, Մխիթարյանների և Բրեննանի՝ փոխադարձ հարգանքի վրա հիմնված բարեկամութիւնը դարձնում է հավերժ: Հենց արբահորից, մի քանի ամիս անց, Բրեննանը հրավեր է ստանում՝ լինել Ս. Ղազարում ինչպէս իր տանը և համաձայնել օգտվելու իրեն տրված արտոնութիւններից՝ իր ուսումնասիրութիւնների համար զբաղեցնել

¹¹² Անդ, էջ 34:

¹¹³ Տե՛ս Irving Wallace, *The Plot*, Simon & Schuster, Inc., New York, 1968.

¹¹⁴ Զ. Լեւոնեան, *Իրվինգ Ուոլլես Ս. Ղազարի մէջ*, էջ 28:

վերևի հարկի աշխատասենյակը, որտեղից երևում էր Սուրբ Մարկոսի զանգակատան հեռավոր սրածայր ծողը: Բրեննանը մեծ խանդավառությամբ ընդունում է հրավերը. «Վերջերս ես իմ հետճաշյա ժամանակն անց եմ կացնում մի փոքրիկ կղզում, ծովածոցիկից դուրս, հեռավոր բնակավայր հայ հայրերի համար, որոնք սիրեցին ինձ: Կղզու անունն է Ս. Ղազար»¹¹⁵: Դա Բրեննանի կղզին էր, որտեղ նա աշխատում էր ու խորհում իր ճակատագրի մասին, նրա «հատուկ ապավենը, բայց ոչ միայն նրա ապավենը: Դեռևս նրանից մեկուկես դար առաջ մի ուրիշ արևմտյան վտարանդի, որն ստիպված էր խայտառակ ձևով հեռանալ իր հայրենիքից, հայտնաբերել էր Ս. Ղազարի առաքինությունները... Փաստորեն Լորդ Բայրոնն է առաջնորդել Բրեննանին դեպի այդ կղզին՝ նրա ապաստարանը»¹¹⁶: Այնուհետև, երբ Բրեննանը կրկին այցելում է Ս. Ղազար, խորհրդածում է և գալիս այն եզրահանգման, որ «այս կղզում իր առաջին հյուրընկալողները եղել են Բայրոնի և Բըրթոնի»¹¹⁷ ստվերները»¹¹⁸:

Ի. Ուոլլեսի վեպում նկարագրվում են նաև Մխիթարյանների՝ Ս. Ղազար կղզում հաստատվելու և Բայրոնի հայրենն սովորելու գործընթացների առանձին դրվագներ: Մեր կարծիքով, Ի. Ուոլլեսի վեպի գլխավոր հերոսի՝ Սաթ Բրեննանի նախատիպ հանդիսացել է Լորդ Բայրոնը: Չուգահեռներ անցկացնելով նրանց միջև, նկատում ենք, որ երկուսն էլ դժգոհության հետևանքով ինքնակամ հեռացել են իրենց հայրենիքից, երկուսն էլ երկար դեգերումներից հետո հայտնվել են Վենետիկում, որտեղ ապաստանել են համեմատաբար երկար ժամանակով, չնայած նախօրոք որոշել են երկար չմնալ, երկուսն էլ ծանոթացել և սիրել են Մխիթարյաններին, սիրահարվել Ս. Ղազար կղզուն, նրա ձիթենիներին ու նոճիներին, հաճույքով ու խանդավառությամբ աշխատել են Ս. Ղազարում, նույնիսկ Վենետիկում նրանց սիրո առաջին էակները՝ Մարիաննան և Լիզան, եղել են նույն տարիքի:

Ընդհանրապես, Վենետիկը՝ իր եզակի և դյուբական գեղեցկությամբ, Ուոլլես ամուսինների նախասիրած վայրերից մեկն էր: 1974-ին, երբ նրանք իրենց արձակուրդն էին անցկացնում Վենետիկում, Ի. Ուոլլեսը կնոջ հետ միասին կրկին այցելում է Ս. Ղազար, որտեղ Մխիթար-

¹¹⁵ Irving Wallace, *The Plot*, էջ 186:

¹¹⁶ Անդ, էջ 200:

¹¹⁷ Բըրթոն, Ռիչարդ (1821-1890), անգլիացի ճանապարհորդ և արևելագետ, մեծ համբավ է ձեռք բերել *Չազար ու մեկ գիշեր* հեքիաթաշարի անգլերեն թարգմանության (16 հատոր, 1885-1888) շնորհիվ:

¹¹⁸ Irving Wallace, *The Plot*, էջ 201.

յանները նրանից տեղեկանում են, որ «կը մշակէ ծրագիրը վէպի մը, որուն մէջ գործողութեան գլխաւոր կեդրոններէն մէկը պիտի ըլլայ Ս. Ղազար»¹¹⁹։ Այդ այցելութեան նպատակն էր նաև նախնական նյութ հավաքել վերոհիշյալ ծրագրի իրականացման համար։ Նրանք Ս. Ղազար են ժամանում 1974-ի հուլիսի 25-ին՝ կեսօրից հետո, որտեղ նրանց վանքի քարափի մօտ ջերմորեն դիմավորում են միաբանության հայրերը՝ աբբահայր Յ. Սերոբէ Վրդ. Ազըլեանի գլխավորությամբ։ Ի. Ուոլլեսը վանք այցելության ժամանակ հետաքրքրությամբ կանգ է առնում ամեն մի մանրամասնության առջև, կարծես թէ առաջին անգամ էր տեսնում, կատարում է գրառումներ, կրկնել է տալիս բացատրությունները, չի ուզում բաց թողնել վանքի պատմական ու մշակութային հարստություններին վերաբերող որևէ նրբություն։ Հատկապես մեծ ուշադրությամբ է կանգ առնում «այն սենեակին մէջ, ուր աւելի քան դար մը առաջ հայերէն սերտած ու սորված էր մեծ քերթողը Լորտ Պայրըն, որուն անունը անբաժանելիօրէն կապուած է Ս. Ղազարի, եւ որուն դիմակարը մնայուն զարդն է՝ Ս. Ղազարի իր աշխատասենեակին։ Եւ յանկարծ կը բացագանչէ ... «Անկասկած աշխարհի ամենէն խաղաղ եւ ամենէն հրապուրիչ անկիւններէն մէկն է Ս. Ղազար»։ Եւ ... կը փափաքի ձիթենիի ոստով մը հրաժեշտ առնել վանքէն, փրցուած այն բլուրէն՝ ուր Լորտ Պայրըն կը սիրէր յանձնուիլ բանաստեղծական ներշնչումներուն գիրկը...»¹²⁰։ Գրողը հողվածագրի միջոցով Մխիթարյաններին է նվիրում իր մասին լույս տեսած Ջոն Լիվինսոնի *Իրվինգ Ուոլլես. գրողի դիմանկարը* նորագույն հատորը՝ հետևյալ սրտառու ընծայական մակագրությամբ. «Ս. Ղազար կղզիին բարի Հայրերուն, մասնաւոր շնորհակալութեամբ Աթոռակալ Յ. Սերոբէի, իրենց ջերմ հիւրասիրութեան եւ ընծեռած ազնիւ օժանդակութեան համար իմ պրպտումներուն՝ իբրեւ պատրաստութիւն վէպի մը, որուն մէջ ծրագրած են Ս. Ղազարը իբրեւ ենթահող գործածել»¹²¹։

Այնուհետև, Ս. Ղազար երրորդ այցելության հաջորդ օրը՝ 1974-ի հուլիսի 26-ին, Վենետիկում Ջ. Լևոնյանի՝ գրողի հետ կայացած հարցազրույցի ընթացքում Ի. Ուոլլեսը կրկին շեշտում է, որ իր ներկայիս այցը Ս. Ղազարի հետ ավելի մանրամասն ծանոթանալու նպատակ է հետապնդում, «...որպէսզի կարենամ Ս. Ղազարի մասին աւելի մանրամասնօրէն գրել։ Որովհետև յաջորդ գիրքերէս մէկը ... պիտի խօսի Ս. Ղազարի մասին։ Գիրքին տիտղոսը պիտի ըլլայ՝ «Աղանիի ծրագիր»,

¹¹⁹ Ջ. Լեւոնեան, *Իրվինկ Ուալլըս Ս. Ղազարի մէջ*, էջ 30։

¹²⁰ Անդ։

¹²¹ Անդ, էջ 31։

խորհրդաւոր անուն մը: Այդ գիրքին մէջ Ս. Ղազար գործողութեան գլխաւոր կեդրոններէն մէկը պիտի ըլլայ»¹²²: Հարցազրույցի ժամանակ, պատասխանելով «Ձեր նախասիրած հեղինակները» հարցին, Ի. Ուոլլեսն առանց երկմտելու պատասխանում է. «Անցեալին մէջ՝ ... բանաստեղծներէն Պայրլըն»¹²³:

Արձանագրենք, որ Ի. Ուոլլեսը հետագայում իրականացնում է վերոհիշյալ հարցազրույցում արծարծած իր մտահոգացումը: 1979-ին Նյու-Յորքում լույս է տեսնում նրա *Աղավնի ծրագիրը* վեպը¹²⁴, որն այնուհետև հրատարակվում է ևս մի քանի անգամ: Այս գրքում նույնպես Ի. Ուոլլեսն անդրադառնում է Մխիթարյաններին ու Բայրոնին: Ընթերցողը վեպի հենց առաջին էջերից ծանոթանում է Ս. Ղազար վանքի պատմությանն ու գրադարանին, որտեղ «պահպանվում են բազմաթիվ հայերեն ձեռագրեր, ինչպես նաև այլ հազվագյուտ գանձեր»¹²⁵: Վեպի գործող անձ հայ աբեղան մանրամասնորեն նկարագրում է 1701-ին Մխիթարյան միաբանության հիմնադրումը Կ. Պոլսում և հետագա հաստատումը Ս. Ղազար կղզում¹²⁶: Խոսվում է նաև Մխիթարյան միաբանության առաջատար հայագիտական կենտրոն լինելու մասին, որն ունի դպրոց, տպարան ու եկեղեցի: Վերջին երկու դարերի ընթացքում շատ անվանի մարդիկ են այցելել Ս. Ղազար, որոնց մէջ իր ուրույն տեղն է գրավում Լորդ Բայրոնը, որը եկել էր ուսումնասիրելու հայոց լեզուն և կազմել էր հայ-անգլերեն բառարան¹²⁷: Վեպում կան նաև Մխիթարյան հայրերին նվիրված բազմաթիվ էջեր¹²⁸:

Այսպիսով, գալիս ենք այն եզրահանգման, որ միանգամայն բնական է և օրինաչափ, որ այնպիսի մի խորաթափանց և իրատես անձնավորություն, ինչպիսին էր ամերիկացի մեծանուն գրող Իրվինգ Ուոլլեսը, որն անցյալի բանաստեղծներից առանձնացնում է **միայն** Բայրոնին, այդքան մանրազնին կերպով հետաքրքրվում է Ս. Ղազար կղզով, Մխիթարյաններով, նրանց կատարած ազգագույն աշխատանքով, Բայրոնի հայագիտական ուսումնասիրություններով և դրանք գեղարվեստորեն արտացոլում է իր ստեղծագործություններում:

¹²² Ձ. Լեւոնեան, *Հարցազրույց մը Իրվինկ Ուալլեսի հետ*. «Հայ ընտանիք», 1974, № 11-12, էջ 34:

¹²³ Անդ, էջ 35:

¹²⁴ Տե՛ս Irving Wallace, *The Pigeon Project*, Simon and Schuster, New York, 1979.

¹²⁵ Անդ, էջ 35:

¹²⁶ Տե՛ս անդ, էջ 39:

¹²⁷ Տե՛ս անդ:

¹²⁸ Տե՛ս անդ, էջ 43-46, 84-85, 87, 89 և այլն:

Մենք այստեղ մանրամասնորեն անդրադարձանք Ի. Ուոլլեսին, նրա *Դավը* և *Աղավնի ծրագիրը* վեպերին, քանի որ, ըստ մեր ունեցած տեղեկությունների, դա առաջին դեպքն է, երբ գեղարվեստական ստեղծագործության մեջ արտացոլվում են Մխիթարյանների և Բայրոնի առնչությունների որոշ դրվագներ, իսկ Ս. Ղազար կղզին դառնում է գեղարվեստական երկուն նկարագրվող գործողությունների ծավալման վայր:

Անգլիացի հայտնի կովկասագետ, Լոնդոնի Կովկասյան ուսումնասիրությունների համալսարանի պրոֆեսոր, Հայաստանի անցյալին ու ներկային նվիրված մի շարք աշխատությունների հեղինակ Դեյվիդ Մարշալ Լանգի (1924-1991) *Հայաստան. քաղաքակրթության օրրան* աշխատության մեջ նույնպես հանդիպում ենք Մխիթարյան հայրերի գործունեության, Բայրոնի Ս. Ղազար կղզի կատարած այցելության և նրա հայերեն սովորելու մասին տեղեկությունների: «Տասնիններորդ դարում, - գրում է հեղինակը, - Լորդ Բայրոնը հայերեն սովորելու նպատակով այցելեց Ս. Ղազար: Մինչև այժմ էլ վանքի այգում, որտեղից տեսանելի է Սուրբ Մարկոսի տաճարը, պահպանվում է այն քարե սեղանը, որի առջև նա սովորություն ուներ նստելու և խորհելու»¹²⁹:

Մխիթարյանների և Բայրոնի առնչություններին անդրադարձել է նաև անգլիացի պատմաբան և ճանապարհորդ, գրող Ջեյմս Մորիսը (ծնունդով՝ Ջեյմս Համֆրի Մորիս, ծնվ. 1926) 1960-ին գրած իր *Վենետիկ* գրքում, որը 1961-ին արժանացել է մրցանակի: Նրա գրքից բավականին ընդարձակ մի հատված 1979-ին արտատպվել է «Հայ ընտանիք» ամսագրում *Սուրբ ջրեր* վերնագրով (անգլերեն)¹³⁰: Այդ հատվածում հեղինակը մանրամասնորեն նկարագրում է Ս. Ղազարը՝ փոքր, բայց բավականին լավ խնամված քաղաքամերձ կղզյակը՝ իր գրավիչ նոճիների պուրակներով, փոքրիկ զանգակատնով, կանաչով պարուրված տաղավարներով, և ավելացնում, որ ժամանակին բարձիթողի վիճակում գտնվող այդ անհրապույր և ամալի կղզին ծաղկեց, երբ այնտեղ հաստատվեցին Մխիթարյան հայրերը իրենց Մխիթար Աբբահոր հետ, որոնք Ս. Ղազարը դարձրին հայ մշակույթի, ազգային կրթության և կրոնի երեք գլխավոր կենտրոններից մեկը՝ Վիեննայի և Էջմիածնի հետ

¹²⁹ David Marshall Lang, *Armenia: Cradle of Civilization*, George Allen & Unwin, London • Boston • Sydney, 1978, p. 277. Կա Դ. Լանգի գրքի ռուսերեն թարգմանությունը, որը լույս է տեսել որպես «Հին քաղաքակրթությունների առեղծվածները» մատենաշարի առանձին հատոր. Дэвид Лэнг, *Армения: народ-созидатель*, Центрполиграф, М., 2004, с. 327.

¹³⁰ St' u Holy Waters (James Morris, *Venice*, Faber and Faber Ltd., London, 1974, pp. 288-294), «Հայ ընտանիք», 1979, № 7-9, էջ 51-54:

միասին: Վեներտիկուն, շարունակում է իր միտքը Ջ. Մորիսը, բոլորը ջերմ վերաբերմունք են ցուցաբերել Մխիթարյանների նկատմամբ, և նույնիսկ Նապոլեոնն անձեռնխելի է թողել Ս. Ղազարի վանքը, այն դեպքում, երբ վերացնում էր մյուս վանքերը: Հեղինակը սիրով ու հիացմունքով է խոսում մայրավանքում պահվող ձեռագրերի և գրքերի հրաշալի հավաքածուի, բազմաթիվ նվերների մասին, որոնք տվել են Սադրիդի դուքսը (խոսքը Իսպանիայի թագավոր Կարլոսի (1848-1909) մասին է), Հռոմի Գրիգոր XVI պապը (1765-1846, Հռոմի պապ է եղել 1831-1846 թվականներին), իտալացի քանդակագործ Անտոնիո Կանովան (1757-1822), անգլիացի ճանապարհորդ, գրող և թարգմանիչ Ռիչարդ Ֆրենսիս Բրոքոնը (1821-1890), Վեներտիկի պատրիարքն ու մյուսները: Այս ամենը կղզին դարձրել են հազվագյուտ և ընտիր իրերի մի իսկական շտեմարան: «Եվ ամենագլխավորը՝ այստեղ է լորդ Բայրոնը»¹³¹, - ոգևորված գրում է Ջ. Մորիսը, մանրամասնորեն նկարագրում Բայրոնի հայերեն սովորելու ընթացքը և ավելացնում, որ հայ վանականները միշտ հարգանքով են պահպանել Բայրոնի հիշատակը և երբեք չեն թողել, որպեսզի այն մարի: Այսօր էլ նրա ոգին, կարծես, թևածում է Ս. Ղազարում. կանգուն է այն ծառը, որ տնկվել է նրա օգնությամբ, պարտեզում պահպանվել է այն տաղավարը, որտեղ նա նստել, հանգստացել, մտորել և խորհրդածել է, պահվում է այն գրիչը, որով նա գրել է, կան մի շարք նկարներ, որտեղ պատկերվում է բանաստեղծը, և այլն, և այլն: Գրքում բերված է նաև մի հատված Չարլզ Քամելի Մխիթարյան հայրերին նվիրված բանաստեղծությունից, որտեղ դիմելով նրանց Քամելն ասում է, որ Բայրոնի «հոգին ... կը ժառանգեք մաս մը դուք...»: Իսկ գրքի հեղինակը, իր հերթին, անվերապահորեն համոզված և հավատացած է, որ հայերը դեռ շատ երկար ժամանակ կհիշեն Բայրոնին:

Բացի վերոհիշյալ հեղինակներից, Բայրոնի և Մխիթարյանների առնչություններին իրենց աշխատություններում անդրադարձել են նաև բազմաթիվ այլ օտարերկրացիներ՝ Ալեքսանդր Հերմետը և Պաուլ Կոնի Ռատտի դի Դեզիոն¹³² (Իտալիա), Ռոբերտ Քըրզոնը¹³³, Ս. Մ. Գրե-

¹³¹ Անդ, էջ 53:

¹³² Տե՛ս Ալեքսանդր Հերմետ և Պաուլ Կոնի Ռատտի դի Դեզիո, *Հայերի Վեներտիկյան տասնվեց դար պատմության եւ առասպելի միջով*, թարգմ. Սոնա Յարութիւնեան, Մուրսիա - Սահակ Պարթեւ, Երևան, 2000, գլուխ ԺԴ-ԺԵ:

¹³³ Տե՛ս R. Curzon, *Armenia: a year at Erzerum, and on the frontiers of Russia, Turkey, and Persia*, John Murray, Albemarle street, London, 1854, p. 226-227.

գորին¹³⁴ (Անգլիա), Քերոլայն Ֆրանկլինը¹³⁵ (Ուելս), Լեսլի Մարշանը¹³⁶ (ԱՄՆ) և շատ ուրիշներ:

1.3.2. Պարբերական մամուլում: Ինչպես արդեն նշել ենք, Բայրոնի և Մխիթարյանների առնչություններին պարբերական մամուլում անդրադարձել են ոչ միայն հայ բանասերները, այլև շատ օտարազգի հեղինակներ (այդ թվում՝ Ս. Ղազարի սովորական այցելուներ):

Այսպես, գերմանացի Լ. Յոլտոհֆը “Ueber Land und Meer” պատկերազարդ շաբաթաթերթի (լույս է տեսել Շտուտգարտում 1858-1923 թվականներին) 1900-ի համարներից մեկում տպագրված *Մխիթարյանների վանքը* ս. Ղազար կղզում՝ Վենետիկի մոտ ընդարձակ հոդվածում, որը 1901-ին արտատպվել է «Մշակում», գրում է. «Հանրահռչակ բանաստեղծ լորդ Բայրոնը, մեկը անգլիական գրականության առաջնակարգ աստղերից, ս. Ղազար կղզու այդ պատմական այցելուն, խիստ քաղցր յիշողութիւններով էր կապւած Մխիթարեան բարեպաշտ միաբանների հետ: Բացի այն սիրալիր եւ անկեղծ յարաբերութիւններից, որ միշտ վայելել է մեծ բանաստեղծը հիւրասէր միաբանների կողմից, Բայրոնի կացութիւնը ս. Ղազարում բարերար ազդեցութիւն է թողել նրա բանաստեղծական ոյժի վրայ: Այնտեղ անց կացրած ժամանակւայ ծնունդ են նրա մի քանի բանաստեղծական հասուն եւ արժանի երկերը, օրինակ “Childe Harold”-ի չորրորդ եւ անկասկած ամենագեղեցիկ երգը, նրա Վենետիկ կեանքից վերցրած դիւթիչ եւ սքանչելի պատմութիւն “Beppo”-ն, նրա խորագրաց՝ “Ode Venedig” գրուածքը, եւ վերջապէս նրա ամենամեծ եւ հանճարեղ “Don-Juan” երկի առաջին երկու երգը»¹³⁷:

«Բազմավեպի» 1924-ի չորրորդ համարն ամբողջովին նվիրված է Բայրոնին (մահվան 100-ամյակի կապակցությամբ), ընդ որում, նյութերի գերակշիռ մասը շարադրված է երկու լեզվով՝ հայերեն և անգլերեն: Այդ համարում արտատպված է անգլիացի բանաստեղծ Չարլզ Քամելի՝ 1924-ի հունվարի 14-ին ժնկից «Բազմավեպի» խմբագիր Ի. Ղ. Տայանին ուղղված նամակը, որտեղ նա գրում է. «Քերթողին մահուընեն ասդին սահած հարիւր տարիներու շրջանին՝ ոչ մէկ տեղ չէ ա՛յնպէս մեծարուած իր յիշատակը եւ իր հանճարը լավագո՛յնս հասկցուած՝ ինչպէս Վենետիկոյ Մխիթարեան Հայրերէն, որոնց նախորդներուն հետ Լորտ

¹³⁴ Տե՛ս S. M. Gregory, *Lord Byron and the Armenian Language*, in the book “*The Land of Ararat: Twelve Discourses on Armenia, her History and her Church*”, Chiswick Press, London, 1920”, pp. 122-131.

¹³⁵ Տե՛ս Caroline Franklin, *Byron: A Literary Life*, Macmillan Press Ltd., London, 2000, p. 105.

¹³⁶ Տե՛ս Leslie A. Marchand, *Byron: A Portrait*, The University of Chicago Press, 1979, pp. 260-261.

¹³⁷ Բ. Ի., *Նամակ Գերմանիայից*. «Մշակ», 1901, № 268 (2 դեկտեմբերի):

Պայրըն անցուցած է ժամեր՝ որոնք հաւանօրէն երջանկագոյններն եղան իր վիպական եւ աղմկայոյզ կեանքին»¹³⁸: 1922-ին Չարլզ Քամելն այցելում է Ս. Ղազար կղզի և խորապես հուզվում, տեսնելով, թե ինչպիսի հարգանքով են պահվում Բայրոնի նկարը և նրան պատկանող իրերն այն սենյակում, որտեղ նա սովորել է հայերեն: «Ես հիւրասիրուեցայ ձեր եղբայրութեան ընդէլ ասպնջականութեամբը, ինծի թոյլ տրուեցաւ տեսնել գանձատունը իմն ազգի մը մշակոյթին, և լսել Պատարագը Քրիստոնէական կրօնքն ընդգրկող առաջին ժողովրդին մատրան մէջ: Յիշատակն այդ օրուան պիտի մնայ հետս ամբողջ կեանքիս մէջ»¹³⁹, - գրում է Չարլզ Քամելը վերոհիշյալ նամակում: «Բազմավեպի» 1924-ի ապրիլյան համարում ներկայացված է նաև Չարլզ Քամելի *Մխիթարեան հայրերուն ի Վենետիկ* (*To the Armenian Fathers at Venice*) բանաստեղծութիւնը (անգլերեն և հայերեն), որը հայերեն է թարգմանել Արսեն Ղազիկյանը: Չարլզ Քամելը գտնում է, որ

**Եթէ ունի Անգլիա մարմինը, սիրտն՝ Յունաստան,
Իր հոգիէն, օ՛ն եւ օ՛ն, կը ժառանգէք մաս մը դուք,
Ազնւագոյնը թերեւ, զի ձեզի հետ կը մընան
Խաղաղութիւնն ու Մտերիմ սէրը եւ ոչ ցաւն ու վիշտ»¹⁴⁰:**

Ամսագրի այդ համարում զետեղված *Բայրոն* հոդվածի (անգլերեն) հեղինակ Ռ. Բ. Անդերսոնը, որը մանրագնին վերլուծում է բանաստեղծի գրական ու հասարակական գործունեությունը և որոշում նրա տեղն ու դերն անգլիական ռոմանտիզմի զարգացման մեջ, այն կարծիքին է, որ «և Միջերկրականից ու Արևելքից ուղարկած որոշ նամակների Բայրոնը, և Ս. Ղազար վանքը նկարագրող ու հայրերի մասին ոգևորությամբ արտահայտվող Բայրոնը, դա իսկական, անաղարտ Բայրոնն է»¹⁴¹:

«Բազմավեպի» 1932-ի առաջին համարում Բուդապեշտի “Magyar-say” օրաթերթից արտատպվում է գովասանքով, համակրանքով ու անկրկնելի տպավորություններով լի մի փոքրիկ հոդված¹⁴²: Այստեղ բերված են հունգարացի մի սովորական զբոսաշրջիկի տպավորու-

¹³⁸ «Բազմավեպ», 1924, № 4, էջ 109:

¹³⁹ Անդ:

¹⁴⁰ Չ. Ռ. Գամմելլ, *Մխիթարեան հայրերուն ի Վենետիկ*. Թարգմ. Ա. Ղազիկեան. «Բազմավեպ», 1924, № 4, էջ 113:

¹⁴¹ R. B. Anderson, *Byron*, ամդ, էջ 118:

¹⁴² Տե՛ս Մաճառ այցելու մը, *Վենետիկի հայկական ճեմարանը*. «Բազմավեպ», 1932, № 1, էջ 43:

թյուններ, որոնք նա ստացել է Ս. Ղազար այցելելու ժամանակ: Հունգար այցելուն արձանագրում է, որ Մխիթար Սեբաստացու «սկսուած գործը միեւնոյն հոգւով կը շարունակուի միշտ» և միանգամայն տեղին նկատում, որ «Այս հոգին ամեն բանէ աւելի կը բացատրէ հաստատութեան նշանաբանը, որուն մէջ զանգակը՝ է արթնութիւնը, բոցը՝ հոգեկան եռանդին նշանակ, ցուպը՝ կ'արտայայտէ թէ այս կրօնքին անդամները կ'ապրին առանց յոգնութիւն ճանչնալու գաղափարականին հետապնդումին մէջ, և գիրք մը՝ գիտութեան հոգին կը ցուցնէ»: Հունգարացի այցելուն հիացմունքով է խոսում նաև Մխիթարյան մայրավանքի թանգարանի, տպարանի, պահպանվող ձեռագրերի, միաբանության երրորդ Աբբահոր՝ Տրանսիլվանիայի կոմս, հունգարահայ Ստեփանոս Ազոնց Գյուվերի, Բայրոնի («որուն ուսումնարանը խնամքով պահուած է») մասին և ավելացնում. «մենք հունգարներս կրնանք պարծիլ Վենետիկ լճակին այս չքմաղ կղզիին համար»¹⁴³:

Կանադացի հայասեր բանաստեղծ, Բայրոնի քնարերգության երկրպագու Լորենս Դակինը (Laurence Dakin, ծնվ. 1907) դեռևս 1930-ական թվականների սկզբներին, լինելով Վենետիկում, այցելում է Ս. Ղազար և, ինչպես Բայրոնը, առաջին իսկ հայացքից սիրահարվում այդ «փոքրիկ Հայաստանին»: Լ. Դակինն իր հայասիրությունը հետագայում արտահայտում է *Աբարիսի երազը* (*The Dream of Abaris*) բանաստեղծության մէջ¹⁴⁴, որտեղ իր իսկ խոստովանությամբ՝ «քանի մը տող նուիրած եմ ձեր Ուխտի (Մխիթարյանների - Ա. Բ.) ազնուական գործին եւ ձեր ընկճուած հայրենիքին՝ Հայաստանի»¹⁴⁵: Իրոք «քանի մը տող», ընդամենը տասնվեց տող, բավականին ընդարձակ բանաստեղծության մէջ, սակայն այդ մի քանի տողերն էլ վկայում են, որ բանաստեղծը, որը «Պայրընի դպրոցին խոր ու վերամբարձ վիպականութիւնն ունի, ճաշակի նրբութեամբ և արուեստի շնորհքով», խորապես զգացել է օտարության մէջ ապրող և արարող հայերին տանջող վիշտն ու ցավը.

**Դառնագին է վիշտն անոր որ գիտէ թէ հայրենի
Երկիրն ու հողն է դարձած աներ, կործան, քարուքանդ:
Ո՛չ մըտերմի մահն և ոչ կորուստը մօր կաթոգին
Կարող են սիրտը փորձել աւելի մեծ կսկիծով**¹⁴⁶:

¹⁴³ Անդ:

¹⁴⁴ Տե՛ս Լ. Դակին, *Ապարիսի երազը*, թարգմ. Հ. Փ. Ե., «Բազմավեպ», 1934, № 9-10, էջ 350-353:

¹⁴⁵ Անդ, էջ 350 (ԽՍՀՄ):

¹⁴⁶ Անդ, էջ 352:

Այնուհետև Լ. Դակինը, 1940-ին, պատրաստում է հոդված «Բազմավեպի» համար, բայց Երկրորդ համաշխարհային պատերազմի պատճառով չի կարողանում այն ուղարկել Մխիթարյաններին: Միայն պատերազմից հետո, 1946-ին, նրա հոդվածը տպագրվում է «Բազմավեպում»¹⁴⁷: Հոդվածում հեղինակը բավականին ուրույն և հետաքրքիր ձևով է խոսում «լճակին մեջ գտնուող այն փոքր կղզեակի մասին, ուր կայ մենաստան մը, տեղ մը ուր կը բնակի Աստուած»¹⁴⁸, նկարագրում Մխիթարյան միաբանության ստեղծման հակիրճ պատմությունը, ոգևորված նշում, որ այնտեղ կան «երկու հազար հայերեն հին ձեռագիր մատենաներ, երեսուն հազար գիրքեր, ու գեղարուեստական անթիւ առարկաներ. բոլորն ալ հետաքրքրական»¹⁴⁹, համակրանքով հաստատում, որ Մխիթարյան հայրերը «իրենց խոր գիտութեամբ և իմաստութեամբ, բոլոր գիտնական ու բարձրաստիճան մարդոց հիացումը գրաւած են: Նափուլէն իր պաշտպանութիւնը շնորհեց անոնց: Պայրն, ինչպէս մանուկ մը իր մօրը, անոնց դիմեց երբ վատթարումը և յուսահատութիւնը իր սիրտը կը կրծէին, և անոնք բարեսիրտ գտնուեցան ու իրեն պարգեւեցին մտքի իմաստութիւն: Պայրն անոնցմէ սորվեցաւ հայերէն լեզուն, որովհետեւ հայ էին անոնք և Հայաստանէն գաղթած. երկիր մը ուր Ս. Գիրքը զետեղած էր Եդէմի Պարտէզը ... ա՛յնքան գեղեցիկ և հրապուրիչ է այդ երկիրը»¹⁵⁰: Ապա, խոսելով Բայրոնի՝ Մխիթարյանների հետ կապվածության մասին, Լ. Դակինը գրում է. հենց որ «լաւաւոր երաժշտութեան ծայները, անշարժ ջութերու վրայէն սահելով, Պայրնի ականջին կը հասնէին, բանաստեղծը սովոր էր նետուիլ լճակին մէջ ու լողալով դիմել դէպի զբոսավայրը, ուր կը մնար ա՛յնչափ ատեն որքան կարելոր էր քիչ մը շունչ առնելու համար, և տեսնելու թէ ինչպէս արեղաներուն զգաստ և առողջ միտքը մաքրագործեր էր իր հոգին ... ու յետոյ ետ կը վերադառնար»¹⁵¹:

1966-ին «Հանդէս ամսօրյայ» ամսագրում լույս է տեսնում Ջոն Բոնվեյ Օ'Բրայենի *Լորդ Բայրոնը, Ֆրիդրիխ Ֆոն Շիլլերը և խորհրդավոր Հայը* վերնագրով հոդվածը (անգլերեն)¹⁵², որտեղ հեղինակը գրում է, որ միտքը շեղելու համար «Վենետիկ ժամանելուց մի քանի շաբաթ

¹⁴⁷ Տե՛ս Լ. Դակին, *Սուրբ Ղազար*, թարգմ. Զ. Փ. Ե., «Բազմավեպ», 1946, № 9-10, էջ 244-247:

¹⁴⁸ Անդ, էջ 245:

¹⁴⁹ Անդ, էջ 246:

¹⁵⁰ Անդ, էջ 245:

¹⁵¹ Անդ, էջ 245-246:

¹⁵² Տե՛ս J. C. O'Brien, *Lord Byron, Friedrich von Schiller and the Mysterious Armenian*, Կիեննա, «Հանդէս ամսօրյայ», 1966, № 10-12, էջ 525-542:

անց, Բայրոնը սկսել է ուսումնասիրել հայերեն հայկական վանքում, որտեղ գտել է հետաքրքրական ձեռագրեր ու գրքեր, ինչպես նաև թարգմանություններ արդեն գոյություն չունեցող հունական բնագրերից, և, ի հավելում դրան, իրենց հայերի աշխատությունները»¹⁵³։ Հոդվածագիրը փորձում է ցույց տալ, որ Բայրոնը պատահամաբ չի «տարվել» հայոց լեզվով, այլ, ընդհակառակը, նրա միտքն արդեն հետաքրքրվում էր հայ իրականությամբ ու բարյացակամ էր տրամադրված դրա հանդեպ¹⁵⁴։ Դեռևս մանուկ հասակում Բայրոնի վրա մեծ ազդեցություն է թողել Շիլլերի Հայը՝ *Ոգետեսը* վեպի գլխավոր հերոսը։ Նախքան Վենետիկ հասնելը, Շվեյցարիայում, Բայրոնը, բժիշկ Պոլիդորին, Շելլի ամուսինները կարդում էին գերմանական պատմություններ ոգիների մասին, իսկ դրանից դեռևս տասը տարի առաջ Բայրոնը, Շիլլերի Հայի ազդեցության տակ, գրել էր *Ալվազի Օսկարը* պոեմը, որը հիմնված էր Շիլլերի ստեղծագործության ամենամշակակալից դրվագի վրա։ «Նկատի ունենալով Բայրոնի սնոտիապաշտ, անշրջահայաց բնավորությունը, նրա սերը տեսիլքային ու գերբնական պատմությունների նկատմամբ, - գրում է Ջ. Օ'Քրայենը, - հեշտ է ըմբռնել նրա ոյլորագգաց մտքի վրա *Ոգետեսի* թողած ազդեցությունը»¹⁵⁵։ Հետևաբար, ըստ հոդվածագրի, երբ Բայրոնը ժամանել է Վենետիկ, նրա համար ամենևին էլ անսպասելի չի եղել հայերի հետ ունեցած հանդիպումը, քանի որ նրա սերը ուրվական-ոգիների պատմության հանդեպ և Շիլլերի չարագուշակ ու խորհրդավոր Հայն արդեն իսկ թողել էին անջնջելի տպավորություն բանաստեղծի մտքի վրա։ Այդ իսկ պատճառով «պատահական երևույթ չէր, երբ նա որոշեց իր միտքը զբաղեցնել հայերենի ուսումնասիրությամբ։ Ակներև է, որ Շիլլերի *Ոգետեսի* հետ նրա անսպասելի հանդիպումը, իրոք, գրգռել է նրա ձգտումը տարօրինակ Հայի ազգի և մշակույթի մասին ավելի շատ գիտելիք ձեռք բերելու համար»¹⁵⁶։ Այնուհետև հոդվածագիրն անդրադառնում է Ս. Ղազարուն Բայրոնի հայերեն սովորելուն, Մխիթարյանների հետ նրա առնչություններին և ավելացնում, որ, «չնայած Բայրոնի առաջին ծանոթությունը Հայի հետ նրա մոտ հարուցել էր ինչ-որ չարագուշակ ներգործության գաղափար այդ ժողովրդի նկատմամբ, իրական ճանաչումը դրա հակապատկերն էր։ Սուրբ Ղազար վանքի վանականների մասին նա հայտնում է. «Այս միաբանության եղբայրաց մաքրակեցությունը, հանգստավետությունը, բա-

¹⁵³ Անդ, էջ 539-540:

¹⁵⁴ Անդ, էջ 526:

¹⁵⁵ Անդ, էջ 529:

¹⁵⁶ Անդ, էջ 539:

րեկրթությունը, անկեղծ նվիրվածությունը, բարձր արժանիքները, առաքինությունները սքանչելիորեն ներդաշնակված են համակելու աշխարհիկ մարդուն մի հավատով, թե նույնիսկ այս կյանքի մեջ կա մի ուրիշը և ավելի լավը»¹⁵⁷։ Ջ. Օ'Բրայենի մեջբերումը մի հատված է հայերեն-անգլերեն քերականության ձեռնարկի համար Բայրոնի գրած առաջաբանից։ Հոգվածագիրը միանգամայն իրավացիորեն արձանագրում է, որ «Բայրոնը... այնտեղ՝ հայ ժողովրդի սրտի մեջ, իր համար տեղ էր ստեղծել։ Նրա հարգանքը նրանց (հայերի - Ա. Բ.) մտավոր ձեռքբերումների, ինչպես նաև նրա սերը նրանց ու նրանց լեզվի նկատմամբ երկար ժամանակ կիռնչվի և կգնահատվի։ Շիլլերի խորհրդավոր Հայը դուռ էր բացել Բայրոնի համար՝ առաջնորդելով նրան դեպի մի ընդարձակ դահլիճ, որը լցված էր շատ անհրաժեշտ ընկերներով»¹⁵⁸։ Ջ. Օ'Բրայենի «Հանդես ամսօրյայում» լույս տեսած հոդվածին անդրադարձել է Կ. Պոլսի «Մարմարա» թերթը¹⁵⁹, 1967-ի հուլիսի 15-ի համարում նշելով, որ այդ հոդվածը «լույս կը սփռէ թե՛ ինչպե՞ս Լորտ Պայրոնը հետաքրքրված է Հայ ժողովուրդով ու հայերենով, եւ թե՛ ինչպես սորված է մեր լեզուն»։

Նյու Յորքում անգլերեն լույս տեսնող (1960-ից) «Արարատ» («Ararat») հասարակական-քաղաքական, գրական-գեղարվեստական եռամսյա հանդեսի 1967-ի ամառային համարում տպագրված Աննա Պաուլուչիի *Հայաստան՝ Վենետիկի ջրերի վրա* հոդվածում¹⁶⁰ հեղինակն անդրադառնում է Բայրոնի առաջին այցելությանը Ս. Ղազար, հայերեն-անգլերեն քերականության ձեռնարկի համար բանաստեղծի գրած առաջաբանին, Մխիթարյանների բազում մտավոր և հոգևոր շնորհքների վերաբերյալ նրա ունեցած կարծիքին, միաժամանակ նշելով այն հանգամանքը, որ «կարծես թե անհանգիստ Բայրոնը Ս. Ղազարում գտել է իրեն կլանող զբաղմունք և հոգեկան հանգստություն, ինչը նա այդքան փափագում էր»¹⁶¹։ Ուստի և «շուտով նա դառնում է» Ս. Ղազարի «մշտական այցելու՝ իրապուրվելով վանականների հետ անցկացրած գրույցներով և հայերեն սովորելու ցանկությամբ»¹⁶²։ Այնուհետև Ա. Պաուլուչին քննարկում է Բայրոնի հայագիտական ուսումնասիրությունների, հայերենից նրա կատարած թարգմանությունների, անգլերեն-հայերեն (1821) և հայերեն-անգլերեն (1825) բա-

¹⁵⁷ Անդ, էջ 540:

¹⁵⁸ Անդ, էջ 542:

¹⁵⁹ Ջարուհի Հ. Ֆերուխան-Տատեան, *Լորտ Պայրոնը, Վենետիկ եւ հայերը*, 15 հուլիսի. – *Լորտ Պայրոնը եւ իր գործերը*, 16 հուլիսի. «Մարմարա», 1967:

¹⁶⁰ St' u Anne Paolucci, *Armenia on the Waters of Venice*, "Ararat", 1967, № 31, Summer, pp. 3-7.

¹⁶¹ Անդ, էջ 6:

¹⁶² Անդ:

ռարանների հրատարակման հետ կապված հարցեր, ինչպես նաև ընդգծում է, որ «*Չայլո Զարուղի* չորրորդ նվագը նա գրել է Ս. Ղազարուն, ծովախորշին նայող զառիթափում գտնվող ձիթենիների տակ, որտեղ նստում էր ժամերով՝ զրուցելով վանականների հետ կամ էլ հիանալով տեսարանով»¹⁶³։ Այստեղ հողվածագիրը անդրադառնում է նաև այն փաստին, որ Բայրոնի այլ բանաստեղծությունների հետ մեկտեղ *Չայլո Զարուղի ուխտագնացությունը* պոեմը հայերեն է թարգմանել Ղևոնդ Ալիշանը, իսկ հայ բանաստեղծներ Սմբատ Շահագիզը և Ռուբեն Որբերյանը ոգեշնչվել են Բայրոնի քնարերգությամբ, որն իր արտացոլումն է գտել նրանց ստեղծագործություններում։

«Ջայ ընտանիք» ամսագրի 1974-ի 11-12 միացյալ համարը գրեթե ամբողջությամբ նվիրված է Բայրոնին՝ մահվան 150-ամյակի կապակցությամբ։ Ամսագրի տիտղոսաթերթում տեղադրված է Ս. Ղազարի թանգարանում պահվող՝ Բայրոնի դիմանկարի (հեղինակ՝ Յովհաննես Փորթուգալյան) վերարտադրությունը և 2. Ռիչարդ Քամելի *Մխիթարեան հայրերուն ի վեցետիկ* բանաստեղծության հանրահայտ խոսքերը, որոնք մենք մեջբերել ենք «Բազմավեպի» 1924-ի ապրիլյան համարում գետեղված նյութերի քննարկման ժամանակ։ Այս համարում գետեղվել է նաև Լոնդոնի Բայրոնյան ընկերության անդամ Բեաթրիս Զանսի հողվածը (անգլերեն և հայերեն)¹⁶⁴։ Նա Բայրոնյան ընկերության անդամների հետ միասին 1974-ին այցելել է Ս. Ղազար և հողվածում պատմում է իր ստացած տպավորությունների մասին։ Այցելուներին, ինչպես իր ժամանակին Բայրոնին, հիացրել են «ա՛յնքան ազնիւ, ա՛յնքան հասկացող եւ զարգացած» վանականները, կամարազարդ վանքը, գույների ճոխ երանգապնակով հարուստ պարտեզը, գեղեցիկ Ձեռագրատունը՝ իր թանկարժեք ձեռագրերով, նկարազարդ առաստաղներով թանգարանը՝ իր գեղեցիկ քանդակներով (հատկապես հիշարժան են Հ. Ղևոնդ Ալիշանի և Կոմիտաս Վարդապետի կիսանդրիները), «հինի եւ նորի խառնուրդով» տպավորիչ և սքանչելի «նկարներու սրահն», որտեղ «իսկապես զգացինք թէ հայկական գեղարուեստը դեռ կենսունակ է բանաստեղծութեամբ, երաժշտութեամբ, նկարչութեամբ, մինչ միեւնոյն ատեն, գէթ իմ անձեւ դատելով, կը գիտակցեի իմ տգիտութեանս, որ մինչեւ հիմա այս մասին աւելի ծանօթութիւն մը չէի ունեցած», և, վերջապես, տպարանը, որի գրքերի «թուղթին եւ տպագրութեան որակը լաւագոյնն է»¹⁶⁵։

¹⁶³ Անդ, էջ 7։

¹⁶⁴ St' u Beatrice Hanss, *A Visit to the Mekhitarist Convent of St. Lazarus*. - Պեթրիս Զանս, *Այցելութիւն մը Ս. Ղազարի Մխիթարեան վանքին*. «Ջայ ընտանիք», 1974, № 11-12, էջ 12-13։

¹⁶⁵ Անդ, էջ 13։

1978-ին «Հայ ընտանիք» ամսագրում արտատպվում է Ջոֆրի Ֆլետչերի *Ծովալճակի միջով դեպի գանձերի կղզին* հոդվածը (անգլերեն)¹⁶⁶, որը լույս է տեսել անգլիական “Daily Telegraph” օրաթերթի 1977-ի սեպտեմբերյան համարներից մեկում: Հոդվածում հեղինակը, խոսելով Ս. Ղազարի մասին, նշում է, որ այն մի մենաստան է՝ կղզի-այգի, որտեղ 1816-ին Բայրոնը փնտրեց և գտավ ապաստան իր համար: Բացի նրանից, որ կղզում մթնոլորտը ներդաշնակ ու խաղաղ էր, Բայրոնի համար առնչությունը բարեպաշտ, ազնիվ ու կրթված հայ վանականների հետ օգտակար էր և հավաստիացնող: Ինչպես նշում է հոդվածագիրը, Բայրոնն իր «խենթ հանճարով ու խառնաշփոթ կյանքով» միշտ հիացրել է իրեն և ավելացնում. «Վանականները միշտ լավ են վերաբերվել բանաստեղծին, իսկ վերջինս իր հերթին՝ նրանց: Սենյակը, որտեղ նա սովորել է հայերեն, մնացել է այնպես, ինչպես ինքն է թողել. աթոռները, գրապահարանները, լուսաշող առաստաղը և պարտեզի մոտակա բնապատկերը, որը անհանգիստ սրտին պարզապես է խաղաղ հանգստավայր»¹⁶⁷:

1979-ին «Հայ ընտանիք» ամսագրում լույս է տեսնում Դ. Բ. Գրեգորի *Բայրոնի հայոց լեզվի իմացությունը* վերնագրով հոդվածը (անգլերեն)¹⁶⁸, որտեղ հեղինակը գրում է. «Հանրության ճաշակի կամ գրական չափանիշների փոփոխության հետ մեկտեղ Բայրոնի համբավը կարող է աճել կամ նվազել, սակայն աշխարհում միակ տեղը, որտեղ այն մնում է միշտ անբիծ իր ողջ փայլով, դա վենետիկյան ծովալճակի Ս. Ղազար կղզու հայկական վանքն է: Այստեղ ավելի շուտ, քան լոնդոնյան արիստոկրատների հավաքույթներում, Բայրոնը արդարև հասավ հասարակական ճանաչման»¹⁶⁹: Հոդվածագիրը մեջբերումներ է կատարում Բայրոնի «հայկական» նամակներից, նրա գրած հանրահայտ առաջաբանից և Հ. Ավգերյանի օրագրում կատարված գրառումներից, նշում, որ Բայրոնի բազում բանաստեղծություններ թարգմանվել են հայերեն, ինչպես նաև նկարագրում Հ. Ավագովսկու և այլ նկարիչների գործերը, որոնցում արտացոլված են Բայրոնի և սուրբ հայրերի հանդիպումներն ու զրույցները, բանաստեղծի հայերեն սովորելը, հանգստանալը և խորհրդածելը ձիթենիների տակ: Բացի դրանից, Դ. Գրեգորն իր հոդվածում անդրադառնում է

¹⁶⁶ St’u Geoffrey Fletcher, *Across the Lagoon to island treasures*, «Հայ ընտանիք», 1978, № 1-2, էջ 47:

¹⁶⁷ Անդ:

¹⁶⁸ St’u D. B. Gregor, *Byron’s knowledge of Armenian*, «Հայ ընտանիք», 1979, № 5-6, էջ 34-36:

¹⁶⁹ Անդ, էջ 34:

քերականության երկու ձեռնարկների վրա Բայրոնի կատարած աշխատանքին և հայերենից նրա կատարած թարգմանություններին:

1980-ին «Հայ ընտանիք» ամսագրում լույս են տեսնում Ավստրալիայի Բայրոնյան միության քարտուղար Ժակլին Վուանյե-Մարշալի երկու հոդվածները (անգլերեն)¹⁷⁰, որոնք հեղինակի համաձայնությամբ արտատպվել են այդ միության Տեղեկագրից (“Newsletter”, 1979, № 3, pp. 21-26; - 1980, № 4, pp. 16-20): Այդ հոդվածները հեղինակի Ս. Ղազար կղզի այցելությունից ստացած տպավորությունների և հիշողությունների արդյունք են: Հեղինակն առաջին հոդվածի բնաբան ընտրել է Չ. Ռիչարդ Քամելի բանաստեղծության հանրահայտ խոսքերը, որոնք մենք արդեն մեջքերել ենք: Այդ հոդվածում Ժ. Վուանյե-Մարշալը հակիրճ տալիս է Ս. Ղազար կղզու պատմությունը, խոսում Մխիթարյան միաբանության հիմնադրի ու նրա համախոհների մասին և հուզմունքով նշում, թե այնտեղ ինչպիսի ակնածանքով է պահվում Բայրոնի հիշատակը: Հոդվածագիրը հիացմունքով նկատում է, որ «վեհաշուք գրադարանը նման է թանգարանի: 1876-ին այն պարունակել է 30 000 գիրք՝ հիմնականում հայերեն, նկարագարոված աղոթագրքեր, պապիրուսներ, մետաղադրամներ, արձանիկներ, եգիպտական մումիա և այլն»¹⁷¹: Այնուհետև հեղինակը նշում է, որ 1975-ի հրդեհը մեծ վնաս է հասցրել եկեղեցուն, ոչնչացրել գրադարանի մի մասը: Այցելուներին ցույց են տրվում նաև գրադարանին կից սենյակները, որոնցից մեկը պարունակում է շատ արժեքավոր ձեռագրեր, իսկ մյուսը կրում է «Բայրոնի սենյակ» անվանումը: «Այստեղ կան մի քանի նկարներ՝ նվիրված Բայրոնի՝ Ս. Ղազար կղզուն անցկացրած ժամանակին: Դրանցից մեկը Հ. Այվազովսկու կտավն է, որը պատկերում է բանաստեղծի ժամանումը, նրա մակույկից դուրս գալը և դիմավորումը վանականների կողմից»¹⁷²: Մեկ այլ նկարում նրա զրույցն է հայրերի հետ պատշգամբում (դեռևս գոյություն ունի)՝ այդքան լավ պատկերված աստիճանավանդակի բաց տարածությունում՝ վանականները բավականություն են ստանում այլ երկրից իրենց մոտ եկած այդ խելամիտ երիտասարդի ընկերակցություն-

¹⁷⁰ Sté u Jacqueline Voignier-Marshall, *San Lazzaro, “Island of the Blest”: The Convent today; - The Armenian Convent of St. Lazarus and its Byrwn Memories*, «Հայ ընտանիք», 1980, № 11-12, էջ 50-53:

¹⁷¹ Անդ, էջ 51:

¹⁷² Խոսքը, ըստ երևույթին, Հ. Այվազովսկու «Բայրոնի այցը Մխիթարյաններին Ս. Ղազար կղզուն» (1898) նկարի մասին է, որն այժմ գտնվում է Հայաստանի պետական պատկերասրահում (Երևան): Հոդվածագիրը, հավանաբար, տեսել է այդ նկարի վերարտադրությունը:

նից»¹⁷³։ Հողվածագիրը հիշատակում է նաև այլ նկարներ. Բայրոնն իր ուսուցչի հետ հայերենի դասի ժամանակ, Բայրոնը բլրակի վրա գտնվող ձիթենիների տակ նստած խորհրդածելիս (նկարիչ՝ Յ. Ռեյնհարտ), սենյակի դռան վերևում կախված Բայրոնի դիմանկարը, որը 1864-ին արտանկարել է Մխիթարյանների նախկին սանը (Յ. Փորթուզալյան) Լոնդոնի թանգարանում գտնվող Ֆիլիպսի հայտնի նկարից։ Այնուհետև Ժ. Վուանյե-Մարշալը մատնանշում է, որ միաբանությունում գրի է առնվել այն փաստը (չնայած դրա մասին չեն նշել ոչ Մուրը, ոչ էլ Բայրոնը), որ բանաստեղծն իր առաջին այցելության ժամանակ մնացել է Մխիթարյանների պարտեզում մինչև մթնշաղ և, մեկնելով այնտեղից, խոստացել է հաջորդ օրը վերադառնալ վաղ առավոտյան ու կատարել է իր խոստումը։ Իսկ երկրորդ այցելության ժամանակ նա արդեն թույլտվություն է խնդրել հայերեն սովորելու նպատակով բնակվել վանքում՝ նկատի ունենալով հատուցել սննդի և կացարանի ծախսերը։ Սակայն, քանի որ վանքի կանոնները խստապահանջ էին, դա չարտոնվեց, և Բայրոնը շաբաթվա ընթացքում գալիս էր 4-5 անգամ՝ ժամանելով մոտավորապես առավոտյան ժամը 9-ին և մեկնելով երեկոյան ժամը 6-ին։ Նրա տրամադրության տակ եղել է միաժամանակ երկու սենյակ, և նա, որպես Հայր Պասկալ Ավգերի աշակերտ, սկսել է ուսումնասիրել հայերենը։ Սակայն, ինչպես նշում է հողվածագիրը, առաջին դասերն անցակացվել են ավելի շուտ երկխոսությունների, քան առաջադրանքների ձևով։ Բայրոնը տվել է շատ հարցեր Հայաստանի պատմության և գրականության վերաբերյալ, իսկ Հայր Պասկալը պատասխանել է։ Այնուհետև հողվածագիրն ավելացնում է, որ այժմ կառուցվում է նոր թանգարան, որը շատ այլ իրերի հետ կպարունակի նաև Բայրոնի մասունքները, հիմնականում՝ թանաքամանը, գրիչները, ճշգրիտ վերարտադրությամբ նրա հայերեն ստորագրությունը, ինչպես նաև 1821-ին Լոնդոնում Ջոն Մըրրեյի կողմից Յ. Պասկալին տրված գրքերը, 1829-ին Տրիեստի բրիտանական հյուպատոսի նվիրաբերած՝ Բայրոնի երկերի լիակատար ժողովածուն, ինչպես նաև դրա 17 հատորից բաղկացած մեկ այլ հրատարակություն, որն ուղարկել էր 1836-ին Ջոն Մըրրեն։ Նախքան մեկնելը, այցելուները զբոսնել են պարտեզում, կղզու այն մասում, որտեղ Բայրոնը սիրում էր անցկացնել երեկոները։ Այստեղ տիրող ավանդության համաձայն Բայրոնը *Չայլդ Հարոլդի ուխտագնացության* չորրորդ նվագի մի մասը գրել է Ս. Ղազարում, նշում է հեղինակը, և ավելացնում, թե բանաստեղծն այստեղ անշուշտ պետք է որ գտներ ոգեշնչման աղբյուր։

¹⁷³ Jacqueline Voignier-Marshall, *San Lazzaro, "Island of the Blest": The Convent today*, էջ 51։

Ժ. Վուանյե-Մարշալի երկրորդ հոդվածը նվիրված է Ջ. Մաքեյի գրքին¹⁷⁴։ Այն սկսվում է հետևյալ խոսքերով. «Անցյալ տարվա սկզբին զարմանալի պատահականությամբ ձեռքս ընկավ կազմահան արված, բավականին հնամաշ մի փոքրիկ գիրք՝ *Լորդ Բայրոնը հայկական վանքում* վերնագրով, որը գրել է Ջորջ Էրիկ Մաքեյը... և 1876-ին Վենետիկում հրատարակել է «Պոլիգլոտա» հրատարակչությունը... Սույն աշխատությունը պարունակում է «Կույր վանականի խոստովանությունները», որոնք անցյալում ոչ մի անգամ չեն հրատարակվել, և լորդ Բայրոնի կտակն ու կտակի հավելվածը՝ ստորագրված և կնքված 1818-ին Վենետիկում...»¹⁷⁵։ Սակայն հոդվածագիրն այդ գիրքը հետաքրքրել է նաև նրանով, որ այն 1876-ին Վենետիկի Ս. Ղազար կղզու վանքում գնել է ավստրիացի մի այցելու և իր նամակի (բերվում է հոդվածում) հետ միասին ուղարկել քրոջը, որը հավանաբար եղել է Բայրոնի քնարերգության երկրպագու։ Նամակում նշվում է, որ ավստրիացի այցելուն Բայրոնի փոքրիկ աշխատասենյակում, սովորական սեղանի առջև նստել է Բայրոնի աթոռին, տեսել է բանաստեղծի փայտյա թանաքամանը, հին դանակը, գլխարկը, վերարկուն, ինչպես նաև նրա ստորագրությունը թագավորների, արքայազների, պապերի, եպիսկոպոսների ստորագրությունների կողքին, տեսել է Բայրոնի և նրա ուսուցչի դիմանկարները։ Ս. Ղազարի այցելուն գրում է նաև արվեստի ու գիտության բնագավառում Մխիթարյանների կատարած հին ու նոր գործերի մասին, հիշատակում նրանց հարուստ գրադարանը։ Այնուհետև հոդվածագիրն անդրադառնում է գրքի բովանդակությանը, որտեղ քննարկված են Բայրոնի և Մխիթարյանների առնչություններին վերաբերող բազմաթիվ հարցեր, բերված են *Հայերեն-անգլերեն քերականության* ձեռնարկի համար Բայրոնի գրած առաջաբանը, նրա որոշ թարգմանություններ հայերենից և այլն։ Ինչ վերաբերում է ծեր կույր վանականին, ապա երբ 1868-ին Մաքեյը հարցրել է նրան, թե ինքն ինչ նկատի ուներ ասելով, որ Բայրոնը սուրբ է երկնքում, արագ ու ցնցող է եղել վանականի պատասխանը. «...նրա երեսը կարմրեց մինչև քունքերը, նա ճանկեց իր գավազանը, կարծես թե այն սուր լիներ... և ասաց, կամ ավելի շուտ ճշաց, հետևյալ բառերը. «Իմ Լորդ Բայրոնը մեռավ Յունաստանի համար, բայց նա մեռավ նաև Հայաստանի համար... Նա սուրբ է երկնքում, քանի որ

¹⁷⁴ Ցավոք, չնայած մեր բազմամյա պրպտումներին, այդպես էլ այդ գիրքը մեզ չհաջողվեց գտնել։

¹⁷⁵ Jacqueline Voignier-Marshall, *San Lazzaro, "Island of the Blest": The Armenian Convent of St. Lazarus and its Byrwn Memories*, էջ 52:

անկախության համար կռվելով է մահացել»¹⁷⁶:

Ամսագրի նույն համարում գետեղված է նաև Կասա Մանիի Շելլիի թանգարանի տնօրեն Սարգարետ Բրաունի *Բայրոնյան մասունքները Վենետիկի Ս. Ղազար հայկական վանքում* խորագրով հաղորդումը (անգլերեն)¹⁷⁷, որն արտատպվել է Բրիտանա-իտալական ընկերության «Rivista» (№ 273, նոյեմբեր-դեկտեմբեր 1979) ամսագրից: Այդ հաղորդումից տեղեկանում ենք, որ մինչ այդ Շելլիի թանգարանում պահվող Բայրոնի որոշ գրքեր նվիրաբերվել են Ս. Ղազարի հայկական վանքին, քանի որ Բայրոնը Մխիթարյանների մոտ սովորել է հայերեն, աշխատել է նրանց հետ, խորհել ձիթենիների և թզենիների պարտեզում և իր մեջ ուժ է վերագտել ավարտելու *Մանֆրեդը* և *Չայլո Զարուլդի* չորրորդ նվագը: Բացի դրանից, ինչպես գրեթե բոլոր հոդվածներում, այստեղ ևս, նկարագրվում է Բայրոնի սենյակը՝ իր բոլոր պարագաներով: Զոդվածագիրը մեջբերում է կատարել նաև Բայրոնի՝ 1816-ին Մուրին գրած նամակից՝ չնշելով ամսաթիվը, բայց, ցավոք, իրար է խառնել երկու տարբեր նամակներ (թվագրված՝ 5 դեկտեմբերի և 27 դեկտեմբերի) և Բայրոնի կողմից Ա. Գյուվերի արտաքին տեսքին տրված գնահատականը վերագրել է Զ. Ավգերյանին:

1981-ին «Հայ ընտանիքում» Ս. Ղազարեան մրմունջներ խորագրի տակ լույս է տեսնում Անտոնիո Սպադաֆորայի (Antonio Spadafora) Ս. Ղազար (*San Lazzaro Degli Armeni*) բանաստեղծությունը (հայերեն և իտալերեն), որի հայերեն թարգմանությունը կատարել է Զ. Չանթայանը: Այս բանաստեղծության մեջ տրվում է Ս. Ղազար «կղզեակն Հայոց»-ի նկարագիրը, որտեղ «լոյսը .. չի՝ նըլաղիր աղջամուղջին. զի Սըխիթար ... կ'ողջագուրէ բազկատարած եկուորն ամեն» և «կայանիկ մը ... անմահ հոգւոյն, կ'որոնէր Պայրըն՝ ծարաւ խաղաղութեան»¹⁷⁸:

«Հայ ընտանիքի» 1983-ի համարներից մեկում տպագրված է Դոնաթելա Ռոսսիի բավականին հետաքրքիր հոդվածը (անգլերեն)¹⁷⁹: Չնայած այն կրում է *Բայրոնը և կրոնը* խորագիրը, սակայն հոդվածում հիմնականում արծարծվում են Բայրոնի և հայ վանական-գիտնականների առնչություններին վերաբերող հարցեր: Դա ևս մեկ անգամ հաստատում է այն միտքը, որ ոչ միայն հայ, այլև օտար հեղինակները, խո-

¹⁷⁶ Անդ, էջ 53:

¹⁷⁷ Տե՛ս Margaret Brown, *The Byron Relics at the Armenian Monastery of S. Lazzaro Venice*, «Հայ ընտանիք», 1980, № 11-12, էջ 53:

¹⁷⁸ Անթոնիո Սփատաֆորա, *Ս Ղազար*, թարգմ. Զ. Չ. Չանթայեան. «Հայ ընտանիք», 1981, № 1-2, էջ 41:

¹⁷⁹ Տե՛ս Donatella Rossi, *Byron and Religion*, «Հայ ընտանիք», 1983, № 3-5, էջ 25-30:

սելով Բայրոնի կյանքի և ստեղծագործության իտալական շրջանի մասին, գրեթե միշտ անդրադարձել են Բայրոնի և Մխիթարյանների համատեղ գիտական գործունեությանը, ինչպես նաև նրա այն ստեղծագործություններին, որոնք կրել են «հայկական» ազդեցություն: Հոդվածը բաղկացած է ներածությունից և երեք մասից: Ներածական մասում հեղինակը նշում է, որ Վենետիկ ժամանելուց անմիջապես հետո, առաջին իսկ շաբաթում, աշնանային մի մառախլապատ օր, որն այնքան էլ հարմար չէր զբոսաշրջության համար, Բայրոնը և Հոբհաուզն այցելել են Ս. Ղազար կղզու հայկական վանք: Հոդվածագրի կարծիքով այդ այցելության դրդապատճառները մեզ համար այնքան էլ պարզ չեն, քանի որ մինչև Բայրոնը մենք չգիտենք որևէ հայտնի անձնավորության Ս. Ղազար կատարած այցի մասին, չնայած *Հայերեն-անգլերեն քերականության* ձեռնարկի համար նախատեսված առաջաբանում Բայրոնը պնդում է, որ ինքն էլ, շատ ճանապարհորդների նման, տարված է եղել հայկական վանքի միաբանությամբ: Փաստորեն այդ այցից հետո, գրեթե վեց ամիս, Բայրոնի մոտ ի հայտ է գալիս հետաքրքրություն մի յուրահատուկ ոլորտի՝ կրոնի ոլորտի նկատմամբ: Այնուհետև հոդվածագիրը նշում է, որ Բայրոնը, լինելով բողոքական, իրականում չի եղել հավատացյալ և թե՛ Անգլիայում, թե՛ Իտալիայում, թե՛ ցանկացած այլ երկրում, իր ճանապարհորդությունների ընթացքում, հազվադեպ է այցելել եկեղեցի, բայց Ս. Ղազարում նա հաճախ է մտել եկեղեցի (և եթե ոչ աղոթելու, ապա խորհելու, մտովին մաքրվելու համար), որը երբևէ չի ծաղրել և չի քննադատել: Միգուցե դա արդյունք է Մխիթարյան հայրերի կողմից ջերմ ընդունելության և իր նկատմամբ ունեցած հոգատար վերաբերմունքի, որն ստիպել է Բայրոնին փոխել իր կարծիքը եկեղեցականների նկատմամբ և նույնիսկ *Սանֆրեդու* կերտած վանահոր կերպարը նմանեցնել Մխիթարյան սուրբ հայրերին: Սույն հոդվածի մյուս մասերի միայն վերնագրերը՝ *Բայրոնը և հայ հայրերը*, *Բայրոնի և հայերի միջև եղած փոխազդեցությունը* և *Բայրոնը և նրա գեղարվեստական ստեղծագործությունը՝ հայկական համդիպումների համընթացության ներքո*, արդեն իսկ խոսում են այն մասին, որ հոդվածն ամբողջությամբ նվիրված է Բայրոնի և Մխիթարյանների համատեղ գործունեությանը, ինչպես նաև Մխիթարյան հայրերի՝ Բայրոնի վրա թողած ազդեցությանը: Հոդվածի առաջին մասում Դ. Ռոսսին նշում է, որ Մխիթարյանների ջերմ ընդունելությունը «գարմանալի չի եղել Բայրոնի համար, քանի որ նա սովոր էր համարվել մի տեսակ կենդանի հրաշք

այն մարդկանց համար, ովքեր կապ ունեին իր հետ»¹⁸⁰: Ս. Ղազար կղզու անդորրությունը Բայրոնի կյանքի այդ շրջանում հարմար էր նրա հոգու խաղաղության ու հանգստության համար և համապատասխանում էր հենց բանաստեղծի տված գնահատականին՝ «Երանավետ կղզի»: Մյուս կողմից, բանաստեղծը ծանոթանալով հայ ժողովրդի պատմությանը, նրա հոգևոր գանձերին, չէր կարող անտարբեր մնալ նրա ճակատագրի հանդեպ: Բայրոնը տառապած ու հալածված հայ ժողովրդի մեջ տեսնում էր հպարտ ու խիզախ ազգի, որը չնայած պարտվել էր, բայց չէր կորցրել իր հպարտությունը: Եվ բանաստեղծը որոշում է սովորել այդ ժողովրդի լեզուն, որը նրա համար դառնում է «Այբուբենի մի Վաթեռլոո»: Հոգվածի երկրորդ մասում հեղինակը նկատում է, որ «երկու հեռավոր մշակույթների՝ անգլիական և հայ, միջև փոխադարձ հետաքրքրությունը ստեղծեց փոխազդեցության մի տեսակ, որը կարող էր համարվել եզակի Ս. Ղազար կղզու պատմության մեջ»¹⁸¹: Հոգվածի երրորդ մասում խոսվում է այն մասին, որ Բայրոնը *Մանֆրետ* դրամայում, Մխիթարյանների հետ ծանոթանալուց հետո, վերափոխել է վանահոր կերպարը՝ դաժան մարդու փոխարեն նրան դարձնելով սիրող ու կարեկցող անձնավորություն, ինչպես նաև բերվում են որոշ հատվածներ դրամայից: Բացի դրանից, հոգվածագիրը նշում է, որ *Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը* պոեմի չորրորդ նվագի մի մասը գրվել է Ս. Ղազարում, իսկ այնուհետև անդրադառնում է Բայրոնի ստեղծագործությունների թարգմանիչներ Ղ. Ալիշանին, Հ. Թումանյանին, Հ. Մասեհյանին և մյուսներին: Այստեղ հեղինակը նշում է Ռ. Որբերյանի և Ս. Շահագիզի վրա Բայրոնի ունեցած ազդեցության մասին:

1987-ին ամսագրում լույս է տեսնում հունգար թարգմանչուհի և գրականագետ Ռապ ժուժա-Շուշանի՝ հայերի ու հայ մշակույթի նկատմամբ ունեցած ջերմ սերն ու համակրանքն արտացոլող, բազմաթիվ տպավորություններով լի հոդվածը¹⁸², որի համար ամսագրի խմբագրությունը (կամ մի գուցե ինքը՝ հեղինակը) որպես բնաբան ընտրել է հայոց այբուբենը և այդ այբուբենի վերաբերյալ բանաստեղծ Գևորգ Էմինի *Յոթերդ Հայաստանի մասին* գրքի *Երգ գրի մասին* երգում ամփոփված խորիմաստ ու հրաշալի մտքերը¹⁸³: Հոգվածում հակիրճ տրվում են որոշ տեղեկություններ հայ-հունգարական գրական առնչությունների, հայ

¹⁸⁰ Անդ, էջ 26:

¹⁸¹ Անդ, էջ 27:

¹⁸² Տե՛ս Ռապ ժուժա - Շուշան, *Հայկական հողին վրայ՝ Իտալիոյ մէջ*, թարգմ. Հ. Ղ. Ֆ., «Հայ ընտանիք», 1987, № 7-8, էջ 46-49:

¹⁸³ Տե՛ս Գևորգ Էմին, *Երկերի ժողովածու*, երեք հատորով, հատոր երրորդ, էջ 198-298:

մշակույթի և Մխիթարյան միաբանության ստեղծման ու գործունեության մասին: Հոգվածագիրը նշում է, որ աշխարհի տարբեր ծայրերից հայագետները գալիս են Ս. Ղազար «բացառիկ ճոխ ձեռագիրներում հաւաքածոն ուսումնասիրելու համար», իսկ ապա ավելացնում. «Լորտ Պայրըն 1816-1817-ին հոս գտեր է իր բնակութիւնը, ուր շարունակած է հայագիտական ուսումները: «Պայրընի սենեակը» ուր մեծ բանաստեղծը սորված է, աշխատած է, մինչեւ այսօր կարելի է այցելել»¹⁸⁴: Ռապ ժուժան, որը եղել է նաև Երևանի մատենադարանում և ստացել ապշեցուցիչ տպավորություններ, հիանում է Մխիթարյան մայրավանքի գրադարանով ու մատենադարանով: Ինչպես ինքն է նշում, « ... այս փոքրիկ կղզիին հաւաքածոն՝ աշխարհիս երկրորդ ամենահարուստ հաւաքածոն է՝ ձեռագիրներու եւ գիրքերու: Սոգայիթով զարդարուած յատակ, պատերու վրայ որմնանկարներ, իսկայ սրահ մը՝ կը պահէ իր մէջ շուրջ յիսունհազար հատորներ: Միաբանները հաւաքեր են դարերու ընթացքին գրեթէ բոլոր հայատառ գրքերը, որոնք՝ իրենց պատմութեան, հաւատքին, գրականութեան, արուեստին մասին կը խօսին: ... ամենէն աւելի թանկագին հաւաքածոն կը պահպանուի բոլորածէւ շէնքին մէջ, այն է ձեռագիրներու հատորները: Արծաթապատ աւետարաններ, Թ-Ժ. դարու գրչագիրներ, սքանչելի մանրանկարներ...: Ամենէն հին Աստուածաշունչի օրինակներ, բժշկարաններ, աղօթամատեաններ, ժամանակագրութիւններ, եկեղեցական հին առարկաներ»¹⁸⁵: Հունգարուհի բանասերը, որը միայն այստեղ է իմանում Հովհաննէս Այվազովսկու հայ լինելը, մեծ հետաքրքրությամբ է դիտում նաև մայրավանքի թանգարանը: Ռապ ժուժան, ում երևակայության մէջ Ս. Ղազարը փայլում է «իբր դարերու ծովուն մէջէն բարձրացող լուսաշող փարոս»¹⁸⁶, անջնջելի տպավորություններով է հեռանում կղզուց:

Եվ վերջապես, մեր աշխատանքի այս մասը նպատակահարմար ենք գտնում ավարտել XX դարի անգլիացի մեծ հայագետ, Բրիտանական ակադեմիայի անդամ, Բրիտանական արքայական ասիական ընկերության անդամ, Օքսֆորդի համալսարանի պրոֆեսոր Զարլզ Ջեյմս Ֆրանկ Դաուսեթի (1924-1998) «*Խենթը նորէն եկաւ*». *Բայրոնը և հայերենը* աշխատանքի ներկայացմամբ, որը հեղինակը նվիրել է Լորդ Բայրոնի ծննդյան 200-ամյակին: Այս ծավալուն հոդվածը, որը թերևս եվրոպայում կատարված հայագիտական ամենախոր ուսումնասիրություններից մեկն է, 1989-ին տպագրվել է Ամերիկայի միացյալ ճահանգներ

¹⁸⁴ Ռապ ժուժան - Շուշան, *Հայկական հողին վրայ՝ Իտալիոյ մէջ*, էջ 47:

¹⁸⁵ Անդ, էջ 48:

¹⁸⁶ Անդ, էջ 49:

րում հրատարակվող «Հայկական ուսումնասիրությունների միության հանդեսում»¹⁸⁷ (անգլերեն ամենամյա հրատարակություն, լույս է տեսնում 1984-ից): Զեղինակը որպես իր աշխատության վերնագիր ընտրել է Բայրոնի հայերենի ուսուցիչ, իսկ հետագայում նաև նրա երկրպագու Զարություն Ավգերյանի խոսքերը՝ «*Խենթը նորեն եկաւ*», որոնք Ավգերյանն արտասանել էր՝ դիմելով վանականներին, երբ Բայրոնը Վենետիկի Ս. Ղազար կղզի իր առաջին այցի ժամանակ, Մխիթարյան միաբանության մայրավանքի գրադարանում տեսնելով բազմաթիվ հայկական ձեռագիր մատյաններ (այդ թվում՝ IX դարում կազմված վաղ միջնադարյան մանրանկարչության գլուխ-գործոց «Մլքե թագուհու Ավետարանը»), հայերեն գրքեր և մանրանկարներ, գերվել է հայ արվեստով ու քնարերգությամբ և հաջորդ առավոտյան կրկին վերադարձել է Մխիթարյան մայրավանք՝ հայոց լեզուն սովորելու անխոնջ ցանկությամբ տոգորված: Չնայած, թե՛ մինչև Բայրոնը, թե՛ նրանից հետո անգլիացի որոշ բանաստեղծներ (Ջեֆրի Չոսեր՝ 1340 – 1400, Ջոն Գաուեր՝ 1330 – 1408, Քրիստոֆեր Մառլո՝ 1563 – 1593, Ջոն Միլթոն՝ 1608 – 1674, Վիլյամ Ուոթսոն՝ 1858 – 1935 և ուրիշներ) որոշակի գաղափար ունեցել են Հայաստանի մասին և հետաքրքրվել Հայաստանով, «սակայն, - ինչպես նշում է Չ. Դաուսեթը, - ոչ-ոք այդքան լիովին խորամուխ չի եղել հայ մշակույթի մեջ, այն էլ ընդամենը երեք կամ չորս ամսվա ընթացքում, որքան Բայրոնը: Այսպիսի համարձակ ձեռնարկման համար ո՛չ մեկը պատրաստ չէր»¹⁸⁸:

Իսկ ի՞նչն է ստիպել Բայրոնին այցելել Ս. Ղազար կղզի, առավել ևս այն ժամանակ, երբ այնտեղ գնալը կապված էր որոշակի դժվարությունների հետ (ծովախորշի վրա նստած մառախուղի ցրման ժամկետները ճշտելու համար անհրաժեշտ էր քաջատեղյակ լինել եղանակի փոփոխությունների ժամանակացույցին, վարձել մասնավոր մակույկ և այլն) և պատահական մարդիկ գրեթե չէին այցելում կղզի: Այդ իսկ պատճառով Չ. Դաուսեթը համոզված է, որ մինչև Ս. Ղազար կղզի այցելելը «Բայրոնն արդեն որոշ բան իմացել է հայերի մասին», քանի որ դրա մասին նա պետք է որ կարդացած լիներ Քաստելանի աշխատության էջերում, որ ձեռք էր բերել դրանից երեք տարի առաջ¹⁸⁹: Բացի դրանից, ինչպես նշում է Չ. Դաուսեթը, «Բայրոնը հայերի մասին՝ Վենե-

¹⁸⁷ Տե՛ս Charles Dowsett, “The Madman has come back again!” *Byron and Armenian: In Commemoration of the 200th Anniversary of Lord Byron’s Birth*, “Journal of Society for Armenian Studies (JSAS)”, volume 4, 1988-1989, pp. 7-52.

¹⁸⁸ Անդ, էջ 7:

¹⁸⁹ Անդ, էջ 10:

տիկի հետ առնչված, լսել է շատ ավելի վաղ, հենց իր լինելության փուլում», քանի որ այն «գրքերից մեկը, որ խորապես ազդել է պատանի Բայրոնի վրա, իր իսկ հավաստմամբ, եղել է Շիլլերի *Ոգեսեսը* (*Der Geisterseher*), որն Ու. Ռենդերի թարգմանությամբ անգլերեն լույս է տեսել Լոնդոնում 1800-ին *Հայր կամ մարգարեն* (*The Armenian, or the Ghost Seer*) վերնագրով, երբ բանաստեղծը տասներկու տարեկան էր»¹⁹⁰։ Մեր կարծիքով միանգամայն իրավացի է անգլիացի հայագետը, պնդելով, որ Բայրոնը Ս. Ղազար է այցելել ոչ որպես սովորական զբոսաշրջիկ, ինչպես մյուս ճանապարհորդները, այլ այն պատճառով, որ «նա այժմ լավ հմարավորություն ուներ իրականության մեջ դեմառդեմ հանդիպելու Շիլլերի հորինած և իրեն հանգիստ չտվող արարածին, որն այժմ աշխարհիկ էր ու հասանելի։ Բացի Շիլլերի «Հայր» գրքի հնարավոր ազդեցությունից, հայերի հանդեպ Բայրոնի ունեցած հետաքրքրության վրա ուրիշ ոչ մի արտակարգ, օտարոտի ազդեցություն չի եղել...»¹⁹¹։

Այնուհետև Ռ. Դաուսեթը իր աշխատության մեջ անդրադառնում է Բայրոնի Ս. Ղազար կղզում հայերեն սովորելուն, Մխիթարյանների և Բայրոնի առնչություններին, Յու. Վեսելովսկու գրական ակնարկներին, Խ. Դաշտենցի *Բայրոնը և հայերը* գրքին, Բայրոնի հայագիտական ուսումնասիրություններին, ինչպես նաև կատարում բազմաթիվ մեջբերումներ Բայրոնի նամականուց և Հ. Ավգերյանի *Ինքնապատում օրագրությունից*։ Այս հարցերին տարբեր ժամակաշրջաններում և տարբեր առիթներով անդրադարձել են բազմաթիվ հայ և օտարազգի հեղինակներ, որոնց մեկնաբանությունները և եզրահանգումները գրեթե նույնանման են։ Թվում էր թե ամեն ինչ մանրագնին ուսումնասիրված է, և բացի իրատարակված աշխատանքները քննարկելուց, վերլուծելուց և ընդհանուր հետևություններից, նոր փաստեր արձանագրել հնարավոր չէ։ Սակայն, հայ գրական մտքին քաջատեղյակ անգլիացի հայագետը դրանք ուսումնասիրում է ոչ միայն իրեն հատուկ խորությամբ, նորովի ու բարեխղճությամբ, այլև կատարելով տքնաջան պրպտումներ և հետազոտություններ Անգլիայի պետական ու մասնավոր գրական արխիվներում, հիմնադրամներում և հավաքածուներում, հայտնաբերում է մինչ այժմ չիրատարակված, հայ և օտարազգի բայրոնագետներին անհայտ նոր փաստեր ու տեղեկություններ, որոնք վերաբերում են Բայրոնի և Մխիթարյանների առնչություններին։ Այսպես, պարզվում է, որ ««Ձոն Մըրրե» ՄՊԸ-ի սեփականությունն է Բայրոնի և Ավգերյանի կազ-

¹⁹⁰ Անդ, էջ 11:

¹⁹¹ Անդ, էջ 12:

մած հայերեն տառերի մեկ ցանկ՝ իրենց անգլերեն, լատիներեն, ֆրանսերեն և արդի հունարեն մոտավոր համարժեքների հետ մեկտեղ»¹⁹²։ Այստեղ Բայրոնի ավանդն այն է, որ նա, մի տառի պատկերման համար միաժամանակ օգտագործելով մի քանի հնչյունաբանական նշաններ, հայերեն տառերի անվանումներն անգլերեն տառադարձմամբ գրել է այնպես, ինչպես արտասանել է Ավգերյանը։ Չ. Դաուսեթը գտնում է, որ դա, հավանաբար, ուղարկվել է Ջ. Մըրրեին որպես մի նմուշ պատրաստվող հայերեն-անգլերեն քերականությունից։ Տառերի այս ցանկը, հավանաբար, կցված է եղել նույնպես «Ջոն Մըրրե» ՍՊԸ-ի սեփականություն հանդիսացող և վերոհիշյալ քերականության հետ առնչվող մեկ այլ փաստաթղթի, որտեղ Բայրոնը համառոտ շարադրել է հայոց ձեռագիր մատյանների պատմությունը։ Չ. Դաուսեթն իր աշխատանքում կատարում է նաև ընդարձակ մեջբերում հիշյալ փաստաթղթից, որը գրվել է Բայրոնի ձեռքով։ Այստեղ մենք կներկայացնենք մի փոքրիկ հատված այդ մեջբերումից. «Վռամշապուհի թագավորության օրոք, չորրորդ դարում, մի ուսյալ հայ, Մեսրոպ Մաշտոց անվամբ, ստեղծեց 36 տառից բաղկացած հայոց այբուբենը։ Հայերը մինչև այդ օգտագործել են ասորական, պարսկական կամ հունական տառեր։ Մեսրոպը ստեղծեց Այբ-ից մինչև Քե տառերը։ 12-րդ դարում գործածության մեջ մտան ևս երկու տառ՝ Օ-ն և Ֆ-ն։ ...Հայերն իրենց անվանում են հայկական ազգ՝ իրենց երկրի առաջին թագավորի անվամբ»¹⁹³։ Անհրաժեշտ է նշել, որ «Ջոն Մըրրե» ՍՊԸ-ում պահվող այդ երկու փաստաթղթերի մասին մինչև Չ. Դաուսեթը թե հայ, թե օտարազգի հեղինակների կողմից մամուլում ոչ մի հիշատակում չի եղել։ Ինչպես հայտնի է, Բայրոնը 1817-ի հունվարի 2-ին Ջ. Մըրրեին ուղղված նամակում գրում է, որ նրան է ուղարկում «մի քանի թերթ անգլերեն-հայերեն քերականությունից՝ հայերի օգտագործման համար, որի հրատարակմանը» նա «խթանել և աջակցել» է¹⁹⁴։ Հետաքրքրական է, որ «այդ թերթերը դեռ պահպանվում են «Ջոն Մըրրե» ՍՊԸ-ի արխիվում, իսկ 17-րդ էջի վրա կա Բայրոնի մակագրությունը. «Այս քերականությունը *հայերի*, և ոչ թե մեր ժողովրդի, օգտագործման համար է՝ անգլերենին տիրապետելու համար»»¹⁹⁵։ Այնուհետև Ռ. Դաուսեթը մանրագնին քննարկում է քերականության ձեռ-

¹⁹² Անդ, էջ 17:

¹⁹³ Անդ:

¹⁹⁴ St'u Th. Moore, *The Life, Letters and Journals of Lord Byron*, John Murray, London, 1908, p. 336.

¹⁹⁵ Charles Dowsett, "The Madman has come back again!" *Byron and Armenian: In Commemoration of the 200th Anniversary of Lord Byron's Birth*, էջ 24:

նարկների պատրաստման գործում Բայրոնի և Ավգերյանի կատարած համատեղ աշխատանքին, Բայրոնի հայերեն սովորելուն, հայերեն-անգլերեն քերականության համար նրա գրած առաջաբանին ու հայերենից կատարած թարգմանություններին վերաբերող հարցեր, ինչպես նաև կատարում մեջբերումներ Բայրոնի նամակներից և նշված առաջաբանից:

Այնուհետև, 2. Դաուսեթն անդրադառնում է Ղ. Ինճիճյանի *Ամարանց Բիզանդեան* պոեմի¹⁹⁶ որոշ հատվածների՝ Բայրոնի կատարած և վերջերս գտնված անգլերեն թարգմանությանը, և մանրամասնորեն տուն առ տուն համեմատելով, վերլուծում այն: Անգլիացի հայագետ 2. Դաուսեթի աշխատության վերլուծությունը նպատակահարմար ենք գտնում ավարտել այդ աշխատության հիմնական մասի վերջում նրա կատարած հարցադրմամբ. «...ես կցանկանայի հարցնել հայերին, թե քանի՞ համաշխարհային ճանաչում ունեցող հանճար է այսպես տարված հետազոտել Մեսրոպյան տառերը: Իսկապես, միայն *խենթը*»¹⁹⁷:

Այսպիսով, Անգլիայի մեծ բանաստեղծներից մեկը՝ լորդ Բայրոնը, Ս. Ղազար կղզու Մխիթարյան մայրավանքում, որը Նապոլեոնի հատուկ հրովարտակով հռչակվել էր որպես հայ կրթության և գիտության կաճառ, իր համար հայտնաբերել և սիրել է Հայաստանը, սովորել հայոց լեզուն և պատմությունը, ինչպես նաև համագործակցել Մխիթարյանների հետ գիտության բնագավառում: Եվ այստեղ հատկանշական է այն փաստը, որ հետագայում Բայրոնի և Մխիթարյանների առնչություններով հետաքրքրվել ու դրանք իրենց ուսումնասիրությունների նյութ են դարձրել ոչ միայն հայ հեղինակները, այլև բազմաթիվ օտարազգիներ՝ հայագետներ, գրաքննադատներ, գրողներ, լեզվաբաններ և լրագրողներ:

¹⁹⁶ Տե՛ս Դուկաս Ինճիճեան, *Ամարանց Բիզանդեան Ի նեղուցին կոստանդնուպոլսոյ կոչեցեալ ի տաճկաց Պօղազ Իշի*, Ի Վենտիկ, Ի Վանս սք□յն Ղազարու, 1794:

¹⁹⁷ Charles Dowsett, “The Madman has come back again!” *Byron and Armenian: In Commemoration of the 200th Anniversary of Lord Byron’s Birth*, էջ 47:

ԳԼՈՒԽ II

ԲԱՅՐՈՆԻ «ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻՆ» ԵՎ

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ 18-19-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

«Ի՞նչն է դրդել եվրոպական գիտնականներին թափանցելու հայկական հնության դարավոր խավարը և կյանքի վտանգով հետազոտելու Հայաստանի մոռացված ավերակները: Ի՞նչն է առաջացրել նրանց մեջ այն եռանդը, որով նրանք ուսումնասիրում են հայոց լեզուն:

... հայ ժողովրդի սկզբնավորությունը մարդկության սկզբնավորությունն է, իսկ նրա հետագա պատմությունը ծուլվում է հին աշխարհի համարյա բոլոր ժողովուրդների պատմության հետ»:

Մ. Նալբանդյան¹⁹⁸

Մեծ գրողի նամակները, օրագրերը և բազմաթիվ գրառումներն արժեքավոր պատմական փաստաթղթեր են, գրական-ստեղծագործական խոստովանություններ, որոնք բացահայտում են գրողի անձը, նրան համակած զգացմունքների, մտորումների և գաղափարների ինքնատիպ աշխարհը:

Ի տարբերություն նախորդ դարաշրջաններին պատկանող նամականիների, որոնք ի սկզբանե գրվում էին ոչ միայն հասցեատիրոջ համար, այլև հրապարակման նկատառումով, ռոմանտիկների թողած նամակները հիմնականում զերծ են այս կարգի «շահախնդրությունից»: Դրանք մեծավ մասամբ անհաշվեցկատ պոռթկումներ են, ինքնա-

¹⁹⁸ Նալբանդյան Մ., *Երկերի լիակատար ժողովածու*, վեց հատորով, հատոր երրորդ, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1982, էջ 257-258: Մեջբերումը վերցված է 1860-ին Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետի դեկանատ արևելյան լեզուների թեկնածուի աստիճան ստանալու համար հայ-վրաց-թաթարական բաժնի կողմնակի ունկնդիր Մ. Նալբանդյանի ներկայացրած ավարտական շարադրության (ռուսերեն՝ *Об изучения армянского языка в Европе и научном значении армянской литературы*) թարգմանությունից՝ *Հայոց լեզվի ուսումնասիրությունը եվրոպայում և հայ գրականության գիտական նշանակությունը*: Վերոհիշյալ հատորում բերված է նաև այդ շարադրության ռուսերեն բնագիրը (էջ 245-253), իսկ ինքնագիրը պահվում է Ս. Պետերբուրգի համալսարանի գրադարանում:

դրսևորման անկեղծ վկայություններ: Նամականիի ազատ, անկաշկանդ ժանրը պարզապես թույլ էր տալիս ավելի անմիջականորեն արտահայտելու այն, ինչ հաճախ անհրաժեշտ էր լինում թաքցնել գեղարվեստական ստեղծագործության խորքերում:

Այսուհանդերձ, ռոմանտիկների՝ նույնիսկ տպագրության համար չնախատեսված նամակներն, անգնահատելի արժեք են ներկայացնում դարաշրջանի գրական-հասարակական կյանքի արտացոլման առումով:

Անգլիացի մեծ բանաստեղծ Ջորջ Գորդոն Բայրոնի՝ իր դարաշրջանի ամենապայծառ դեմքերից մեկի, հարուստ նամականին այսօրինակ գրական հուշարձաններից է: Բանաստեղծի մահվանից վեց տարի անց՝ 1830-ին, Թ. Մուրը հրատարակեց նրա նամակների և օրագրերի ժողովածուն¹⁹⁹, որը չնայած իր ոչ լիակատար լինելուն, խոր հետք թողեց եվրոպական գրականության մեջ՝ ընդլայնելով ժամանակակիցների պատկերացումները բանաստեղծի անձի և ստեղծագործական մտահղացումների վերաբերյալ:

Բայրոնի երկարատև «ինքնական աքսորն» էր նրա նամակներ գրելու շարժառիթը. «Ես շրջահայաց նամակագիր չեմ և սովորաբար գրում եմ այն, ինչ առաջանում է գլխումս տվյալ պահին», - գրել է նա 1822-ին իր նամակներից մեկում²⁰⁰ հասցեագրված հավանաբար Մ. Շելլիին²⁰¹:

Բայրոնի գրելաոճը, առաջին հայացքից, կարծես թե պարզ է, սովորական, բայց ոչ բացարձակ խոսակցական: Նա գրել է արագ, հազվադեպ ջնջելով առանձին բառեր: Նամակներում առկա արտահայտությունները, որպես կանոն, հստակ են, ճշգրիտ և ցայտուն: Հեղինակը խուսափել է «գեղեցիկ գրելաոճից», թեև սակավ չեն նաև գրական զուգորդումներն ու մեջբերումները: Նրա նախընտրած գրական հետաքրքրությունների ոլորտում են Սկոտի և Շեքսպիրի, Շերիդանի²⁰² և

¹⁹⁹ St' u Th. Moore, *Letters, and Journals of Lord Byron: with Notices of His Life*, London, 1830.

²⁰⁰ *Byron's Letters and Journals*, v. 1: *In My Hot Youth*, edited by Leslie Marchand, Cambridge, 1974, *Introduction*, p. XVIII.

²⁰¹ Շելլի, Մերի (1797-1851), անգլիացի նշանավոր բանաստեղծ Պ. Բ. Շելլիի (1792-1822) կինը, փիլիսոփա և վիպասան Ուիլյամ Գոդվինի (1756-1836) դուստրը: Նա գրել է *Ֆրանկենշտեյն, կամ ժամանակակից Պրոմեթևս* (1816-1817) վիպակը (այն Բայրոնի կողմից զնախատվել է որպես զարմանալի ստեղծագործություն 19-ամյա աղջնակի համար), ինչպես նաև *Վալպերգա* (1823), *Վերջին մարդը* (1826) վեպերը և այլ ստեղծագործություններ:

²⁰² Շերիդան, Ռիչարդ (1751-1816), իռլանդացի անվանի թատերագիր և քաղաքական գործիչ:

Գոլլսմիթ²⁰³, 18-րդ դարի դրամատուրգների (անգամ ոչ հանրահայտ) ստեղծագործությունները: Նրա հետաքրքրասիրությունը, անաչառ վերաբերմունքը դեպի իր ընկերները և ժամանակակիցները ոչ մի տեղ այնքան ակնհայտ չեն, որքան նամակներում:

Նամակների և օրագրերի ընթերցողը հենց բանաստեղծից է տեղեկանում նրա գրական մտափոխանությունների ու խիզախումների մասին, հաղորդվում նրա բանաստեղծական երևակայության ու խոհերի տարերքին: *Չայլդ Յարոլդի ուխտագնացության* (1812-1818), *Դոն ժուանի* (1819-1824), *Կայենի* (1821), *Բրոնզե դարի* (1821) և շատ ուրիշ երկերի ստեղծման հետ կապված տարատեսակ մանրամասնություններ կարելի է քաղել նամակների էջերից: Իսկ վերջիններս լի են պոեզիայով, և այդ պոեզիայի հերոսն ինքն է՝ Բայրոնը. մի մարդ, որ ապրեց իր իսկ կերտած արվեստի փոթորկում ու խրոխտ հերոսի պես և արվեստի օրենքով:

Կարդալով Բայրոնի նամակները և օրագրերը՝ կարելի է հետևել նրա հասարակական, քաղաքական, գեղագիտական, փիլիսոփայական ու գրական հայացքների ձևավորման ու զարգացման ընթացքին, բազմաթիվ հավաստի տեղեկություններ ստանալ 18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին Արևմտյան Եվրոպայում տիրող հասարակական, քաղաքական ու գրական կյանքի վերաբերյալ: Այս առումով ևս Բայրոնի նամակներն ու օրագրերը սքանչելիորեն զուգակցում են իրենց մեջ պատմական և գրական հուշարձանի բոլոր արժանիքներն ու բարենասնությունները:

§ 2.1. Բայրոնի «հայկական» նամականին

Բայրոնի հարուստ նամականին գրական այն հուշարձաններից է, որը լայն հնարավորություն է ընձեռում խորամուխ լինելու բանաստեղծի անձնական կյանքի և ստեղծագործության ամենամոտիվական գաղտնարանների մեջ, քանզի այն իր անձնավորության անխաղախ հայելին է և պարունակում է չափազանց պերճախոս մեկնաբանություններ իր իսկ պոեզիայի վերաբերյալ: Համաշխարհային գրականության պատմության մեջ քիչ են գրողի կյանքի և արվեստի փոխներթափանցումն ի ցույց դնող նման վկայություններ:

Զգացմունքների և մտքերի թարմությունն ու անմիջականությունը

²⁰³ Գոլլսմիթ, Օլիվեր (1728-1774), անգլիացի գրող, 18-րդ դարի անգլիական սենտիմենտալիզմի ներկայացուցիչ:

բանաստեղծի նամակների և օրագրերի ամենագրավիչ գծերից են: Դրանք ավելի ճշմարիտ և հստակ են արտացոլում բանաստեղծին, քան ժամանակակիցների թողած ցանկացած հիշողություն, և իրոք որ գրված են մի մարդու ձեռքով, որը, խորհրդածելով ժամանակաշրջանի և իր մասին, ձգտում է պարզել լինելության, մարդկության և նրա պատմության իմաստը: Այս առումով, անտարակույս, բարձր է դրանց գրական արժեքը:

Բայրոնի նամականիի մեջ իրենց ուրույն տեղն ունեն հայերին և հայ մշակույթին վերաբերող էջերը: Դրանց մեջ արտացոլված են այն ջերմ սերն ու հարգանքը, որ տածել է հանճարեղ բանաստեղծը հայ ծողովորի և նրա հարուստ մշակույթի նկատմամբ: Հայ մշակույթին, պատմությանն ու լեզվին վերաբերող Բայրոնի նամակները (թվով՝ տասնչորս)²⁰⁴ ուղղված Թոմաս Մուրին և Ջոն Սըրրերին, գրվել են 1816-1821 թվականներին: Դժվար է գնահատել այդ նամակների նշանակությունը: Հիացմունք ու զարմանք են պատճառում Բայրոնի կատարած հետազոտությունների բազմազանությունն ու խորությունը:

1816-1818 թթ. ապրելով Վենետիկում՝ Բայրոնը գրել է բազմաթիվ նամակներ, որոնցում տվել է վենետիկյան կյանքի վառ և մանրամասնություններով լի պատկերը, ներառյալ Վենետիկի Մխիթարյանների ծավալած գիտական ու լուսավորական գործունեության նկարագրությունը:

Շփվելով հայ մշակույթի կարկառուն գործիչների հետ՝ Բայրոնը պատմությանն է թողել արժանահավատության ու նորության տեսակետից հազվագյուտ փաստեր պարունակող և իր տեսակի մեջ միակը հանդիսացող հարուստ նյութ Մխիթարյանների գործունեության վերաբերյալ: Մյուս կողմից, նրա «հայկական» նամակներն ինքնին արժեքավոր են և վառ ապացույցն այն մեծ դերի, որ կատարել է անգլիացի բանաստեղծը հայ մշակույթն օտարներին ծանոթացնելու գործում:

Մեր կատարած հետազոտությունները բերում են այն եզրահանգման, որ Բայրոնի նամակների միջոցով է անգլիախոս ընթերցողն առաջին անգամ ծանոթանում դեռևս 18-րդ դարի սկզբից ամբողջ եվրոպայում մեծ համբավ ու հռչակ վայելած հայագիտական խոշոր կենտրոնի՝ Վենետիկի Մխիթարյանների կատարած գիտական ու լուսավորական աշխատանքին և գաղափար կազմում նրա այնպիսի կարկառուն դեմքերի մասին, ինչպիսիք են Հարություն Ավգերյանը, Ազոնց Գյուլվերը²⁰⁴,

²⁰⁴ Ազոնց, Ստեփանոս Գյուլվեր (1740-1824), արքեպիսկոպոս, ծնվել է Տրանսիլվանիայի Ջուրջով քաղաքում, 1799-ից՝ Մխիթարյան միաբանության արքեպիսկոպոս: Նրա գրչին են պատկանում կրոնաբարոյախոսական և գիտական մի շարք երկեր: Աշխարհա-

Սարգիս Թեոդորյանը²⁰⁵, Սուքիաս Սոմայանը²⁰⁶ և ուրիշներ:

1816 թվականի դեկտեմբերի 4-ին Սըրբերին ուղղված նամակում Բայրոնը հայտնում է հայերենի իր ուսումնառության ընթացքի և այն բացառիկ արժեքավոր տեղեկությունների մասին, որոնք ստացել է հայ գրականության, հայ ժողովրդի բարքերի ու սովորույթների վերաբերյալ: Նա հիացել է հայ վանական գիտնականների բանիմացությամբ, քաջատեղյակությամբ, կրթվածությամբ և իրենց ժողովրդի լուսավորության համար կատարած խոշոր աշխատանքներով. «...սկսել և շարունակում են հայոց լեզվի ուսումնառությունը, որին տիրապետում են հնարավորություններիս սահմաններում, - գրում է Բայրոնն այդ նամակում, - ամեն օր գնում են հայկական վանք դասեր առնելու մի գիտնական վանականից (խոսքը Հ. Ավգերյանի մասին է - Ա. Բ.) և որոշ բացառիկ ու օգտակար տեղեկություններ են արդեն ձեռք բերել արևելյան այդ ժողովրդի գրականության և սովորույթների մասին: Նրանք այստեղ ունեն հաստատություն, եկեղեցի և իննսուն վանականից բաղկացած միաբանություն: Նրանցից ոմանք շատ ուսյալ և կիրթ մարդիկ են: Ունեն նաև տպարան և մեծ ջանքեր են գործադրում իրենց ազգը լուսավորելու համար»²⁰⁷:

Հանգամանքների բերումով ստեղծված կյանքի դժվարին և յուրատեսակ պայմաններում բանաստեղծն ապրում է հանդիպումների ու մտերմությունների անսպասելի մի շրջանակում, որը նրան պարգևում է նոր տպավորություններ և զգացմունքներ: Այս պայմաններում նա կարողանում է փնտրել ու գտնել իր հետաքրքրասիրությունը բավարարող ոլորտ: Թոմաս Սուրին հասցեագրված 1816-ի դեկտեմբերի 5-ի նամակում Բայրոնը գրում է. «Իբրև հաճելի ժամանց, ամեն օր հայերեն են սովորում հայկական վանքում: Պարզվեց, որ միտքս պայծառացնելու համար ինձ հարկավոր է մի տաժանակիր աշխատանք: Սա ամենադժվարին աշխատանքն է, որ ես կարողացա գտնել այստեղ իբրև ժամանց՝ միտքս տանջահար անելու և կենտրոնանալու համար»²⁰⁸: Կար-

գրական աշխատություններում պաշտպանել է Կոպեռնիկոսի արևակենտրոն ուսմունքը և համեմատական երկրագիտության սկզբունքները:

²⁰⁵ Թեոդորյան, Սարգիս (1783-1877), հայ եկեղեցական-հասարակական ականավոր գործիչ:

²⁰⁶ Սոմայան, Սուքիաս (1776-1846), հայ բանասեր, բառարանագիր, թարգմանիչ: Ծնվել է Կ. Պոլսում, 1804-ին Վենետիկում ձեռնադրվել է քահանա, 1808-ին քարոզչական պաշտոնով ուղարկվել է Կ. Պոլիս, 1817-ին՝ Մադրաս, 1820-ին վերադարձել է Վենետիկ: 1824-ից՝ Մխիթարյան միաբանության աբբահայր, արքեպիսկոպոս (1826):

²⁰⁷ Th. Moore, *The Life, Letters and Journals of Lord Byron*, London, John Murray, 1908, p.

333.

²⁰⁸ Անդ, էջ 329:

դալով Բայրոնի նամակները զգում ենք նրա հարգալից վերաբերմունքը հայոց լեզվի նկատմամբ, որը, իր իսկ խոսքերով ասած, «... մի հարուստ լեզու է, և լիովին փոխհատուցվում են սովորողի չարչարանքները»²⁰⁹:

Հարություն Ավգերյանը բազմաթիվ արժեքավոր տեղեկություններ է տվել Բայրոնին հայ ինքնուրույն և թարգմանական գրականության վերաբերյալ: Թարգմանությունները, որոնք հիմնականում կատարվում էին հունարենից, պարսկերենից, ասորերենից և լատիներենից, նպաստել են հայ մատենագրության զարգացմանը՝ հանդիսանալով նրան սնուցող հիմնական աղբյուրներից մեկը: Համաշխարհային մշակույթի ուսումնասիրության համար մեծ արժեք ներկայացնող շատ գրական հուշարձաններ պահպանվել են միմիայն գոյություն ունեցող հայերեն թարգմանությունների շնորհիվ: Դրանց մասին Բայրոնը հիշատակում է վերոհիշյալ նամակում, որտեղ մասնավորաբար նշում է, որ «վանքում կան մի շարք չափազանց հետաքրքիր ձեռագրեր, գրքեր, ինչպես նաև թարգմանություններ այժմ կորած հունարեն բնագրերից, նաև պարսկերենից, ասորերենից և այլն, չհաշված իրենց ժողովրդի բնիկ երկերը»²¹⁰:

Բայրոնի նամակների սեղմ տողերի մեջ զգացվում է ոչ միայն բանաստեղծի ջերմ ու հարգալից վերաբերմունքը հայ վանական-գիտնականների նկատմամբ, այլև, որ պակաս արժեքավոր չէ, ուրվագծվում են նրանց բնավորությունն ու էությունն ի ցույց դնող, բանաստեղծական խորաթափանցությամբ դիտված բնորոշ մանրամասներ:

1816-ի դեկտեմբերի 27-ի նամակում՝ ուղղված Ջոն Մըրրեին, բանաստեղծը գրում է. «Հայրերի առաջնորդը եպիսկոպոս է, մի հրաշալի ծերունագարդ՝ մարդ՝ ասուլածն մորուքով: Հայր Պասկալը նույնպես զարգացած ու բարեպաշտ մարդ է»²¹¹: Խոսքը վերաբերում է աբբահայր Ազոնց Գյուվերին և Հարություն Ավգերյանին: Վերջինիս Բայրոնը սիրում էր անվանել «հայր Պասկալ»: Այստեղ արժե հիշատակել, որ Ազոնց Գյուվերի օրոք Նապոլեոն Բոնապարտն այլ միաբանությունների հետ միասին սպառնում էր բնաջնջել նաև Մխիթարյաններին: Սակայն, Ազոնց Գյուվերի համբավը իբրև գիտնական-եկեղեցականի տարածված էր արդեն Եվրոպայի արքունիքներում և մեծ եկեղեցական աթոռներում, և նա կարողացավ Մխիթարյան միաբանությունը ներկայացնել որպես ակադեմիական հաստատություն: Նապոլեոնն ընդունեց այս բացառիկ երևույթը և կայսերական հատուկ հրամանագրով Ս. Ղազար մենաստանը հռչակեց անձեռնմխելի: Եվ այնուհետև բոլոր պաշտոնական թղթերի

²⁰⁹ Անդ:

²¹⁰ Անդ:

²¹¹ Անդ, էջ 335:

և գիտական հարաբերությունների մեջ Մխիթարյան միաբանությունը կոչվում էր մերթ Զամալսարանական հաստատություն, մերթ Զայկական ուսումնասիրությունների Գիտական ճեմարան²¹²։ 1815-ին բանակցություններ վարելով Ավստրիական կառավարության հետ՝ արքահորը հաջողվեց Վենետիկի քաղաքային վարչության հրամանագրով Մխիթարյան միաբանությանը պատկանող տարածությունը զգալիորեն ընդարձակել՝ գրեթե կրկնապատկելով։ Դա հնարավորություն տվեց միաբանությանը եկեղեցուն և տպարանին կից ստեղծելու նաև ձեռագրատուն, թանգարան ու գերեզմանատուն։

Ինչպես նշվեց, Ազոնց Գյուվերը մեծ հեղինակություն էր վայելում ամբողջ Եվրոպայում. Իտալիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ավստրիայի արքունիքները պարզևստեցին նրան շքանշաններով։ Թե՛ հայ, թե՛ օտարազգի բազմաթիվ գիտնականներ և նշանավոր անձնավորություններ հեռավոր վայրերից գալիս էին Ս. Ղազար կղզի իրենց հարգանքը մատուցելու նրան։ Ստեփաննոս Ազոնց Գյուվերը մեծ զարկ տվեց վանքի գիտության կաճառին։ Գյուվերի օրոք գիտնական վարդապետների մի խումբ կատարեց ծրագրված աշխատանք եկեղեցական, աստվածաբանական, պատմական, աշխարհագրական և լեզվաբանական ուսումնասիրությունների ուղղությամբ։ Նրա օրոք էր, որ Գ. Ավետիքյանը²¹³, Զ. Ավգերյանը, Մ. Չամչյանը²¹⁴, Ղ. Ինճիճյանը հրատարակեցին բազմաթիվ ուսումնասիրություններ և հարստացրին վերածննդի գրականությունը։

Չնայած իր բազմազբաղ կյանքին, Ազոնց Գյուվերը կատարել է նաև զգալի մատենագրական աշխատանք՝ հրատարակելով *Ճարտա-*

²¹² Սուրբ Ղազար։ *Մայրավանք Մխիթարեան միաբանութեան*, Ս. Ղազար, Վենետիկ, 1966, էջ 86։

²¹³ Ավետիքյան, Գաբրիել (1750-1827), հայ լեզվաբան, բառարանագիր, բանասեր, աստվածաբան։ Մխիթարյան միաբանության անդամ։ 1786-ին ձեռնադրվել է քահանա, 1799-ին նշանակվել ընդհանուր աթոռակալ։ Գրաբարի քաջ գիտակ էր, տիրապետել է հունարենին, լատիներենին, իտալերենին և այլ լեզուների։ Ունի մի շարք աշխատություններ՝ *Քերականութիւն թօքանեան լեզուի աւանդեալ ի հայ լեզու*, *հանդերձ տաճկական բարդմանությամբ* (1792), *Նարեկյուծ* (Գ. Նարեկացու *Մատենան ողբերգութեան* երկի մեկնությունը, 1801), *Մեկնութիւն չորեքտասան թղթոց երանելոյն Պողոսի առաքելոյ* (երեք հատոր, 1806), *Քերականութիւն հայկական* (1815) և այլն։

²¹⁴ Չամչյան, Սիբայել (1738-1823), հայ պատմաբան, լեզվաբան, աստվածաբան, մանկավարժ, 1762-ից Մխիթարյան միաբանության անդամ։ Տիրապետել է բազմաթիվ հին և նոր լեզուների (հունարեն, լատիներեն, իտալերեն, ֆրանսերեն, գերմաներեն, եբրայերեն, սանսկրիտ, ասորերեն, պարսկերեն, թուրքերեն և այլն)։ Ունի մի շարք աշխատություններ՝ *Քերականութիւն Զայկազեան լեզուի* (1799), *Պատմութիւն Դայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն 1784* (երեք հատոր, 1784-1786), *Մեկնութիւն սաղմոսաց* (տասը հատոր, 1815-1823) և այլն։

րախօսութիւն, Աշխարհագրութիւն, Պատմութիւն վարուց Մխիթարայ Աբբահօր, Տեսութիւն Ս. Գրոց Զին Կտակարանի, Տեսութիւն Ս. Գրոց Նոր Կտակարանի և այլ աշխատություններ: Ամփոփելով մեր միտքը Մխիթարյան միաբանության այդ ժամանակաշրջանի առաջնորդի՝ Ազոնց Գյուվերի ազգապահպան ծառայությունների վերաբերյալ, կարող ենք նշել, որ նա իր անխոնջ գործունեության, ճկուն դիվանագիտական քաղաքականության, գիտելիքների խորիմացության, հմուտ վարվելակերպի և ճարտասանության շնորհիվ կարողացավ սերտ կապերի մեջ մտնել զանազան երկրների թագավորների, կայսրերի, իշխանությունների հետ և խոսքով ու գործով ապացուցել նրանց, որ Մխիթարյան միաբանությունը վանական-գիտնականների մի միաձուլյ ընտանիք է, ազգային մշակույթի զարգացման կենտրոն, որի գլխավոր նպատակն է հավաքել և կորստից փրկել ամենուր սփռված հայկական ձեռագիր մատյանները, հրատարակել հայ մատենագիրների, պատմիչների, տաղերգուների գործերը, ինչպես նաև լուսավորական աշխատանք ծավալել ազգի մեջ: Այսպիսով, այս «հրաշալի ծերունագարդ մարդը» (Բայրոնի արտահայտությամբ) իր հետնորդին թողեց ընդարձակված Ս. Ղազարը՝ կայուն հիմքի վրա գործող և բեղմնավոր աշխատանք կատարած մշակութային հաստատությամբ հանդերձ:

Չնայած Բայրոնի նամակների հակիրճությանը, դրանց մանրազնին ուսումնասիրությունն ի հայտ է բերում նաև Մխիթարյանների բազմակողմանի գործունեության մեկ այլ բնագավառ: Այն է՝ հայ պատանիների կրթման ու դաստիարակման գործը: 1817 թվականի հունիսի 8-ին Ջոն Սըրբերին հասցեագրած նամակում Բայրոնը գրում է. «Այս նամակը պաշտոնապես Ձեզ կհանձնեն երկու հայ վանականներ, որոնք Անգլիայով ուղևորվում են Սադրաս... Եթե որևէ բանով կարող եք օգտակար լինել նրանց՝ ծովայինների կամ էլ Արևելյան Զնդկաստանի Ձեզ ծանոթ անձանց միջոցով, ապա ես ավելի քան երախապարտ կլինեմ... Նրանց անուններն են հ. Սուքիաս Սոմալյան և հ. Սարգիս Թեոդորոսյան»²¹⁵: Խոսում են իտալերեն, հավանաբար ֆրանսերեն և մի քիչ էլ անգլերեն: Կրկին հիշեցնում են խնդրանքս, հարգանքներով միշտ Ձեր՝ Բայրոն:


Գուցե կարողանաք օգնել նրանց ուղևորությանը, տալով կամ ձեռք բերելով հանձնարարականներ՝ Զնդկաստանում ներկայացնելու համար»²¹⁶:

²¹⁵ Խոսքը հայ եկեղեցական-հասարակական ականավոր գործիչ Ս. Թեոդորյանի մասին է: Նա 1836-ին նշանակվել է Ռափայելյան վարժարանի (1838-ից նաև Մուրադյան վարժարանի) տեսուչ:

²¹⁶ Th. Moore, *The Life, Letters and Journals of Lord Byron*, էջ 358:



Սամվել Մուրադյանի. հայ բարերար
Samuel Mouradyan: Armenian benefactor



Էդուարդ Ղարամյան. հայ բարերար
Edward Gharamian: Armenian benefactor

Հետազոտություններից պարզվում են Ս. Սոմայանի և Ս. Թեոդորյանի Հնդկաստան կատարելիք այցի դրդապատճառները և ժամանակը: Դրանք ինքնին վկայություն են այն փաստի, որ գրական վերածնունդ ստեղծող Մխիթարյաններին մշտապես մտահոգել է նաև հայազգի զավակների կրթության կարևոր ու հայրենասիրական գործը: Ինչպես հայտնի է, անհուն զոհողությունների գնով և եռանդուն ջանքերի շնորհիվ նրանք ստեղծել են վարժարաններ, որոնք իրենց ազգապահպան գործունեությամբ երկար տարիներ լույս են սփռել հայ գաղթավայրերում: Հնդկահայ մեծահարուստներ Էդուարդ Ռաֆայելի Ղարամյանը (1730-1795) և Սամվել Մկրտչի Մուրադյանը (1760-1815) Մխիթարյան միաբանությանն են կտակում գումար՝ հայազգի զավակների կրթության նպատակով վարժարաններ բացելու համար: Ս. Սոմայանը և Ս. Թեոդորյանը կտակարարների որդիների հետ բանակցություններ վարելու և կտակները ձեռք բերելու նպատակով 1817 թվականի հունվարի 16-ին մեկնել են Մադրաս՝ լիազորված ոչ միայն Ս. Ղազար վանքի բոլոր վարդապետների ստորագրությամբ վավերացված փաստաթղթերով²¹⁷, այլև տարաշխարհիկ ժողովրդի ճակատագրով հետաքրքրվող անգլիացի բանաստեղծի հանձնարարական նամակով՝ ուղղված Ջոն Մըրրեին:

Բայրոնի նամակում հիշատակվող Ս. Սոմայանը, աբբահայր ընտրվելուց հետո, վարդապետների մի խմբի հետ հավաքում է մայր վանքում պահվող հայկական ձեռագրերը, համեմատել է տալիս թարգմանական ձեռագրերը բնագրերի հետ և պատմական մեկնություններով, անհրաժեշտ ծանոթագրություններով, առաջաբանով հրատարակում դրանք: Ս. Սոմայանի ջանքերի շնորհիվ լույս է տեսել հիսունից ավելի բնագիր: Նա, կարելի է ասել, առաջինն էր, որ փորձեց եվրոպացիներին ծանոթացնել հայ գրականությանը: Լինելով ոչ միայն հմուտ բանասեր, այլև թարգմանիչ և բառարանագիր՝ Ս. Սոմայանն իտալերեն հրատարակել է *Պատկեր հայկական դպրութեան (Quadro di letteratura armena, 1820)* և *Ցուցակ թարգմանութեանց նախնեաց* (1825) աշխատությունները, որոնցով եվրոպացիներին ծանոթացրել է հայ հին գրականության պատմությանը և հայ հին թարգմանությունների մատենագիտությանը, ինչպես նաև կազմել է հայերեն-անգլերեն և անգլերեն-հայերեն երկհատոր, անգլերեն-հայերեն-թուրքերեն, հայերեն-անգլերեն-թուրքերեն և թուրքերեն-անգլերեն-հայերեն եռահատոր բառա-

²¹⁷ Տե՛ս Մուրատ – Ռաֆայելեան վարժարաններու բարերարներն եւ իրենց կտակները, մաս Բ. Սամուէլ Մուրատեան. ազգային մեծ բարերար. «Բազմավեպ», 1936, № 8-12, էջ 181:

րանները²¹⁸: Ս. Սոմայանի օրոք Ս. Ղազարուն հիմք դրվեց օտար լեզվի ուսուցմանը և, որ ամենահիշարժանն է, բացվեցին Ռափայելյան և Մուրադյան վարժարանները՝ ի հիշատակ մադրասցի բարեգործների:

Բայրոնի՝ հայ վարդապետների մասին Ջ. Մըրրեին ուղղված նամակը, ինչպես նշվեց, թվագրված է 8 հունիսի 1817: Ուսումնասիրելով է. Ղարամյանի և Ս. Մուրադյանի կտակների ձեռքբերման պատմությունը, պարզում ենք, որ երկու հայ վարդապետները Ս. Ղազարից Յնդկաստան են մեկնել 1817-ի հունվարի 16-ին²¹⁹: Այս փաստը մեզ հիմք է տալիս եզրակացնելու, որ Բայրոնի նամակը ամենայն հավանականությամբ թվագրված է եղել 8 հունվարի 1817, սակայն ըստ երևույթին Բայրոնի նամակների և օրագրերի առաջին հրատարակության մեջ թ. Մուրը թյուրիմացաբար նշել է 8 հունիսի 1817: Այդ թյուրիմացությունը հետագայում տեղ է գտել մյուս հրատարակություններում: Չնայած դրան, վերոհիշյալ նամակի գրության ժամանակը մենք առայժմ նպատակահարմար ենք համարում պահպանել ըստ թ. Մուրի:

Ինչպես արդեն նշել ենք, Մխիթարյանները եվրոպական գրական հասարակայնությանը լատիներեն թարգմանությամբ ներկայացրին Եվսեբիոսի բնագրային տարբերակ չունեցող *Քրոնիկոնը*: Բայրոնի 27 հունվարի 1818 թվակիր նամակում ուղղված Ջ. Մըրրեին, հետաքրքիր հիշատակություն կա Եվսեբիոսի այդ թարգմանության մասին: «Քանի որ Եվսեբիոսի՝ վաղուց կորած և վերջերս գտնված, բնագրի հատվածների հայ թարգմանիչները հաճությամբ ինձ տրամադրեցին դրա հայտագիրը, - գրում է Բայրոնն այդ նամակում, - ներդիր ուղարկում եմ Ձեզ վեց օրինակ և խնդրում բաժանորդներ գտնել երկու համալսարաններում²²⁰, ինչպես նաև գիտունների և տգետների այն շրջաններում,

²¹⁸ Տե՛ս Ս. Սոմայան, *Համառոտ բառարան յանգղիականէ ի հայ*, հ. 1, Վենետիկ, 1835: - *Համառոտ բառարան ի հայէ յանգղիականն*, հ. 2, Վենետիկ, 1835: - *Համառոտ բառարան յանգղիականէ ի հայ և ի տաճիկ*, հ. 1, Վենետիկ, 1843: - *Համառոտ բառարան ի հայէ յանգղիական և ի տաճիկ*, հ. 2, Վենետիկ, 1843: - *Համառոտ բառարան ի տաճիկերեն յանգղիական և ի հայ բարբառ*, հ. 3, Վենետիկ, 1843:

²¹⁹ Ս. Սոմայանի և Ս. Թեոդորյանի այդ առաքելությունն ավարտվում է անհաջողությամբ: Հետագայում Ս. Թեոդորյանը Նորից է մեկնում Յնդկաստան, և բազմաթիվ չարչարանքներից, արկածներից ու դժվարություններից հետո նրան վերջապես հաջողվում է ձեռք բերել է. Ղարամյանի և Ս. Մուրադյանի կտակներով նախատեսված նվիրատվությունը, որի շնորհիվ բացվում են Մուրադյան (1834-ին Պաղուա) և Ռափայելյան (1836-ին Վենետիկ) վարժարանները (ավելի մանրամասն տե՛ս *Մուրադ Ռափայելյան վարժարաններու բարերարներն և իրենց կտակները*, «Բազմավէպ», 1936, № 8-12, էջ 167-196: - Վ. Զարդարեան, *Յիշատակարան (1512-1933)*, Գրատուն Վահան Զարդարեան, Գահիրե, 1934, Գ հատոր, էջ 111-115):

²²⁰ Խոսքը Քենթրիջի և Օքսֆորդի համալսարանների մասին է:

որոնք կցանկանային թոթափել իրենց անգիտությունը: Այս են խնդրում *Նրանք* (վանքը), խնդրում են *ես*, նույնը բարեհաճեցեք խնդրել *Դուք* ուրիշներին»²²¹:

Եվսեբիոսի *Քրոնիկոնի* հունարեն բնագիրը կորել է, պահպանվել են միայն առանձին քաղվածքներ հույն պատմիչների երկերում: Հիերոնիմոսը²²² *Քրոնիկոնի* պահպանված հատվածների մի մասը թարգմանել է լատիներեն՝ ավելացնելով բազմազան պատմական տեղեկություններ արևմտաեվրոպական հեղինակների աշխատություններից: Սակայն, նրա աշխատանքը եվրոպացի պատմաբանների ուշադրությանը չարժանացավ, քանի որ Հիերոնիմոսը, աշխատության առաջաբանում իր իսկ արած խոստովանությամբ, հանդես է եկել ոչ միայն Եվսեբիոսի երկի թարգմանիչ, այլև՝ ստեղծագործող, իսկ դա, բնականաբար, իջեցրել է կատարված աշխատանքի պատմական արժանահավատության և ճշմարտացիության աստիճանը:

Մինչդեռ պահպանված հին հայերեն թարգմանությունը (մոտ 5-րդ դար), որը միայն 18-րդ դարի 80-ական թվականներին հայտնաբերեց Գեորգ Դպիրը²²³, անթերի է և ավելի մոտ բնագրին, ներշնչում է վստահություն և բավարարում գիտական պահանջները: Սկստիչ Ավգերյանը *Քրոնիկոնի* գրաբար տարբերակը թարգմանում է լատիներեն և 1818-ին Վենետիկում հրատարակում այն՝ լատիներեն թարգմանության, ծանոթագրությունների, հունարեն բնագրի պահպանված հատվածների հետ մեկտեղ: Այդ նույն ժամանակ կոստանդնուպոլսեցի գիտնական-վարդապետ, Մխիթարյան միաբանության անդամ Հովհաննես Ջոհրապյանը (1756-1829), «ցանկալով այս հռչակաւոր ժամանակագրութեան առաջին հրատարակութեան փառքը իրան սեպիականել»²²⁴, Միլանի Ամբրոջյան գրադարանի վարիչ Անջելո Մայի (1782-1854) աջակցությամբ Միլանում հրատարակում է *Քրոնիկոնի* լատիներեն թարգմանությունը՝ առանց հայերեն տարբերակի: Մ. Ավգերյանն իր աշխատության առաջաբանում մեղադրել է Հ. Ջոհրապյանին այն բանում, որ նա, հակառակ Մխիթարյան միաբանության սահմանած կանոնների, հրատա-

²²¹ Th. Moore, *The Life, Letters and Journals of Lord Byron*, էջ 372:

²²² Հիերոնիմոս Երանելի (մոտավորապես 340-420), հույն աստվածաբան և թարգմանիչ:

²²³ Գեորգ Դպիր Պալատացի (Տեր-Հովհաննիսյան, 1737-1812), հայ լեզվաբան և բառարանագիր: Հայտնի է իր *Բառարան պարսկերէն աշխատությամբ*, որը տպագրվել է Կ. Պոլսում 1826-ին:

²²⁴ Ք. Պատկանեան, *Հայագետ Սէն Մարտէն. Նորա կենսագրութիւնը և գրաւոր երկասիրութիւնները*. «Փորձ» (ազգային եւ գրականական միամսեայ հանդես), Տիփսիս, 1881, հինգերորդ տարի, № V-VI, էջ 7:

րակել է միաբանության սեփականությունը համարվող գրչագիրը²²⁵։ Այս անվայել արարքի հետևանքով Յ. Ջոհրապյանը ստիպված դուրս է գալիս միաբանությունից և հետագայում հաստատվում Փարիզում։

Մեր կատարած հետազոտությունները բերում են այն եզրահանգման, որ Բայրոնի նամակում հիշատակված Եվսեբիոսի աշխատության լատիներեն թարգմանությունը պատկանում է Մ. Ավգերյանին։

Ջոն Մըրրեն հավանաբար չի ուղարկել «հայկական» Եվսեբիոսի բաժանորդների ցուցակը. Բայրոնի՝ 1818-ի ապրիլի 11-ին նրան ուղղված նամակից տեղեկանում ենք. «Ինչո՞ւ չուղարկեցիք նամակիս պատասխանը և հայկական Եվսեբիոսի թարգմանության բաժանորդների ցուցակը, որի հայտագրի օրինակները (ֆրանսերեն) ուղարկեցի Ձեզ երկու ամիս առաջ։ Արդյո՞ք ստացել եք նամակս. կուղարկեմ մեկ ուրիշը։ Դուք չպետք է անուշադրության մատնեք իմ հայերին»²²⁶։ Այս փոքրիկ հիշատակումն անգամ մի ավելորդ ապացույց է այն անհերքելի իրողության, որ վենետիկյան շրջանի իր գործունեության ընթացքում Բայրոնը խորին ակնածանքով է վերաբերվել Մխիթարյաններին, մշտապես հետաքրքրվել է նրանց կատարած գիտական աշխատանքով, բարձր է գնահատել այն և հնարավորության սահմաններում աջակցել ու օժանդակել է «իր հայերին»։

§ 2.2. Հայագիտության ձևավորումը և զարգացումը Եվրոպայում (ըստ Բայրոնի նամականիի)

Բայրոնի նամակներից որոշակի տեղեկություններ ենք քաղում նաև 18-19-րդ դարերում Արևմտյան Եվրոպայում (հատկապես Անգլիայում և Ֆրանսիայում) հայագիտության ձևավորման և զարգացման պատմության առանձին դրվագների վերաբերյալ։ Այսպես, 1817 թվականի հունվարի 2-ի նամակում՝ ուղղված Ջոն Մըրրեին, Բայրոնը հիշատակում է, որ «չատ տարիներ առաջ երկու Վիստոնները»²²⁷ Անգլիայում հրատա-

²²⁵ Տե՛ս Գ. Շրումպֆ, *Ուսումնասիրութիւնք հայ լեզուի և մատենագրութեան յ'Արևմուտս (ԺԴ-ԺԹ դար)*, թարգմ. և լրաց. Գ. Ջարբխանյանի, Վենետիկ, Մխիթարեան տպարան, 1895, էջ 115։

²²⁶ Th. Moore, *The Life, Letters and Journals of Lord Byron*, էջ 377-378։

²²⁷ Ջորջ և Ուիլյամ Վիստոնների հայրը՝ Ուիլյամ Վիստոնը, հնդկահայ մեծահարուստ Գրիգոր Աղափիրյանի որդիների ուսուցիչն է եղել։ Վերջինս Հնդկաստանում է սովորել հայերեն և, վերադառնալով Լոնդոն, այն սովորեցրել է նաև իր որդիներին։ Վիստոն եղբայրները հետագայում ինքնուսուցմամբ այնքան են խորացել հայերենի մեջ, որ

րակեցին *Հայոց պատմության* բնագիրը՝ իրենց իսկ լատիներեն թարգմանության հետ մեկտեղ»²²⁸։ 1695-ին Ամստերդամում հայ մատենագիր և հրատարակիչ Ղուկաս Վանանդեցին տպագրեց Մովսես Խորենացու *Հայոց պատմությունը*, որից հետո եվրոպացի արևելագետներն սկսեցին ավելի մեծ հետաքրքրություն ցուցաբերել հայ ազգի և նրա պատմության նկատմամբ։ «Մինչ այդ, - գրում է Լեոն, - հայ ազգը ներկայացել էր եվրոպացուն կամ իբրև կրոնական մի համայնք, որ ուներ դավանական իր առանձնահատկությունները, կամ թե իբրև հնուտ և ճարպիկ և միևնույն ժամանակ տգետ վաճառական, որի ասածներին հավատ չէր ընծայվում։ Խորենացին, Ամստերդամում վերածնվելով, գնաց ցույց տալու արևմտյան աշխարհին, թե հայերը մի հին պատմական ազգ են, կարևոր դեր են կատարել Արևելքի քաղաքական աշխարհում, շփվելով Ասորեստանի, Պարսկաստանի, Հռոմի և Բյուզանդիայի հետ»²²⁹։ Եվ եվրոպացի գիտնականները հետաքրքրվում, իրենց ուսումնասիրությունների նյութ են դարձնում նաև հայ պատմահոր *Հայոց պատմությունը*։ Այսպես, օրինակ, Խորենացու աշխատությունն աղբյուր է դառնում գերմանացի գիտնական Յ. Շրյոդերի (1680-1756) լեզվաբանական ու պատմական ուսումնասիրությունների համար։ Նամակագրություն է սկսվում ֆրանսիացի հայագետ Լա Կրոզի (1661-1739) և անգլիացի Վիստոն եղբայրների միջև՝ դարձյալ Խորենացու առնչությամբ։ Եվ չնայած Լա Կրոզի՝ Խորենացու մասին թյուր կարծիքին (Լա Կրոզը գտնում էր, որ Խորենացին ապրել և ստեղծագործել է 9-10-րդ դարերում), Վիստոն եղբայրները, ինչպես հիշատակված է Բայրոնի նամակում, լատիներեն թարգմանեցին *Հայոց պատմությունը*, նաև Անանիա Շիրակացու *Աշխարհացոյցը*, և դրանք, հայերեն բնագրի հետ մեկտեղ, 1736-ին հրատարակեցին Լոնդոնում՝ Կարոլուս Ալքերս տպագրիչի մոտ։ Մովսես Խորենացու երկի՝ Վիստոն եղբայրների թարգմանությունը, որը, ըստ մեր ունեցած տեղեկությունների, հայոց պատմագիտական կոթողներից կատարված առաջին թարգմանությունն է եվրոպայում, եվրոպական բանասիրության միտքը հրավիրում է մինչ այդ սակավ ծանոթ հայ հարուստ մշակույթի, հայոց պատմության և մատենագրության վրա՝ առաջացնելով մեծ հետաքրքրություն եվրոպացի արևելագետների շրջանում։

կարողացել են լատիներեն թարգմանել և 1736-ին Լոնդոնում հրատարակել Մովսես Խորենացու *Հայոց պատմությունը* և Անանիա Շիրակացու *Աշխարհացոյցը*։

²²⁸ Th. Moore, *The Life, Letters and Journals of Lord Byron*, էջ 336։

²²⁹ Լեո, *Երկերի ժողովածու*, տասը հատորով, երրորդ հատոր, *Հայոց պատմություն*, գիրք առաջին, «Հայաստան», Երևան, 1969, էջ 466։

Այս առումով արժե նշել, որ հայերը, լինելով մեկը բազմաթիվ այն ազգերից, որոնք խթանեցին հռոմեական պետության անկումը, շնորհիվ խորենացու աշխատության, նույնպես տեղ գրավեցին անգլիացի պատմաբան Էդուարդ Գիբոնի՝ 18-րդ դարի վերջերին գրած *Հռոմեական կայսրության անկման և կործանման պատմությունը* (1776-1788) համարահայտ պատմագիտական աշխատության մեջ²³⁰։ Իսկ Գիբոնի աշխատությունը, որը համարվում է 18-րդ դարի երկրորդ կեսի լավագույն պատմագիտական աշխատությունը, թարգմանվել է գրեթե բոլոր եվրոպական լեզուներով և հայտնի է իր կենդանի շարադրանքով ու սկզբնաղբյուրների մշակման որակով, իր արժանի տեղն էր գրավում Բայրոնի անձնական գրադարանում։

Ընդհանրապես Բայրոնի անձնական գրադարանը պարունակում էր արևելագետ հայտնի ճանապարհորդների գրքերը, որոնք նա կարդում էր մեծ հափշտակությամբ և հետագայում բազմիցս բանավեճի մեջ մտնում դրանց հեղինակների հետ *Չայլդ Չարլզի ուխտագնացության* առաջին և երկրորդ նվագների, ինչպես նաև *Արևելյան պոեմների* մասին տված իր ծանոթագրություններում։ Բանաստեղծի հետաքրքրությունը նմանատիպ գրականության հանդեպ չի նվազել իր ամբողջ կյանքի ընթացքում։ Բայրոնը հնարավորություն ուներ արևելյան երկրների մասին տեղեկություններ քաղել այն ժամանակվա մի շարք հանդեսներում²³¹ արևելյան երկրների մասին տեղ գտած բազմաբնույթ նյութերից (ճանապարհորդական նոթեր, գրականության և արվեստի տեսություններ, արևելյան պոեզիայի ու արձակի թարգմանության նմուշներ և այլն)։ Դրա մասին է վկայում նաև Բայրոնի 1808 թվականի՝ հունվարի 21-ին իր հեռավոր ազգական և գրող Ռոբերտ Դալասին (1754-1824) ուղղված նամակը, որտեղ նա գրում է. «Ինչ վերաբերում է ընթերցանությանը, ես առանց չափազանցելու կարող եմ ասել, որ պատմության բնագավառից կարդացել եմ բավականին շատ։ Քիչ կգտնվեն ժողովուրդներ, որոնց պատմությանը ես փոքր-ինչ ծանոթ չլինեմ՝ Չերոկո-

²³⁰ Տե՛ս Ed. Gibbon, *The History of the Decline and Fall of the Roman Empire*, in eight volumes, London, 1838 (տե՛ս, օրինակ, vol. I, էջ 348, 474, 475, 486 և այլն)։ - Э. Гиббон, *История упадка и разрушения Римской империи*, ч. I-VII, М., типография В. Рихтер, 1883-1886. Հայերի և Հայաստանի մասին խոսվում է աշխատության I (էջ 353, 461-465, 471), II (էջ 284), III (էջ 14, 128, 129, 531-533), V (էջ 290-292), VI (էջ 254-258, 398) մասերում։

²³¹ Տե՛ս *Asiatic Research for Inquiring into the History and Antiquities, the Arts, Sciences and Literature of Asia*, 10 vols., L., 1806-1809. - *Oriental Collections, Containing Original Essays and Dissertations etc., Illustrating the History and Antiquities, the Arts, Sciences and Literature of Asia*, 3 vols., L., 1797-1799. - *The Asiatic Annual Register*, L., 1799-1811. (Տե՛ս Л. Сидорченко, *Байрон и национально-освободительное движение на Балканах*, Изд. ЛГУ, Ленинград, 1977, с. 181).

տոսից մինչև Գիբոն»²³²։ Այս տողերը վկայում են, որ Բայրոնը հայ ժողովրդի պատմությանը ծանոթ է եղել ըստ երևույթին 1807-ից, քանի որ այդ թվականին հրատարակված Գիբոնի վերոհիշյալ աշխատությունը բանաստեղծի անձնական գրադարանում էր։ Գիբոնի գրքում տեղ գտած Բյուզանդիայի նկարագրությունը ուժեղացրեց անգլիացիների ուշադրությունը Արևելքի նկատմամբ, իսկ Բայրոնի համար այդ գիրքը երկար տարիներ մնաց իբրև խորհրդածությունների և բանավեճի առարկա։ Եվ միանգամայն բնական է, որ 1823-ին Իտալիայից Յունաստան մեկնելիս բանաստեղծն իր հետ է վերցնում նաև Գիբոնի *Պատմությունը*։

Բայրոնի «հայկական» նամականին խոսում է նաև այն մեծ հետաքրքրության մասին, որ ցուցաբերել են օտարազգի գիտնականները հայոց լեզվի ուսումնասիրության նկատմամբ։ Այսպես, 1816-ի դեկտեմբերի 5-ին Թ. Մուրին ուղղված նամակից տեղեկանում ենք, որ դրանից «չորս տարի առաջ ֆրանսիացիները հիմնեցին մի հայկական ամբիոն։ Երկուշաբթի առավոտյան ներկայացան քսան աշակերտ՝ լի ազնիվ եռանդով, սրտաբաց երիտասարդությամբ և անգուգական աշխատասիրությամբ։ Նրանք իրենց ազգին և աշխարհակալ հաղթությանն արժանի քաջությամբ դիմացան մինչև հինգշաբթի։ Այնուհետև, այբուբենի քսանվեցերորդ տառի վրա, նրանցից տասնհինգի ուժերն սպառվեցին»²³³։ Այստեղ խոսքը 1811-ին Նապոլեոն Բոնապարտի հատուկ հրովարտակով Փարիզի Արքունի գրադարանին կից Արևելյան կենդանի լեզուների բարձրագույն դպրոցում հայոց լեզվի ամբիոն հիմնելու մասին է։ Փարիզի Արևելյան կենդանի լեզուների դպրոցի հիմնադրումից երեք տարի անց՝ 1798-ի դեկտեմբերի 11-ին, պարսկերենի, արաբերենի և թուրքերենի արդեն իսկ գործող ամբիոններին հավելվեց նաև հայոց լեզվի նորաստեղծ ամբիոնը՝ Ֆրանսիա ժամանած Հակոբ Շահան-Ջրպետյանի (Ջրպետ)²³⁴ ղեկավարությամբ։

²³² *The Letters of George Gordon, 6th Lord Byron*, selected by R. G. Howarth, with an Introduction by André Maurois, London-Toronto-New York, 1933, p. 10.

²³³ Th. Moore, *The Life, Letters and Journals of Lord Byron*, էջ 329.

²³⁴ Շահան-Ջրպետյան, Հակոբ (Ջրպետ, 1772-1837), հայ լեզվաբան, 1798-ին հաստատվել է Փարիզում՝ ունենալով անձնական ծանոթություն Նապոլեոն Բոնապարտի հետ։ 1826-ին Թիֆլիսի հայոց հոգևոր թեմի առաջնորդ (1843-ից՝ Ամենայն Հայոց կաթողիկոս), արքեպիսկոպոս Ներսես Աշտարակեցու կողմից հրավիրվել է Թիֆլիս՝ Ներսիսյան ճեմարանում ֆրանսերեն դասավանդելու։ Հ. Շահան-Ջրպետյանի կյանքի և գործունեության մասին ավելի մանրամասն տե՛ս Ա. Դ. Երիցեանց, *Պատմություն 75-ամեայ գոյութան Ներսիսեան հոգևոր դպրոցի որ ի Թիֆլիզ*, հատոր Ա. (1824-1850), Թիֆլիզ, Տպար. Յ. Մարտիրոսեանցի, 1898, էջ 134-150։

1801-ին Շահան-Ջրպետյանը հրաժարվեց Արևելյան կենդանի լեզուների բարձրագույն դպրոցի հայոց լեզվի ուսուցչի իր պաշտոնից, պատճառաբանելով, որ ֆրանսերենի և ֆրանսիական գրականության իր ոչ բավարար իմացությունը չի կարող լիովին գոհացնել աշակերտներին, քանի որ այն հնարավորություն չի տալիս հայոց լեզուն մատչելիորեն մատուցել նրանց: Այդ անհաջողությունից Շահան-Ջրպետը չիուսահատվեց, «այլ իր ազգին յատուկ յարատևութեամբ՝ ամենայն փութով և ջանիւք ետեւ եղաւ սորվիլ զգաղղիական լեզու»²³⁵ և 1806-ին Փարիզում հրատարակեց ֆրանսերենով շարադրված իր առաջին աշխատությունը՝ *Յետաքրքրական հետազոտություններ հին Ասիայի պատմության վերաբերյալ* խորագրով, որը հետագայում հրատարակվել է նաև ռուսերեն²³⁶: Չնայած այդ աշխատությունը չունեւ պատմագիտական որևէ արժեք և «բոլորովին աննշան ու իմաստնոց համար ամենեւին կարելորութիւն չունեցող գրուած մը» էր, «բայց անով կրցաւ հաւաստիք մը տալ՝ գաղղիականին մէջ ըրած յառաջադիմութեան, առաջարկելով, որ կարենայ միւս անգամ ձեռք առնուլ հայ լեզուի դասատուութեան ընթացքը»²³⁷: Յետագա տարիներին Շահան-Ջրպետյանը շարունակեց էլ ավելի խորապէս ուսումնասիրել ֆրանսերենը և 1811-ին վերստին ստանձնեց հայոց լեզվի ամբիոնի ղեկավարությունը:

1815-ին գրած իր նամակներից մեկում Շահան-Ջրպետյանը նշում է. «Դպրատուն մեր հաստատեալ է միանգամայն վասն Հայոց, Գաղղիացւոց եւ այլ ամենայն ազգաց. զի բազումք յօտար յաշխարհաց եւս, արք երեւելիք, գիտնական արք, քառասնամեայ եւ աւելի եւս, զան աստ առ ի յուսանել. զի լեզու մեր է մին ի հնագոյն ի սուրբ եւ ի մայր լեզուաց, մինչեւ զարմացուցանել զգիտունս թէ քանի հնագիտութիւնս, արմատս նախկնական լեզուի աշխարհիս եւ զայլ անստգիւտ տեղեկութիւնս զվաղեմի պատմութեանց եւ զծագմանէ ազգաց՝ քաղեալ գտանեն իբր անփորձ հանք կամ անտաշ գոհար»²³⁸: Ուրեմն, հայոց

²³⁵ Գ. Շրումպֆ, *Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յԱրեւմուտս (ԺԴ-ԺԹ դար)*, Թարգմ. և լրաց. Գ. Ջարբիհանյանի, Վենետիկ, Մխիթարեան տպարան, 1895, էջ 109:

²³⁶ Sté J. Chahan de Cirbied, *Recherches curieuses sur l'Histoire ancienne de l'Asie*, Paris, 1806. – Я. Шахан-Джрпет, *Любопытные извлечения из древней истории Азии*, пер. А. Худобашева, Петербург, 1816.

²³⁷ Գ. Շրումպֆ, *Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յԱրեւմուտս (ԺԴ-ԺԹ դար)*, էջ 109:

²³⁸ Ա. Յ. Այվազեան, *Շար հայ կենսագրութեանց*, Կ. Պոլիս, 1893, էջ 37 (տե՛ս նաև՝ Շահան Ջրպետ, «Բանասէր», Առաջին հատոր, ի Կոստանդնուպօլիս, 1851, էջ 212-213: – Ա. Յ. Այվազեան, *Յակովբ Շահան-Ջրպետեան*. «Արծազանք», Թիֆլիս, 1892, 11 նոյեմբերի, № 131 և այլն):

լեզվի ամբիոնը կազմակերպվել էր ոչ միայն ֆրանսիացիների, այլև բոլոր ազգերի համար: Դպրոց են սկսել հաճախել տարբեր ազգերի ներկայացուցիչներ, որոնց թվում եղել են նույնիսկ քառասունն անց գիտնականներ: Եկել են ուսումնասիրելու մի լեզու, որը հնագույններից մեկն էր մայր լեզուների մեջ: Ուսումնասիրելով հայոց լեզուն իբրև մի անխառն գոհար՝ նրանք հազվագյուտ և եզակի տեղեկություններ են քաղել ազգերի ծագման և հին պատմության վերաբերյալ:

Բայրոնի 1817-ի հունվարի 2-ի նամակում հիշատակված մի քանի գիտնականների, ովքեր մեծ եռանդով ձեռնամուխ են եղել հայոց լեզվի ուսումնասիրությանը, հայագիտական գործունեությունն անխզելիորեն կապված է առաջին հերթին Չակոբ Շահան-Ջրպետյանի անվան հետ: Այդ ժամանակ Շահան-Ջրպետյանից բացի ուրիշ հայագետ չկար Ֆրանսիայում: Նրա շնորհիվ էր, որ հայոց լեզուն տեղ գտավ Փարիզի Արևելյան կենդանի լեզուների բարձրագույն դպրոցի հայտագրում: «Ջրպետ, այսպես, ոչ միայն հայերենի առաջին ուսուցիչն է եղած Ֆրանսայի մեջ, - նշում է Արշակ Չոպանյանը, - այլ՝ եւ հայրը Ֆրանսայի հայագետ բանասերներուն»²³⁹: 1812-ին Ջրպետը ֆրանսերեն ու հայերեն տեքստերով, ծանոթագրություններով և առաջաբանով հայ ժամանակագիր Մատթեոս Ուռհայեցու (XI դ. 2-րդ կես-մոտ 1144) *Ժամանակագրությունից* (հաճախ հրատարակվել է *Պատմութիւն* վերնագրով) լույս է ընծայում երկու հատված, որոնք վերաբերում են խաչակիրների առաջին արշավանքին: Ունի նաև այլ հայագիտական աշխատություններ, որոնք մեծավ մասամբ վստահություն չեն ներշնչել այն ժամանակվա հայագետներին և քննադատվել են նրանց կողմից: Մասնավորապես, 1823-ին «Ասիական հանդեսում» հայ բանասեր, Փարիզի Ասիական ընկերության իսկական անդամ Յովհաննես Ջոհրապյանի կողմից խիստ քննադատության է ենթարկվել Ջրպետի հրատարակած *Հայոց լեզվի քերականությունը*²⁴⁰: Սակայն անհրաժեշտ ենք համարում պնդել, որ անկախ իր աշխատություններին տրված իրարամերժ գնահատականներից և դրանց իրական գիտական արժանիքներից, Ջրպետը, այնուամենայնիվ, քաջատեղյակ լինելով հայոց հին պատմությանն ու հայ գրականությանը, իր գործունեությամբ մատուցել է անգնահատելի ծառայություն եվրոպայում հայագիտության զարգացման գործին՝

²³⁹ Զ. [Ա. Չոպանեան], *Շահան Ջրպետ*. «Անահիտ», Բարիզ, 1904, Յունուար, թիւ 1, էջ 8:

²⁴⁰ Stéu Zohrab, *Lettre au sujet de la nouvelle grammaire arménienne de M. Cirbied*, "Journal Asiatique", 1823, tome II, pp. 297-312; - *Réponse de M. Zohrab, docteur arménien à une brochure publiée par M. Girbied*, 1823, tome III, pp. 169-190.

կազմակերպելով հայերենի ուսուցումը Ֆրանսիայի մայրաքաղաքում՝ Փարիզում, և պատրաստելով մի շարք անվանի հայագետներ: Ցանկացած գիտնականի պատիվ կբերեր ունենալ այնպիսի տաղանդավոր ու բազմակողմանի զարգացած աշակերտ և հետևորդ, ինչպիսին Սեն-Մարտենը²⁴¹ է: Բացի դրանից, չպետք է մոռանալ, որ նրա հրատարակած քերականությունն առաջինն էր Ֆրանսիայում և մինչ այդ հայերենի ուսուցման ոչ մի ձեռնարկ գոյություն չուներ: Ջրպետի աշխատությունների քննադատման գործում, հավանաբար, որոշակի դեր է խաղացել նաև քաղաքական գործոնը՝ ստիպել նրան հեռանալ իր զբաղեցրած պաշտոնից. ըստ երևույթին կամ ինչ-որ մեկը հավակնել է այդ պաշտոնին, կամ էլ ֆրանսիացիները, ելնելով Փարիզի Արևելյան կենդանի լեզուների բարձրագույն դպրոցի կանոնադրության դրույթներից, այդ դպրոցի հայոց լեզվի ամբիոնի ղեկավարի պաշտոնում ցանկացել են տեսնել ֆրանսիացու, այլ ոչ թե օտարի:

1811-ի սկզբներին Շահան Ջրպետին հաջողվում է բավականին թվով աշակերտներ հավաքել իր շուրջը: Նա իր դասավանդումն սկսել է քսան աշակերտով, որոնցից միայն հինգն է կարողացել ավարտել ուսումը: Մեր հետազոտություններից պարզվում է, որ այդ դպրոցի առաջին շրջանավարտներից երկուսը՝ Սեն-Մարտենը և Բելլոն²⁴², հետագայում դարձել են անվանի հայագետներ, որոնց թողած ուսումնասիրությունների հսկայական ծավալը նշանակալից դեր է խաղացել ինչպես ֆրանսիական, այնպես էլ եվրոպական հայագիտության զարգացման պատմության մեջ: Հենց նրանց նկատի ունեն Բայրոնը, երբ 1817-ի հունվարի 2-ի նամակում հասցեագրված Ջ. Մլրդեին, գովեստով խոսելով Միսիթարյանների մասին, նշում է. «նրանք այստեղ ներկայացնում են մի շատ հարգելի և ուսումնասեր միաբանություն, և դեռ Բոնապարտի օրոք ֆրանսիացի մի քանի գիտնականներ մեծ եռանդով ձեռնամուխ են եղել նրանց լեզվի ուսումնասիրությանը»²⁴³:

²⁴¹ Սեն-Մարտեն, Անտուան-ժան (1791-1832), ֆրանսիացի արևելագետ: Տիրապետել է մի քանի արևելյան լեզուների՝ արաբերենին, պարսկերենին, հայերենին, ասորերենին, վրացերենին, թուրքերենին: 1820-ից եղել է Ֆրանսիական ակադեմիայի Արևելքի բաժանմունքի ղեկավարը:

²⁴² Բելլո, Մ., ֆրանսիացի հայագետ: Հետագայում դարձել է եկեղեցական գործիչ: Առ այսօր մեզ հայտնի է միայն նրա *Փորձառութիւն հայկական լեզուին* աշխատությունը: (Ցավոք, մեր տրամադրության տակ եղած տեղեկատվական և մասնագիտական աղբյուրներից չհաջողվեց ստանալ Մ. Բելլոյի կենսագրության և գործունեության հետ կապված անհրաժեշտ տեղեկություններ):

²⁴³ T. Moore, *The Life, Letters and Journals of Lord Byron*, էջ 336.

Այդ «մի քանի գիտնականներից» առաջին հերթին կարելի է առանձնացնել «պարագլուխն արեւելագիտաց»²⁴⁴ (ֆրանսիացի նշանավոր չինագետ Ժան-Պիեր-Աբել Ռեմյուզայի (1788-1832) մարգարեական կանխատեսմամբ)²⁴⁵ Սեն-Մարտենին, որը քսանմեկ տարեկան հասակում արդեն շարադրել էր հայագիտության վերաբերյալ իր հիմնական ուսումնասիրությունը՝ *Ձեկուցագրեր Յայաստանի պատմության և աշխարհագրության մասին* մոտ հազար էջանոց երկհատոր ծավալուն ու բովանդակալից աշխատությունը²⁴⁶։ Այդ *Ձեկուցագրերը*, որոնք Արքունի տպարանը հրատարակեց Փարիզում 1818-ին և 1819-ին, մեծ հետաքրքրություն առաջացրին գիտնականների շրջանում, արժանացան արևելագետների բարձր գնահատականին, լայն արձագանք գտան մամուլում (օրինակ, Ֆրանսիայում կանոնավոր կերպով լույս ընծայվող «Գիտնականների տեղեկագիր» հանդեսում (“Journal des savants”), որը մեծ համակրանքով է ողջունել Սեն-Մարտենի աշխատության հրատարակումը և բազում դրվատանքի խոսքեր ուղղել հեղինակի հասցեին) և, ինչպես բնութագրում է Սեն-Մարտենի աշակերտ և կենսագիր Մ. Բրոսսեն²⁴⁷, հանդիսացան «իր բովանդակ փառքը և բովանդակ գրականական զօրութիւնը»²⁴⁸։ Այդ աշխատությունը, որը, կարելի է ասել, Սեն-Մարտենի գրեթե առաջին գործն էր, իրոք որ գլուխ-գործոց է և շարադրված է այնպիսի հմտությամբ, խոր վերլուծություններով և հասուն դատողություններով, որ թվում է, թե դրա հեղինակը ոչ թե խոստումնալից ապագա ունեցող երիտասարդ հետազոտող է, այլ տարիների փորձ ունեցող բազմավաստակ գիտնական։ Այդ իսկ պատճառով, Սեն-

²⁴⁴ Գ. Շրումպֆ, *Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յԱրեւմուտս (ԺԴ-ԺԹ դար)*, էջ 172։

²⁴⁵ 1813-ին Ա. Ռեմյուզան, պաշտպանելով իր ատենախոսությունը բժշկագիտության վերաբերյալ, դրա առաջին օրինակը նվիրել է Սեն-Մարտենին հետևյալ մակագրությամբ՝ “J. Saint-Martin, alteri litterarum orientalium-spei”։

²⁴⁶ Stéu M. J. Saint-Martin, *Mémoires historiques et géographiques sur l'Arménie*, Paris, de l'Imprimerie Royale: tome premier, 1818; tome second, 1819.

²⁴⁷ Բրոսսեն, Մարի (1802-1880), ֆրանսիացի արևելագետ, աղբյուրագետ։ 1840-ական թվականներին Պետերբուրգի համալսարանում դասախոսություններ է կարդացել Յայաստանի և Վրաստանի պատմության վերաբերյալ։ 1845-ին Վենետիկի Մխիթարյանների մոտ ուսումնասիրել է հայկական ձեռագրերը։ Ֆրանսերեն թարգմանել և ծանոթագրություններով հրատարակել է Թովմա Արծրունու, Ստեփանոս Օրբելյանի, Կիրակոս Գանձակեցու, Զաքարիա Սարկավազի և այլոց երկերը (*Յաւաքումն պատմագրաց Յայոց*, հ. 1-2, ֆրանսերեն)։ Ուսումնասիրությունները վերաբերում են հայկական և վրացական հնագիտական հուշարձաններին, արձանագրություններին, դրամներին և մատենագրությանը։

²⁴⁸ Գ. Շրումպֆ, *Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յԱրեւմուտս (ԺԴ-ԺԹ դար)*, էջ 175։

Մարտենի *Ձեկուցագրերը* ըստ արժանվույն ընդունվեցին եվրոպական գիտնականների կողմից և երկար ժամանակ նրանց ուսումնասիրությունների համար հանդիսանում էին հայոց պատմության և գրականության վերաբերյալ միակ հավաստի աղբյուր:

Ի դեպ, այդ *Ձեկուցագրերի* ներածությունը թարգմանվել է հայերեն և 1872-ին տպագրվել Կովկասում հայագիտական առաջին հանդեսի՝ «Արարատ» ամսագրի (հրատարակվել է 1868-1919-ին Էջմիածնում՝ Ամենայն Հայոց կաթողիկոսի նշանակած խմբագրի ղեկավարությամբ, նախ՝ որպես «Ամսագիր կրօնական, պատմական, բանասիրական եւ բարոյական», իսկ 1898-ից՝ «Պաշտօնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի») էջերում²⁴⁹։ Մեր կարծիքով, ամսագրի խմբագրությունը (կամ գուցե Սեն-Մարտենի աշխատության առաջաբանի թարգմանիչը՝ Ս. Մ. - Գ²⁵⁰) ճիշտ է վարվել այդ հոդվածը վերնագրելով *Հայոց լեզվի և գրականության գիտական նշանակությունը*, քանի որ այստեղ հիմնականում շարադրվում են հայոց լեզվի և հայ գրականության նկատմամբ հեղինակի ունեցած հայացքներն ու տեսակետները։ Սեն-Մարտենը մանրագնին վերլուծում է հայոց լեզվի դերն ու նշանակությունը՝ սկսած հին ժամանակներից մինչև 19-րդ դարը։ Այսպես, խոսելով «երեք հարիւր մղոնաչափ տարածութիւն» ունեցող «Մեծ Հայք անուանեալ մեծատարած» երկրի մասին, «որոյ տէրութիւնը բաժանում են իրենց մէջ Տաճիկք, Պարսիկք և Ռուսք», Սեն-Մարտենն ընթերցողի միտքն ու ուշադրությունը սևեռում է այն իրողության վրա, որ «Այս երկրի երկու հարիւր յիսուն մղոնաչափ տարածութեան մէջ ուրիշ լեզու չէ լսվում բայց եթէ Հայերէն միայն...»²⁵¹, իսկ այնուհետև ավելացնում՝ «պատմութեան և լեզուագիտութեան նկատմամբ անկարելի է ժխտել Հայկական գրականութեան կարևորութիւնը... Ամենայն տեսակ մատենագրաց անընդհատ շարքը, զոր Հայաստանը յառաջ է բերեր մեր թուականի չորրորդ դարուց մինչև մեր օրերը և այն փոյթն ու եռանդը զոր Հայք ցուցեր են տպարանաց հաստատութեան մէջ իրենց բազմութեամբ հաստատուած երկիրներում, որպէս զի երևան հանեն իրենց ազգի

²⁴⁹ Տե՛ս Սեն-Մարթեն, *Հայոց լեզուի եւ գրականութեան գիտնական նշանակութիւնը*, թարգմ. Ս. Մ. «Արարատ», 1872, թիւ Ը., էջ 322-325. թիւ Թ., էջ 354-358. թիւ Ժ., էջ 401-404:

²⁵⁰ «Արարատ» ամսագիրը նշում է, որ Ս. Մ. - Գ, հավանաբար, Սեդրակ Մանդինյանն (1844-1915, հայ մանկավարժ, հասարակական, գրական-թատերական գործիչ) է, իսկ գրականագետ Ս. Ա. Շտիկյանը (*Հայ նոր գրականության ժամանակագրություն (1865-1875)*, Հայաստանի ԳԱ հրատարակչություն, Երևան, 1991, էջ 387) գտնում է, որ խոսքը Ս. Մարությանի մասին է:

²⁵¹ Սեն-Մարթեն, *Հայոց լեզուի եւ գրականութեան գիտնական նշանակութիւնը*, էջ 322:

մատենագիրք, ապացոյցք են իրենց գրականութեան մշակման եռանդուն ջանից և ճգանց: Եւ յիրաւի նոքա ունեցած են և ունին տպարաններ Ամստերտամում, Լէյպցիխում, Վենետկում, Լիվորնոյում, Լեհաստանի Լեօպոլ քաղաքում, Կոստանդնուպօլսում, Չմիւռնայում, Ռուսաստանի զանազան քաղաքներում, Էջմիածնում՝ որ իրենց Եկեղեցւոյ գլխոյ կամ Կաթողիկոսի աթոռատեղին է, Մատրասում և ուրիշ շատ տեղերում»²⁵²: Մանրամասնորեն անդրադառնալով հայ գրականութեան արժանիքներին և պատմագիտական ու բանասիրական ուսումնասիրությունների ասպարեզում նրա ունեցած բազմաթիվ ծառայություններին՝ Սեն-Մարտենը միաժամանակ նշում է, որ «այնու ամենայնիւ անժամօթ էր մնացեր Եւրոպիոյ այդ գրականութիւնը մինչև մեր օրերը»²⁵³: Քննարկելով հայ գրականութեան նկատմամբ այդ անիրավացի անտարբերության պատճառները՝ Սեն-Մարտենը հանգում է այն եզրակացության, որ դրան հիմնականում նպաստել է անկախության կորստից հետո Յայաստանում երկար ժամանակ տիրող ստրկական վիճակը և «այն անիրաւութիւնը զոր արել են Յայերին, պատճառ դարձաւ առաւել ծանր անիրաւութեան՝ զոր գուցէ շատ երկար ևս կշարունակեն առնել նոցա գրականութեան»²⁵⁴:

Ձեկուցագրերի առաջին հատորում Սեն-Մարտենը շարադրել է Յայաստանի ընդհանուր պատմությունն ու աշխարհագրությունը, որոնց մասին մինչ այդ եվրոպացիները գրեթե ոչ մի տեղեկություն չուներին: Այստեղ հեղինակը ներկայացրել է Սեծ և Փոքր Յայքերի լեռների, գետերի, լճերի և առանձին նահանգների նկարագրությունը, մանրագին քննարկել է Յայաստանի և նրա նահանգներից մի քանիսի տարբեր անվանումների ծագմանը վերաբերող հարցեր՝ օգտագործելով և համեմատական վերլուծության ենթարկելով հայ և օտարազգի մատենագիրների աշխատություններում պարունակված տեղեկությունները, ինչպես նաև ներկայացրել է Յայաստանի պատմության համառոտ շարադրանքն ու զետեղել հայոց պատմության բազմաթիվ ժամանակագրական աղյուսակներ: Այդ աղյուսակներում կան մանրամասն տեղեկություններ Յայաստանի չորս գահատոհմների (Յայկազյան, Արշակունիների՝ Երկու ճյուղ, Բագրատունիների և Ռուբինյան տոհմեր) թագավորների, փոխարքաների, իշխանների, կուսակալների, կառավարիչների և մարզպանների գահակալության ժամկետների վերաբերյալ: Բացի դրանից, սույն հատորում արժարժվում են նաև Յայոց և Սիսի (Կիլի-

²⁵² Անդ, էջ 323-324:

²⁵³ Անդ, էջ 403:

²⁵⁴ Անդ, էջ 404:

կիայի) կաթողիկոսություններին վերաբերող հարցեր և բերվում մանրամասն տեղեկություններ Ամենայն Հայոց և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսների մասին:

Ձեկուցագրերի երկրորդ հատորում ամփոփված են Սեն-Մարտենի ուսումնասիրությունները Սյունյաց արքեպիսկոպոս Ստեփանոս Օրբելյանի կյանքի և գործունեության, ինչպես նաև Օրբելյանների տոհմի մասին: Այս հատորում Սեն-Մարտենը ֆրանսերեն թարգմանությամբ ներկայացնում և բազմաթիվ ծանոթագրություններով ու մեկնաբանություններով մանրագնին վերլուծում է Մովսես Խորենացու *Հայոց պատմություն* և հայ պատմագիր, աշխարհագրագետ, փիլիսոփա, հասարակական և եկեղեցական գործիչ Վարդան Արևելցու (հայտնի է նաև Վարդան Գանձակեցի, Վարդան Մեծ, Վարդան Վարդապետ և այլ անուններով, 1198-1271) *Աշխարհացոյց* (այն բաղկացած է չորս մասից և ունի գիտական մեծ արժեք) աշխատությունները, տալիս է Հայաստանի մայրաքաղաք Դվինի, երկրի մի շարք այլ քաղաքների և որոշ երկրամասերի նկարագիրը, ինչպես նաև համառոտակի անդրադառնում Դրախտի չորս և Մեծ Հայքի քառասուներկու մեծ ու հայտնի գետերին: Սեն-Մարտենի թարգմանությունների հիմնական արժանիքն այն է, որ դրանք ուղեկցվում են բազմաթիվ ծանոթագրություններով, մեկնաբանություններով, խորիմաստ վերլուծություններով և համոզիչ եզրակացություններով, որոնք վկայում են հեղինակի հմտության, քննադատական մոտեցման, խորիմացության, բազմակողմանի զարգացած լինելու, այսինքն, իսկապես, եվրոպական «արևելագետների պարագլուխ» հանդիսանալու մասին: Սույն հատորում Սեն-Մարտենը գետեղել է նաև Սասանյան Պարսկաստանի հազարապետ Միհրներսեսի 449-ի արքունի հրովարտակը, որով հայ նախարարներից պահանջվում էր ուրանալ քրիստոնեությունը և ընդունել զրադաշտականություն, և 1547-ին Հայոց կաթողիկոս Ստեփանոս Ե Սալմաստեցու նախաձեռնությամբ էջմիածնում կայացած հայ աշխարհիկ և հոգևոր մեծամեծների գաղտնի ժողովում ընդունված Արևելյան Հայաստանի իշխանների (իտալերեն՝ Signori Armeni - Հայ Տերեր) դիմումը Հռոմի պապին՝ պարսկական տիրապետությունից Հայաստանի ազատագրությանն օգնելու խնդրանքով:

1822-ին ֆրանսիացի նշանավոր արևելագետներ բարոն Սիլվեստր դը Սասին (1758-1838), Ժան-Պիեր-Աբել Ռեմյուզան, Անտուան-Լեոնարդ Շեզին (1773-1832), ֆրանսիացի աշխարհագրագետ և հնագետ Էդմոնդ Ֆրանսուա Ժոմարը (1777-1862), ասիական լեզուների պրոֆեսոր, 1816-ից Փարիզում աշխատանքային գործունեություն ծավալող գերմանացի նշանավոր արևելագետ և ճանապարհորդ Հենրիխ-Յուլի ֆոն

Կլավդիուսը (1783-1835), Սեն-Մարտենը և այլ անվանի արևելագետներ հիմնում են «Փարիզի Ասիական ընկերությունը» («La Société Asiatique de Paris»): Նույն թվականից այդ ընկերությունն սկսում է հրատարակել «Ասիական հանդես» («Journal Asiatique») մատենաշարը²⁵⁵, որը մինչև այժմ անխզելիորեն կապված արևելագիտական արժեքավոր ուսումնասիրությունների չընդհատվող շարք է: Այդ ուսումնասիրությունները կարող են դիտարկվել որպես արևելագիտության արխիվ Ֆրանսիայում: «Ասիական հանդեսի» էջերում, ի թիվս արևելագիտական այլ հոդվածների, տպագրվում են նաև շատ հետաքրքիր հայագիտական ուսումնասիրություններ ու տեղեկություններ հայերի և Հայաստանի մասին²⁵⁶: Վերոհիշյալ հանդեսում Սեն-Մարտենը նույնպես հանդես է եկել մի շարք հայագիտական արժեքավոր ուսումնասիրություններով, որոնցում անդրադարձել է Արշակ Երկրորդի ապստամբությանը, Պարսկաստանում ու Հայաստանում Արշակունիների գահատոհմների սկզբնավորման և զարգացման հարցերին, Մովսես Խորենացու կյանքին ու գործունեությանը, 1668-ի ապրիլի 9-ին Լվովում ներկայացված մի հայկական ողբերգության²⁵⁷ վերլուծությանը, հայերեն ձեռագրերին²⁵⁸ և այլն:

²⁵⁵ Ցավոք, շատ հեղինակավոր հանրագիտարաններում թույլ է տրվել անճշտություն՝ 1822-ի փոխարեն նշվել է 1823. տես, օրինակ, *Grand Dictionnaire Universel*, par Pierre Larousse, tome premier, Paris, Administration du Grand Dictionnaire Universel, էջ 746, հոդված «Asiatique»; - *Энциклопедический словарь*, под редакцией профессора И. Е. Андреевского, том I, Издатель: Ф. А. Брокгауз (Лейпциг), И. А. Ефрон (С.-Петербург), С.-Петербург, Семеновская Типо-Литография (И. А. Ефрона), 1890, էջ 233, հոդված «Азиатские общества» և այլն: Նշենք, որ առ այսօր ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում պահպանվում է «Journal Asiatique» հանդեսի 1822-ին լույս տեսած առաջին համարի մեկ օրինակ:

²⁵⁶ Տես, օրինակ, *Ouvrages arméniens, publiés récemment à Venise*, «Journal Asiatique», 1823, tome II, pp. 183-185; - *Recherches de M. Aslan Athabékian, sur les Inscriptions et les anciens Monuments littéraires de l'Arménie*, 1826, tome VIII, pp. 251-254; - E. Boré, *De l'Arménie. - De l'action directe et puissante du christianisme sur la société arménienne, etc.*, «Journal Asiatique», Troisième Série, XXXVI, tome I, pp. 209-238 և այլն:

²⁵⁷ Խոսքը *Կոյս և Նահատակ սուրբ Հռիփսիմէ* ողբերգության մասին է: Ինչպես հայտնի է, XVII դարում լեհահայ առաքելական եկեղեցին Հռոմի եկեղեցուն միացնելու ճիզվիտ հոգևորականների ծրագիրը քսանվեցամյա համառ պայքարից և լեհահայերի նկատմամբ կիրառված կրոնական հալածանքներից հետո ֆրանսիական կաթոլիկ միսիոներների օգնությամբ ի վերջո պսակվեց հաջողությամբ: (Այդ իրադարձությունների մասին մանրամասն տես Առաքել Դավրիժեցի, *Գիրք պատմութեանց, Հայկական ԽՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1990, էջ 293-311*: - *Բռնի միութիւն հայոց Լեհաստանի ընդ եկեղոցոյն Հռովմայ*, Ս. Պետերբուրգ, 1884): 1665-ին Լվովում բացվեց պապական դպրոց, որտեղ դպրոցական թատրոնը կիրառվում էր որպես ուսումնական-կրթական համակարգի մի տարր: Վերոհիշյալ ողբերգության հեղինակը հայրապետական դպրոցի հայագետ վերատեսուչ, ֆրանսիացի կրոնավոր Լուի-Մարի Պիգուն էր:

²⁵⁸ Տես M. J. Saint-Martin, *Discours sur l'origine et l'histoire des Arsacides*, «Journal Asiatique», 1822, tome premier, pp. 65-77; - *Notice sur le vie et les écrits de Moysse de Khoren*, 1823, tome II, pp. 321-344; - *Analyse d'une tragédie arménienne, représentée à Léopol, en Pologne*, le 9

Բացի “Journal Asiatique” պարբերաբար հրատարակվող մատենաշարից, Փարիզի Ասիական ընկերությունը, կամ ընկերության ծախսերով, կամ բաժանորդագրության հասույթով, հրատարակել է նաև առանձին գրքեր՝ ասիական հիմնական լեզուների քերականություններ, համառոտ բառարաններ, թարգմանություններ և բնագրեր: Այդ ընկերության հիմնադրման առաջին իսկ տարում որոշվել է հրատարակել նաև Վարդան Այգեկցու առակները: Դրա մասին կա համապատասխան տեղեկատվություն “Journal Asiatique” հանդեսի անդրանիկ համարում, որտեղ զետեղված է մի հաղորդագրություն Փարիզի Ասիական ընկերության 1822-ի հոկտեմբերի 7-ին կայացած նիստի մասին: Զննարկելով ընկերության միջոցների օգտագործման հարցը՝ նիստը որոշել է երկու այլ աշխատանքների հետ միասին ընկերության միջոցների հաշվին հրատարակել Վարդան Այգեկցու առակները (հայերեն և ֆրանսերեն): Դա հիմնավորվել է նրանով, որ հայերեն սովորողների, հատկապես՝ սկսնակների, համար հայերեն տեքստեր գրեթե չկան, և Վարդան Այգեկցու առակները կլրացնեն այդ բացը, իսկ հեղինակի ոճի պարզությունն իր հերթին կօժանդակի, որպեսզի դրանք հայերեն սովորողների համար ծառայեն մոտավորապես այնպիսի տեքստեր, ինչպիսիք են Եզոպոսի և Լոխմանի առակները հունարեն և արաբերեն սովորողների համար:²⁵⁹ Վարդան Այգեկցու առակների ընտրանին, որը պարունակում է 45 առակ, Սեն-Մարտենի թարգմանությամբ բնագրի հետ մեկտեղ հրատարակվել է 1825-ին²⁶⁰:

Սեն-Մարտենը հայ պատմաբանասիրության վերաբերյալ տեղեկություններ ունի տրագրված նաև «Գիտնականների տեղեկագիր» պարբերականում, ինչպես օրինակ, *Ավգերյանի կողմից Եվսեբիոսի Քրոնիկոնի հրատարակման մասին* (*Sur l'édition de la Chronique d'Eusèbe, par Aucher*, 1820), *Մ. Շուլցի Արևելք կատարած ճանապարհորդության մասին* (*Sur le voyage de M. Schulz en Orient*, 1828) հոդվածները և այլն: Առաջին հոդվածում քննարկվում է Մկրտիչ Ավգերյանի կողմից Եվսեբիոսի *Քրոնիկոնի* հրատարակությունը: Ինչպես արդեն նշել ենք, Մ. Ավգերյանը *Քրոնիկոնի* պահպանված հին հայերեն տարբերակը (գրաբար), որը բավականին մոտ էր արդեն գոյություն չունեցող բնագրին, թարգմանել է լատիներեն և 1818-ին Վենետիկում հրատարակել այն՝ գրաբար տարբե-

avril 1668, նույն տեղում, pp. 22-27; - *Deuxième Notice des Manuscrits orientaux, donnée à la Société Asiatique, par le lord Kingsborough*, 1825, tome VI, pp.126-138 և այլն:

²⁵⁹ Տե՛ս “Journal Asiatique”, 1822, tome premier, p. 312-319.

²⁶⁰ Տե՛ս *Հատընտիր առակք Վարդանյ վարդապետի. Choix de Fables de Vartan, én arménien et én français*, Ouvrage publié par la Société Asiatique de Paris, Paris, 1825.

րակի, ծանոթագրությունների և պահպանված հունարեն հատվածների հետ մեկտեղ: Եվսեբիոսի աշխատության այդ թարգմանության մասին (չնշելով թարգմանչի անունը) հիշատակում է նաև Բայրոնը 1818-ի հունվարի 27-ին և ապրիլի 11-ին Ջոն Մըրրեյին հղած իր նամակներում, որոնցից մենք արդեն կատարել ենք մեջբերումներ, և հոգ տանում, որպեսզի այդ հրատարակությունը բաժանորդներ գտնի Անգլիայում: Հիշատակված հաջորդ հոդվածը վերաբերում է Սեն-Մարտենի միջնորդությամբ գերմանացի գիտնական Մ. Շուլցի Հայաստան կատարած ուղևորությանը: Մ. Շուլցը Սեն-Մարտենի հանձնարարությամբ ուսումնասիրել է Վանի միջնաբերդի պատի ուրարտական սեպածն արձանագրությունները: Նա գրեթե վերջացրել էր իրեն հանձնարարված գործը, երբ 1827-ին սպանվում է քրդերի կողմից: Սակայն, Սեն-Մարտենին հաջողվում է ձեռք բերել երիտասարդ հայագետի ուսումնասիրության արդյունքները և դրանք հրատարակել ոչ միայն «Գիտնականների տեղեկագրում», այլև «Ասիական հանդեսում»:

Սեն-Մարտենը մշակել էր Հայաստանի, հայ մշակույթի և հայոց պատմության ավելի մանրագին ու խոր ուսումնասիրության համալիր ու ծավալուն ծրագիր²⁶¹: Դրա իրագործման համար թույլտվություն ստանալու նպատակով Սեն-Մարտենն այդ ծրագիրը գերմանացի բնախույզ, աշխարհագրագետ ու ճանապարհորդ Ալեքսանդր ֆոն Հումբոլդտի (1769-1859) միջոցով, որը մեծ հեղինակություն ուներ Ռուսաստանի իշխանությունների շրջանում, ներկայացրել էր ռուսական կառավարությանը: Ըստ այդ ծրագրի՝ Սեն-Մարտենը պատրաստվում էր նախ ուսումնասիրություններ կատարել ռուսական կայսրության հայաշատ վայրերում (Պետերբուրգ, Մոսկվա, Աստրախան և այլն), իսկ այնուհետև իր հետազոտությունները շարունակել Վրաստանում և Մեծ Հայքում: Սեն-Մարտենի նպատակն էր հայ ժողովրդի պատմության, հայ մշակույթի և Հայաստանի աշխարհագրության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ քաղել ինչպես գրադարաններում և պետական արխիվներում պահված նյութերից ու փաստաթղթերից, այնպես էլ առանձին անձանց մոտ եղած հիշատակարաններից: Նա պատրաստվում էր ուսումնասիրել նաև Հայաստանի քարերի և ժայռերի վրա փորագրված արձանագրությունները: Բացի դրանից, հետազոտությունների ամբողջականացման ու ընդհանրացման համար, Սեն-Մարտենն իր առջև նպատակ էր դրել շրջագայություններ կատարել Արևմտյան Հա-

²⁶¹ Տե՛ս *Ֆրանսիական ճեմարանի անդամ Սեն-Մարտենի Յիշատակարանը Հայաստանի ուսումնասիրութեան մասին գրուած Ալեքսանդր ֆոն Հումբոլդի համար*. «Լումայ», 1899, գիրք Ա, էջ 150-159:

յաստանում, մի քանի ամիս մնալ Կ. Պոլսում, այցելել Տրիեստի և Վենետիկի հայերին և եզրափակել իր ուսումնասիրությունները Հռոմի մատենադարաններում, որոնք բազմաթիվ տեղեկություններ ու փաստաթղթեր են պարունակում հայերի, հայ մշակույթի և հայոց պատմության վերաբերյալ:

Ցավոք, Սեն-Մարտենին չհաջողվեց իրագործել այդ շատ կարևոր հայանպաստ ծրագիրը: 1832-ին Ալեքսանդր ֆոն Հոմբոլդտը նրա ծրագիրն ուղարկում է ցարական Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Կ. Նեսելռոդին²⁶²: Սակայն վերջինս, խուսաճալով, պատասխանում է Ա. ֆոն Հոմբոլդտին, որ ինքը մեծ հետաքրքրությամբ է կարդացել Սեն-Մարտենի հիշատակարանը, բայց ափսոսում է, որ այժմ վերոհիշյալ շրջաններում գիտական ուղևորություններ ու հետազոտություններ կատարելն անհնարին է՝ պատճառաբանելով պատերազմներից հետո այնտեղ ստեղծված անբարենպաստ պայմանները և անկայուն իրադրությունը²⁶³:

Այստեղ անհրաժեշտ է նշել, որ Կ. Նեսելռոդեն ընդհանրապես դեմ է եղել հայրենասիրական, ազգասիրական և ազատատենչ զաղափարների ցանկացած դրսևորման: Նա բազմիցս խոչընդոտ է հանդիսացել նաև Բայրոնի ստեղծագործությունների հրատարակմանը Ռուսաստանում²⁶⁴:

Այսպիսով, ֆրանսիացի անվանի հայագետ Սեն-Մարտենը, չնայած ունեցավ շատ կարճ կյանք, բայց ծավալեց փայլուն գիտական ու կազմակերպչական գործունեություն և զգալիորեն նպաստեց հայագիտության, ինչպես և, ընդհանրապես, արևելագիտության զարգացմանը Ֆրանսիայում:

Շահան Ջրպետի մյուս աշակերտը բժշկագիտության դոկտոր Մ. Բելուն էր, որի կյանքի և գործունեության մասին առայժմ ունենք շատ կցկտուր տեղեկություններ: Հայտնի է միայն նրա *Փորձառութիւն հայկական լեզուին* աշխատությունը, որը լույս է տեսել Փարիզում 1812-

²⁶² Նեսելռոդե, կոմս Կարլ-Ռոբերտ կամ Կարլ Վասիլիչ (1780-1862), ռուսական պետական գործիչ: Աշխատել է Գերմանիայում, Նիդերլանդների թագավորությունում, Ֆրանսիայում, 1822-1856 թվականներին եղել է Ռուսաստանի արտաքին գործերի նախարար: Հայտնի է ինչպես եվրոպայում, այնպես էլ Ռուսաստանում ի հայտ եկող ազատասիրական ձգտումների նկատմամբ իր ունեցած անկեղծ ատելությամբ:

²⁶³ Տե՛ս «Լումայ», 1899, գիրք Ա, էջ 152:

²⁶⁴ Տե՛ս, օրինակ, Алексеев М. П., *Русско-английские литературные связи (XVIII век – I половина XIX века)*, «Наука», М., 1982 (серия “Литературное наследство”, том 91), с. 410-412.

իմ²⁶⁵։ Բելլոն իր աշխատության ներածության մեջ, խոսելով Ջրպետի կազմակերպած հայերենի ուսուցման դասընթացների մասին, նույնպես, ինչպես և Բայրոնը, նշում է, որ 1811-ի փետրվարի 5-ին «Դասընթացների բացման օրը ներկայացել էր քսան աշակերտ, բայց հետո նրանց մեծ մասը դադարեցրեց հաճախումները, անշուշտ, դժվարությունների պատճառով, որ ներկայացնում է լեզվի ուսումնասիրությունը՝ առանց որևէ տարրական ձեռնարկի, քանզի մենք չունեինք ոչ տպագիր քերականության դասագիրք, ոչ էլ հայերեն-ֆրանսերեն բառարան։ Աշակերտներից միայն հինգը մնացին մինչև վերջ և հինգն էլ՝ ոգևորված այս ուսումնառությունից և իրենց հարգարժան ուսուցչի նկատմամբ ունեցած երախտագիտությունից, խոստացան զարգացնել ու խորացնել լեզվի իմացությունը, որը կապահովի մինչ այժմ իրենց անծանոթ գրականության օգտագործումը»²⁶⁶։ Ս. Բելլոն իր աշխատության մեջ տվել է Մեծ և Փոքր Հայքերի տեղադրության համառոտ նկարագիրը, քննարկել է հայերի ծագման, նրանց կրոնին, հայոց լեզվին ու հայ գրականությանը վերաբերող հարցեր։ Այստեղ հեղինակը մանրամասնորեն վերլուծում է հայկական հնչյունային գրանշանների համակարգը՝ անդրադառնալով տառերի անվանումներին, արտասանությանը, հայերեն գրատեսակներին, հայոց այբուբենի ձևավորմանը, ինչպես նաև այդ այբուբենի հնչյունային և թվային արժեքներին։ Բացի դրանից, աշխատության այդ մասում Բելլոն ֆրանսիացի ընթերցողին ծանոթացնում է հայոց լեզվի խոսքի մասերին և շարահյուսությանը։

Վերոհիշյալ աշխատության մեջ բնագրի հետ մեկտեղ զետեղվել են նաև հայերենից Ս. Բելլոյի կատարած որոշ թարգմանություններ (ֆրանսերեն)՝ երեք հատված Մովսես Խորենացու *Հայոց պատմությունից* (*Թուղթ Աբգարու առ Փրկիչն Յիսուս Բրիստոս, Պատասխանի թղթոյն Աբգարու, զոր գրեաց Թովմաս առաքեալ, հրամանաւ Փրկչին, և Ձերբակալ առնելն Արտաւազդայ յԱնտոնինեայ*), քաղվածք Հայկական ներկայացուցչության կողմից 1686-ին Վենետիկում տպագրված *Խորհրդատետրից՝ Հաւատամք Հայոց* վերնագրով, քաղվածք 1781-ին Կ. Պոլսում տպագրված *Ժամագրքից՝ Հայկական աղոթագրքից՝ Դավանութիւն հաւատոյ Եկեղեցւոյն Հայոց* վերնագրով, և Վարդան Այգեկցու առակներից երկուսը՝ *Աղուհն և Կաքաւն և Եզն և Ձին*, որոնք, Բելլոյի վկայությամբ,

²⁶⁵ Տե՛ս M. Bellaud, Docteur en médecine, *Փորձառութիւն հայկական լեզուին. Essai sur la langue arménienne*, A Paris, de l'Imprimerie Impériale, 1812, de l'ère Arménienne 1261.

²⁶⁶ Անդ, էջ 2։ Իմիջիայլոց, Գ. Շրումպֆը դասընթացների բացման օրը (չնայած նա նույնպես օգտվել է Բելլոյի գրքից) սխալմամբ նշել է 15 փետրվարի (տե՛ս Գ. Շրումպֆ, *Ուսումնասիրութիւնը հայ լեզուի եւ մատենագրութեան յԱրեւմուտս (ԺԴ-ԺԾ դար)*, էջ 110)։

իր աշակերտներին հայերեն թելադրել է Շահան Ջրպետը քսաներկուերորդ դասախոսությունից հետո²⁶⁷։ Սույն ակնարկում պարունակվող հայերեն բառերի և հայկական հատուկ անունների թարգմանության համար հեղինակն աշխատության վերջում ներկայացնում է *Հայ-ֆրանսերեն բառարան*։

19-րդ դարի առաջին կեսին եվրոպական հայագիտության մեջ նշանակալից տեղ է գրավում Շահան Ջրպետի մեկ այլ աշակերտ, Սեն-Մարտենի հայագիտական ուսումնասիրությունների շարունակողներից մեկը՝ Լը Վայան դը Ֆլորիվալը²⁶⁸, որը հայագիտության մեջ կատարելագործվելու նպատակով 1834-ին մեկնել է Վենետիկի Միսիթարյան միաբանություն, սովորել ճեմարանում և ընտրվել միաբանության հայկական ակադեմիայի անդամ։

Ֆլորիվալը նույնպես ցանկացել է ուսումնասիրություններ կատարել Հայաստանում, սակայն, ցավոք, նրան ևս, ինչպես իր ժամանակին Սեն-Մարտենին, չի հաջողվել իրականացնել իր ծրագիրը։ Այդ առթիվ հետաքրքիր տեղեկություններ ենք ստանում խորհրդահայ պատմաբան և բանասեր Լևոն Մելիքսեթ-Բեկի (1890-1963) *XIX դարի առաջին կեսի ֆրանսիական հայագետները՝ ըստ Վրաստանի արխիվային նյութերի* հոդվածից²⁶⁹։ Այդ հոդվածում Լ. Մելիքսեթ-Բեկը գրում է. «Վրաց. ԽՍՀ Պետ. Կենտրոնական Պատմական Արխիվում պահվող «Վրաստանի գլխավոր կառավարչի Դիվանագիտական գրասենյակի» № 11/29 ֆոնդում իր վրա հատուկ ուշադրություն է գրավում № 359 ոչ մեծ (չորս թերթ) գործը՝ «Հայաստանում և Վրաստանում գիտական ճանապարհորդություն կատարելու համար Փարիզից ժամանող հայոց լեզվի պրոֆեսոր Լևայանի և Բրոսեի մուտքը Անդրկովկասի երկրամաս չթույլատրելու մասին» վերնագրով, թվագրված՝ 1834»²⁷⁰։ «Գործը», ինչպես նշում է Լ. Մելիքսեթ-Բեկը, պարունակում է ընդամենը երեք փաստաթուղթ՝ 1834-ին ցարական կառավարության արտաքին գործերի նախա-

²⁶⁷ Անդ, էջ 33։

²⁶⁸ Ֆլորիվալ, Պոլ Էմիլ Լը Վայան (Լըվայյան) դը (1800-1862), ֆրանսիացի հայագետ։ 1826-ին, ավարտելով Փարիզի Արևելյան կենդանի լեզուների բարձրագույն դպրոցը, ժամանակավորապես փոխարինել է իր ուսուցիչ Շահան Ջրպետին, իսկ 1828-ին նշանակվել նույն դպրոցի հայերենի ուսուցիչ։ 1830-ին արքունական հրովարտակով դարձել է Փարիզի Արևելյան կենդանի լեզուների բարձրագույն դպրոցի հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ։ Ֆլորիվալը հայագիտական մի շարք աշխատությունների հեղինակ է։

²⁶⁹ Տե՛ս Լ. Մ. Меликсет-Бек, *Французские арменисты первой половины XIX века по архивным материалам Грузии*, Труды Тбилисского государственного университета им. Сталина, т. 63, 1956, с. 299-310.

²⁷⁰ Տե՛ս անդ, էջ 304-305։

րար, կոմս Կարլ Վասիլևիչ Նեսելռոդեի և Վրաստանի գլխավոր կառավարիչ, բարոն Գրիգորի Վլադիմիրովիչ Ռոզենի միջև եղած նամակագրությունը՝ կապված երկու երիտասարդ արևելագետների՝ Լևայանի ու Բրոսեի Հայաստան և Վրաստան կատարելիք այցելության հետ: Լևայանը նույն ինքը՝ Լը Վայան դը Ֆլորիվալն է («գործում» նրա անունն աղավաղվել է): Բերենք մի փոքր հատված Կ. Նեսելռոդեի գաղտնի նամակից՝ ուղղված Գ. Ռոզենին. «Ըստ Փարիզից ստացված լուրերի, կարծես թե, այնտեղի հայոց լեզվի պրոֆեսոր Լևայանը և ինչոր մեկը Բրոսետ անունով (նկատի ունի հայտնի հայագետ և վրացագետ Մարի Բրոսսեին - Ա. Բ.) ֆրանսիական կառավարության հրամանով իբր թե գիտական ճանապարհորդություն պետք է կատարեն Հայաստանում և Վրաստանում, սակայն դրա նպատակն է այդ շրջաններում ցանել անհանգստության սերմեր և զբաղվել լրտեսությամբ»²⁷¹: Այսպիսով, Ֆլորիվալի՝ Հայաստանում ուսումնասիրություններ կատարելու ծրագիրը ձախողվում է:

Լը Վայան դը Ֆլորիվալը հայերի մասին հրատարակած իր առաջին համառոտ աշխատանքում շարադրել է 1828-ին Կ. Պոլսում կաթոլիկ հայերի նկատմամբ իրագործված հալածանքների պատմությունը²⁷²: Այնուհետև, նա ֆրանսերեն շարադրել և մեկ գրքով ներկայացրել է Մխիթարյան միաբանության ստեղծման և զարգացման պատմությունը, համառոտ ակնարկ Հայաստանի աշխարհագրության և պատմության վերաբերյալ, հայ գրականության նկարագիրը և դրա վերակենդանացումը, ինչպես նաև գրառումներ եվրոպական հայագետների մասին²⁷³, որոնց շարքում տեղ են գտել ֆրանսիացիներ Ռիվոլան, Լա Կրոզը, Սեն-Մարտենը, Բելլոն, Բրոսսեն, գերմանացիներ Շրյոդերը, Պետերմանը, անգլիացիներ Վիստոն եղբայրները, Լորդ Բայրոնը, հայ Շահան Ջրպետը և ուրիշներ: Ֆլորիվալը նաև ֆրանսերեն է թարգմանել Մխիթար Գոշի առակները²⁷⁴:

Բացի դրանից, Ֆլորիվալը կատարել է թարգմանություններ հայ մատենագիրների երկերից: Այսպես, 1836-ին Փարիզում ֆրանսերեն հրատարակել է Սովսես Խորենացու *Հայոց պատմությունը*, որի թարգմանությունը եղել է անհաջող, բնագրին ոչ հարազատ և քննադատվել է

²⁷¹ Անդ, էջ 307:

²⁷² Stéu Le Vaillant de Florival, *Exposé des persécutions exercées en 1828 à Constantinople contre les catholiques Arméniens*, Paris, 1831.

²⁷³ Stéu Le Vaillant de Florival, *Mekhitharistes de Saint-Lazare, Histoire d'Arménie, Littérature arménienne* (Seconde Édition), Venise, Imprimerie Arménienne de S. Lazare, 1856.

²⁷⁴ Stéu Le Vaillant de Florival, *Coup - d'oeil sur l'Arménie ou géographie sommaire précis de l'histoire d'Arménie*, Paris, A la librairie française et étrangère, 1846, pp. 1, 42-45.

բանասերների կողմից: Այդ իսկ պատճառով, թարգմանիչն ընդունել է իր սխալը և տպաքանակը հետ է վերցրել վաճառքից: Հետագայում, Ֆլորիվալը նորից է անդրադարձել խորենացու աշխատությանը և Գաբրիել Այվազովսկու աջակցությամբ «1841-ին հայերեն (գրաբար - Ա. Բ.) բնագրով ու գաղղիարեն ընտրելագոյն (ընդգծումը մերն է - Ա. Բ.) թարգմանությամբ նոր հրատարակութիւն մը»²⁷⁵ իրականացրել²⁷⁶: Այդ հրատարակությունը, բացի հայերեն բնագրից և ֆրանսերեն թարգմանությունից, ընդգրկում է նաև աշխարհագրական տեղեկանք պարունակող հավելված, ամբողջ հայոց պատմության համառոտ շարադրանքը և հայ գրականության պատկերը: Իսկ աշխատության առաջաբանում Ֆլորիվալը բարձր է գնահատում խորենացու երկը, համառոտակի տալիս է հայ մատենագրության ուրվագծերը և նշում դրա տեղն ու դերը համաշխարհային գրականության մեջ: Խոսելով հայոց լեզվի արժանիքների մասին՝ Ֆլորիվալը հանգում է այն եզրակացության, որ այն «մայր ու հնութեան մեջ իր նախանձորդը չունեցող լեզու մը» է, որ «կարծուածէն աւելի արժանաւոր է ոչ միայն լեզուագիտաց մտադրութեանն, այլ նաեւ պատմական բանասիրութեան պարապողաց»²⁷⁷:

Ֆլորիվալը հայագիտության վերաբերյալ մի շարք հոդվածներ է տպագրել «Journal Asiatique» հանդեսում, ինչպես նաև անդրադարձել V դարի հայ փիլիսոփայական մտքին: Մասնավորապես, 1853-ին Փարիզում նա լույս է ընծայել Եզնիկ Կողբացու *Եղծ աղանդոցի* ֆրանսերեն թարգմանությունը²⁷⁸: Սակայն բանասիրության մեջ այս թարգմանությունը հաջողված չի համարվում²⁷⁹: Եզնիկ Կողբացու երկի ֆրանսերեն շատ ավելի հաջող թարգմանություն է համարվում ֆրանսիացի հայագետ Լ. Մարիեսի մեկ դար հետո կատարած թարգմանությունը, որը *Eznik de Kolb De Deo* խորագրով և ընդարձակ ու կարևոր ծանոթագրություններով տպագրվել է «Patrologia orientalis»-ի XXVIII հատորում (Paris, 1959):

²⁷⁵ Գ. Շրումպֆ, *Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յԱրեւմուտս (ԺԴ-ԺԹ դար)*, էջ 130:

²⁷⁶ Stéu Moïse de Khoréne, auteur du V-me siècle, *Histoire d'Arménie*, texte arménien et traduction française, avec appendice contenant notice géographique, précis de toute l'histoire d'Arménie; tableau de la littérature arménienne, Paris, 1841.

²⁷⁷ Գ. Շրումպֆ, *Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յԱրեւմուտս (ԺԴ-ԺԹ դար)*, էջ 130-131:

²⁷⁸ Stéu Docteur Ezniq, *Réfutation des différentes sectes des païens de la religion des Perses, de la religion des Sages de la Grèce et de la secte de Marcion*, Paris, 1853.

²⁷⁹ Տե՛ս Ա. Ա. Աբրահամյան, *Ներածություն. Եզնիկ Կողբացին և իր գործը*, «Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց», «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1970» գրքում, էջ 28: - Գ. Շրումպֆ, *Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յԱրեւմուտս (ԺԴ-ԺԹ դար)*, էջ 135-136:

Այսպիսով, Բայրոնի 1816-ի դեկտեմբերի 5-ին և 1817-ի հունվարի 2-ին գրած նամակները կարծես թե լրացնում են մեկը մյուսին՝ փաստելով հայագիտության զարգացման սկիզբը Ֆրանսիայում: Բայրոնի նամակները, որոնց հիման վրա փորձ արվեց ուրվագծել հայագիտության զարգացումը Եվրոպայում, բացառիկ կարևոր նշանակություն ունեն, քանի որ դրանք իրենց տեսակի մեջ միակն են նորության ու արժանահավատության առումով և պարունակում են հավաստի տեղեկություններ ու փաստեր ինչպես Միսիթարյանների գրական ու լուսավորական գործունեության, այնպես էլ Եվրոպացի գիտնականների հայագիտական ուսումնասիրությունների վերաբերյալ: Այդ նամակների ուսումնասիրությունները թույլ են տալիս ավելի խորը բացահայտել 18-19-րդ դարերի հայ-անգլիական գրական առնչությունները, միաժամանակ նաև նոր և արժեքավոր տեղեկություններ ձեռք բերել նույն ժամանակաշրջանի հայ-եվրոպական գրական կապերի մասին:

§ 2.3. Բայրոնի հայագիտական ուսումնասիրությունները

Հայ-անգլիական գրական առնչությունների պատմության մեջ նշանակալի տեղ են գրավում հայագիտության ասպարեզում Բայրոնի կատարած ուսումնասիրությունները: Վիստոն եղբայրներից հետո անգլիական իրականության մեջ Բայրոնն էր, որ սկսեց զբաղվել հայոց լեզվի և հայ մշակույթի ուսումնասիրությամբ:

Բայրոնի նամակներից ակնառու է դառնում նրա խորին հարգանքն ու համակրանքը հայոց լեզվի նկատմամբ: Իր խոստովանությամբ դա «...մի հարուստ լեզու է», արժանի մանրագնին ուսումնասիրության, որի ընթացքում «լիովին փոխհատուցվում են սովորողի չարչարանքները»²⁸⁰: Բայրոնը 1816-ի դեկտեմբերի 18-ին քրոջը՝ Ավգուստա Լիին (1783-1851), ուղղած նամակում գրում է. «Ամեն առավոտ գնում եմ հայկական վանք (հայերի, փոքրիկս, ոչ միանձնուհիների) լեզու սովորելու, նկատի ունեն հայոց լեզուն...»²⁸¹:

1817-ին Հարություն Ավգերյանը և Բայրոնը միացյալ ջանքերով հրատարակում են *Անգլերեն-հայերեն քերականության ձեռնարկը*՝ հայերի օգտագործման համար: Դեռևս 1816-ի դեկտեմբերի 24-ին Թո-

²⁸⁰ Th. Moore, *The Life, Letters and Journals of Lord Byron*, London, John Murray, 1908, p. 329.

²⁸¹ *The Letters of George Gordon, 6th Lord Byron*, Selected by R. G. Howarth, with an Introduction by André Maurois, published in London and Toronto by J. M. Dent and Sons Ltd, and in New York by E. P. Dutton, 1933, p. 169.

մաս Մուրին ուղղված նամակից տեղեկանում ենք, որ շուտով հրատարակվելու է այդ ձեռնարկը. «Առավոտները մակույկով գնում են Ս. Ղազար վանքի հայրերի հետ հայերեն թոթովելու և օգնելու նրանցից մեկին (խոսքը Յ. Ավգերյանի մասին է - Ա. Բ.) անգլերենը ուղղելու անգլերեն-հայերեն քերականության մեջ, որը շուտով հրատարակվելու է»²⁸²։ Բանաստեղծը, կարծես թե փոխհատուցման համար, առաջարկում է իր ուսուցչին այն հրատարակել իր միջոցներով, ինչպես նաև հոգում դրա տարածման մասին։ Այդ մասին նա գրում է Անգլիայում գտնվող իր ընկերներին, գովեստով խոսում Ավգերյանի տաղանդի և գործունեության մասին։ «Մեկ այլ ծրարով ուղարկում են Ձեզ մի քանի թերթ անգլերեն-հայերեն քերականությունից՝ հայերի օգտագործման համար, - գրում է Բայրոնը Ջոն Սըրբերին 1817-ի հունվարի 2-ի նամակում, - որի հրատարակմանը ես իրոք խթանել և աջակցել եմ։ (Այն ինձ վրա նստեց ընդամենը հազար ֆրանկ՝ ֆրանսիական լիվր)։ Դեռ չարունակում են հայոց լեզվի դասերս, ճիշտ է ոչ բոլորն առաջադիմությամբ, բայց և օրեցօր եղածին մի բան ավելացնելով։ Հայր Պասկալը²⁸³ իմ աննշան օգնությամբ (նրա իտալերենը անգլերենի են թարգմանում) չարունակում է պատրաստել հայերեն-անգլերեն քերականության (անգլիացիների համար) ձեռագիրը, որը նույնպես կտպագրվի, երբ ավարտվի։

...Երբ այս քերականությունը (ես նկատի ունեմ այժմ տպագրվողը) պատրաստ լինի, չե՞ք առարկի, արդյոք, վերցնել քառասուն կամ հիսուն օրինակ, որոնք հինգ կամ տասը գինեայից ավելի չեն արժենա և դրանց վաճառքով շարժել ուսյալների հետաքրքրությունը»²⁸⁴։

Հարություն Ավգերյանը *Անգլերեն-հայերեն քերականության* ձեռնարկի վերաբերյալ իր *Ինքնապատում օրագրության* մեջ գրում է. «Ձկնի ուսանելոյ զվերծանութիւն տառից՝ ասաց ցվարժապետ իւր տալ տպագրել իւրովք ծախիւք զԱնգղիական և զՀայերէն քերականութիւն իւր... և ինքն ևս սրբագրէր ընդ նմա գթերթս տպագրութեանն»²⁸⁵։ Միաժամանակ նշենք, որ այդ ձեռնարկի հրատարակությանն անդրադարձել է նաև «Journal Asiatique» հանդեսը 1823-ին²⁸⁶։

1819-ին Ավգերյանն ու Բայրոնը ձեռնամուխ են լինում *Հայերեն-անգլերեն քերականության* ձեռնարկի հրատարակմանը՝ անգլիախոս

²⁸² Th. Moore, *The Life, Letters and Journals of Lord Byron*, էջ 330:

²⁸³ խոսքը Յ. Ավգերյանի մասին է:

²⁸⁴ Th. Moore, *The Life, Letters and Journals of Lord Byron*, էջ 336:

²⁸⁵ Հ. Ղեւոնդ Տայեան, *Լորտ Պայրըն ի Ս. Ղազար*. «Բազմավէպ», 1924, № 4, էջ 136:

²⁸⁶ Stéu *Ouvrages arméniens, publiés récemment à Venise*, «Journal Asiatique», 1823, tome II,

ուսանողության համար: Սա այն ձեռնարկն էր, որի մասին Բայրոնն ակնարկում է դեռևս 1817 թվականի մարտի 25-ին Ջ. Մըրրեին հասցեագրված նամակում. «...մյուսը դեռևս ձեռագիր վիճակում է»²⁸⁷: Հարություն Ավգերյանի խնդրանքով Բայրոնը *Հայերեն-անգլերեն քերականության* ձեռնարկի համար մի առաջաբան է գրում, որտեղ խոսում է հայ ժողովրդի և նրա հոգևոր գանձերի մասին: «Երբ 1816 թվականին ժամանեցի Վենետիկ... ես նույնպես, - գրում է Բայրոնը այդ առաջաբանում, - շատ ճանապարհորդների նման, խիստ տարված էի Ս. Ղազար վանքի միաբանությամբ, որը միավորում է կղերական հաստատության բոլոր առավելությունները, առանց նրա մոլորություններից որևէ մեկի...

Այս մարդիկ, - այնուհետև շարունակում է իր միտքը բանաստեղծը Մխիթարյանների մասին, - մի հարստահարված և բարձրատոհմ ազգի կրոնավորներ են, ազգ, որը հրեաների և հույների պես տարագիր ու ստրուկ է եղել՝ առանց առաջինների ինքնամեկուսացման և վերջինների ստրկամտության: Այս ժողովուրդը հարստացել է առանց կեղեքելու և ստրկության մեջ արժանացել պատվի առանց բանսարկության: Բայց նրա տեղը, այնուամենայնիվ, երկար ժամանակ եղել է «գերության տան» մեջ, որ վերջերս բազմապատկել է իր անթիվ օբևանները: Թերևս դժվար լինի գտնել մի ազգի տարեգրություն, որն ավելի զերծ լինի արատավորող ոճիրներից, քան հայերինը, որոնց առաքինությունները խաղաղասիրության արգասիք են, իսկ արատները՝ բռնադատման հետևանք: Սակայն ինչպիսին էլ լինեն նրանց ճակատագիրը, որը դառն է եղել, ինչպիսին էլ լինի այն ապագայում, նրանց երկիրը հավետ պիտի մնա աշխարհի ամենահետաքրքիր երկրներից մեկը, և թերևս նրանց լեզուն ավելի խորը ուսումնասիրության պահանջ է դնում՝ ավելի գրավիչ դառնալու համար: Եթե վստահենք ս. Գրքին, դրախտը Հայաստանում էր, Հայաստան, որն իր հողի վաղանցուկ առնչակցության պատճառով Ադամի սերունդների պես թանկ վճարեց մի մարդու երջանկության դիմաց, որն իր փոշուց էր ստեղծված: Հայաստանում էր, որ ջրիեղեղը սկսեց տեղի տալ և իջավ աղավմին: Բայց դրախտը դեռ չէր հասցրել անհետանալ, երբ ծայր առավ այդ երկրի տարաբախտությունը, քանզի երկար ժամանակ հզոր թագավորություն լինելով հանդերձ, համարյա երբեք անկախ չեղավ՝ և պարսից սատրապները, և թուրք փաշաները նմանաբար անապատ դարձրին այն երկիրը, ուր աստված մարդուն ստեղծել էր իր իսկ պատկերով»²⁸⁸: Մտքի և հոգու խորաթափանց ընկա-

²⁸⁷ Th. Moore, *The Life, Letters and Journals of Lord Byron*, էջ 346:

²⁸⁸ Ամդ, էջ 336-337:

լումով, մեծ ջերմությամբ են տոգորված այս տողերը՝ հայ ժողովրդի, նրա հոգևոր գանձերի, լեզվի արժանիքների և դառը ճակատագրի մասին: Բանաստեղծը Մխիթարյան հայրերի մեջ չի տեսել լոկ կրոնավորների: Նա հիացել է կղերական այս հաստատության իրենց ազգի համար կատարած հսկայական օգտակար աշխատանքով: Քաղաքական նկատառումներից ելնելով Մխիթարյանները որոշում են չհրապարակել այդ առաջաբանը: Դրա հետևանքը եղավ այն, որ Բայրոնի ոչ մի հաշտության ու զիջումի չգնացող խռովահույզ հոգին ըմբոստացավ այս անգամ արդեն օբյեկտիվ պատճառների դեմ: Բանաստեղծը վիրավորվեց և դադարեցրեց իր այցելությունները Ս. Ղազար:

Վերոհիշյալ առաջաբանի, ինչպես նաև *Հայերեն-անգլերեն քերականության* ձեռնարկի մասին Հարություն Ավգերյանը նույնպես հիշատակում է իր *Ինքնապատում օրագրության* մեջ. «Ապա յորդորեաց գնա յօրինել միւս ևս քերականութիւն Հայերէն և Անգղիական յօգուտ ազգայնոց իւրոց: Եւ նա արար զայն շարադրեալ զկանոնսն յիտալական բարբառ. զորս եյեղ նա յԱնգղիականն: - Ձկնի աւարտման քերականութեանն թարգմանեաց նա ի Լատին բարբառոյ զերկոսին երրորդ թուղթս Սրբոյն Պօղոսի առ Կորնթացիս, և հատուածս ինչ բանից ի մերոց նախնեաց ձեռնտուութեամբ վարժապետի իւրոյ, զորս և կամէր դնել ի քերականութեան անդ ի կրթութիւն անգղիացւոց: - Ապա ի խնդրոյ Վարժապետի իւրոյ յօրինեաց նա զՅառաջաբանութիւն այնր քերականութեան յԱնգղիական բարբառ. այլ քանզի երգիծանէր նա ի նմա զՏաճիկս և զՊարսիկս, չկամեցաւ Հ. Յարութիւն տպագրել զայն: Եւ նա թպէտև խոստացավ յօրինել միւս ևս անվնաս, բայց անդէն լքաւ սիրտ նորա... Եւ այնպէս մնաց քերականութիւնն գրչագիր, և ինքն ո՛չ ետ զխոստացեալ դրամսն վասն տպագրութեան սորին»²⁸⁹:

Թուրքերի և պարսիկների հասցեին ասված սուր խոսքերի պատճառով վերոհիշյալ առաջաբանը դեռևս երկար ժամանակ մնաց անտիպ: Հետագայում Թոմաս Մուրը գտավ այն բանաստեղծի թղթերում և առաջին անգամ հրատարակեց նրա մահվանից վեց տարի անց՝ 1830 թվականին Լոնդոնում լույս ընծայված *Լորդ Բայրոնի նամակները և օրագրերը՝ կենսագրական տեղեկություններով* խորագիրը կրող գրքում²⁹⁰: Դրանից հետո միայն այն թարգմանվեց Մխիթարյանների կողմից և առաջին անգամ հայերեն լույս տեսավ *Ծաղկաքաղ քերթո-*

²⁸⁹ Ղ. Տայեան, *Լորտ Պայրըն ի Ս. Ղազար*, էջ 136:

²⁹⁰ Տե՛ս Th. Moore, *Letters and Journals of Lord Byron: with Notices of His Life*, London,

դաց անգղիացւոց գրքում 1852 թվականին՝ *Ի թղթոց Լորտ Պայրընի*²⁹¹ խորագրով: Այնուհետև այն բազմիցս զետեղվել է Մխիթարյանների հրատարակած տարբեր ժողովածուներում, արևելահայ և արևմտահայ պարբերականներում, տարեցույցներում և այլուր:

Ինչպես արդեն նշել ենք, այս առաջաբանը դեռևս XIX դարում թարգմանվել է նաև ֆրանսերեն և ռուսերեն, ընդ որում, այն տպագրվել է ֆրանսերեն դեռևս XIX դարի 30-ական թվականների սկզբին²⁹²: Այսինքն, փաստորեն այդ հանրահայտ առաջաբանը ֆրանսերեն թարգմանվել և հրատարակվել է ավելի շուտ, քան հայերեն:

Սակայն բացի հայերեն սովորելուց և իր հայերենի ուսուցիչ Հ. Ավգերյանի հետ *Հայերեն-անգլերեն քերականության և Անգլերեն-հայերեն քերականության* ձեռնարկներ կազմելուց, Բայրոնը կատարել է թարգմանություններ հայ մատենագրությունից: Այսպես, 1817-ի մարտի 31-ին Բայրոնը գրում է Թ. Մուրին, որ ինքը հայերենից անգլերեն է թարգմանել Ս. Պողոսի նամակները՝ ուղղված կորնթացիներին. «Արդյո՞ք գրել եմ Ձեզ, որ թարգմանել եմ առաքելական թղթերից երկուսը՝ Ս. Պողոսի և կորնթացիների նամակագրությունը, որ մեզ մոտ կորած է, բայց հայերեն կա և, ինձ թվում է, շատ արժանահավատ է: Ես այն թարգմանել եմ Ս. Գրքին հատուկ անգլերենով»²⁹³: Թ. Մուրը այս նամակի վերաբերյալ տալիս է հետևյալ ծանոթագրությունը.

«Այս առաքելական թղթերի վավերականության միակ հավանական երաշխիքը բխում է այն փաստից, որ Ս. Պողոսը (Մոշեյմի և ուրիշների կարծիքով) մեզ մոտ առաջինը համարվող իր թղթից առաջ, կորնթացիներին ուղարկած է եղել ինչ-որ մի այլ առաքելական թուղթ: Եվ չնայած սրան, այս թղթերը բոլորեթյան համարվել են անվավեր: Թեև Պրայմեթ Աշըրը, Իոհան. Գրեգորիուսը և ուրիշ ուսյալ մարդիկ հաճախակի հիշատակում էին դրանց գոյության փաստը հայերենում, սակայն, իմ կարծիքով, առաջինը Վիստոններն էին, որ այդ լեզվից թարգմանեցին թղթերը և հունարեն ու լատիներեն տարբերակների հետ մեկտեղ կցեցին Սովսես Խորենացու *Հայոց պատմության* իրենց հրատարակությանը, որ տպագրվեց 1736-ին: Լորդ Բայրոնի թարգմանությունը, որքան ինձ հայտնի է, երբևէ անգլերենում արված առաջին փորձն է, և լինելով նրա գրչի արդյունքը, անշուշտ, պետք է, որ առավել հետաքրքրություն առա-

²⁹¹ Տե՛ս *Ծաղկաբաղ թերթոդաց անգղիացւոց* (հայերեն և անգլերեն), Ս. Ղազար, Վենետիկ, 1852, էջ IV-IX:

²⁹² Տե՛ս Գ. Շրումպֆ, *Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յԱրեւմուտս (ԺԴ-ԺԹ դար)*, էջ 115:

²⁹³ Th. Moore, *The Life, Letters and Journals of Lord Byron*, p. 347.

ջացնի, և ընթերցողը դժգոհ չի մնա, գտնելով այն Հավելվածում: Իմ ունեցած օրինակին կցված է իր իսկ ձեռքով արված հետևյալ մակագրությունը. «Անգլերեն թարգմանեցի (1817, հունվար-փետրվար) Ս. Ղազար վանքում, հայ վանական հ. Պասկալ Ավգերի օժանդակությամբ և հայերեն բնագրի մեկնությամբ՝ ԲԱՅՐՈՆ: Ձեռքիս տակ ունեի նաև, - ավելացնում է նա, - լատիներեն տեքստը, որը շատ տեղերում աղավաղված է և մեծ վրիպումներ ունի»»²⁹⁴:

Վերոհիշյալ թարգմանությունը Բայրոնն ուղարկում է Ջ. Մըրրեին՝ հրատարակության համար: Սակայն, ինչ-ինչ պատճառներով Մըրրեն այն չի հրատարակում, և Բայրոնը նրան իր 1820-ի մարտի 28-ի նամակում հիշեցնում է դրա մասին. «Կուզեմայի իմանալ թե ի՞նչ եղան Ս. Պողոսի երկու առաքելական թղթերը, որ թարգմանել էի հայերենից ավելի քան երեք տարի առաջ...»²⁹⁵: Չստանալով պատասխան՝ Բայրոնը 1821-ի հոկտեմբերի 9-ի նամակում կրկին հարցնում է Ս. Պողոսի թղթերի մասին. «Ի՞նչն է պատճառը, որ մի կողմ եք դրել Ս. Պողոսի առաքելական թղթերը, որ թարգմանել էի հայերենից...»²⁹⁶: Մենք չգիտենք՝ Ջ. Մըրրեն հրատարակել է վերոհիշյալ թղթերը, թե ոչ: Մեզ հայտնի է, որ Ս. Պողոսի երկու առաքելական թղթերի Բայրոնի թարգմանությունը տեղ է գտել 1835-ին Փարիզում հրատարակված *Լորդ Բայրոնի երկերի ժողովածուի* մի հատորյակում²⁹⁷:

Վենետիկի Ս. Ղազար կղզում Բայրոնը կատարել է որոշ թարգմանություններ հայ հին պատմագիրներից: Այսպես, նա թարգմանել է հատվածներ Մովսես Խորենացու *Հայոց պատմությունից*, Ներսես Լամբրոնացու *Ատենաբանութիւնից* և այլն: Ինչպես նշվել է բազմիցս, Բայրոնի վրա խոր տպավորություն է թողել հայ մշակույթը: Սակայն միշտ ենթադրվել է, որ բանաստեղծն իր «հայկական» ուսումնասիրությունների շրջանակներում սահմանափակվել է միայն հայ հնագույն և միջնադարյան գրողների ստեղծագործություններով, չնայած պետք էր ակնկալել, որ նա հետաքրքրվել է նաև հայ ժամանակակից քնարերգությամբ, քանի որ Ավգերյանի *Ինքնապատում օրագրության* մեջ կատարված գրառումներից տեղեկանում ենք, որ Բայրոնը խնդրել է Ավգերյանին իրեն նյութեր տրամադրել ինչպես ժամանակակից, այնպես էլ հնագույն հայ բանաստեղծությունների վերաբերյալ: Այնուամենայնիվ,

²⁹⁴ Անդ, էջ 347-348:

²⁹⁵ Անդ, էջ 439:

²⁹⁶ Անդ, էջ 536:

²⁹⁷ Տես *The Complete Works of Lord Byron*, in one volume, Paris, published by A. and W. Galignani and Co., 1835, էջ 819-821:

մինչև վերջերս ոչ մի հիմք և ապացույց չկար, որ Բայրոնը հայ ժամանակակից որևէ ստեղծագործություն է թարգմանել: Այսուհանդերձ, Օքսֆորդի համալսարանի հրատարակչության կողմից Բայրոնի *Չափածո ստեղծագործությունների լիակատար ժողովածուի* ընթացիկ հրատարակման կապակցությամբ «1976-ին, պրոֆեսոր Մաք Գանըր Լոնդոնի Ջոն Մըրրե ՄՊԸ-ում Բայրոնի արխիվը զննելիս, - ինչպես նշում է անգլիացի հայագետ Չ. Դաուսեթը, - պատահաբար հանդիպեց մի ձեռագիր փաստաթղթի՝ վերնագրված՝ «Թարգմանություն հայերենից: Բյուզանդյան ամառանոցի զվարճալիքները» (անգլերեն՝ *The Pleasures of the Summer Houses of Byzantium* - Ա. Բ.), և հարց ու փորձ արեց, թե արդյո՞ք որևէ մեկը կարող է ներկայացնել հայերեն բնագիրը»²⁹⁸: Բարեբախտաբար, որոշ ժամանակ անց, Փարիզի Ալբոնի հրապարակի վրա գտնվող Հայկական գրադարանում (Bibliothèque Arménienne) գտնվեց հայ հայտնի աշխարհագրագետ Ղ. Ինժիճյանի մի քերթվածը, որի վերնագիրն անգլերեն թարգմանված էր հետևյալ կերպ. *The Byzantine Summer-House in the Straits of Constantinople, called by the Turks Boğaz İçi* (The Golden Horn)²⁹⁹: Բայրոնը թարգմանել է այդ գործից ընդամենը 4-5 էջ (253 էջից)՝ նախերգանքը, որը պարունակում է հինգ տուն, և տասնյոթ տուն (6-ից մինչև 22) առաջին երգից, որը բաղկացած է յոթանասուն տնից՝ համարակալված 6-ից մինչև 75: Չ. Դաուսեթը, մեջբերելով այդ հատվածները և դրանց անգլերեն թարգմանությունը, մանրամասնորեն վերլուծում է Բայրոնի կատարած թարգմանությունը: Մենք բաժանում ենք Չ. Դաուսեթի այն եզրահանգումը, որ Ղ. Ինժիճյանի «պոեմի թարգմանությունը հեշտ չէ. բառապաշարը հարուստ է, ոճը և քերականությունը՝ բարդ...»³⁰⁰, իսկ Բայրոնը հայերեն սովորելու համար «հատկացնելով շատ կարճ ժամանակ», միանգամայն բնական է և հավաստի, որ չէր կարող ունենալ «իրենց բոլոր բարդություններով հանդերձ լեզվական խոր գիտելիքներ»³⁰¹: Սակայն, չնայած այդ հանգամանքին, մեր կարծիքով, Բայրոնի թարգմանությունը հաջողված է, նրբագեղ և ընդհանուր առմամբ ճշգրտորեն է արտահայտում բնագրի բովանդակությունն ու իմաստը: Դա, ըստ երևույթին, միանգամայն

²⁹⁸ Charles Dowsett, "The Madman has come back again!" *Byron and Armenian: In Commemoration of the 200th Anniversary of Lord Byron's Birth*, "Journal of Society for Armenian Studies (JSAS)", volume 4, 1988-1989, p. 33.

²⁹⁹ Տե՛ս Դուկաս Ինժիճեան, *Ամարանոց Քիւզանդեան Ի նեղուցին կոստանդնուպօլսոյ կոչեցեալ ի տաճկաց Պօղազ Իջի*, ի Վենետիկ, ի Վանս արքայն Դազարու, 1794:

³⁰⁰ Charles Dowsett, "The Madman has come back again!" *Byron and Armenian: In Commemoration of the 200th Anniversary of Lord Byron's Birth*, էջ 42:

³⁰¹ Անդ, էջ 47:

սպասելի էր և, հավանաբար, անմիջական հետևանք այն փաստի ու իրողության, որ Բայրոնը, իրոք, մեծ բանաստեղծ էր և «այն անձնավորությունը չէր, որ գոհամար բանասիրական մանրութներով ու կարկատաններով», այլ ձգտում ու «խորամուխ էր լինում ընդհուպ մինչև նյութի սիրտն ու հոգին...»³⁰²:

Բայրոնի կյանքի ու մահվան տարբեր տարելիցների կապակցությամբ (1846, 1894, 1901, 1924, 1932 և այլն) Մխիթարյանները ինչպես առանձին գրքերով, այնպես էլ «Բազմավեպ» հանդեսում հրատարակել են հայերին և Հայաստանին վերաբերող նրա մի շարք նամակները և վերոհիշյալ առաջաբանը: Բայրոնի բազմաթիվ թարգմանությունները հայ մատենագրությունից (հատվածներ Սովսես Խորենացու *Հայոց պատմությունից*, Ներսես Լամբրոնացու *Ատենաբանությունից*, Ս. Պողոսի կորնթացիներին ուղղված առաքելական թղթերը, որոնց բնագիրը չի պահպանվել, իսկ թարգմանությունն այդ ժամանակ գոյություն է ունեցել միայն հայ մատենագրության մեջ, և անգլերեն առաջին անգամ այն թարգմանել է Բայրոնը³⁰³, և այլն) մեկ անգամ ևս հավաստում են նրա անսպառ հետաքրքրությունը հայ մշակույթի նկատմամբ:

³⁰² Անդ:

³⁰³ Տե՛ս, օրինակ, *Ծաղկաբաղ քերթողաց անգղիացվոց*, Ս. Ղազար, Վենետիկ, 1852: - *Lord Byron's Armenian Exercises and Poetry* [հայերեն և անգլերեն], Ս. Ղազար, Վենետիկ, 1870:


ԳԼՈՒԽ III

ՀԱՅ ԳՐԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻՏՔԸ ԲԱՅՐՈՆԻ ՄԱՍԻՆ

«Նափուլունեն ետքը մէկ մարդ մը չէ եղած որ այնչափ մեծ անուն հանէ աշխարհքիս վրայ աս դարուս մէջ, որչափ աս բանաստեղծը. բնութիւնն ալ կարծես թէ ասոր տուած խելքն ու կարգէ դուրս կատարելութիւնները բնաւորութիւնները՝ ուրիշ մարդու չէ տուեր»³⁰⁴.

Բայրոնի Ս. Ղազար կղզում ունեցած հանդիպումներն օժանդակեցին, որ հայ մտավորականությունը շատ վաղ, սկսած դեռևս 19-րդ դարի սկզբից ծանոթանա Ջ. Բայրոնի ստեղծագործություններին: Գիշտ է դրանք հայերեն չեն թարգմանվել մինչև 19-րդ դարի կեսերը, բայց, քանի որ հայ ժողովրդի ճակատագիրը տվյալ ժամանակաշրջանում որոշ իմաստով նման է եղել բանաստեղծի անձնական ճակատագրին (մտավորական հայերը հիմնականում գործել են հայրենիքից դուրս, որտեղ և ստեղծել են հայ մշակութային կենտրոններ), հայ ժողովրդի առաջավոր զանգվածը հնարավորություն է ունեցել ծանոթանալու Կոստանդնուպոլսի, Ջնյունիայի, Մոսկվայի, Թիֆլիսի, Վենետիկի, Վիեննայի և հայ մշակութային այլ կենտրոններում լույս տեսնող բազմաթիվ օտարալեզու պարբերականներում բանաստեղծի մասին տեղ գտած հոդվածներին, ինչպես նաև նրա ստեղծագործությունների թարգմանություններին: Իմիջիայլոց, հետագայում Բայրոնի ստեղծագործությունների հայերեն թարգմանությունները և նրա մասին հայերեն գրված հոդվածները հրատարակման առումով նույնպես ունեն լայն աշխարհագրություն: Դրանք հայերեն հրատարակվել են Հնդկաստանում (Կալկաթա), Ռուսաստանում (Մոսկվա, Ս. Պետերբուրգ, Ռոստով), Իտալիայում (Վենետիկ), Ավստրիայում (Վիեննա), Վրաստանում (Թիֆլիս), Թուրքիայում (Կ. Պոլիս), Ադրբեջանում (Բաքու, Շամախի), Պարսկաստանում

³⁰⁴ Լորտ Պայրըն. «Բազմավեպ», 1846, № 19, էջ 293:



1857-ին Շամախիում տպագրված *Շիլլոնի կալանավորը*
պոեմի տիտղոսա թերթը

The title page of *The Prisoner of Chillon* published
in Shamakhy (Karabakh) in 1857

(Թեհրան), Հայաստանում և այլուր, որտեղ որ գործել են հայ մշակութային կենտրոններ:

Անհրաժեշտ է նշել, որ Բայրոնի երկերը հայերեն թարգմանությամբ հրատարակվել են ավելի քան հարյուր անգամ, ընդ որում, առանձին գրքերով՝ ավելի քան քսան անգամ: Բայրոնի երկերը հայերեն թարգմանել են քառասունից ավելի հայ գրողներ և թարգմանիչներ, այդ թվում՝ Մեսրոպ Թաղիադյանը, Հովհաննես Մասեիյանը, Ղևոնդ Ալիշանը, Հովհաննես Թումանյանը, Լեռնցը, Հովսեփ Միրզայանը, Վահագն Դավթյանը, Հենրիկ Սևանը և շատ ուրիշներ: Հատկապես շատ են հրատարակվել *Չայլդ Դարուլդի ուխտագնացությունը*, *Դոն ժուան* և *Շիլինդի կալանավորը* պոեմները (կամ հատվածներ դրանցից), ընդ որում, միայն *Չայլդ Դարուլդի ուխտագնացությանն* անդրադարձել են վեց թարգմանիչներ՝ Ղ. Ալիշանը, Վ. Անտոնյանը, Լեռնցը, Հ. Միրզայանը, Հովհ. Թումանյանը և Հ. Սևանը:

§ 3.1. Ներբողներ Բայրոնին հայ բանաստեղծներից

Շատ հայ բանաստեղծներ ներբողներ են ձոնել և բազմաթիվ սրտառուչ տողեր նվիրել հայ ժողովրդի անկեղծ բարեկամ Բայրոն-բանաստեղծին, որի սրտին մոտ է եղել տանջված ու տառապած ժողովուրդների ճակատագիրը: Դրանց միջոցով հայ բանաստեղծները բնորոշել են ազատության համար մարտնչող Բայրոն-մարտիկին, ինչպես նաև հայոց լեզուն, հայ գրականությունն ու մշակույթն ուսումնասիրող մեծ անհատին՝ տալով նրա խռովահույզ հոգու, խոհերի և պոռթկումների իրական նկարագիրը: Ներբողով՝ նվիրված Բայրոնին, հանդես են եկել Սմբատ Շահազիզն ու Հովհաննես Թումանյանը, Ռուբեն Որբերյանն ու Վահրամ Թորգոմյանը, Եղիա Փեչիկյանն ու Արամայիս Սրապյանը, Մառի Աթմաճյանը, Նաիրի Զարյանն ու Հրաչյա Հովհաննիսյանը, Անահիտ Պարսամյանն ու Սուրեն Մուրադյանը, Վահագն Կարենցը և շատ ուրիշներ:

Հայ բանաստեղծ, մանկավարժ և հրապարակախոս Սմբատ Շահազիզի (1840-1907) գրական գործունեության վրա որոշակի ազդեցություն է թողել Բայրոնի քնարերգությունը: Նա իր *խորհրդածությունը բանաստեղծի* բանաստեղծության մեջ ունի Բայրոնին նվիրված ներբող. իր խոսքն է ուղղում անգլիացի բանաստեղծին, որ իր համար կանգնեցրել է «երկնահաս արձան», և ուն *«անբռնադատ» «հոգու զեղման պետք*

է նախանձեն բոլոր պոետներ», իսկ «փառքդ Անգլիայի որ բարձրագույն է, քան սարերն Ալպյան»³⁰⁵, քանի որ այն ծնել է Բայրոն: Այնուհետև Ս. Շահագիզն ավելացնում է.

Փառք – որ ծնել է քո անգին քնար,
Որ ավերակներ երգեց Յուների, -
Ո՛րպես Յելլադա է հրաշափառ:
Ո՛վ Բայրոն, ասա՛, ո՞վ քո մեջ դրեց
Այն վսեմ *թախիծն հուսահատության...*³⁰⁶

Հայ մեծ բանաստեղծ Յովհաննես Թումանյանը 19-րդ դարի վերջերին թարգմանել է Բայրոնի *Շիլիոնի կալանավորը* պոեմը և, ըստ երևույթին, այդ առիթով էլ գրել է *Բայրոնին* բանաստեղծությունը, որն առաջին անգամ տպագրվել է վերոհիշյալ պոեմի թարգմանության հետ միասին 1896-ին Թիֆլիսում³⁰⁷: Այդ բանաստեղծության մեջ Թումանյանը գովերգում է ազատատենչ ժողովուրդների նվիրյալ բարեկամ անգլիացի բանաստեղծին, որ իր կյանքը զոհել է հանուն Հունաստանի ազատության.

Ի՞նչ մեծ հանճարով, ո՛վ հսկա պոետ,
Ազատությունը կաշկանդող շղթան
Հաշտեցրել ես դու ազատ մարդու հետ
Եվ քաղցրացրել ես վիշտը գերության³⁰⁸:

Բայրոնը, չվախենալով անգլիական արիստոկրատիայի զայրույթից, համայն աշխարհին հայտնում է, որ Անգլիան բանտ է, և իր քնարերգության ամբողջ զայրույթի ուժով և դառը ծաղրով նշավակում է Անգլիայում գործող օրենքներն ու կանոնները: Ահա թե ինչու Թումանյանը գրում է.

³⁰⁵ Ս. Շահագիզ, *Երկեր*, Հայպետհրատ, Երևան, 1947, էջ 55: - Ս. Շահագիզ, Յովհ. Յովհաննիսյան, Ալ. Ծատուրյան, Վ. Միրաքյան, *Երկեր*, «Սովետական գրող», Երևան, 1980, էջ 32:

³⁰⁶ Անդ:

³⁰⁷ Տես Բայրոն, *Շիլիոնի կալանավորը*, թարգմ. Հ. Թումանյան, Յ. Մարտիրոսյանի տպարան, Թիֆլիս, 1896:

³⁰⁸ Հ. Թումանյան, *Երկերի ժողովածու*, հ. 2, «Հայաստան», Երևան, 1969, էջ 145:

Հրատ. Փիլիպպոս Վարդապետեանի

Բ Ա Յ Ր Ը Ն

ՇԻԼԻՈՆԻ ԿԱԼԱՆԱԽՈՐԸ

Թ ա ր գ մ.

Յովհաննէս Թումանեանց

Թ Ի Ֆ Լ Ը

Տպար. Յ. Մարտիրոսեանցի. | Тифли. П. Мартыросянца.

1896

1896-ին Թիֆլիզում հրատարակված *Շիլիոնի կալանավորը*
պոեմի տիտղոսաթերթը
The title-page of *The Prisoner of Chillon* published in Tiflis in 1896

**Ի՛նչպես դարձրել ես բանտը հայրենիք
Եվ ողջ աշխարհը լայնարձակ մի բանտ...**³⁰⁹

Ռուբեն Որբերյանի (1874-1931) *Ծփանքներ* պոեմի նախերգանքն ամբողջությամբ նվիրված է Բայրոնին՝ «Առ լուրտ Պայրըն» ընծայական մակագրությամբ: Այդ պոեմում անգլիացի բանաստեղծի կերպարն ուրվագծվում է կենսագրական հաջորդականությամբ՝ այն երկրների ֆոնի վրա, որտեղ նա եղել է, նշելով նրա կյանքի և ուխտագնացության բոլոր փուլերը: Պոեմի նախերգանքում մեր առջև վեր է հառնում բռնակալության դեմ հանդես եկող և Յունաստանի ազատության համար պայքարող ազատատենչ մարտիկը:

**Արծվի նայվածքը վերջին՝ դեպի կարմիր հորիզոն,
Մրմնջեցիր - «Ես մեռնիմ, թող ազատի՛ Զեւադան...»**³¹⁰:

Ռ. Որբերյանը նկարագրում է բանաստեղծի մահը Յունաստանում, հիշեցնում, որ չնայած նրա մահից գրեթե մեկ դար է անցել, սակայն նա հսկում է,

**Որ դրոշակը երկնագույն չառնե ըստվեր մ՛ իր վըրան,
Որ չի դառնան հին օրեր, ու գերության ողջակեզ
Չըլլա, չիյնա վերըստին, ապրի՛ ազատ Յունաստան**³¹¹:

Ծփանքներ պոեմի նախերգանքում Ռ. Որբերյանն ի ցույց է դնում նաև Բայրոնի հետաքրքրասիրությունը հայերի նկատմամբ, անդրադառնում նրա հայերենի ուսումնասիրություններին:

**Արարատին անծանոթ, այլ սիրեցիր մեր լեզուն,
Մեր գիրերուն վըրա մերթ խոնարհեցավ քու ճակատ...**³¹²

Ս. Ղազարուն եղած ժամանակ Բայրոնը սիրել է զբոսնել կղզում, հիացել դրա գեղատեսիլ բնությամբ և նույնիսկ ունեցել է իր սիրած անկյունը՝ ձիթենիները, որոնց հովանու տակ բազմիցս նստել է,

³⁰⁹ Անդ:

³¹⁰ Ռ. Որբերյան, Ռ. Սևակ, Վ. Թեքեյան, Ս. Զարիֆյան, *Երկեր*, «Սովետական գրող», Երևան, 1981, էջ 41:

³¹¹ Անդ:

³¹² Անդ, էջ 42:

հանգստացել, երազել, խորհրդածել... «Բայրոնյան» ձիթենիներին իրենց բանաստեղծություններն են ձոնել եղիա Փեչիկյանը, Վահրամ Թորգոմյանը և Արամայիս Սրապյանը:

Հայ մշակույթի երախտավոր, բանաստեղծ եղիա Փեչիկյանը (1895-1964) 1930-1939 և 1952-1953 թվականներին ղեկավարել է «Բազմավեպի» խմբագրությունը: Նա բանասիրական արժեքավոր ուսումնասիրությունների հեղինակ է, մի ամբողջ քառասունամյակ (1923-1963) Մխիթարյան մայրավանքի նորեկներին դասավանդել է գրաբար, աշխարհաբար և հայ գրականություն: Ե. Փեչիկյանը թողել է հարուստ գրական ժառանգություն³¹³, այդ թվում՝ մի շարք բանաստեղծություններ, որոնց մեծ մասն անփոփված է *Քնարական մրմունջներ* խորագրով գրքում³¹⁴: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Ե. Փեչիկյանն օգնել է հայ փախստականներին, գուրգուրանքի և աջակցության կարոտ հայ ուսանողներին, ինչպես նաև ստանձնել և սիրահոծար կատարել է ամեն տեսակի ազգօգուտ և հայրենասիրական աշխատանք: Բնականաբար նա չէր կարող անտարբեր լինել Բայրոնի անձի, ստեղծագործության ու հերոսության նկատմամբ: Ե. Փեչիկյանն իր *Պայրընյան ձիթենիք* բանաստեղծության մեջ, որը լույս է տեսել 1924-ին «Բազմավեպում», անդրադառնում է թե՛ Մխիթար Սեբաստացուն, որը դեռևս Բայրոնի ժամանումից մեկ դար առաջ հիմնել էր իր միաբանությունը, թե՛ Բայրոնին, որը ողջունել է Մխիթարյան հայրերին, որոնց «տեսքը լուռ ու վրսեմ» հաղորդել է անգլիացի բանաստեղծին Արևելքի վեհ ոգու մասին:

Սիւք մը յանկարծ շնչեց սրտին հըրատապ.
Սեբաստացոյն ձեռակերտէ՛ն էր անդորր,
Ուր դար մ'առաջ բոյն էր դըրած մազապուրծ
Արևելքի փոթորիկէն աւերիչ:
Սլացալ իսկոյն կոնտոլայով խրոխտապանծ
Երջանկութեան կղզոյն ափերն ողջունել,
Եւ ալևոր Հարց տեսքը լուռ ու վրսեմ
Պատմեց անոր Արևելքի ոգին վեհ՝³¹⁵:

³¹³ Այդ ժառանգության մատենագիտական ցանկը տես «Բազմավեպ», 1964, № 1-3:

³¹⁴ Տես Ե. Փեչիկեան, *Քնարական մրմունջներ (Քերթուածներ)*, Ս. Ղազար, Վենետիկ, 1925:

³¹⁵ Ե. Փեչիկեան, *Պայրընյան ձիթենիք. ի Ս. Ղազար*. «Բազմավեպ», 1924, № 10, էջ 339:

Այս բանաստեղծության մեջ Ե. Փեչիկյանը կերտել է մի մարդու կերպար, որը սիրել է ապրել հավերժական դյուքանքով ու լսել **«հեզամնջիկ ալեաց օրորը»** և որին գերել են բնության գեղեցկությունը, հեռու ափերը, ժողովուրդների ազատության համար մարտերն ու հաղթանակը.

Սիրեց ապրիլ յավերժական դիւքանքով,
Հեզամնջիկ ալեաց օրորը լըսել.
Յափշտակուած բնութեան գեղով՝ նա տեսաւ
Հեռու ափեր, ազատութեան մարտեր գոռ,
Գաղափարի և զենքերու յաղթանակ³¹⁶:

Վենետիկում ապրած տարիներին (1816-1819) ազատության կայծը հրդեհել է Բայրոնի ամբողջ էությունը, և նա, Փեչիկյանի արտահայտությամբ, ցանկացել է

Հոմերական ու սոփոկլեան շիրիմներն
Իր արինով սրբել անբիծ անարատ.
Հանճարներու, Սուսաներու ճետերուն
Պինդ շղթաները գերութեան խորտակել³¹⁷:

Իսկ դրանից հետո, հրաժեշտ տալով Ս. Ղազարին, բանաստեղծը մեկնում է ռազմի դաշտ, որտեղ նրան սպասում է դյուցազմի մահ.

Յետին ողջոյն Սուրբ Ղազարու նա կու տար,
Ռազմի դաշտին տեսիլը զինքն էր դիւթած,
Դիւցազմի մահ՝ հոն լոկ կրնար ձեռք ձգել³¹⁸:

Նախքան Հունաստան մեկնելը Բայրոնը վերջին անգամ այցելում է իր հայ բարեկամներին, վերջին անգամ հայացք ձգում մտավորական-եկեղեցականներին և բացականչում.

Խաղաղութեանն այն՝ զոր հոգիս ըմբռնխնեց
Չընաշխարհիկ այս կղզեկին անկեան մէջ՝
Վըկայ, քարոզ թող ըլլայ սուրբ ծիթենին

³¹⁶ Անդ:

³¹⁷ Անդ, էջ 339-340:

³¹⁸ Անդ, էջ 340:

Ու հովանի ընէ այն քայլ մը հողին
Ըզմայլումիս յաւերժական յիշատակ³¹⁹:

Անցել է արդեն ավելի քան մեկուկես դար, բայց այսօր էլ «բայրոն-յան» ձիթենիները դեռ կան, որոնք խաղաղության սոսափյունով Հայոց կղզի այցելող բազմազգ ուխտավորների համար, կարծես, նվագում են **«անմահ Լորտին երգերն, յուշերն ու խոհեր»**³²⁰:

Ինչպես նշեցինք, «բայրոնյան» ձիթենիների մասին բանաստեղծու-թյուն է գրել նաև հայ բժիշկ, պատմաբան և հասարակական գործիչ Վահրամ Թորգոմյանը (1858-1942): Վ. Թորգոմյանի *Լորտ Պայրընի ձիթենիէն* բանաստեղծությունը, որը գրվել է 1827-ին Փարիզում դեռևս Ռ. Որբերյանի կենդանության օրոք, և նվիրված է նրան «Առ բանաստեղծ բարեկամն իմ Տիար Ռ. Որբերեան. հիացողն Լորտ Պայրընի» մակագրությամբ, տպագրվել է 1932-ին «Բազմավեպում»: Այդ բանաստեղծության մեջ Վ. Թորգոմյանը նկարագրում է Վենետիկի «հայոց» կղզին, Բայրոնի սիրած **«հին, գեղեցիկ»** ծառը,

Որուն ներքեւ քերդողն Անկիլի՝
Լորտ Պայրընը, կ'ըսեն՝ սիրէր,
Նստիլ, հանգչիլ, շա՛տ անգամներ,
Ու երագել, երբ վանք կու գար
Մեր մայրենին սորվիլ բարբառ³²¹:

«Բայրոնի» ձիթենին «այդ ծառը հին», հակառակ իր «հարիւրա-մեայ և աւելի» տարիքին, «դիմադրելով բուք ու հովի», մնացել է միշտ անասան ու սաղարթախիտ և, կարծես թե, դարձել է ուխտատեղի ինչ-պես Ս. Ղազար այցելող ամեն մի հայի, այնպես էլ «**հոն այցելող ամեն հիւրի**» համար³²²: «Լորտ Պայրընի սիրած կանանչ խորհրդաւոր այդ ծառին տակ» Վ. Թորգոմյանին թվում էր թե վերադարձել են երջանկու-թյամբ լի լցված «**դպրոցական օրերն համայն**», և նա իր մտորումներով ու երագներով կարծես թե նստած էր

Ուսանելու դասեր վըսեմ
Սուրբ Ղազարի մատենաներէն՝

³¹⁹ Անդ:

³²⁰ Անդ:

³²¹ Վ. Թորգոմեան, *Լորտ Պայրընի ձիթենիէն*. «Բազմավեպ», 1932, № 8-9, էջ 380:

³²² Անդ:

Ձորս գրեցին առատօրէն
Հիւրմուգ, Ազոնց, Բագրատունի,
Հայր Ալիշան անմահունի...

և իր հետ միասին կարծես թէ ներկա էր նաև

Լորտ Պայրըն իսկ, ու հատորներ
Գիրկը առած, մեր Հայ լեզուն
Կը վերծանէր ան օրն ի բուն.
Մտածելով՝ նեցուկ մ'ուժգին
Ըլլալ մէկ օր հեգ Հայ Ազգին,
Ձոր արդարեւ անկեղծօրէն
Սիրեց ուժգին սրտին խորէն³²³:

Ս. Ղազար կղզու այցելուի՝ բանաստեղծ Վ. Թորգոմյանի համար
դժվար է եղել բաժանվել Բայրունի գեղատեսիլ ձիթենուց.

Այս սխրալի տեսարանէս.
Բայց՝ «պէտք է որ այլ ևս երթաք»
Կ'ազդարարէր վանքին կոչնակ...

և նա, սթափվելով իր երազներից ու վերադառնալով իրականության
գիրկը, որպէս այդ անմոռաց օրվա հիշատակ ձիթենուց մի փունջ
ուտեր է պոկում՝

... զայն տանելու՝
Իմ բարեկամ այն Հայերու
Որ Պայրընի մեծ տաղանդին
Հիացումով յարգանք ունին³²⁴:

Դրա հետ մեկտեղ բանաստեղծն արձանագրում է, որ Ս. Ղազարն
ընդհանրապէս չըջապատված է շատ անթառամ ձիթենիներով և հավա-
տում

³²³ Անդ, էջ 381:

³²⁴ Անդ:

..... թէ ձիթենին
Նշանակ է իմաստութեան,
խորհրդանիշ առատութեան.
Թէ՛ կ'աւետեն միշտ՝ փառք և սէր,
խաղաղութիւն, իւր տերեւներ³²⁵:

Սփյուռքահայ բժիշկ, բանաստեղծ և արձակագիր, Միլանի համալսարանի շրջանավարտ Արամայիս Սրապյանը (1910-1969), որն ականատես է եղել հայ ժողովրդի կրած արհաւիրքներին, երեք բանաստեղծութիւն (*Պայրըն ի Ս. Ղազար*, 1932, *Պայրընեան ձիթենիներուն տակ*, 1938 և *Դարձեալ քեզի հետ*, 1959) է ծոցնել ազատության, արդարության և տառապած ժողովուրդների մեծ պաշտպանին՝ Բայրոնին:

Արամայիս Սրապյանի մանկութիւնը հար և նման է Արևմտյան Հայաստանի շատ մանուկների ճակատագրին՝ մանկութիւն արքայների ճանփաներուն և որբանոցներուն: Ա. Սրապյանը 1929-ին ավարտել է Մուրատ-Ռափայեյան վարժարանը: Ավարտել է նաև Միլանի համալսարանը և ստացել բժշկի որակավորում: Նա Միլանի հայ մշակութային շարժման ակտիվ կազմակերպիչներից էր, որի նախաձեռնությամբ և ղեկավարությամբ Մուրատ-Ռափայեյան վարժարանի նախկին աշակերտների մի խումբ 1945-ին Միլանում հիմնադրել է Հայ մշակութային միութիւնը: Ա. Սրապյանը հրատարակել է *Հանդիպումներ մուսային հետ* և *Ազոլոյէն Վենետիկ* բանաստեղծութիւնների և *Ձէքի տակ ու Ալպեան ռազմիկներուն հետ* արձակ գրվածքների ժողովածուները: 1971-ին «Հայաստան» հրատարակչութիւնը հրատարակել է բանաստեղծի *Անավարտ երթ* ժողովածուն, որտեղ տեղ է գտել նաև *Պայրընեան ձիթենիներուն տակ* բանաստեղծութիւնը, որը գրվել է 1936-ի օգոստոսի 27-ին Վենետիկում և առաջին անգամ հրատարակվել է 1938-ին «Բազմավեպում»³²⁶: Ա. Սրապյանը աշխատակցել է նաև հայ պարբերական մամուլին՝ «Գեղունի», «Մխիթարեան ընտանիք», «Յառաջ», «Երկունք», «Ձվարթնոց», «Կեանք եւ արուեստ», «Նայիրի», «Բազմավեպ»: Հենց «Բազմավեպում» էլ տարբեր ժամանակներուն լույս են տեսել Ա. Սրապյանի՝ Բայրոնին նվիրված բանաստեղծութիւնները: Դրանցից առաջինը տպագրվել է 1932-ին³²⁷: Ա. Սրապյանի նկարագրմամբ, Ա.

³²⁵ Անդ:

³²⁶ Տե՛ս Սրապեան Ա., *Պայրընեան ձիթենիներուն տակ* (*Պայրընի սենեակին մէջ* – Ա. Ղազար), «Բազմավեպ», 1938, № 4-5, էջ 133-138: - Ա. Սրապյան, *Անավարտ երթ*, «Հայաստան», Երևան, 1971, էջ 11-18:

³²⁷ Տե՛ս Սրապեան Ա., *Պայրըն ի Ս. Ղազար*. «Բազմավեպ», 1932, № 6-7, էջ 272:

Ղազար «կղզեակին հիւրընկալ մեւամաղծոտ ափունքին» թափառել ու երագել է Բայրոնը, «այս ծառերուն տակ խոհուն, այս քիւին տակ շողածին», նստել ու սովորել է մեր «հըրաշափառ սուրբ լեզուն»։ Սակայն, չկա այլևս բանաստեղծը, ընդմիշտ լռել է նրա քնարի ծայնը,

Ու ալ չկա՛յ ծովուն դէմ մաքառող սիրտըդ բոսոր...
Եւ մտքիդ բոցն՝ երկնքի կայծակներէն ալ հըզօր:

Այդ բացակայութիւնն զգում են ոչ միայն Ս. Ղազար կղզու մայրավանքի վանական-գիտնականները, որոնց սրտում խոր հետք է մնացել Բայրոնի մասին ավագների թողած հիշողութիւններից, այլև նույնիսկ այդ կղզյակի «նոճիներն վերամբարծ, երազատես եւ բուրեան», որոնք «ցաւի մը տակ ահաւոր տրտմաթախիծ կը հեւան»³²⁸:

Ա. Սրապյանի՝ Բայրոնին նվիրված երկրորդ, բավականին ընդարձակ բանաստեղծութիւնը, ինչպէս նշվեց, կրում է *Պայրընեան ձիթենիներուն տակ* խորագիրը: Այստեղ արտացոլվում են անգլիացի բանաստեղծի մտորումներն ու խորհրդածութիւնները կյանքի, սիրո և արվեստի վերաբերյալ:

Ա. Սրապյանի՝ Բայրոնին նվիրված երրորդ բանաստեղծութիւնը՝ *Ղարծեալ քեզի հետ*, որը բազում խոհերի, երազների ու մտորումների արդիւնք է, տպագրվել է 1959-ին «Բազմավեպում»: Բանաստեղծը՝ Ա. Սրապյանը, ամեն երեկո իր դստեր հետ այցելել է Բայրոնի արձանին և, երկար ժամանակ կանգ առնելով նրա առջև, խորհել է:

Պանդոկին մէջ մեր, երբ ժամը ութն էր,
Կ'առնէի միշտ կանգ արձանիդ ի տես.
Արաքսիս, ապշած, նայուածքն յառած վեր,
Դարց կու տար ինձի, կը ճանչնայի՞ քեզ:³²⁹

Երկու բանաստեղծների հեռակա, բայց սրտամոտ, ծանոթութիւնը «շատ խոր և շատ հին» էր: Այն գալիս էր Ս. Ղազարից, որտեղ նրանք, կարծես թէ, միասին շատ էին թափառել կղզում, երազել, խորհել ու մտորել կյանքի, լինելության մասին:

³²⁸ Անդ:

³²⁹ Ա. Սրապեան, *Ղարծեալ քեզի հետ. Պայրըն ի վիյնելով – Մ.*, «Բազմավեպ», 1959, № 9-10, էջ 209:

Պատմել կեանքդ անոր, այնքան դիւրին չէր,
Դիւրին չէր Քերթողդ երկիր բերել սին.
Սակայն, տեղին էր գեթ ըսել որ մեր
Ծանօթութիւնն էր շատ խոր եւ շատ հին:

Եվ միանգամայն օրինաչափ է և ոչ պատահական Բայրոն-անձնավորութեանը խորհրդանշող՝ բանաստեղծի այն եզրահանգումը, որ հայր ու աղջիկ մի օր նկատու՞մ են, թե ինչպէս

Արիւնն, իսկապէս, կ'իջնէր ճակտէն հուր,
Ու կաթկթթելով պատուանդանն ի վար,
Կ'երթար, կը լուծուէր հնոցին մէջ նուռ՝
Ժուրայէն իջնող վերջալոյսին վառ³³⁰:

Այսպիսով, տարագրութեան մեջ ապրող սփյուռքահայ բանաստեղծ Արամայիս Սրապյանը բարձր է գնահատել Բայրոնի ոչ միայն ստեղծագործութիւնները, այլև այն հանգամանքը, որ նա Ս. Ղազար կղզում սովորել է հայերեն, խորհել, մտորել ու երազել իր սիրած ձիթենիների տակ:

Բայրոնին նվիրված բանաստեղծութիւնն ունի նաև սփյուռքահայ (Ֆրանսիա) բանաստեղծուհի Մառի Աթմաճյանը (1913-1999): Նրա *Յուշերգ՝ լորտ Պայրընին համար* բանաստեղծութիւնն առաջին անգամ տպագրվել է 1963-ին «Բազմավեպում», իսկ այնուհետև, որոշ փոփոխութիւններով, տեղ է գտել 1967-ին Փարիզում լույս տեսած՝ բանաստեղծուհու *Ոսկի գեղօն* ժողովածուում: Վերոհիշյալ բանաստեղծութեան մեջ Ս. Աթմաճյանը մեծ անկեղծությամբ շատ ջերմ ու հիացական տողեր է ձոնել Բայրոնին, մեծարել նրան ու հավաստիացրել բոլորին, որ չկա «ոչ մէկ մատեան հանճարաշունչ», ուր մեծ բանաստեղծի «աստղն հիացիկ՝ ծագած չըլլայ...»: Բանաստեղծուհին, կարծես թե դիմելով իր ժամանակակցին, մեծ սիրով ու հարգանքով բացականչում է.

Չկա ոչ մէկ երազանքի,
Երգի պուրակ՝
Ուր քու ժպիտդ ծաղկած չըլլայ,
Գեղեցկութեան կամ խորհուրդի
Վըսեմ կըրակ՝

³³⁰ Անդ:

Ուր քու սրտիդ խունկն հոտեւան
Այրած չըլլայ.
Պատմական հին կամ նոր չարիք՝
Ուր դատաստանդ՝
Դաշոյնի պէս՝
Փայլատական, շանթած չըլլայ...³³¹

Այնուհետև Ս. Աթմաճյանը հիշեցնում է, որ Ս. Ղազար հայկական վանքում մինչև օրս պահպանվում է Բայրոնի հիշատակը, և ավելացնում, որ ինքը՝ բանաստեղծուհին, նստած Մխիթարյան միաբանության պարտեզում՝ «բայրոնյան» ձիթենիների արծաթափայլ ճյուղերի հովանու տակ, երազում է, խորհում հայերի մեծ բարեկամի՝ անգլիացի բանաստեղծի մասին՝ համակված նրան որոնելու ու գտնելու հույսով.

Մխիթարեան պարտեզին մէջ
Քեզ փնտռելով, կ'երազէի՝
Արծաթափայլ ձիթենիիդ
Ծիւղերուն քով...
.....
Յուզումնալից կը թերթէի
Մեսրոպատառ Հայ Քերականն՝
Ուր դուն ուսար
Նարեկացոյ բարբառն անգոյգ
Ու քու շնչած ժամանակիդ
Վայրկեաններուն մէջ կ'ապրէի՝
Քե՛զ խորհելով...³³²

Բանաստեղծուհին հետևում է նաև Բայրոնի դժվարություններով լի և անհարթ, բայց միաժամանակ հերոսական, ազատատենչ, արդարասեր և անմահություն տանող կյանքի ընթացքին.

Ալպիոնէն մինչեւ Ռալէն,
Վենետիկէն մինչեւ Լեման,
Արկոսթոլի եւ Կորըմթոս,
Ազատատենչ Առաքեալի

³³¹ Ս. Աթմաճեան, *Ոսկի գեղօճ. քերթուածներ, 1960-1967*, Փարիզ, 1967, էջ 93:

³³² Անդ, էջ 93-94:

Եւ հերոսի քայլերդ տենդոտ՝
Կը տանէին քեզ մինչեւ հուսկ
Ձոհաբերո՛ւմ նըւիրական...
Այլ մինչեւ լո՛յս
Եւ դիւթական անմահութիւն...³³³

Բայրոնի կյանքին և ստեղծագործությանն են անդրադարձել նաև խորհրդահայ շատ բանաստեղծներ՝ Սարմենը, Նաիրի Ջարյանը, Հրաչյա Հովհաննիսյանը, Սուրեն Մուրադյանը, Անահիտ Պարսամյանը, Վահագն Կարենցը, Աշոտ Գրաշին և ուրիշներ:

Բայրոն խորագիրն է կրում Հ. Հովհաննիսյանի բանաստեղծությունը, որը գետեղվել է 1964-ին հրատարակված *Ծովի լռությունը* ժողովածուում: Այստեղ նշվում է, որ անգլիացի բանաստեղծը շատ նման է իր իսկ կերտած հերոսներին: Թողնելով լորդի փառքը՝ նա փախել է **«բիրտ մարդկանցից . . . ու բարքերից նանիր»** և հասել օտար վայրեր, ուր նրա շեփորի ձայնի կարիքն էին զգում: Նա, իր իսկ կերտած հերոսների պես, ամենուրեք պայքարել է արդարության և ազատության համար, քանզի, ինչպես իրավացիորեն նկատում է Հ. Հովհաննիսյանը, թե՛ բռնությունը, թե՛ ազատության հանդեպ ունեցած ձգտումն ամենուրեք մեկ է:

Խեղդված հայրենիքիդ վշտից սրտակեղեք,
Դու վրեժի ելար հողում հեղինական,
Քանզի բռնությունը մե՛կ է ամենուրեք,
Մե՛կ է ամենուրեք տենչանքն ազատության³³⁴:

Եվ միանգամայն տրամաբանական ու հասկանալի է Հ. Հովհաննիսյանի այն եզրահանգումը, որ այսօր էլ կրկին Բայրոնի և նրա կերտած հերոսների նման մարդկանց կարիքն են զգում:

Ամենուրեք, որտեղ շղթաներն են խոսում,
Որտեղ արդար ոգին չի ազատվել բանտից³³⁵:

³³³ Անդ, էջ 95:

³³⁴ Հր. Հովհաննիսյան, *Ծովի լռությունը*, Հայպետհրատ, Երևան, 1964, էջ 35:

³³⁵ Անդ, էջ 36:

Ընդհանրապես, հայ բանաստեղծների Բայրոնին ձոնած տողերը հիմնականում արծարծում են նույն ազատասիրական գաղափարները, որոնք հատուկ էին անգլիացի բանաստեղծին: Ընդհանրացնելով և ամփոփելով այդ ներբողներում տեղ գտած գաղափարները՝ ժամանակակից հայ բանաստեղծների խոսքերով իսկ կարող ենք ասել, որ նրանք կերտել են մի մարդու կերպար, որն իր հերոսների նման, «թողած փառքերը չնչին արքայական այն արանց»³³⁶, փախել է «բիրտ մարդկանցից . . . ու բարբերից նամիր», հասել է «իր ավերից հեռու՝ օտար հորիզոններն արևելու»³³⁷, «դարձել է այսքան սուրբ ու սիրելի»³³⁸ և խնդրել հայ եկեղեցական-մտավորականին՝

- Ուզում եմ, ծերուկ, սուրբ Ղազար կղզում
Ինձ սովորեցնեք ձեր քաղցր լեզուն,
Թող որ տարագիր իմ սիրտն ալեկոծ
Սփոփանք գտնի լեզվի մեջ հայոց...³³⁹

Եվ ստանալով համաձայնություն՝

. . . վանականի հետ պոետը մեծ
Մեր մատյանները խնամքով թերթեց,
Կարդաց նա հոգին իմ ժողովրդի,
Տեսավ՝ շատ մոտ է իր վշտոտ սրտին:

Վերջացնելով մեր խոսքը՝ մեկ անգամ ևս նշենք, որ հայ բանաստեղծների Բայրոնին նվիրված բոլոր բանաստեղծություններն էլ գրված են դեպքերի անմիջական մղումով և արժեքավոր են հատկապես իրենց անսահման անկեղծությամբ ու անմիջականությամբ: Եվ դա շատ բնական է, քանի որ բանաստեղծների խոսքերն ուղղված են մի մարդու, որը թե՛ նստած լինելի իր սիրած ձիթենիների տակ, թե՛ աշխատելիս լինելի *Դոն ժուան* կամ *Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը* պոեմների վրա, թե՛ աղմկակից, հոգնեցուցիչ օրերից հետո գրի առնելիս լինելի մտորումներն ու խորհրդածությունները, երբեք չէր մոռանում բանա-

³³⁶ Ա. Պարսամյան, *Օրվա հեքիաթներ*, «Սովետական գրող», Երևան, 1982, էջ 83 (Բայրոնին):

³³⁷ Ն. Ջարյան, *Սպասում եմ քեզ*, «Հայաստան», Երևան, 1968, էջ 7 (Բայրոնին):

³³⁸ Սարմեն, *Բայրոնի արձանի առջև*. «Գրական թերթ», 1967, № 42:

³³⁹ Ա. Մուրադյան, *Կապույտ թռչուն*, «Հայաստան», Երևան, 1976, էջ 140 (*Ջորջ Բայրոն*):

ստեղծի և ազատության մարտիկի իր կյանքի կոչումը՝ հանուն մեծ և ճշմարտացի արվեստի:

§ 3.2. Հայ մամուլը Բայրոնի մասին

Ինչպես արդեն նշել ենք, հայ գրական-հասարակական միտքը Բայրոնին և նրա ստեղծագործություններին անդրադարձել է սկսած դեռևս XIX դարի առաջին կեսից:

Այսպես, 1846-ին «Բազմավեպում» հրատարակված մի հոդվածի³⁴⁰ միջոցով հայ ընթերցողն առաջին անգամ ծանոթանում է Բայրոնի կենսագրությանը, ստեղծագործություններին և Մխիթարյանների հետ ունեցած նրա անձնական ծանոթությանը: Այդ հոդվածում բերված են նաև հատվածներ հայերին վերաբերող նրա նամակներից: Հոդվածագիրը նշում է. «Ինչպես ուրիշ շատ ճանապարհորդներ, ևս առաւել Անգղիացիք որ Վենետիկ քաղաքը կուգան, մասնաւոր եռանդով մը կուգան նաև մեր սուրբ Ղազարու վանքը, որ տեսնեն թէ իրենց քաջ ու առաջին բանաստեղծը ո՛ր տեղ հայերէնի դաս առեր է, ու վարպետը ո՛վ է եղեր»³⁴¹: Փաստորեն, Ս. Ղազարը վաղուց ուխտատեղի է դարձել ոչ միայն հայերի, այլև անգլիացիների համար, որոնք հատուկ այցելել են Ս. Ղազար՝ տեսնելու այն վայրը, որտեղ իրենց հայրենակիցը սովորել է հայերեն: Հոդվածից ընթերցողը տեղեկանում է նաև Բայրոնի՝ հայերին ցույց տված օգնության մասին և քաղում որոշ տեղեկություններ Հունաստանում նրա մահվան վերաբերյալ: Հոդվածը, որն, ըստ մեր ունեցած տվյալների, Մխիթարյան պարբերականներում (և, ընդհանրապես, հայ մամուլում) անգլիացի բանաստեղծի մասին առաջին հրատարակումն է, ծանոթացնում է հայ ընթերցողին Բայրոնին և նրա ստեղծագործությանը:

Այնուհետև, XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին, Ասիայի ու Եվրոպայի տարբեր քաղաքներում լույս տեսնող հայ պարբերական մամուլի էջերում տպագրվում են բազմաթիվ հոդվածներ Բայրոնի մասին: Այդ հոդվածներում, որոնց զգալի մասն ունի նույն՝ *Լորտ Պայրըն* վերնագիրը, թե՛ համառոտ, թե՛ ծավալուն ձևով, արծարծվում են Բայրոնի կենսագրականին և Մխիթարյանների հետ նրա ունեցած առնչու-

³⁴⁰ Տե՛ս *Լորտ Պայրըն* (անստորագիր). «Բազմավեպ», 1846, № 19, էջ 293-297:

³⁴¹ Անդ, էջ 296:

թյուններին վերաբերող հարցեր: Օրինակ, 1867-ին «Ծաղիկ» գրական, հասարակական-քաղաքական հանդեսի (լույս է տեսել 1861-1867-ին Ձմյուռնիայում, Կ. Պոլսում) մի շարք համարներում զետեղվել է Գ. Մսերյանի (1846-1893) հոդվածաշարը³⁴², որտեղից հայ ընթերցողը քաղում է համառոտ տեղեկություններ Բայրոնի կյանքի, գրական գործունեության և Մխիթարյանների հետ նրա ունեցած առնչությունների մասին: Նմանատիպ հոդվածների հանդիպում ենք նաև այլ պարբերականներում՝ Կ. Պոլսում հրատարակվող «Մեղու» շաբաթաթերթում³⁴³, Թիֆլիսում հրատարակվող «Տարազ» պատկերազարդ հանդեսում և «Մշակ» գրական-քաղաքական լրագրում³⁴⁴, նույն «Ծաղիկ» հանդեսում³⁴⁵, Ձմյուռնիայում հրատարակվող «Արևելյան մամուլ» ազգային, գրական-քաղաքական ամսագրում³⁴⁶ և այլուր:

Այստեղ նշենք նաև, որ հայ պարբերական մամուլում, բացի հայ հեղինակների գործերից, տեղ են գտել նաև Բայրոնին, ինչպես նաև նրա և հայերի առնչություններին վերաբերող օտար հեղինակների ստեղծագործություններ: Այսպես, 1866-ին, «Բազմավեպի» հունվարյան համարում լույս է տեսնում է Ա. Լամարթինի Բայրոնին նվիրված *Մարդն. առ լորտ Պայրն* բավականին ընդարձակ բանաստեղծությունը³⁴⁷: Դա ֆրանսիացի ռոմանտիկ բանաստեղծի ծոներգն է անգլիացի ռոմանտիկ բանաստեղծին: Հետագայում, դրանից տասը տարի հետո, 1876-ին, Ս. Գանթարյանի³⁴⁸ թարգմանությամբ Ս. Ղազարում լույս է տեսնում Ա. Լամարթինի բանաստեղծությունների ժողովածուն, որտեղ զետեղվում է

³⁴² Տե՛ս Գր. Մսեր., *Լորտ Պայրն*. «Ծաղիկ», 1867, № 139, էջ 613-615, № 140, էջ 623-624, № 141, էջ 630-631, № 142, էջ 638-639, № 146, էջ 670-671:

³⁴³ Տե՛ս *Լոռտ Պայրն (Քերթող անգղիացի)*. «Մեղու», 1863, 8 հունվարի:

³⁴⁴ Տե՛ս *Բայրոն (կենսագրական)*. «Տարազ», 1891, № 6, էջ 76-77: - Գ. Քոչարյանց, *Հայոց գրականությունը և Շեքսպիրը*. 1895, «Մշակ», 18 մարտի (չնայած հոդվածի վերնագրին, այստեղ ավելի շատ խոսվում է Բայրոնի, քան Շեքսպիրի մասին):

³⁴⁵ Տե՛ս Գ. Յ. Ս. Ա., *Լորտ Պայրն*. «Ծաղիկ», № 7, էջ 76-77:

³⁴⁶ Տե՛ս Ռ. Որբերյան, *Պայրն*. «Արևելյան մամուլ», 1897, № 6, էջ 205-207:

³⁴⁷ Տե՛ս Լամարթին, *Մարդն. առ լորտ Պայրն*, թարգմ. Գ. Սամ. Կայսերեան. «Բազմավեպ», 1866, № 1, էջ 23-30:

³⁴⁸ Գանթարյան, Սամուել (Կայսերյան, 1838-1908), հայ բանասեր, բառարանագիր, թարգմանիչ: Ծնվել է Կ. Պոլսում: Կրթությունն ստացել է Ս. Ղազար վանքում: Պաշտոնավարել է Փարիզի, Վենետիկի և Կ. Պոլսի Մխիթարյան վարժարաններում: Հոդվածներով և թարգմանություններով հանդես է եկել «Բազմավեպում»: Որպես թարգմանիչ ստորագրել է Գ. Սամուել Կայսերյան: Հրատարակել է *Տարերք հռետորական արուեստի* (1875), *Բառարան զարդերեն-հայերեն-Տաճկերեն* (1886), *Բառարան Իտալերեն-հայերեն* (1908) աշխատությունները, ֆրանսերեն է թարգմանել Ղազար Փարպեցու *Պատմություն Հայոց* աշխատությունը, որը հրատարակվել է 1869-ին:

ման վերոհիշյալ բանաստեղծությունը³⁴⁹: Ժողովածուում և «Բազմավե-
պում» հրատարակված տարբերակները հիմնականում համընկնում են,
սակայն կան առանձին հղկումներ ու թարգմանչական ճշգրտումներ:
Այս բանաստեղծությունն ամբողջությամբ հագեցած է Բայրոնին
ուղղված և նրան բնութագրող՝ համակրանքով ու ջերմությամբ լեցուն
հրաշալի տողերով: Այստեղ մեջբերենք ընդամենը մի քանի տող: Այս-
պես, դիմելով Բայրոնին Լամարթինը խորին համոզմունքով հաստա-
տում է.

**Ճարտարապետ մեծ, ընդ վաստակ քոյ բերկրեաց,
Կամ ես ի լրումն իշխանականդ հրամանաց³⁵⁰:**

Կամ խորհուրդ է տալիս նրան.

**Արքա՛յդ անմահ երգոց, ծանիր զանձըն քոյ.
Թո՛ղ զհայիոյանս և զխեթ՝ որդւոց գիշերոյ,
Խոտեալ ըզխունկ պատիր, զոր տան քեզ յերկրի:
Ուր բարին չիք, անտի և փառքն են հեռի³⁵¹:**

Ուստի անվանի գրականագետներ, հայր և որդի Վեսելովսկիների
Բայրոնի և Մխիթարյանների առնչություններին վերաբերող հոդվածնե-
րը, որոնց մենք անդրադարձել ենք սույն աշխատանքի առաջին գլխում,
զետեղվել են Մոսկվայում հրատարակվող «Հանդէս գրականական եւ
պատմական» պարբերագրքում և «Մշակ» լրագրում³⁵²:

Արդեն հիշատակել ենք, որ 1891-1894 թվականներին «Բազմավե-
պը» Գ. Ջարբեհանյանի նախաձեռնությամբ ու թարգմանությամբ իր
ընթերցողներին է ներկայացնում եվրոպական բանասեր Գ. Ա Շրումպֆի
հայոց պատմությանը, լեզվին ու մշակույթին վերաբերող հոդվածաշա-
րը, որը *Les Études Arméniennes en Europe* խորագրով հրատարակվել էր
Լոնդոնի մի բանասիրական հանդեսում: Հոդվածները ներկայացվել են
*Հայկական ուսումն յԱրեւմուտս, Հայ լեզուի ուսումն յԱրեւմուտս, Հայ
լեզուի ուսումն յԵւրոպա և Արեւելագետք յԵւրոպա* խորագրերով: «Բազ-

³⁴⁹ Տե՛ս Ալիփանսու Լամարթին, *Առաջին Մտածութիւնք բանաստեղծականք*, թարգմ.
Հ. Սամուել Կ. Գանթարեան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1876, էջ 8-16:

³⁵⁰ Անդ, էջ 13:

³⁵¹ Անդ, էջ 16:

³⁵² Տե՛ս Յու. Վեսելովսկի, *Բայրոնը Մխիթարեանների մօտ*. «Հանդէս գրականական
եւ պատմական», 1896, գիրք 5, էջ 157-174: - Ա. Վեսելովսկի, *Բայրոնը Ս. Ղազարի կղզում*.
«Մշակ», 1901, 29 օգոստոսի:

մավեայի» 1894-ի վեցերորդ համարում գետեղված *Հայ լեզուի ուսումն յլրենմուտս* հայագիտությանը նվիրված հոդվածում տեղ են գտել նաև հատվածներ Բայրոնի «հայկական» նամակներից: Բացի դրանից, հոդվածում բերվում են տեղեկություններ Սողոմոն Կեսար Մալանի (1812-1895) մասին, որը Բայրոնից հետո զբաղվել է հայոց լեզվի ուսումնասիրությամբ: Ս. Մալանը սովորել է Օքսֆորդում, սանսկրիտ և եբրայերեն լեզուներում առաջադիմություն հանդես բերելու համար արժանացել է մրցանակի, ջնյունիայում մասնակցել է հայոց լեզվի դասընթացներին և, ինչպես ինքն է նշում, շատ է սիրել այդ լեզուն և սքանչացել դրանով³⁵³: Ս. Մալանը մի շարք արժեքավոր աշխատությունների հեղինակ և թարգմանիչ է: Գ. Շրումպֆի վերոհիշյալ հոդվածները հետագայում (1895) Գ. Զարբհանյայանի լրացումներով ամփոփվել և հրատարակվել են առանձին գրքով³⁵⁴:


1911-ին «Բազմավեպում» *Գիրքեր ու թերթեր* խորագրի տակ ներկայացվում է «Բայրոն, Ծովահենը, թարգմ. բնագրից Յ. Զ. Միրզայեան»³⁵⁵, տպ. Փարոս, Թեհրան 1911» գիրքը: Խոսելով թարգմանչի կատարած աշխատանքի մասին՝ գրախոսը նշում է. «Գեղեցիկ թարգմանութիւն մըն է Միրզայեանցի ծովահենը: Լեզու մը և չափ մ'ունի որ կը սահին. և աղէկ կը թարգմանեն Բայրոնի կտորուկ, կրքոտ, կրակոտ ոգին», իսկ ապա ավելացնում՝ «Յաջողութեան նպաստած է նաև Ռուսահայոց լեզուն. համառօտ, ճիշդ, պարզ՝ բոլորովին յստակ կը թողու տեսնել Բայրոնի միտքերը»³⁵⁶: Գրախոսականում բերված են նաև հատվածներ *Ծովահենը* պոեմի առաջին (11-րդ տնից), երկրորդ (12-րդ տնից) և երրորդ (վերջին՝ 24-րդ տնից) նվազներից: Կատարելով այդ մեջբերումները՝ գրախոսը եզրակացնում է. «Միրզայեանց դժուար գործ

³⁵³ Տե՛ս *Հայ լեզուի ուսումն յլրենմուտս*. «Բազմավեպ», 1894, № 6, էջ 253:

³⁵⁴ Տե՛ս Գ. Շրումպֆ, *Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յլրենմուտս (ԺԴ-ԺԹ դար)*, թարգմ. և լրաց. Գ. Զարբհանյանի, Վենետիկ, Միսիթերան տպարան, 1895:

³⁵⁵ Միրզայան (Միրզայանց), Հովսեփ (1866-1935), թարգմանիչ, պետական գրծիչ: Ծնվել է Համադանում (Իրան), կրթությունը ստացել է Նոր Զուղայի հայկական դպրոցում և Թեհրանում: Տիրապետել է հայերենին, ֆրանսերենին, պարսկերենին և անգլերենին: Վարել է պետական պաշտոններ, բազմիցս ընտրվել է Իրանի մեջլիսի պատգամավոր (1910, 1915, 1923): Պետական գործունեությանը զուգընթաց՝ զբաղվել է գրական, թարգմանական աշխատանքով: Հանդես է եկել ոչ միայն Բայրոնի (*Ծովահենը*, *Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը*), այլև Լոնգֆելլոյի, Վալտեր Սկոտի, Օմար Խայյամի, Սաադիի և ուրիշների ստեղծագործությունների թարգմանությամբ:

³⁵⁶ «Բազմավեպ», 1911, № 6, էջ 284:



1911-ին Թեհրանում տպագրված **Տոլափենի** տիտղոսաթերթը
The title-page of *Corsair* published in Teheran in 1911

մը յաջողութեամբ կատարած է»³⁵⁷։ Ցավոք, գրախոսականի հեղինակը չի նշվում, և նրա մասին մենք ոչինչ ասել չենք կարող։

Բայրոնի՝ Մխիթարյանների հետ ունեցած առնչությունների մասին հավաստի տեղեկություններ են պարունակվում նաև առանձին ժողովածուներում տեղ գտած հոդվածներում։ Օրինակ, պոլսահայ գրող և հրապարակախոս Արամ Անտոնյանի (1881-1952) կազմած *Գանձարան* խորագրով հայ գրականության բարձրագույն ուսումնական ձեռնարկում զետեղվել է նաև բժշկ Յովսեփ Տեր-Ստեփանյանի հոդվածը³⁵⁸, որտեղ հեղինակն ընթերցողին հաղորդում է համառոտ տեղեկություններ Բայրոնի Ս. Ղազար կղզում անցկացրած օրերի մասին։

Բայրոնի կյանքի և գրական ժառանգության նկատմամբ արևմտահայության հետաքրքրությունը հատկապես մեծանում է, երբ նշվում է բանաստեղծի մահվան 100-ամյակը։ 1924-ի «Բազմավեպի» չորրորդ համարն ամբողջովին նվիրված է Բայրոնին, ընդ որում, նյութերի գերակշիռ մասը երկու լեզվով է՝ հայերեն և անգլերեն։ Հանդեսի խմբագրականում կարդում ենք. «Եթե Անգղիա - իր մէջ երբեմն սնուցած անմեղադիր հակառակութեամբն հանդերձ - իրաւամբ միշտ կը պարծի այդպիսի Հանճարի մը ծնունդ տուած ըլլալուն. եթէ Հոմերոսներու երկիրը հպարտ կը զգայ ինքզինքը՝ Պայրոնի կորովը վայելելուն եւ հոսկ անոր գերեզմանն ըլլալուն, Ս. Ղազար պիտի պարծի յաւետ իր մայրենի բարբառը անոր աւանդելուն եւ անկէ ունեցած թանկագին յուշերն իր ծոցին մէջ յաւերժացնելուն համար»³⁵⁹։

Նույն համարում *Լորտ Պայրոն ի Ս. Ղազար* ընդարձակ հոդվածով հանդես է եկել նաև «Բազմավեպի» խմբագիր Ղևոնդ Տայանը, որտեղ նշում է, որ Ս. Ղազարն ուխտավայր է դարձել ոչ միայն հայ զբոսաշրջիկների, այլև անգլիացիների և մյուս օտարերկրացիների համար. «Եթե Հայութեան համար զանազան տեսակէտներով ուխտատեղի մ'է ան, պահարա՛ն մ'է թանկագին նշխարներու և ազգային գանձուց, Անգլիացւոյն և անգլիախօս ազգերուն՝ իրաւամբ ուխտավայր մ'է, Ս. Ղազարո՛ւ մէջ ըլլալով Պայրոնի ամենէն աւելի ցայտուն ու խօսուն յիշատակը։ Ոչ միայն անգլիախօսին, այլ ամէն օտարալեզու անձի համար կարծես անխուսափելի բնածին պարտք մ'է այն, պահի՛կ մը նուի-

³⁵⁷ Անդ, էջ 285։

³⁵⁸ Տոքթ. Յովս. Տեր-Ստեփանեան, *Լորտ Պայրոն Վենետիկի մէջ*, «Արամ Անտոնեան, Գանձարան (բարձրագոյն դասընթաց)», Կ. Պոլիս, Գըլըճեան գրատուն, 1912» գրքում, էջ 364-367։

³⁵⁹ Պսակ մը Պայրոնի շիրմին (ստորագրված է՝ խմբագր. «Բազմավեպ»-ի). «Բազմավեպ», 1924, № 4, էջ 105։

րելու մտածումի և խորհրդածութեան՝ Պայրընեան յուշերու շուրջ»³⁶⁰։ Զոդվածում տեղ են գտել նաև անգլիացի մատենագիր Ջ. Մաքբեյի խոսքերը. «Եթե ամբողջ Եւրոպայի մէջ կայ տեղ մը՝ ուր, յետ Լոնտոնի և Միսսոլունկիի, պէտք է Պայրընի արծանը կանգնել՝ այդ վայրը Վենետիկ է։ Վենետիկը ամէն կողմը կրնայ ըլլալ, Լիտոյ, Զասարակաց Պարտզը կամ Ս. Ղազարու կղզին։ Բայց եթէ վենետիկեցիք անտարբեր են արծանին տեղւոյն համար, թող Զայե՛րը կանգնեն զայն՝ Աստուծոյ անուանը»³⁶¹։ Զոդվածում խոսվում է Բայրոնի հայերով հետաքրքրվելու, հայերեն սովորելու մասին, բերվում են բազմաթիվ մեջբերումներ Զ. Ավգերյանի *Ինքնապատում օրագրութիւնից*, նշվում է, որ Բայրոնի հայերեն ուսումնառությամբ հետաքրքրվել է նաև իտալացի լեզվաբան Ջ. Մեցցոֆանտին³⁶²։ Վերջին փաստը հիմնավորելու համար Ղ. Տայանը մեջբերում է Եղիազար Տյուզյանի խոսքերը. «Յաւուր երեքշաբթի չուեալ անտի [ի Ֆեռռառայէ] ելի ի Պոլոնիա և... ընդ սմա [առ որ առաքեցայն] վաղվադակի գմացի առ փռօֆեսսօռ Մեծօ Ֆանդէ, որ անդէն ընդ տեսանելն սկսաւ խօսել տաճկերէն և հարցանել զողջունէ վանացս... Իսկ յերկրորդուն և յերրորդուն այցելութիւնս ստեպ հարցանէր, եթէ զո՞ն գրեանք աշխարհաբար լեզուի տպագրեալք և նոր քերականութիւն, և յասել իմուն այո՛, կարի իղծ եցոյց ստանալոյ զքանի մի ի նոցանէ առ ի ուսանել և զայն որ ինձ մեծապէս սիրելի է ասէ. եհարց և վասն Լօռտ Պայրընի՞ն՝ եթէ զիա՛րդ ուսաւ զհայկականն, և ես պատմեցի ըստ կարգի վասն նորա և վասն միւս աշակերտին, վասն անգղիական քերականութեանցն և վասն նորաշէն անգղիական բառարանին... ընդ որս ուրախացեալ մեծապէս՝ փութով նշանակեաց ի վերայ թղթի. և յասել իմուն՝ գրեցից զի առաքեսցեն, ոչ՝ ասէ, ես ունիմ գրել առանձինն, միայն դու գրեսցես վասն աշխարհաբար գրոց և վճարեցից զգինն»³⁶³։

Ղ. Տայանի հոդվածում մանրամասնորեն նկարագրվում է Բայրոնի Ս. Ղազար այցի դրվագը՝ նշելով թե ինչպես «Վենետիկ հասնելէն քիչ օր վերջ, ամպոտ օր մը, իրիկուան մօտ, կոնտոլա կը մտնէ այցելելու արևելաշունչ այդ կղզին Ս. Ղազար»³⁶⁴։ Բայրոնը ծանոթանում է Զ. Զարոբյուն Ավգերյանի հետ, որի մասին հետագայում բազմաթիվ դրվատանքի խոսքեր է գրում իր նամակներում։ Ամեն օր, երկու ժամ

³⁶⁰ Զ. Ղեւոնդ Տայեան, *Լորտ Պայրըն ի Ս. Ղազար*. «Բազմավէպ», 1924, № 4, էջ 133։

³⁶¹ Անդ։

³⁶² Մեցցոֆանտի, Ջուզեպպե (1774-1849), կարդինալ (1838), Բոլոնիայի համալսարանի պրոֆեսոր, լեզվաբան, պոլիգլոտ։ Խոսել է ավելի քան հիստոն լեզվով։ Բայրոնը նրան անվանել է «լեզուների հրեշ»։

³⁶³ Զ. Ղեւոնդ Տայեան, *Լորտ Պայրըն ի Ս. Ղազար*, էջ 138։

³⁶⁴ Անդ, էջ 134։

հյուրընկալվելուց հետո, հրաժեշտ է տալիս նրանց՝ կրկին վերադառնալու ակնկալիքով և խոստումով: Հոգվածուն իրար են հաջորդում Բայրոնի Ս. Ղազարուն անցկացրած օրերը: Հոգվածի միջոցով մենք ծանոթանում ենք Հ. Ավգերյանի *Ինքնապատում օրագրության* հատվածներին, Բայրոնի նամակների՝ հայերին վերաբերող հատվածներին, Թ. Մուրի կողմից դրանց տրված ծանոթագրություններին, Մխիթարյանների կողմից միմյանց հղված նամակներին, վավերագրություններին, որոնք տալիս են Բայրոնի «հայկական» շրջանի նկարագիրը և պատկերը:

Ղ. Տայանի հոգվածին անմիջապես հաջորդում է Բայրոնի կենսագրության վերաբերյալ մի հոգված՝ Հ. Դ. Ս. ստորագրությամբ³⁶⁵: Հոգվածագիրը համառոտակի անդրադառնում է Բայրոնի կենսագրության առանձին դրվագներին, նրա հայերեն սովորելուն, քաղաքական հայացքներին, ստեղծագործությանը, անհավասարակշիռ բնավորությանը, գտնելով, որ «Պայրըն մեծ հանճար մ'եղաւ, այլ անկանոն երևակայութիւն: Իւր տողերը սեղմ, կտրուկ և վառվռուն՝ յաճախ յուսահատական երկբայութիւն մը կը յայտնեն. փոխանցական մաղծոտութիւն մը և հիացումն ոճիրներու»³⁶⁶: Ըստ հոգվածագրի, Բայրոնի գլուխ-գործոցի գլխավոր հերոս Դոն Ժուանը հանդիսանում է «անձնաւորութիւն լուրջ և խեղկատակ միանգամայն, հիասքանչ և լկտի, դիւցազն և ծաղրածու, վառ, յանդուգն և փոփոխական՝ հեղինակին նման»³⁶⁷:

Հայ գրականագետ և արվեստաբան Արամ Երեմյանի (1898-1972) բնութագրմամբ՝ «երկար տարիներ իր մանրակրկիտ, բարեխիղճ, քրտնաջան եւ լուրջ ուսումնասիրութիւններով եւ հետազօտութիւններով» «հայագիտութեանը» «թանկագին ծառայութիւն» մատուցած, «հայ գիտական բանասիրութեան, մատենագրութեան եւ գեղարուեստական գրականութեան զանձարանը» հարստացրած³⁶⁸ Եղիա Փեչիկյանը 1924-ին «Բազմավեպուն» հրատարակած *Լորտ Պայրըն Հայոց մէջ* հոգվածուն բերում է հատվածներ *Հայերեն-անգլերեն քերականության* ձեռնարկի համար Բայրոնի գրած առաջաբանից և հայերին վերաբերող նամակներից: Հոգվածագիրը նշում է, որ «Այս ամենն էլ հետևի որ Լորտ Պայրըն կատարելապես հայկական հողի և շրջանակի մէջ կ'ապրէր. շատ սիրելի էին անոր՝ յետ իրեն հայերնի երկրին՝ հայ ազգը, անոր փառքերը, լեզուն... Նոյն իսկ դարաւոր տառապանքները. և այս

³⁶⁵ Տե՛ս Հ. Դ. Ս., *Համառօտ կենսագրական գիծեր Լորտ Պայրընի*. «Բազմավեպ», 1924, № 4, էջ 147-149:

³⁶⁶ Ամդ, էջ 149:

³⁶⁷ Ամդ:

³⁶⁸ «Բազմավեպ», 1964, № 1-3, էջ 96:

հայկական դերը կամ շրջանը Լորտ Պայրընի բանաստեղծութեան և կեանքին պատմութեան դրուագներէն անբաժան պիտի մնայ»³⁶⁹։ Հոգվածուն խոսվում է նաև Բայրոնի և Ալիշանի մասին, զուգահեռներ անցկացվում նրանց ստեղծագործական գործունեության միջև և նշվում առկա զուգադիպությունները. «Հոս սակայն շարք մ'ունինք գեղեցիկ զուգադիպութեանց կամ զուգակշռի եզրներու երկու հանճարներու միջև որոնք նոյն դարու արեգակներ են։ Նախ անոնց դիրքը նոյն դարուն մէջ. երկուքն ալ գերահռչակ հանճարներ. յետոյ անոնց փոխադարձ պանդխտութիւնը. թո՛ղ խօսի ինքն Ալիշան. «(ի Վենետիկ) յորում և մասն ինչ երգոցս (Իտալիա) յօրինեալ է ի բանաստեղծէն և ԳԼԽՈՎԻՆ ի կղզւոջ մենաստանի՝ որում նա յաճախ այց ելանէր՝ մինչդեռ պանդխտ իւր (Հարոլդ ասպետ – Childe Harold) թափառէր տակաւին յաներևոյթ հրապարակս մտաց իւրոց այս ամենայն... մերս իսկ նժդեհութիւն (Հ. Ալիշան ինքնին կ'ակնարկէ նմանութիւնը) ի հայրենիս անդր քերթողին»։ Ուրեմն ինչ որ Լորտ Պայրըն պանդխտութեամբ ի Վենետիկ, Ս. Ղազարու մէջ կը շարադրէր, նոյնը Հ. Ալիշան յԱնգղիա, ի Լոնտրա իր պանդխտութեան մէջ կը հայացներ»³⁷⁰, - գրում է Ե. Փեչիկյանը։

Հոգվածագիրը նշում է նաև հաջորդ զուգադիպությունը, դա «նոյն մեծ քերթողներու փոխադարձ հայ և անգղիերէն լեզուները սորվիլն է և երկուքին ալ փոխադարձ դժուարութիւնը. Հ. Ալիշան կ'ըսէ. «Ի հայրենիս անդ քերթողին... զտաղտուկ օտարութեանս այսպիսեալ իմն կամեցայ սփոփել կամ տանջել ոչ դիւրաթափ թարգմանութեամբ»³⁷¹։ Ալիշանը նույնպէս տեսնում է զուգադիպություն այստեղ. «այնպիսի իմն հնարս հնարեալ և հեղինակին երբեմն արկանէր զանձն ի փորձ և ի տոյժ ուսանել զմերս հայերէն դժուարագիւտ բարբառ ի մերում իսկ դրան վանաց»³⁷²։ Բայրոնը նույնպէս նկատում է հայոց լեզվի դժվարությունները. «...«Դժուարին թուի ինձ լեզուն... թալտ և ոչ անյադթելի... յառաջ դիմեցից»։ և այլուր «ի զբօսանս անձին ուսանիմ զՀայոց լեզու ի մենաստանիս Հայոց... և զի տեսանեմ քաջ թէ դժուարածեմարկելի ինչ պիտոյ է մտացս՝ յոր խորտակեսցի. և զի աստանօր դժուարագոյնն է սա ի զբօսանս, ընտրեցի *խոշտանգել* զիս յայն պարապելով»³⁷³։ Այնուհետև Ե. Փեչիկյանը գրում է Բայրոնի ստեղծագործությունների հայերէն թարգմանությունների մասին՝ հիշատակելով ոչ միայն Ղ. Ալիշանի կա-

³⁶⁹ Հ. Եղիա Փեչիկեան, *Լորտ Պայրըն հայոց մէջ*. «Բազմավէպ», 1924, № 4, էջ 158:

³⁷⁰ Տե՛ս անդ, էջ 158-159:

³⁷¹ Անդ, էջ 159:

³⁷² Անդ:

³⁷³ Անդ:

տարած թարգմանությունները, այլև «Արեգուն» տպագրված *Մանֆրեդը*, *Հովի*. Թումանյանի թարգմանությամբ Թիֆլիսում լույս տեսած *Շիլլոնի կալանավորը* և Կ. Պոլսում հրատարակված *Երկինք ու երկիր* պոեմը: Հոդվածի վերջում, տալով Բայրոնի քնարերգության ընդհանուր բնութագիրը, Եղիա Փեչկյանը գրում է. «...անկեղծութիւն և զգացման պայծառ արտայայտութիւն. մտածութիւն խոր ու վեհ. իրականութիւն կենդանի և չքնաղ. կրօնք՝ միշտ վեր ու բարձր. երանի՝ թէ հայ քերթողն ալ այս ձիրքերով օժտուէր»³⁷⁴:

«Բազմավեպի» սույն համարում զետեղված հաջորդ հոդվածի (անգլերեն)³⁷⁵, որն անստորագիր է, բնաբան է ընտրված Նապոլեոն I-ի մասին հետաքրքիր հիշողությունների հեղինակ, ֆրանսիացի գրող Կոմսուհի դը Ռենյուլզայի (1780-1821) հետևյալ խոսքերը. «...Նրա վերջին օրերի գեղեցկությունը և տխրությունը քավեցին շատ մեղքեր»: Այս խոսքերը, կարծես թե, իրոք վերաբերում են Բայրոնին, քանի որ, ինչպես շեշտում է հոդվածագիրը, բանաստեղծի կայացրած վճռի մի մասն էր կազմում այն երազանքը, որպեսզի Հունաստանում գեղեցիկ վախճանով կարողանար քավել իր մեղքերը: Միսոլոնգիում նա հետադարձ հայացք է նետում թախծոտ անցյալի վրա, վերհիշում իր կյանքի ընթացքում թույլ տված բոլոր չարաշահումները, որոնք դեռևս վաղ հասակում հյուծել էին նրա այրվող մարմինը: Միսոլոնգիում, նշելով իր ծննդյան 36-րդ տարեդարձը, Բայրոնը գրում իր վերջին բանաստեղծությունը, որտեղ, հրաժեշտ տալով երիտասարդությանն ու կյանքին, չի ցանկանում որևէ այլ բան, բացի զինվորի գերեզմանից: Այնուհետև հոդվածում մանրամասնորեն նկարագրվում է բանաստեղծի տեղատարափ անձրևի տակ ընկնելը, հիվանդանալը, կյանքի վերջին ռոպեները և մահը: «Բայրոնի մահը Հունաստանի համար ազգային դժբախտություն էր: Միսոլոնգցիների համար այդ դեպքը գրեթե անհավատալի էր»³⁷⁶, - գրում է հոդվածագիրը և անդրադառնում այն փաստին, որ այդ կապակցությամբ Հունաստանում հայտարարվել է 21-օրյա սուգ, զատկի հանդեսները հետաձգվել են, երեք օրով փակվել են խանութները և բոլոր պետական հիմնարկները, տրվել են 37 (բանաստեղծի տարիքին համապատասխանող թվով) հրետանային համազարկ: Սգո արարողություններ են տեղի ունեցել ոչ միայն Միսոլոնգիում, այլև Հունաստանի շատ բնակավայրերում: Հոդվածագիրն անդրադարձել է նաև Բայրոնի ուսման տարիներին, նրա առաջին ստեղծագործություն-

³⁷⁴ Անդ, էջ 160:

³⁷⁵ Տե՛ս *Anniversary* (անստորագիր). «Բազմավեպ», 1924, № 4, էջ 149-156:

³⁷⁶ Անդ, էջ 150:

ներին, ճանապարհորդություններին, ամուսնությանը և ապահարզանին:

«Բազմավեպի» 1924-ի հինգերորդ համարում տպագրված խմբագրական հոդվածում³⁷⁷ թվարկվում են այն միջոցառումները, որոնք իրականացվել են «Անգղիոյ հռչակաւոր Քերթողին յիշատակին՝ զանազան երկիրներու մէջ՝ յանուն մարդկային ընկերութեան, որ անոր մէջ գտած էր զմայլանքի, փայփայանքի առարկայ դարձող լուսաշող ակունք մը, մարդկութեան փառքն ու զարդը կազմող անգին մարգարիտ մը»³⁷⁸: Այստեղ հիմնական ուշադրություն է դարձվում Հունաստանում և Անգլիայում անցկացված միջոցառումներին: Անգլիայում նախատեսված միջոցառումներին մասնակցելու համար Անգլիայի պաշտոնական մարմիններից հրավեր են ստանում նաև Միֆթարյանները: Նրանք «Բազմավեպի» ապրիլյան բացառիկ համարը ամբողջությամբ նվիրել էին «Պայրընի յիշատակին, որ լոյս ընծայուեցաւ Հայ և Անգղիերէն խիստ շահեկան յօդուածներով», և այդ միջոցառումներից «առաջ արդէն տարածուած էր ան Լոնտոնի մէջ, ու բաշխուած էր զանազան բարձրաստիճան անձնաւորութեանց. ղրկուեցաւ նաև օտար կառավարութեանց մօտ եղող անգղիական բոլոր դեսպաններուն և դիւանագիտական ներկայացուցիչներուն, ինչպէս նաև Լոնտրայի մէկ քանի գլխաւոր թերթերուն»³⁷⁹:

Բայրոնի մահվան հարյուրամյակի կապակցությամբ հոդվածներ են լույս տեսնում նաև այլ պարբերականներում, ինչպես, օրինակ, Կ. Պոլսի «Ճակատամարտ» օրաթերթում³⁸⁰, Վիեննայում հրատարակվող «Արեգ» ամսագրում³⁸¹ և Թեոդիկի տարեցույցում³⁸²:

1932-ին «Բազմավեպում» լույս է տեսնում Ռուբեն Որբերյանի ծավալուն ուսումնասիրությունը Բայրոնի մասին³⁸³: Այդ ուսումնասիրության մեջ հայ բանաստեղծը տալիս է մանրամասն տեղեկություններ Բայրոնի կենսագրության և ստեղծագործությունների մասին՝ նկարա-

³⁷⁷ Տես *Արծազանգներ Պայրընեան յորելեանէն*. «Բազմավեպ», 1924, № 5, էջ 186-188:

³⁷⁸ Անդ, էջ 186:

³⁷⁹ Անդ, էջ 187:

³⁸⁰ Տես Յ. Մարթայեան, *Լորտ Պայրըն (մահուան հարիւրամեակին առթիւ)*. «Ճակատամարտ», 1924, 30 ապրիլի:

³⁸¹ Տես Ս. Արեւեան, *Բայրըն (Մահուան հարիւրամեակի առիթով)*. «Արեգ», 1924, № 10, էջ 596-601:

³⁸² Տես *Լորտ Պայրըն եւ իր մահուան դարադարձը (1824-1924)*, Թեոդիկ, *Ամենուն տարեցույցը*, Վիեննա, 1925, էջ 319-325:

³⁸³ Տես Ռ. Որբերեան, *Լորտ Պայրըն (ի Ս. Ղազար)*. «Բազմավեպ», 1932, № 3, էջ 117-125, № 4, էջ 178-182, № 5, էջ 225-231, № 6-7, էջ 266-272, № 8-9, էջ 374-379:

գրելով նրա ճանապարհորդությունները դեպի Արևելք, ամուսնությունը, բաժանումը կնոջից և դուստրից, ժամանումը Շվեյցարիա և Իտալիա, հանդիպումը Մխիթարյանների հետ և այլն: Մխիթարյանների հետ առաջին հանդիպումը Ռ. Որբերյանը նկարագրում է հետևյալ կերպ.

«Ամբուն գիշերե՛ մը վերջ՝ արշալոյսին առաջին շողերուն տակ նաւակն այդ կղզեակին առջեւէն կ'անցներ, երբ Պայրըն հետաքրքրութեամբ հարցուց կոնտուլավարին, Թիթայի, թէ ո՞ր ընտանեաց կը պատկանէր ան:

- Միլորտ, պատասխանեց, այս կղզին հայերուն մենաստանն է, Ս. Ղազար:

- Ձիս հոս ծգէ ու գնա...

...Վայրկեան մը վերջ Պայրըն կղզեակին ափէն կը դիտէր իր կոնտուլին սրընթաց անհետիլը ուրիշ կղզեակներու ետին: Իրմէ քիչ անդին, ապառաժին մէջ փորուած խորշին՝ կապարով ծուլուած Ս. Կոյսին փոքրիկ դէմք մը կ'երեւէր՝ երեսը ծովուն դարձուցած: Պայրըն խորհուրդներու մէջ սուգուած՝ ծովուն անհունութիւնը կը դիտէր, երբ մարդկային ձայն մը լսեց և իր մօտ տեսաւ պատկառելի դէմքով մէկը, ճաղատ գլխով և լայն ու գորշագոյն մօրուքով վանական մը: Քիչ մը հեռուն պատին մէջ բացուած դուռ մը ցոյց կու տար թէ անճանօթը ուսկի՛ց եկած էր:

- Ի՞նչ կ'ուզես, որդեակ, հարցուց վանականը քաղցրութեամբ:

- Ձեր պատերուն ու դաշտին խաղաղութիւնը զիս իրենց քաշեցին, հայր, պատասխանեց: Ձեր թոյլտուութեամբ կ'ուզեմ քիչ մը հանգչիլ այստեղ»³⁸⁴:

Ինչպէս տեսնում ենք Բայրոնի առաջին այցելությունը Ս. Ղազար Ռ. Որբերյանը նկարագրում է ավելի շուտ գեղարվեստորեն՝ տալով այդ այցին ռոմանտիկ բնույթ, քան հենվելով ռեալ փաստերի վրա: Շատ հետազոտողներ հաստատում են, որ Բայրոնն առաջին անգամ Ս. Ղազար այցելել է Հոբհաուզի հետ միասին՝ այն էլ երեկոյան կողմ և ոչ թե առավոտյան, իսկ մակույկավարն էլ բնավ Տիտան չի եղել: Բացի դրանից, չնայած Ռ. Որբերյանի ուսումնասիրության բոլոր արժանիքներին՝ որպէս հայերեն առաջին ծավալուն հետազոտություն Բայրոնի կյանքի և ստեղծագործության մասին, այն, ցավոք, զերծ չէ որոշ անճշտություններից ու թերություններից: Ռ. Որբերյանը գրում է.

«...Վեներիկի վանքը մտնելէն առաջ երկիցս Թերեզա Կամպա անուն եօթնեւտասնամեայ գեղուհին եղաւ, Գարպոնարիներու մէկ

³⁸⁴ Անդ, էջ 229:

պետին ազնուական աղջիկը, որ զգայուն, զարգացած և վառ երեւակայութեամբ Չայլտ Զարուտի առաջին երկու երգերը և Չիլիոնի կալանաւորը կարդացեր ու հիացեր էր բանաստեղծին վրայ: Դժբախտաբար, Թերեզայի հայրը քաղաքական դիտումներով անոր ձեռքը Կիչիոլի կոմսին խոստացած էր, որ մեծահարուստ էր, սակայն վաթսունամեայ»³⁸⁵:

Իսկ այժմ տեսնենք թե ինչ է ասում ինքը՝ Բայրոնը, Թերեզայի հետ ծանոթանալու մասին. «Ահա արդեն մեկ ամիս է, որ ես սիրահարվել եմ մի ռոմանական կոմսուհու՝ Ռավեննայից, - գրում է Բայրոնը 1819-ի ապրիլի 24-ին Դուգլաս Քլեյերդին ուղղված նամակում, - որին մեկ տարի առաջ ամուսնացրել են կոմս Գվիչիոլիի հետ: Նա վաթսուն տարեկան է, իսկ աղջիկը՝ քսան»³⁸⁶: Այդ մասին Բայրոնը հիշատակում է նաև 1819-ի հուլիսի 26-ին Ավգուստա Լիին հղած նամակում³⁸⁷: Այնպես որ, երբ Բայրոնը ծանոթացել է Թերեզայի հետ, նա արդեն ամուսնացած է եղել կոմս Գվիչիոլիի հետ մոտ մեկ տարի և ոչ թե «Թերեզայի հայրը քաղաքական դիտումներով անոր ձեռքը Կիչիոլի կոմսին խոստացած էր»:

Բացի դրանից, ըստ Ռ. Որբերյանի, «Վենետիկի մէջ սովորութիւն էր այն ատեն որ ազնուական դասակարգէն նոր ամուսնացած ամուներ, պսակէն քանի մը օր վերջ, ուխտի կ'երթային Զայոց վանքը...»³⁸⁸: Այստեղ անհրաժեշտ է նշել, որ մեզ ոչ մի սկզբնաղբյուրից չի հաջողվել պարզել սույն սովորույթի իսկությունը: Մեր կարծիքով դա անհավանական է, և այդ վարկածը մեծ կասկած է հարուցում:

Այնուհետև Ռ. Որբերյանը գրում է, որ «Պայրըն վանքին մէջ մնաց: Ժամանակին արբահայրը, հայր Սոմալեան և հայր Յարութիւն Ազեր բաւական ընդարձակ սրահ մը յատկացուցին իրեն... Տասնեակ մը օրեր մնալէ վերջ...»³⁸⁹: Իսկ ահա թե ինչ է գրում Բայրոնի հայոց լեզվի ուսուցիչ Զարություն Ավգերյանը այդ մասին. «Lord Byron ... եկեալ ի տեսութիւն վանացս՝ խնդրեաց ուսանել ի նմանէ զՀայկական բարբառ. և կամէր ևս բնակել ի վանս: Բայց քանզի ոչ ոք ի Սիաբանից ճանաչէր զնա ցայնժամ, ասացաւ նմա գալ ի Վենետիկոյ զօր ամենայն, և այնպէս ուսանել: Եւ նա սկսաւ գալ աւուրս յիսուն, և ուսանէր ժամս երկուս կամ

³⁸⁵ Անդ, էջ 230:

³⁸⁶ *The Letters of George Gordon, 6th Lord Byron*, Selected by R. G. Howarth, M. A., published in London & Toronto by J. M. Dent and Sons Limited • and in New York by E. P. Dutton & Co. Inc., 1933, p. 244.

³⁸⁷ Տե՛ս *The Selected Letters of Lord Byron*, Edited with an Introduction by Jacques Barzun, Farrar, Straus and Young, Inc., New York, 1953.

³⁸⁸ Ռ. Որբերեան, *Լորտ Պայրըն (ի Ս. Ղազար)*, էջ 266:

³⁸⁹ Անդ, էջ 231:

երիս...»³⁹⁰։ Այնպես որ Բայրոնի վանքում բնակվելու վարկածը նույնպես հերքվում է։

Յավոք, Ռ. Որբերյանի թույլ տված սխալները հայ գրականագետները հետազայում չեն ուղղել, իսկ երբեմն էլ Բայրոնի մասին հայ մամուլում զետեղված հոդվածներում տեղ են գտել էլ ավելի կոպիտ վրիպումներ ու անճշտություններ, որոնց մենք կանդրադառնանք հետագայում։

«Բազմավեպից» տեղեկանում ենք նաև, որ Անգլիայի «Բայրոնյան ընկերությունից» վանք են այցելում բազմաթիվ մտավորականներ։ «Անոնք կու գային ուխտաւորի մեծ յարգանքով Յայոց կղզին՝ ուր աւելի քան դար մը առաջ ապրած էր ու խորհած իրենց ցեղի հանճարեղ մէկ զաւակը, անցեալ դարու մեծագոյն քերթողներէն մին՝ Լորտ Պայրըն, և ուր ոչ միայն Արեւելքի հինաւորց քաղաքակրթութեան մը ջահը կը տեսնէր բոցավառ, այլ և սիրած ու սորված էր Յայ դասական լեզուն»³⁹¹, - գրում է «Բազմավեպը»։ Այցելուներին առաջնորդում են դեպի գրատուն, ձեռագրատուն, թանգարան, կանգ են առնում Բայրոնի սենյակում, որտեղ բանաստեղծը խոսել է հայ հայրերի հետ, ուսումնասիրել հայոց լեզուն, ցուցադրում են բանաստեղծի իրերը։ Այնուհետև այցելուներին ուղեկցում են տպարան, ինչպես նաև ցույց են տալիս «Բայրոնյան» ձիթենիները, որոնցից ուխտավորները մեկ ճյուղ պոկում և տանում են որպես հիշատակ։

XX դարի կեսերին Բայրոնի և նրա ստեղծագործությունների մասին բազմաթիվ հրապարակումների ենք հանդիպում նաև խորհրդահայ մամուլում, ընդ որում, դրանց գերակշիռ մասը վերաբերում է Բայրոնի Մխիթարյանների հետ ունեցած առնչություններին, ինչպես նաև Յայաստանի, հայերի և հայ մշակույթի մասին նրա տված գնահատականներին։ Դրանցից առաջին հերթին արժե առանձնացնել գրականագետ Էլիզ Պետրոսյանի հետազոտությունը³⁹², որը, կարելի է ասել, խորհրդային ժամանակաշրջանում առաջին լուրջ ուսումնասիրությունն է վերոհիշյալ բնագավառում, և հայ անվանի գրող ու թարգմանիչ Խաչիկ Դաշտենցի (1910-1974) աշխատությունը³⁹³, որը բաղկացած է հանրամատչելի ձևով շարադրված քսան փոքրիկ գլխից։

³⁹⁰ Տես Զ. Ղեւոնդ Տայեան, *Լորտ Պայրըն ի Ս. Ղազար*, էջ 135-136։

³⁹¹ *Պայրոնի յիշատակը փառաւորում* (ստորագրված է՝ Խմբ.)։ «Բազմավեպ», 1937, № 2-5, էջ 128։

³⁹² Տես Է. Պետրոսյան, *Բայրոնը և հայ կուլտուրան (Բայրոնի հայկական ուսումնասիրությունները)*։ «Տեղեկագիր ՀՍՄՀ ԳԱ հասարակական գիտությունների», 1947, № 3, էջ 47-76։

³⁹³ Տես Խաչիկ Դաշտենց, *Բայրոնը և հայերը*, Երևան, Հայպետհրատ, 1959։

Աշխատության առաջին երեք գլխում հեղինակն անդրադառնում է Անգլիայի «ռեակցիոն ռոմանտիզմի երգիչների» և պետական գործիչների նկատմամբ Բայրոնի ցուցաբերած սուր քննադատական կեցվածքին, եվրոպական բռնակալության դեմ ուղղված նրա բողոքին, աստվությանն ու պայքարին, ինչպես նաև օսմանյան բռնապետությունից տուժած և ճնշված ժողովուրդների ու նրանց մշակույթի հանդեպ Բայրոնի տածած համակրանքին: Խ. Դաշտենցի աշխատության հաջորդ՝ չորրորդ գլուխը նվիրված է Բայրոնի՝ հայերի հետ ունեցած կապերին՝ ըստ նրա կենսագիր Թոմաս Մուրի վկայության, իսկ հինգերորդ գլխում նկարագրվում է Ադրիական ծովախորշի մի փոքրիկ կղզու վրա ապաստանած Մխիթարյանների եռանդուն գործունեությունը:

Աշխատության մյուս գլուխներում, հիմնականում արծարծվում են Բայրոնի և Մխիթարյանների առնչություններին վերաբերող հարցեր, ինչպիսիք են՝ Բայրոնի ծանոթությունը հայ մշակույթին, հայերեն սովորելը, Ավգերյանի հետ միասին քերականությունների ձեռնարկներ կազմելը, Բայրոնի հայերենից կատարած թարգմանությունները, նրա դերը հայագիտության պատմության մեջ Արևմտյան Եվրոպայում և այլն:

Նշենք նաև, որ իր աշխատության մեջ Խ. Դաշտենցը երկու առանձին գլուխ է հատկացրել Բայրոնի ազատատենչ քնարերգության հայ խանդավառ երկրպագուներին՝ Ղ. Ալիշանին և Ռ. Որբերյանին: Աշխատության տասնյոթերորդ գլուխը կրում է *Բայրոնը և Ալիշանը*, իսկ տասնութերորդը՝ *Բայրոնի երկրպագուն* խորագրերը:

Ինչպես նշում է Խ. Դաշտենցը, որքան էլ Բայրոնը հայ ժողովրդի ճակատագրով տոգորված բարեկամ լիներ, «այնուամենայնիվ նա կարբոնար էր և նրա շատ երկերը միանգամայն խորթ, անհասկանալի և նույնիսկ դատապարտելի էին հայ կաթոլիկ միաբանների համար»³⁹⁴: Սակայն որոշ միաբաններ, և առաջին հերթին բանաստեղծ Ղևոնդ Ալիշանը, համակրանք տածելով իտալական ազգային ազատագրական շարժումների նկատմամբ և «ծայնակցելով դարի առաջավոր մտքերին ու ձգտումներին», կարողացան վեր բարձրանալ կղերական միջավայրից՝ «մինչև կարբոնարիստ Բայրոնի հայրենասիրական և մարդասիրական լայն գաղափարներով տոգորված երկերը հասկանալու և գնահատելու աստիճանը»³⁹⁵:

³⁹⁴ Անդ, էջ 131:

³⁹⁵ Անդ, էջ 132:

Իր աշխատության մեջ Խ. Դաշտենցն անդրադառնում է «Ալիշանին Բայրոնի հետ կապող» կարևոր օղակներին: Նախ, ինչպես նշում է Դաշտենցը, Ղևոնդ Ալիշանը ոգևորվել է Վենետիկյան հեղափոխությանը, հիշել իր հարազատ ժողովրդի ճակատագիրը և իր հայրենասիրական «բանաստեղծությունների զգալի մասը հորինել է իտալական շարժումների ազդեցության տակ»: Իսկ «այդ շարժումների հետ ժամանակին մեծ առնչություն» էր ունեցել Բայրոնը և միանգամայն բնական է, որ «նրա որոշ երգերը պետք է ոգևորեին Ալիշանին և շարժեին նրա հիացմունքը»³⁹⁶: Երկրորդ, Բայրոնի բանաստեղծություններում խորապես զգացվում էր տարագիր բանաստեղծի շունչը: Իսկ Ալիշանը, որի «հոգին մաշվում էր Հայաստանի կարոտից», ինչպես և Բայրոնը, նույնպես տարագիր էր և նրա նման դեգերում էր «օտար երկինքների տակ»³⁹⁷: Երրորդ, Բայրոնին և Ալիշանին մերժեցնող օղակը «դա նրանց բանաստեղծական տարերքի նմանությունն է»³⁹⁸: Իրոք, երկուսն էլ օժտված էին վառ երևակայությամբ, հափշտակված էին բնության գեղեցկությամբ, որոնց արտացոլումը մենք տեսնում ենք նրանց երգերի մեջ: Եվ, վերջապես, չորրորդ, «Ալիշանին Բայրոնին կապող օղակներից մեկը նրա համայնապարփակ միտքն է, որը նրան խիստ սահմանագծում էր կղերական միջավայրից»³⁹⁹:

Աշխատության հաջորդ, տասնութերորդ գլխում Խաչիկ Դաշտենցը, նախ, վերլուծում է Բայրոնի թողած ազդեցությունը Սմբատ Շահագիզի և Հովհաննես Թումանյանի վրա, իսկ ապա անդրադառնում է Ռուբեն Որբերյանին, որի վրա Բայրոնն ամենից շատ է ազդել, ընդ որում, «Բայրոնի հմայքը և ազդեցությունը Որբերյանի վրա անմիջական է, որոշակի և անսքող: ... Դեռ աշակերտական նստարանի վրա նա բնագրով կարդում է Բայրոնի ստեղծագործությունները և հայրենի աշխարհի դաշտերը շրջելով, անգիր արտասանում է հատվածներ «Չայլդ Հարոլդ»-ից և Բայրոնի մյուս պոեմներից ու բանաստեղծություններից»⁴⁰⁰: Այնուհետև Դաշտենցը, զուգահեռներ անցկացնելով Բայրոնի *Մանֆրեդ* դրամայի և *Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը* պոեմի ու Որբերյանի *Աղամիճ անեծքը* և *Ծփանքներ* պոեմների միջև, գալիս է այն եզրակացության, որ Որբերյանն այդ պոեմները գրել է Բայրոնի ստեղծագործությունների անմիջական ազդեցությամբ: Հանրահայտ է, որ շատ բանաստեղծներ

³⁹⁶ Անդ, էջ 133:

³⁹⁷ Անդ, էջ 138:

³⁹⁸ Անդ, էջ 139:

³⁹⁹ Անդ, էջ 140:

⁴⁰⁰ Անդ, էջ 145-146:

են հմայվել Բայրոնով և դեռ շատ-շատերը կհմայվեն, «բայց, - ինչպես նշում է Խ. Դաշտենցը, - ուրիշ ուխտավոր եղավ Ռուբեն Որբերյանը՝ մեծ Բայրոնի այդ հայրենաշունչ երկրպագուն»⁴⁰¹:

Նշենք նաև, որ Խ. Դաշտենցի աշխատությունը գերծ չէ որոշ թերություններից: Խ. Դաշտենցը ոչ միայն չի խուսափել Ռ. Որբերյանի սխալները կրկնելուց, այլ ինքը նույնպես թույլ է տվել որոշ անճշտություններ: Այսպես, աշխատության տասնչորսերորդ գլուխը կրում է *Բայրոնը հայ վանականի սքեմով* վերնագիրը: Մեր կարծիքով, այս գլխի նյութը Ռ. Որբերյանի վառ երևակայության գեղարվեստական մարմնավորումն է, որը ներկայացնում է Խ. Դաշտենցը: Նախ, այսպիսի կասկածելի և վիճահարույց վերնագրի ընտրությունը, հավանաբար, պայմանավորված է Ռ. Որբերյանի ուսումնասիրության մեջ բերված «Առտու մը, Պայրըն **վանականի հագուստ** (ընդգծումը մերն է - Ա. Բ.) հագած՝ «Ո՛վ մենութիւն, միակ երանութիւն» (իմիջիայլոց, վերջին բառը Խ. Դաշտենցի մոտ սխալմամբ մեջբերվել է «երջանկություն»⁴⁰² - Ա. Բ.) արձանագրութիւնը դիտելու գացեր էր»⁴⁰³ կասկած հարուցող արտահայտությամբ: Մեր կարծիքով, չնայած այն հանգամանքին, որ Բայրոնը շատ հարգված ու սիրված է եղել Ս. Ղազար վանքի միաբանների կողմից, ովքեր ներողամտություն են ցուցաբերել նրա որոշ անխոհեմ արարքների նկատմամբ, Մխիթարյան խստաբարո հայրերը հազիվ թե թույլատրեին անգլիացի բանաստեղծին օգտագործել հայ վանականի սքեմ: Բացի դրանից, Խ. Դաշտենցը շփոթում է իտալացի երկու ազնվականներին՝ կոմս Գվիչիոլիին և կոմս Գամբային: Նա գրում է. «... Բայրոնը Վենետիկում ծանոթացել էր իտալուհի թերեզա Գվիչիոլիի հետ, որի ամուսինը՝ վաթսուհամսյա ծերունի Գամպան, իտալացի հարուստ ազնվական էր»⁴⁰⁴: Իրականում կոմս Ռուջիերո Գամբան (ինչպես և իր որդին՝ Պիետրո Գամբան), իտալական կարբոնարական շարժման գործուն մասնակիցներից էր, թերեզա Գվիչիոլիի (ծննդյամբ՝ Գամբա) հայրը, այլ ոչ թե ամուսինը: Այնուհետև, կատարելով ընդարձակ մեջբերում Ռ. Որբերյանի ուսումնասիրությունից՝ Խ. Դաշտենցը նույնպես պնդում է, որ Ս. Ղազարում Բայրոնն իբր հանդիպել է թերեզային: Մեր կարծիքով այդպիսի միջադեպ տեղի չի ունեցել, դա պարզապես ռոմանտիկ Ռ. Որբերյանի վառ երևակայության արգասիքն է, իսկ Խ. Դաշտենցն էլ, բնավ չխորանալով փաստերի մեջ, այն անառարկելիորեն ընդունել է:

⁴⁰¹ Անդ, էջ 155:

⁴⁰² Անդ, էջ 102:

⁴⁰³ Ռ. Որբերյան, *Լորտ Պայրըն (ի Ս. Ղազար)*, էջ 266:

⁴⁰⁴ Խաչիկ Դաշտենց, *Բայրոնը և հայերը*, էջ 102:

Թվում է թե վերոհիշյալ թերություններն ունեն մասնավոր բնույթ և դրանց կարելի էր չանդրադառնալ: Սակայն, եթե փոքր թերությունները ժամանակին չեն մատնանշվում և ուղղվում, հետագայում դրանք գումարվում են, և ի հայտ են գալիս ավելի լուրջ թերություններ: Ցավոք, այդ սխալները հայ գրականագետների կողմից հետագայում ոչ միայն չեն ուղղվել, այլև նույնությամբ կրկնվել են, իսկ երբեմն էլ Բայրոնի մասին հայ մամուլում գետնադրված հոդվածներում տեղ են գտել էլ ավելի կոպիտ վրիպումներ ու անճշտություններ:

Այսպես, «Սովետական գրականություն» ամսագրի 1988-ի առաջին համարում Բայրոնի ծննդյան 200-ամյակի կապակցությամբ տպագրվել է Լիա Բալագյանի հոդվածը՝ *Բայրոնի հայկական շրջանի կյանքից* վերնագրով: Անշուշտ, անգլիացի հանճարեղ բանաստեղծի մասին ամեն մի խոսքն արժանի է ուշադրության, քանի որ նա խոր հետք է թողել հայ իրականության մեջ: Սակայն անհրաժեշտ է նշել, որ, ցավոք, վերոհիշյալ «ուսումնասիրության» մեջ, հավանաբար հեղինակի անտեղյակության պատճառով, տեղ են գտել մի շարք կոպիտ սխալներ և անճշտություններ: Մեր կարծիքով հեղինակն օգտվել է միայն Խ. Դաշտենցի գրքից, այն էլ հապշտապ՝ «գարգացրել» և «հարստացրել» է գրողի մտքերը՝ աղավաղելով դրանք: Այդ հոդվածը սխալների մի հավաքածու է («12-րդ դարի երկրորդ կեսից սկսած այն անվանվել է Ս. Ղազարի կղզի՝ մի խումբ փախստական հայերի կողմից շինված միակ եկեղեցու շնորհիվ»⁴⁰⁵ (կղզու անվավումը ոչ մի կապ չունի «մի խումբ փախստական հայերի հետ»), «...Կիլիկյան թագավորության օրոք, 1717 թվականին... Մխիթար Սեբաստացի կոչվող մի ուսյալ վանական իր 11 աշակերտների հետ հանգրվանել է այդ անմարդաբնակ կղզում և հիմնել կրոնական ու մշակութային կենտրոն»⁴⁰⁶ (Կիլիկյան թագավորության գահակալության ժամանակաշրջանը, ինչպես հայտնի է, ընդգրկում է 1198-1375 թվականները, իսկ Մխիթար Սեբաստացին իրականում իր միաբանությունը հիմնել է դեռևս 1700-ին Կ. Պոլսում), «Այդ հուզախոժի՛ ձիթենիների տակ նստած՝ նա հոգեպես հանդարտվում էր, խաղաղվում... այդ շրջանում է գրել նաև «Երկիր և երկինք» մեկ արար-

⁴⁰⁵ Լիա Բալագյան, *Բայրոնի հայկական շրջանի կյանքից*. «Սովետական գրականություն», 1988, № 1, էջ 122:

⁴⁰⁶ Անդ:

ԵՐԿԻՆՔ ԵՒ ԵՐԿԻՐ

ՍՐԲԱԶԱՆ ՈՂԲԵՐԳ

Ի

ԼՈՐԵ ՊԱՅՐԱՆԷ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

1874

1874-ին Կ. Պոլսում տպագրված
Երկինք և Երկիր պոեմի տիտղոսաթերթը

The title-page of *Heaven and Earth*
published in Constantinople (Turkey) in 1874

վածից և 3 տեսարանից բաղկացած խորհրդապաշտական գործը...⁴⁰⁷ (նախ, այդ գործը վերնագրված է ոչ թե *Երկիր և Երկինք*, այլ՝ *Երկինք և Երկիր* (*The Heaven and the Earth*), և, երկրորդ, այն գրվել է ոչ թե Ս. Ղազարում, այլ՝ Ռավեննայում՝ 1821-ի հոկտեմբերի 9-ից մինչև 23-ը. առաջին անգամ հրատարակվել է 1823-ի հունվարին «Լիբերալ» հանդեսի 2-րդ համարում, իսկ հայերեն՝ 1874-ին Կ. Պոլսում՝ Դ. Գաբրիելյանի թարգմանությամբ) և այլն, և այլն. այսպես շարունակ՝ սկզբից մինչև վերջ):

Նշենք, որ այդ բոլոր թյուրիմացությունների և անճշտությունների հիմնական պատճառն անտեղյակությունն ու անբարեխղճությունն է: Լ. Բալազյանն իր հոդվածում չի նշում ոչ մի սկզբնաղբյուր, և, այդ իսկ պատճառով, հնարավոր չէ ճշգրտորեն նշել հոդվածում թույլ տրված սխալների իրական պատճառները: Անհասկանալի ու անբացատրելի է նաև այն հանգամանքը, որ մեծ հեղինակություն վայելող «Սովետական գրականություն» ամսագիրը չի ցուցաբերել համապատասխան պահանջկոտություն և, ըստ երևույթին, առանց որևէ գրախոսության իր էջերում տպագրել է պատահական ու սխալաշատ հոդված:

Ինչպես արդեն նշել ենք, «Հայ ընտանիք» հանդեսը 1970-1980-ական թվականներին բավականին հաճախ է անդրադարձել Ս. Ղազար կղզում Բայրոնի անցկացրած օրերին՝ տպագրելով ինչպես հայ, այնպես էլ օտարազգի հեղինակների հոդվածներ, ընդ որում, այդ նյութերի մեծ մասը տպագրվել է երկու լեզվով՝ հայերեն և անգլերեն, երբեմն՝ միայն անգլերեն: Օտարազգի հեղինակների հիմնական հոդվածներին մենք անդրադարձել ենք սույն աշխատանքի առաջին գլխում: Այստեղ կքննարկենք հայ հեղինակների հոդվածները:

Բայրոնի մահվան 150-ամյակի առթիվ «Հայ ընտանիք» ամսագրի 1974-ի 11-12-րդ միացյալ համարում լույս է տեսել մեկ անստորագիր հոդված (հայերեն և անգլերեն)⁴⁰⁸, որտեղ խոսվում է բանաստեղծի՝ Մխիթարյան միաբանության հայրերին այցելելու մասին, ինչպես նաև բերվում են հատվածներ *Հայերեն-անգլերեն քերականության* ձեռնարկի համար նրա գրած առաջաբանից: Ամսագրի նույն համարում զետեղված մեկ այլ անստորագիր, բայց բավականին հետաքրքիր հոդվածում

⁴⁰⁷ Անդ, էջ 127:

⁴⁰⁸ Տես Լորտ Պալլըն եւ Մխիթարեան հայրերը. բանաստեղծին մահուան 150-ամեակին առիթով (1824-1974): - *Byron and the Mekhitarist Fathers: on the 150th Anniversary of his Death (1824-1974)*, «Հայ ընտանիք», 1974, № 11-12, էջ 6-7:

(նույնպես հայերեն և անգլերեն)⁴⁰⁹ հեղինակն անդրադառնում է 1955-ի սեպտեմբերին Վենետիկում անցկացված Գրականության միջազգային գիտաժողովում «Հայ ընտանիք» ամսագրի հիմնադիր Զ. Մեսրոպ ճանաչանի զեկուցման մեջ արծարծված հիմնական դրույթներին: Հոգվածագիրը Զ. Ղևոնդ Ալիշանին իրավացիորեն համարում է Բայրոնի ստեղծագործությունների առաջին հայ թարգմանիչ: Այստեղ մենք առաջին անգամ մամուլից տեղեկանում ենք, որ 1870-ին հրատարակված *Lord Byron's Armenian Exercises and Poetry* ժողովածուում (հետևաբար և 1852-ին լույս տեսած *Ծաղկաքաղ քերթողաց անգղիացւոց* ժողովածուում) զետեղված Բայրոնի բոլոր բանաստեղծությունները հայերեն թարգմանել է Ղ. Ալիշանը: Հոգվածում արծարծվում են նաև հայ ռոմանտիկ բանաստեղծների վրա Բայրոնի ունեցած ազդեցությանը վերաբերող հարցեր, զուգահեռներ են անցկացվում Բայրոնի և Սմբատ Շահազիզի կերտած հերոսների՝ Չայլո Զարուլդի և Լևոնի (*Լևոնի վիշտը*), միջև, համեմատվում են Բայրոնի *Չայլո Զարուլդի ուխտագնացությունը* և Ռուբեն Որբերյանի *Ծփանքներ* պոեմները, որոնց մեջ «միեւնոյն ոգին կը տիրապետէ. ճամբորդել, ճանչնալ ու դատել աշխարհը և մարդիկը»⁴¹⁰: Բայց, մյուս կողմից, ինչպես նշում է հեղինակը, «վշտի զգացումը, դարուն հիւանդութիւնը շատ աւելի շեշտուած են Որբերեանի՝ քան Պայրընի մօտ: Որբերեանի քով այդ զգացումը կը հասնի մինչեւ յոռետեսութեան», այն դեպքում, երբ Բայրոնի Զարուլդը «աւելի հաւասարակշիռ», «աւելի համակերպ է», որի համար «վիշտը իրողութիւն մըն է, ինչպէս իրականութիւն է կեանքը, ու մարդը պէտք է ընդունի երկուքն ալ, ինչպէս որ են»⁴¹¹:

1975-ին «Հայ ընտանիք» հանդեսում լույս է տեսնում Բայրոնին նվիրված Սուրեն Խաչատրյանի հոդվածը⁴¹², որտեղ հեղինակը նկարագրում է Բայրոնի այցը Ս. Ղազար, նրա ծանոթությունը Սուքիաս Սոմայանի և Զարություն Ավգերյանի հետ: Առաջին անգամ տեսնելով Բայրոնին, բայց չիմանալով նրա ով լինելը՝ Ս. Սոմայանն անթաքույց հիացմունքով դիտում է օտարականի թեթև քայվածքը (չնայած մի ոտքից կաղալուն) և մտածում, որ «Դեւ է սա՝ մարդկային կերպարանքով», իսկ լսելով Բայրոն անունը՝ հանկարծակիի է գալիս. «Դա անգ-

⁴⁰⁹ Տե՛ս *Լորտ Պայրըն հայ գրականութեան մէջ*: - *Byron in the Armenian Literature*, «Հայ ընտանիք», 1974, № 11-12, էջ 8-11:

⁴¹⁰ Անդ, էջ 11:

⁴¹¹ Անդ:

⁴¹² Տե՛ս Սուրեն Խաչատրեան, *Պայրըն Հայոց կղզում*. «Հայ ընտանիք», 1975, № 9-10, էջ 34-37:

լիացի այն պոետն էր, որ այդքան երիտասարդ՝ նւաճել էր աշխարհն ու սրտերն իր գրչով: Դա թափառական Չայլտ Յարոլտն էր, որ ըմբոստացած իր հայրենիքի տէրերի դէմ, յոգնած դաւերից ու հալածանքներից՝ թողել էր հայրենի ափերը մէկընդմիջտ: Եւ այժմ ահա եկել էր Յայոց փոքրիկ կղզին՝ մի փոքր դադար առնելու...»⁴¹³: Այնուհետև հողվածագիրը նշում է, որ Բայրոնի համար հայտնությունն էր այդ «փոքրիկ Յայաստանը», որի վանքի գրադարանում նա տեսել է մագաղաթյա թանկարժէք մնուշներ հայ հին ձեռագրերից, հազվագյուտ թարգմանություններ հունարեն և ասորերեն կորած բնագրերից, ինչպես նաև ծանոթացել հայ բանաստեղծությանը, նկարչությանն ու ճարտարապետությանը: Հողվածում խոսվում է նաև Բայրոնի հայերեն սովորելու մասին և նշվում են դրա դրդապատճառները. «...առաջին անգամ մեծագոյն ծիգով խազմզեց նա «այբ»ը: Գուցէ դրա փոխարէն, աւելի հեշտութեամբ նա մի ամբողջ պոէմ կը գրէր, սակայն այդ տանջալի «այբ»ը այն բանալին էր, որով նա կարող էր հասնել իր շուրջը սփռուած գանձերին՝ հնագոյն մի ժողովրդի պատմութեանն ու մշակոյթին»⁴¹⁴: Այնուհետև հողվածում խոսվում է Բայրոնի և Հ. Ավգերյանի համատեղ կատարած աշխատանքների, զրույցների ու խոհերի, հայերենից անգլերեն թարգմանելու միջոցով հայ ժողովրդի գանձերը աշխարհին ներկայացնելու Բայրոնի փորձի մասին, չնայած Բայրոնը շատ լավ հասկանում էր, «Գիտէր, որ քիչ է: Բայց գիտէր նաեւ, որ իր ետեւից կը գան ուրիշները»⁴¹⁵: Եվ, իրոք, հետագայում բազմաթիվ օտարազգի գրականագետներ ու գրողներ՝ Ջոզեֆ Լայֆուտ (Lighfoot, 1828-1890), Հայնրիխ Գելցեր (Gelzer, 1847-1906), Հայնրիխ Հյուբշման (Hübshmann, 1848-1908), Ֆրեդերիկ Կոնիբեր (Conybeare, 1857-1924), Անտուան Մեյլե (Meillet, 1866-1936), Անդրե Մորուա (Maurois, 1885-1967), Վալերի Բոյուսով (1873-1924) և շատ ուրիշներ, իրենց գործերում անդրադարձել են հայ գրական, պատմական ու մշակութային ժառանգությանը⁴¹⁶:

1976-ին «Հայ ընտանիք» ամսագրում լույս է տեսնում Ա. Թերզյանի *Վենետիկյան ծովալճակի կղզի-վանքը՝ Լորդ Բայրոնի մասին հիշողություններով (Մխիթարյան մայրավանքի հիմնադրի երեքհարյուրամյակի*

⁴¹³ Անդ, էջ 35:

⁴¹⁴ Անդ:

⁴¹⁵ Անդ, էջ 36:

⁴¹⁶ Տե՛ս, օրինակ, Գ. Ա. Շրումպֆ, *Ուսումնասիրությունը հայ լեզուի եւ մատենագրութեան յարեւմուտս (ԺԴ - ԺԾ դար)*, թարգմ. և լրաց. Գ. Զարեհանալյանի, Վենետիկ, Մխիթարեան տպարան, 1895:

առթիվ) հոդվածը (անգլերեն)⁴¹⁷, որտեղ հեղինակը տալիս է Մխիթար աբբահոր կյանքի, նրա ուխտագնացության նկարագիրը՝ սկսած իր հարազատ քաղաք Սեբաստիայից մինչև Կոստանդնուպոլիս, իսկ ապա՝ Մեթոն և Վենետիկի Ս. Ղազար կղզի: Հոդվածագիրն անդրադառնում է նաև հայ-վենետիկյան կապերին և, վերջապես, Ջ. Բայրոնին, «որից հազիվ թե ավելի անվանի անձնավորություն լիներ Եվրոպայում», որը 1816-ի նոյեմբերի 11-ին ժամանելով Վենետիկ, «շուտով սկսեց իր այցելությունների շարքը» Ս. Ղազար⁴¹⁸, որոնք շարունակվել են մինչև 1817-ի փետրվարի վերջը: Ա. Թերզյանը նշում է, որ Բայրոնի մասին եղած հիշողությունների մեծ մասը կապված է վանքի հարուստ գրադարանի հետ, որտեղ նա ստացել է իր «հայոց լեզվի առաջին դասերը, իր համար առանձին հետաքրքրություն ներկայացնող թեմաներով զրուցել վանականների հետ, կարդացել այնպիսի գրքեր, որոնք միայն դասական հունարենով և լատիներենով կարող էին հաճույք պատճառել որևէ մեկին»⁴¹⁹: Ըստ հոդվածագրի՝ Բայրոնը հանգրվանել է Վենետիկում, քանի որ այն որպես միջազգային գրավիչ քաղաք, առանձնապես գրողների համար, եզակի է, անգամ այնպիսի գրողների համար, ովքեր երբևէ չեն եղել Վենետիկում (օրինակ Շեքսպիրը, երբեք չլինելով Վենետիկում, ստեղծել է անմոռանալի վենետիկյան կերպարներ): Ինչպես գրում է Ա. Թերզյանը, «ամեն մի հիմք կա կարծելու, որ վանք-կղզում Լորդ Բայրոնը գտավ տեղեկություններ հինավուրց և ժամանակակից Արևելքի մասին, որ նա սիրում էր...»⁴²⁰: Իրոք, բանաստեղծի հաճախակի զրույցները գիտնական-վանականների հետ նրան տվել են պատկերացում և գիտելիքներ Արևելքի մշակույթի ու պատմության վերաբերյալ: Վանքի բազմաթիվ վանականներ, սկսած աբբահայր Ազոնց Գյուլբերից, աջակցել և օգնել են Բայրոնին ցանկացած ձևով: Այդ վանականների մեջ եղել են հանրահայտ գիտնականներ Միքայել Չամչյանը, Մկրտիչ և Հարություն Ավգերյանները և ուրիշներ: Այնուհետև Ա. Թերզյանը նշում է, որ *Մանֆրեդի* երրորդ գործողությունը և *Չայլդ Հարոլդի* չորրորդ երգն ստեղծվել են Ս. Ղազարում, հիշատակում է կարբոնարական շարժման հետ Բայրոնի կապի մասին, նկարագրում նրա Հունաստան մեկնելը և մահը⁴²¹: Հեղինակն իր հոդվածն ավարտում է Բայրոնի

⁴¹⁷ Տե՛ս A. Terzian, *Island Monastery in the Venetian Lagoon with Memories of Lord Byron (on the Occasion of the Mekhitarist Founder's Tricentenary)*, «Հայ ընտանիք», 1976, № 7-8, էջ 38-39, № 11-12, էջ 55-61:

⁴¹⁸ ԱճԴ, № 11-12, էջ 55:

⁴¹⁹ ԱճԴ, էջ 56:

⁴²⁰ ԱճԴ, էջ 58:

⁴²¹ ԱճԴ, էջ 61:

Չայլոյ Հարոլդի ուխտագնացությունը պոեմի չորրորդ նվագի՝ Վենետիկին վերաբերող իննյակներով (1, 18 և 19):

Ավստրալիայի Սիդնեյ քաղաքից Արամայիս Երեցն ունի Մխիթարյան միաբանությանը նվիրված քառյակներ, որոնք *Վենետիկեան քառեակներ* խորագրով 1982-ին տպագրվել են «Հայ ընտանիք» հանդեսի 11-12-րդ համարում: Մեր կարծիքով այդ քառյակներից մեկը վերաբերում է Բայրոնին:

Մի աքսորեալ գրագետ,
Կեանքումը միշտ երախտագետ,
Այս սուրբ կղզում սովորեց,
Մեր ճոխ լեզուն առ յաւետ:⁴²²

1987-ին «Հայ ընտանիք» հանդեսի մի շարք համարներում արտատպվում է հայագիտության ասպարեզում Մխիթարյանների կատարած աշխատանքին նվիրված՝ Հայր Տաճատ Յարդյանի գրքույկի⁴²³ անգլերեն թարգմանության⁴²⁴ հիմնական մասը՝ նույնանուն խորագրով⁴²⁵: Այստեղ հեղինակը նախ մանրամասնորեն ներկայացնում է Վենետիկի և Վիեննայի Մխիթարյանների ծավալած գործունեությունը բանասիրության, պատմության, գրականության, լեզվաբանության, աստվածաբանության, կրոնի, թարգմանության, հրատարակչության և կրթության ասպարեզներում, տալիս է Մխիթար Աբբահոր կենսագրությունը, իսկ այնուհետև խոսում Մխիթարյան միաբանության գանձերի, ձեռագրերի հարուստ հավաքածուի մասին, որը կարող է զիջել միայն Երևանի Մատենադարանի և Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի հավաքածուներին: Խոսելով Մխիթարյանների հրատարակչական գործունեության մասին՝ հեղինակը հատուկ առանձնացնում է 1836-ին և 1837-ին լույս տեսած Գ. Ավետիքյանի, Խ. Սյուրմեյանի, Մ. Ավգերյանի *Նոր բառգիրք Հայկազեան լեզուի* երկհատոր բառարանը (2210 էջ), որը մինչև այսօր էլ համարվում է չգերազանցված և, ըստ Հրաչյա Աճառյանի, իր խորությամբ ու ոճով հայագիտության փառքն է: Տ. Յարդյանը, ինչպես գրեթե բոլոր

⁴²² Արամայիս Երեց, *Վենետիկեան քառեակներ*. «Հայ ընտանիք», 1982, № 11-12, էջ 13:

⁴²³ Տե՛ս Հայր Տաճատ Եարդյան, *Մխիթարեաններու նպաստը հայ մշակոյթին եւ հայագիտութեան*, Մխիթարեան հրատարակութիւն, Լոս Անճելըս, 1987:

⁴²⁴ Տե՛ս Father Dajad Yardemian, *The Contribution of the Mekhitarians to Armenian Culture and Armenology*, trans. Loucas Krikorian, Mekhitarian Publication, Los Angeles, 1987.

⁴²⁵ Տե՛ս «Հայ ընտանիք», 1987, № 3-4, էջ 35-36, № 5-6, էջ 33-34, № 7-8, էջ 34-35, № 9-12, էջ 63-66:

հեղինակները, անդրադառնում է Բայրոնի Ս. Ղազարուն անցկացրած օրերին, նշելով, որ «Լորտ Պայրըն՝ Սբ. Ղազարի մէջ կը հաստատէ իր Հայերէն լեզուի ուսումին եւ մտածութեան կայանը, կը սիրէ այդ գիտնական Վարդապետները եւ անոնց միջոցով նաեւ ամբողջ Հայ ժողովուրդը՝ որ կը ձգտէր ունենալ իր ազատ եւ մտաւորապէս բարձրացած հայրենիքը»⁴²⁶։ Այնուհետև Տ. Յարդնյանը խոսում է Նապոլեոն Բոնապարտի հրովարտակի մասին, որով Ս. Ղազարի Մխիթարյան մայրավանքը ճանաչվում է որպէս ակադեմիական հաստատութիւն և մնում անձեռնմխելի, և ավելացնում, որ հետագայում բազմաթիվ եվրոպացի հայագետներ, լեզվաբաններ, պատմաբաններ անդամագրվել են այդ գիտական հաստատութեանը, ինչպէս օրինակ, պրոֆեսորներ Հայնրիխ Պետերմանը՝ 1846-ին, Վիկտոր Լանգլուան՝ 1861-ին, Հայնրիխ Գեյցերը՝ 1897-ին, Հայնրիխ Հյուբշմանը և Նիկողայոս Մառը՝ 1903-ին, Նիկոլայե Յորգան՝ 1929-ին, Ֆրեդերիկ Ֆեյդին՝ 1937-ին և շատ ուրիշներ։ Հեղինակը սույն աշխատանքում կատարել է նաև մեջբերումներ Մխիթարյանների մասին Ա. Չոպանյանի, Հ. Հյուբշմանի և Ն. Յորգայի հայտնած կարծիքներից ու զնահատականներից։

Նույն թվականին ամսագրում լույս է տեսնում Հ. Ս. Գեմճեմյանի⁴²⁷ հոդվածը⁴²⁸, որտեղ հեղինակը համառոտակի անդրադառնում է Բայրոնի Ս. Ղազար կղզի կատարած այցին, Մխիթարյանների հետ ծանոթությանն ու համագործակցությանը։ Հոդվածում բերված տեղեկություններից ուշադրության և հիշատակման է արժանի այն փաստը, որ «Պայրըն տեսնելով Ստեփանոս Աբբահօր իր հետ ունեցած պարզութիւնն ու ընտանութիւնը՝ մեծապէս կը զգացուի» և «զգացուած իր տեսածներէն՝ ամբողջովին նոր կը խմբագրէ» *Մանֆրեդ* դրաման, որ շարադրում էր այդ օրերին, «ուր գլխաւոր դերակատարներէն մէկը, վանքի մը վանահայրը, ներկայացուցած էր խորամանկ անձ մը»⁴²⁹։ Հոդվածում նաև բերված է մի հատված Հ. Ավգերյանի *Ինքնապատում օրագրութիւնից*, որի մէջ կա մեջբերում *Հայերէն-անգլերէն քերականութեան* ձեռնարկի համար Բայրոնի գրած առաջաբանից։ Սակայն, նշենք, որ այդ հատ-

⁴²⁶ Անդ, № 5-6, էջ 33 (տե՛ս բնագրի էջ 14)։

⁴²⁷ Գեմճեմյան, Սահակ (1939-1996), ծնվել է Հալեպում, 1964-ին Վենետիկում ծեռնադրվել է կուսակրոն արեղա, 1991-ին ստացել է Վարդապետի աստիճան, 1985-1992 թթ. եղել է «Բազմավեպի» պատասխանատու խմբագիր, 1991-1996 թվականներին՝ Մխիթարյան միաբանության Աթոռակալ-Տեղապահ, 1996-ին ընտրվել է Մխիթարյան միաբանության Աբբահայր։ Բազմաթիվ կրոնաբարոյական, ուսումնագիտական և հայագիտական աշխատանքների հեղինակ է։

⁴²⁸ Տես Հ. Ս. Գեմճեմյան, *Լորտ Պայրըն եւ հայերը*. «Հայ ընտանիք», 1987, № 5-6, էջ 24-25։

⁴²⁹ Անդ, էջ 24։

վածը, չնայած ներառված է չակերտների մեջ, աղավաղված է և չի համապատասխանում բնագրին: Հավանաբար, հեղինակը քաջածանոթ չի եղել քննարկվող հարցին, մակերեսորեն է դիտարկել այն, իսկ հատվածը բերել է հիշողությամբ: Չնայած մեզ չի հաջողվել անձամբ ծանոթանալ Հ. Ավգերյանի անտիպ օրագրին, բայց Հայր Ղևոնդ Տայանի հոդվածում⁴³⁰ բերված վկայությունները, որոնց մասին մենք արդեն խոսել ենք, համարում ենք միանգամայն հավաստի և ստույգ: Այնուհետև հոդվածագիրն արձանագրում է. «Մեծ է Լորտ Պայրընի բերած նպաստը մեր ազգին, իր պատճառով անգլիացիներու համար Ս. Ղազար կը դառնայ սրբավայր, ու մինչեւ այսօր շատ շատեր կու գան՝ տեսնելու «Լորտ Պայրընի սենեակը» ուր բնակած եւ հայերէն սորված է, «Լորտ Պայրընի բլուրը» ուր բանաստեղծը սիրած է նստիլ առանձին, ու դիտելով Վենետիկը՝ ընկղմիլ իր բանաստեղծական մտածութիւններուն մէջ, շարադրելով *Childe Harold's Pilgrimage* քերթուածին չորրորդ երգը...»⁴³¹: Այդ գնահատականը, բնական է, մենք անառարկելիորեն ընդունում ենք, սակայն միայն նշենք, որ Բայրոնը երբեք «բնակած» չի եղել Ս. Ղազարում (ամեն օր եկել և գնացել է), քանի որ հայտնի պատճառներով Մխիթարյանները դա չեն թույլատրել:

«Բազմավեպ» հանդեսի վերջին տարիների ամփոփ հատորներում տեղ են գտել նաև մեր երեք հոդվածները⁴³²: Առաջին հոդվածում, հենվելով հիմնականում Բայրոնի նամակների վրա, տրվում է Բայրոնի և Մխիթարյանների ծանոթության ու առնչությունների հակիրճ նկարագիրը, երկրորդ հոդվածում՝ Բայրոնի այցելությունը Ս. Ղազար կղզի և հանդիպումը Մխիթարյան միաբանության վանական-գիտնականների հետ, որոնց նկատմամբ նրա հետաքրքրությունը չի սահմանափակվում սոսկ սովորական ճանապարհորդի կամ զբոսաշրջիկի հետաքրքրությամբ, այլ վերածվում է գիտական համագործակցության, իսկ երրորդում՝ նաև այդ համագործակցության առանձին դրվագներ, որոնք իրենց արտացոլումն են գտել հայ և օտար հեղինակների աշխատանքներում: Բացի դրանից, անդրադարձել ենք հայ բանաստեղծների ներբողներին՝ նվիրված Բայրոնին, ինչպես նաև բայրոնյան թեմայով հայ նկարիչների ստեղծած գործերին: Վերջին հոդվածում, ժամանակագրա-

⁴³⁰ Տե՛ս Հ. Ղևոնդ Տայան, *Լորտ Պայրըն ի Ս. Ղազար*. «Բազմավեպ», 1924, № 4, էջ 133-139:

⁴³¹ Հ. Ս. Ճեմճեմեան, *Լորտ Պայրըն եւ հայերը*. էջ 25:

⁴³² Տե՛ս Ա. Բեքարեան, *Բայրոնը Մխիթարեանների մօտ*. «Բազմավեպ», 2001, № 1-4, էջ 117-128: - *Դրուագներ Բայրոնի հայ իրականության հետ ունեցած առնչություններից*. «Բազմավեպ», 2002, № 1-4, էջ 97-117: - *Բայրոնը Վենետիկի Մխիթարեանների մամուլի էջերում*. «Բազմավեպ», 2006, № 1-4, էջ 157-217:

կան կարգով, առանձին-առանձին քննարկվում են տարբեր տարիներին Վենետիկի Մխիթարյանների հրատարակած Բայրոնի բազմաթիվ ստեղծագործություններ և նրա մասին հոդվածներ, որոնք լույս են տեսել և առանձին գրքերով ու ժողովածուներում, և զետեղվել են «Բազմավեպ», «Գեղունի» և «Հայ ընտանիք» հանդեսներում:

Բայրոնին, որի ստեղծագործությունը հարուստ ու բազմազան արձագանք է ստացել հայ գրական կյանքում և առ այսօր շարունակում է հուզել հայ ընթերցողին, որպես բարձր արվեստի կերտողի՝ անդրադարձել են նաև հայ նկարիչները: Այսպես, հայ ծովանկարիչ Մկրտիչ Ճիվանյանը (1848-1906) անդրադարձել է բայրոնյան թեմային և ստեղծել *Լորդ Բայրոնի երազը* նկարը, որը 1882-ի մայիսին ցուցադրվել է Կ. Պոլսում⁴³³: Բայրոնին նվիրված երկու նկար ունի համաշխարհային ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկին (1817-1900)՝ *Բայրոնի գիշերային զբոսանքը Վենետիկում* (1887) և *Բայրոնի այցը Մխիթարյաններին Ս. Ղազար կղզում* (1888):

§ 3.3. Բայրոնիզմի արտացոլումը հայ գրականության մեջ

Հանրահայտ է, որ 19-րդ դարի եվրոպայի բանաստեղծներից ոչ մեկն իր ժամանակակիցների վրա չի ունեցել այնպիսի մեծ ազդեցություն, ինչպես Բայրոնը: 19-րդ դարում բայրոնիզմը որպես մեծ ուժ՝ ազատության, կենսասիրության, անհոգության ու սիրո գովքով՝ իր ոլորտի մեջ էր ներառել Արևմուտքի և Արևելքի տարբեր լեզուներով ստեղծագործող բանաստեղծներին (Ալֆրեդ դը Մյուսեից մինչև Շանդոր Պետեֆի և ուրիշներ), ինչպես նաև արվեստագետներին (Ֆերդինանդ Վիկտոր Էժեն Դելակրուա՝ *Հունաստանը Միսոլոնգիի ավերակների վրա*, Սարդանապալի մահը, Դոմենիկո Մորելլի՝ *Կոմս Լարա*, Ռոբերտ Շուման՝ *Մանֆրեդ*, Պյոտր Չայկովսկի՝ սիմֆոնիա *Մանֆրեդ*, Հեկտոր Լուի Բերլիոզ՝ սիմֆոնիա *Հարոլդ և ուրիշներ*): Հետևաբար, միանգամայն իրավացի էր Ա. Ս. Պուշկինը, նշելով, որ Բայրոնի մահով «...մեզ-նից սրընթաց հեռացավ հանճարը, ... մեր մտքերի տիրակալը» և ... «Աշխարհը դատարկվեց...»⁴³⁴:

⁴³³ Տե՛ս «Մասիս» (1852–1908 թվականներին Կ. Պոլսում լույս տեսած հայ քաղաքական, տնտեսական, գրական և բանասիրական օրաթերթ, շաբաթերթ, ամսաթերթ), 1882, մայիս:

⁴³⁴ А. С. Пушкин, *Собрание сочинений в десяти томах*, т. II, “Правда”, 1981, с. 13-14. Ինչպես նշել է Պուշկինը 1824-ի հոկտեմբերին ռուս բանաստեղծ, գրաքննադատ իշխան Պ. Ա. Վյազեմսկուն (1792-1878) հասցեագրած մի նամակում, Բայրոնի հոգու հանգստու-

Նման գայթակղությունից՝ Բայրոնի անմիջական ազդեցությունից, չեն խուսափել նաև հայ բանաստեղծները: Չնայած հայ-անգլիական գրական առնչությունները ծավալվել են դեռևս 18-րդ դարի երկրորդ կեսից (ինդկահայ գաղթօջախում), սակայն դրանք 19-րդ դարասկզբից, շնորհիվ Բայրոնի, ում ստեղծագործությունն ու անձնական ճակատագիրն առանձնահատուկ ազդեցություն են ունեցել համաշխարհային գրականության վրա, ստացան միանգամայն մոր որակ: Վստահաբար կարելի է ասել, որ սկսած 19-րդ դարի առաջին քառորդից Բայրոնը հայ գրականության մեջ թողել է իր «հետքը», որտեղ ունեցել է իր «մշտական ներկայացուցիչը» կամ «ներկայացուցիչները»:

Բայրոնիզմը հայ գրականության մեջ ներթափանցել, տարածվել և զարգացել է անընդհատորեն՝ տարիների, տասնամյակների ընթացքում՝ հարստանալով, խորանալով և ընդգրկելով հայ բանաստեղծների նորանոր սերունդներ և անուններ՝ Ղևոնդ Ալիշանից մինչև Պարույր Սևակ և ուրիշներ, որ այս կամ այն չափով կրել են Բայրոնի անձի և ստեղծագործության ազդեցությունը, ինչպես նաև ունեցել են բազմաթիվ նմանություններ և ընդհանրություններ Բայրոնի կյանքի և ստեղծագործության հետ:

Սակայն, մեկ աշխատության սահմաններում գրեթե անհնարին է անդրադառնալ բոլոր հայ բանաստեղծներին, ուստի այստեղ մենք կքննարկենք հայ գրականության մեջ բայրոնիզմի արտացոլման առաձնին դրվագներ, ինչպես նաև զուգահեռներ կանցկացնենք Բայրոնի և որոշ հայ բանաստեղծների ստեղծագործությունների միջև:

Բայրոնի ստեղծագործության հետ հայ գրական-հասարակական մտքի շփումը, բայրոնիզմի դրսևորումը հայ գրականության մեջ բացատրվում է Բայրոնի բազմահնչուն և բազմաբովանդակ ստեղծագործության մեջ տեղ գտած ազատասիրական, հակաբռնակալական պայքարի ձգտումներով, ինչպես նաև անհատականության, ինքնահաստատման գաղափարներով: Բայրոնի պոեզիայի ազատատենչ տրամադրությունները, արդարացի պայքարի ռոմանտիզմը, մարդասիրությունը և լավատեսությունը հայ գրականության մեջ, առանձնապես հայ քաղաքական պոեզիայի վերելքի ժամանակահատվածներում, ըմբռնվել են առավել պարզությամբ, հարազատորեն ու արտասովոր ուժով, արձագանքել են հայ ժողովրդի ազատագրական ձգտումներին: Այս իմաստով «հայկական» բայրոնիզմը համաշխարհային բայրոնիզմի զարգացման

թյան համար, ուղարկում է մի փոքրիկ հիշատակ՝ *Ծովին* բանաստեղծությունը (տե՛ս նույն հրատարակության IX հատորը՝ էջ 145, 422):

մեջ գրավում է իր ուրույն և հատուկ տեղը: Չնայած դրան, Բայրոնի առաջին թարգմանիչներից մեկը՝ հայ նոր քնարերգության նահապետ Ղևոնդ Ալիշանը, մեծարելով Բայրոնին և անվանելով նրան ոչ միայն դարի լավագույն բանաստեղծ, «այլև առաջին ի նոսին վկայեալ է իր յոլովից գիտնոց»⁴³⁵, միաժամանակ չի ընդունում թախծամոլության արտահայտությունները *Չայլդ Դարուդի ուխտագնացությունը* պոեմի մեջ, որի չորրորդ նվազը թարգմանել է հայերեն (այն լույս է տեսել Վենետիկում 1860-ին *Իտալիա* վերնագրով, ինչպես նաև վերահրատակվել է 1889-ին, 1891-ին և 1901-ին): Ղ. Ալիշանն իր թարգմանության մեջ այդ արտահայտությունները կամ զեղչել է, կամ էլ իր վերաբերմունքն է ցույց տվել ծանոթագրության միջոցով:

Այդ նույն ժամանակահատվածում Կալկաթայում՝ հայ գրող, մանկավարժ, հրապարակախոս, Կալկաթայի անգլիական եպիսկոպոսական ճեմարանի նախկին սան Մեսրոպ Թադիադյանի (1803-1858) «Ազգասեր» և «Ազգասեր Արարատյան» պարբերականներում հաճախ ենք հանդիպում Շեքսպիրի, Բայրոնի, Բալզակի, Լոնգֆելլոյի անունների հիշատակմանը, ինչպես նաև նրանց առանձին ստեղծագործությունների կամ դրանցից վերցրած հատվածների հայերեն թարգմանություններին: Այդ ստեղծագործությունները համապատասխանում էին ինչպես Հայաստանում, այնպես էլ հայ գաղթավայրերում XIX դարի առաջին կեսում, երբ ցայտուն է դառնում գրականության աշխարհականացումը և մերձեցումը իրականությանը, հասարակական նոր հարաբերությունների պայմաններում ձևավորվող հայ ընթերցողի հոգևոր պահանջներին, տրամադրություններին և ազգային-ազատագրական ձգտումներին: Այսպես, օրինակ, Մ. Թադիադյանի՝ Բայրոնի, ում նա համարում էր գրական մեծության չափանիշ, ստեղծագործություններից կատարած թարգմանություններում (*Իցէ՛ թէ տղայ միամիտ էի, Տեսի զքեզ, ո՛հ, յարտասուս*), որոնք լույս են տեսել 1848-ին և 1850-ին «Ազգասեր Արարատյան» պարբերականում⁴³⁶, զգացվում է բայրոնական տրամադրություն՝ բողոք և հուսախաբություն, ասիսոսանք և վրդովմունք, կյանքի հարվածներ և շրջապատի անտարբերություն:

Սմբատ Շահազիզը հայ իրականության մեջ առաջիններից մեկն էր, որի գրական գործունեության վրա որոշակի ազդեցություն թողեց Բայրոնի քնարերգությունը: Այսպես, դեռևս 1860-ին Մոսկվայում լույս է

⁴³⁵ Տե՛ս Զ. Բայրոն, *Իտալիա (Չայլդ Դարուդի ուխտագնացությունը* պոեմի 4-րդ նվազը), թարգմ. Ղ. Ալիշան, Վենետիկ, Ս. Ղազար, 1860:

⁴³⁶ Տե՛ս «Ազգասեր Արարատեան», 1848, № 2, էջ 16: - «Ազգասեր Արարատեան», 1850, № 50, էջ 400:

տեսնում քսանամյա Ս. Շահազիզի բանաստեղծությունների առաջին գիրքը՝ *Ազատության ժամեր* ⁴³⁷, որտեղ հեղինակը, Բայրոնի *Պարսպության ժամեր* ժողովածուի նմանությամբ, զովերգում է իր ծննդավայրն ու հեռավոր հայրենիքը, ուսանողական օրերն ու պատանեկան սիրո հույզերը: Ինչպես նշել ենք, բայրոնիզմն իր արտահայտությունն է գտել նաև Ս. Շահազիզի *Լևոնի վիշտը* ⁴³⁸ պոեմում, որը գրված է Բայրոնի *Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը* երկի անմիջական ազդեցության տակ և իր կառուցվածքով, պատմելաձևով, բովանդակությամբ և գլխավոր հերոսին համակած թախծի զգացումով շատ ընդհանուր եզրեր ունի Բայրոնի պոեմի հետ:

Իսկ 19-րդ դարի վերջերին նշանակալի առաջընթաց ապրող հայ պոեզիայի վրա արդեն զգալի ազդեցություն է թողնում Բայրոնի ստեղծագործությունը: 19-րդ դարի 90-ական թվականներին և 20-րդ դարի սկզբին Բայրոնի ստեղծագործությունները (շատ բանաստեղծություններ *Երրայական մեղեդիներից*, հատվածներ *Չայլդ Հարոլդի ուխտագնացությունից* և *Դոն ժուանից*, առանձին բանաստեղծություններ, *Շիլլոնի կալանավորը*, *Ծովահենը*) ավելի շատ են թարգմանվել հայերեն ու դարձել քննարկման առարկա, քան որևէ այլ ժամանակահատվածում: Հայ գրականագետների ուսումնասիրություններում Բայրոնը գնահատվում էր որպես ամենամեծ ռոմանտիկ, իսկ բայրոնիզմն իր մեջ ամփոփում էր ռոմանտիզմի գրեթե ամբողջ էությունը:

Այդ ժամանակաշրջանում Բայրոնի քնարերգությանը դիմելը, ինչպես նաև *Բայրոնին* բանաստեղծությունը գրելը, հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի համար պատահական երևույթ չէին և ոչ էլ ակնթարթային տարվածության արդյունք: Ընդհանրապես, 1894-1898 թվականները Հ. Թումանյանի ստեղծագործական կյանքում համարվել են բայրոնյան շրջան: Այդ մասին հիշատակում է նաև ինքը՝ Թումանյանը, 1902-ի հոկտեմբերի 27-ին Լեոյին ուղղված նամակում. «Ես անգիտակցաբար ենթարկված եմ եղել ազդեցությունների, որոնց մասին, մինչև օրս հաշիվ չեմ տվել ինձ... ծանոթացել ու սիրել եմ Բայրոն, Գյոթե, Շեքսպիր: Սրանք կարծում եմ, անպայման ազդել են իմ գրվածքների վրա, բայց այնպիսի գրվածքների, որ տակավին չեն տպագրված, մինչև անգամ չեն վերջացած և որոնց մասին հաշիվ չեմ կարող տալ:

⁴³⁷ Տե՛ս Սմբատայ Շահազիզեանց, *Ազատութեան ժամեր*, Ի Տպարանի Լազարեանց ճեմարանի, Մոսկվա, 1860:

⁴³⁸ Տե՛ս Սմբատայ Շահազիզեան, *Լեւոնի վիշտը* (Ժամանակակից վէպը չորս գլուխ բաժանուած եւ զանազան բանաստեղծութիւններ), Типогр. Лазаревского института вост. языков (А. Мамонтов), Մոսկուա, 1865.

Սակայն զգում են նրանց աններթելի ազդեցությունը»⁴³⁹։ Թումանյանն այնքան է հափշտակված եղել Բայրոնի ստեղծագործությամբ, որ, ինչպես վերհիշում են նրա ժամանակակիցները, անգլերեն դասեր է առնում Թիֆլիսի անգլիական փոխհյուպատոս Մուրտադից, որպեսզի կարողանա *Շիլիոնի կալանավորը* պոեմը թարգմանել բնագրից։ Անգլիացի բանաստեղծի ազատատենչ ոգին համընկնում էր Թումանյանի այդ շրջանի խոհերին ու տրամադրություններին և արտացոլվում նրա մի շարք ստեղծագործություններում։ Ինչպես հայտնի է, 1816-ին Անգլիայից հեռանալուց հետո, Բայրոնի ամբողջ քնարերգությունը լի է խռովահույզ, ըմբոստ գաղափարներով։ *Չայլդ Ֆարոլդի ուխտագնացությունը*, *Ծովահենը* պոեմներում արդեն զգացվում է այդ տրամադրությունը, սակայն այն ավելի ուժգին և կրքոտ է հնչում նրա կյանքի վերջին տարիներին, երբ ռոմանտիկ բանաստեղծը մտել էր սերտ կապի մեջ իրական կյանքի հետ և ավելի մոտ էր կանգնած քաղաքական պայքարին՝ դրա մեջ տեսնելով իր կոչումն ու գործը։ Բայրոնը դառնում է տառապած ժողովուրդների ազատագրական պայքարի ոչ միայն ականատեսը, այլև անմիջական մասնակիցը։ Մեկը մյուսին են հաջորդում նրա ազատաշունչ քնարերգության գլուխ-գործոցները՝ լի ազատության ձգտումով և պայքարի կենդանի զգացումով։ Բայրոնի *Երբ մարդ չունի ազատություն* (1820), *Յունաստանին* (1824) և *Այսօր լրանում է իմ երեսունվեց տարին* (1824) բանաստեղծությունները, ինչպես նաև *Կեֆալոնյան օրագրում* (1823) գրի առնված տողերը, լի են անհողդողդ արիությամբ և պարտքի զգացումով։ Անգլիացի բանաստեղծի ժողովուրդների ազատության համար պայքարի անմիջական մասնակցի, ռազմատենչ ոգին թանկ է եղել Թումանյանի համար, քանի որ 1890-ական թվականներին Արևմտյան Հայաստանում արդեն սկսվել էին հայկական կոտորածները, իսկ Կովկասում ծայր էին առել հալածանքները հայ մշակութային գործիչների և ազգային-ազատագրական շարժման մասնակիցների նկատմամբ։ Եվ բնական է, որ «հայոց վշտի» երգչին հարազատ էր «համաշխարհային վշտի» երգչի թախիծը։ Այդ տարիներին Թումանյանը գրում է *Իսրայել* (1890), *Քրիստոսն անապատում* (1892), *Գաղթականի երգը* (1896), *Տրտմության սաղմոսներից* (1898), *Պանդուխտ եմ, քույրիկ* (1902), *Հայոց լեռներում* (1902), *Հայոց վիշտը* (1903), իսկ ավելի ուշ՝ *Ընտրյալը* (1907) և *Գերության մեջ* (1916) բանաստեղծությունները։

⁴³⁹ Յ. Թումանյան, *Երկերի ժողովածու*, հ. 4, «Հայաստան», Երևան, 1969, էջ 366։

Բանաստեղծ Ռուբեն Որբերյանի *Ծփանքներ* պոեմը, որն առաջին անգամ տպագրվել է 1906-ին⁴⁴⁰, ինչպես և Ս. Շահագիզի *Լևոնի վիշտը* պոեմը, գրվել է *Չայլդ Դարուդի ուխտագնացությունը* պոեմի ազդեցության տակ, իսկ դրա նախերգանքն ամբողջությամբ նվիրված է Բայրոնին: Այդ պոեմում պատկերվում են հայ ժողովրդի կրած տառապանքները, նշվում մեր ճնշված, թշվառ հայրենիքի փրկության ու ազատության ուղիները, իսկ անգլիացի բանաստեղծի կերպարն ուրվագծվում է կենսագրական հաջորդականությամբ՝ այն երկրների ֆոնի վրա, որտեղ նա եղել է՝ նշելով նրա կյանքի և ուխտագնացության բոլոր փուլերը:

Ջուզահեռներ անցկացնելով Բայրոնի և հայ մեծ բանաստեղծ, արձակագիր և հասարակական գործիչ Ավետիք Իսահակյանի վաղ շրջանի (հիմնականում՝ մինչև «բայրոնյան» տարիքի) ստեղծագործությունների միջև՝ նույնպես նկատում ենք մի շարք ընդհանրություններ և նմանություններ, չնայած Իսահակյանի վրա բայրոնիզմն անմիջական ազդեցություն չի թողել:

Նախ, նշենք, որ Իսահակյանն, ինչպես և Բայրոնը, իր ժամանակակիցների մոտ վայելել է մեծ բանաստեղծի համբավ: Դեռևս 1916-ի հունվարի 28-ին ռուս բանաստեղծ Ալեքսանդր Բլոկը (1880-1921) ռուս քննադատ և բանաստեղծ Ալեքսանդր Իզմայլովին (1873-1921) հասցեագրած նամակում նշում է, որ «Իսահակյանն առաջնակարգ բանաստեղծ է. այժմ, միգուցե, այդպիսի յուրօրինակ և անմիջական տաղանդ չկա ամբողջ Եվրոպայում»⁴⁴¹, իսկ Լուի Արագոնը Իսահակյանին անվանում է «այս հարյուրամյակի մեծագույն բանաստեղծ»⁴⁴²: Նրանց անձնական կյանքում նույնպես շատ նմանություններ և ընդհանրություններ կան: Իսահակյանը նույնպես, ինչպես և Բայրոնը, խուսափելով հալածանքներից, հեռացել է իր հայրենիքից և երկար տարիներ ապրել վտարանդության մեջ՝ Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա (Վենետիկ, Ռավեննա), Յուգոսլավիա: Ինչպես և Բայրոնին, նրան նույնպես չի հաջողվել ամուսնանալ իր սիրած էակի հետ, ում սիրել է անկեղծ սիրով, չի մոռացել ամբողջ կյանքի ընթացքում և մինչև իր մահը նվիրել է բանաստեղծություններ: Ինչպես Բայրոնը, Իսահակյանը նույնպես կատարել է օրագրային գրառումներ, որոնց մեջ վավերացրել է սեփական հոգևոր ընդլվզումներն ու պոռթկումները, վերլուծություններն ու եզրակացու-

⁴⁴⁰ Տե՛ս Ռ. Ալիբեյան [Որբերյան], *Ծփանքներ*, Ճիպուդի, 1906, Տպարան Փափագեան եւ Տիրիք, Պահիրտ:

⁴⁴¹ Александр Блок, *Собрание сочинений*, том восьмой, *Письма 1898-1921*, Государственное издательство художественной литературы, М. – Л., 1963, сс.455-456:

⁴⁴² Луи Арагон, *Памяти Аветика Исаакяна*, «Правда», 1957, № 294, 21 октября.

թյունները, առանց միտքը կաշկանդելու գրի է առել այն, ինչ հարմար է գտել տվյալ պահին. «... գրում եմ խառը՝ ինչ դուրս գա՝ գա, - անցյալի մասին էլ, ներկային էլ, ապագային էլ՝ այնպես, ինչպես քեֆս ուզում է ...», - գրում է իր հիշատակարանում 18-ամյա պատանին⁴⁴³. Գրեթե համանման գրառում կա Բայրոնի բառարանում. «Իսկ ի՞նչ եմ գրելու ես... Գրի եմ առնելու այն ամենը, ինչ խելքիս փչի...»⁴⁴⁴ կամ՝ «Գրում եմ՝ ինչ որ կամենում եմ ես... // Թեև չգիտեմ բառն հաջորդ տողի»⁴⁴⁵:

Դիտարկելով Բայրոնի և Իսահակյանի ստեղծագործությունները՝ հանգում ենք այն եզրակացության, որ դրանց հերոսները գրողների «ես»-ի ինքնաբացահայտումն ու ինքնահաստատումն են: Բայրոնի «ես»-ը զուգահեռ է ենթադրում Չայլդ Չարոլդի հետ, չնայած Բայրոնը ժխտում է «որևէ հարազատություն նրա հետ»⁴⁴⁶, իսկ Իսահակյանի «ես»-ը՝ *Աբու-Լալա Սահարի* պոեմի հերոսի հետ, ինչպես ինքն է խոստովանում՝ «...այնտեղ ես եմ, ուրիշ ոչ ոք, միայն դա ուրիշի վերարկուի տակ»⁴⁴⁷: Մեկ ուրիշ առիթով, խոսելով դրա մասին, Իսահակյանը ընդհանրացնում է. «Իմ գրվածքների մեջ ես իմ հոգին եմ նկարում»⁴⁴⁸: Նույնը նշում է ռուս մեծ բանաստեղծ Ա. Ս. Պուշկինը Բայրոնի մասին իր *Բայրոնի դրամաների մասին* ուրվագրում. «Բայրոնը միակողմանի հայացք է նետել աշխարհի և մարդկության էության վրա, ապա շուռ եկել դրանցից և խորասուզվել ինքն իր մեջ: Նա ներկայացրել է մեզ իր իսկ ուրվականը: Նա իրեն ստեղծել է երկրորդ անգամ՝ մերթ ուրացյալի գլխափաթեթի տակ, մերթ ծովահենի թիկնոցի մեջ, մերթ գյավուրի տեսքով՝ սքեմի տակ շունչը փչելիս, մերթ, վերջապես, որպես թափառական... Վերջիվերջո նա ընթերցել, ստեղծել և նկարագրել է մի (հենց իր) կերպար... Երբ նա սկսել է գրել իր ողբերգությունը, ապա յուրա-

⁴⁴³ Ա. Իսահակյան, *Հիշատակարան*, «Սովետական գրող», Երևան, 1977, էջ 35:

⁴⁴⁴ *Byron's Letters and Journals*, Selected and Edited by Jeffrey D. Hooper, Chapter 8: "The king-times are fast finishing" – Sept. 22.1820 - Jan. 27.1822, <http://engphil.astate.edu/gallery/byron9.html>, "My Dictionary", May 1821, and Detached Thoughts, 15 October 1821 - 18 May 1822, Ravenna May 1st 1821. - Байрон, *Дневники. Письма*, Изд. АН СССР, М., 1963, с. 236.

⁴⁴⁵ Byron, *Don Juan*, Canto IX, stanza XLI (հայերեն թարգմանությունը Չենրիկ Սևանի՝ Ջորջ Գորդոն Բայրոն, *Դոն Ժուան*, «Սովետական գրող», Երևան, 1988, էջ 322):

⁴⁴⁶ Byron's letter to R. Ch. Dallas on the October 31st 1811 (see e. g. *Famous in my time: Byron's Letters and Journals*, edited by Leslie A. Marchand, vol. 2: 1810-1812, The Belknap Press of Harvard University Press, Cambridge, Massachusetts, 1973, p. 122). - Байрон, *Дневники. Письма*, Изд. АН СССР, М., 1963, с. 38.

⁴⁴⁷ *Ավետիք Իսահակյանի նամակները Կարեն Սիքալեյանին*. «Պատմաբանասիրական հանդես», 1973, № 2, էջ 235:

⁴⁴⁸ Ավ. Իսահակյան, *Խտացումներ*. «Բանբեր Հայաստանի արխիվների», 1975, № 3, էջ 44:

քանչյուր գործող անձին տվել է մեկական բաղկացուցիչ մաս իր թախ-
ծոտ և ուժեղ կերպարից, և, այսպիսով, իր վեհասքանչ էակը բաժան-բա-
ժան արել մի քանի մանր և աննշան անձանց միջև»⁴⁴⁹:

Բայրոնի *Չայլդ Չարոլդի ուխտագնացությունը (ՉՅՈՒ)* և Իսահակ-
յանի *Աբու-Լալա Մահարի (ԱԼԱ)* պոեմների հերոսները, հիասթափվելով
առօրյա կյանքից, մարդկային հարաբերություններից, դիմում են
ճանապարհորդության: Այդ երկու պոեմներն էլ հեղինակները գրել են
երիտասարդ տարիքում: Դրանք թարգմանվել են աշխարհի բազմաթիվ
լեզուներով: Համեմատելով այդ պոեմների տեքստերը կարելի է գտնել
մի շարք նմանություններ և ընդհանուր գնահատականներ: Բերենք
այդպիսի մի քանի օրինակներ.

Չեն հավատում ես կանացի
Հառաչանքին խաբուսիկ,
Ա՛խ, կարբի նոր սերն անուշ
Արցունքն աչքից գեղեցիկ:
(*ՉՅՈՒ՝ I, XIII-9*, թարգմ. Դ. Սևան)⁴⁵⁰

Եվ կինն ի՞նչ է որ... խորամանկ, խաբող,
առնախանձ մի սարդ, հավերժ մանրամիտ,
Որ հացդ է սիրում, համբույրի մեջ սուտ
և քո գրկի մեջ գրկում ուրիշին:
(*ԱԼԱ՝ II, 4*)⁴⁵¹

Կամ՝

Ատում եմ կնոջ՝ տարերքը կրքի,
միշտ բեղմնավորող եղեռնը անսանձ,
Աղբյուրն անսպառ, որ կուտակում է
աշխարհի վրա տիղմը չարության:
Ատում եմ նորից սերն ու կնոջը,
իր համբույրները շողոմ ու դժնյա, -
Փախչում եմ նրա ճահիճ-մահիճից,
և անիծում եմ երկունքը նրա:
(*ԱԼԱ՝ II, 12-13*)⁴⁵²

⁴⁴⁹ А. С. Пушкин, *Собрание сочинений в десяти томах*, М., “Правда”, 1981, т. VI, с. 35.

⁴⁵⁰ Բայրոն, *Երկերի ժողովածու*, «Հայաստան», Երևան, 1965, էջ 107:

⁴⁵¹ Ավետիք Իսահակյան, *Երկերի ժողովածու*, վեց հատորով, հատոր երկրորդ,
«Հայաստան», Երևան, 1974, էջ 57:

⁴⁵² Անդ, էջ 58:

...

Եվ շատերի հետ նա սեղան
նստեց,
Բայց, ավա՜ղ, կյանքում մնաց
միայնակ,
Ու նրա ոգին տեսավ, ճանաչեց
Շողոքորթ մարդկանց՝ անսիրտ,
հացկատակ...
(ՉՅՈՒ՝ I, IX)⁴⁵³

Հզորների և մեծատունների հետ սեղան
նստեց,
.....
Եվ նրա խորաթափանց ոգին
ճանաչեց մարդուն,
ճանաչեց և խորագին ատեց մարդուն
Եվ նրա օրենքները:
(ՍԼՄ՝ Նախաբան)⁴⁵⁴

Կամ՝

Ատում եմ, ինչ որ սիրել եմ առաջ,
իմչ որ տեսել եմ մարդկային հոգում.
Մարդկային հոգում՝ զագիր ու նանիր՝
համրել եմ հազար գարշանք ու նողկում:
(ՍԼՄ՝ I, 12)⁴⁵⁵

Նշենք, որ վերոհիշյալ երկու պոեմներն էլ գրվել են այն ժամանակ, երբ նրանց հեղինակները եղել են երիտասարդ և համակված ռոմանտիզմի գաղափարներով: Երկու պոեմների հերոսներն էլ, հիասթափվելով տիրող իրականությունից, մարդկային հարաբերություններից, հեռանում են իրենց հայրական տնից և դիմում անորոշություններով լի ճանապարհորդության: Բերենք ևս մեկ-երկու օրինակ.

Ա՛խ, մնաս բարով նա մորը չասաց
Ու փախավ թաքուն հայրենի տնից...
(ՉՅՈՒ՝ I, X)⁴⁵⁶

Ա՛խ, մնաք բարև չեմ ասում ես ձեզ,
իմ հոր գերեզման,
օրոքք մայրական...
(ՍԼՄ՝ I, 10)⁴⁵⁷

⁴⁵³ Բայրոն, *Երկերի ժողովածու*, էջ 103-104:

⁴⁵⁴ Ա. Իսահակյան, *Երկերի ժողովածու*, էջ 53:

⁴⁵⁵ Անդ, էջ 55:

⁴⁵⁶ Բայրոն, *Երկերի ժողովածու*, էջ 104:

⁴⁵⁷ Ա. Իսահակյան, *Երկերի ժողովածու*, էջ 55:

...

Եվ ես հիմա կյանքում մենակ,
Թափառում եմ այս ծովում,

Տա՛ր ինձ լուսազգեստ, օտար մի եզերք,
հեռու, հեռավոր, մենավոր ափեր.

.....
Տա՛ր ինձ, նավա՛կ, քեզ հետ հոգ չէ,
Թե բախտն ինձ ուր կտանի,
Տա՛ր ուր կուզես, միայն թե ես
Չտեսնեմ հողն հայրենի:
Ողջո՛ւյն, ողջո՛ւյն, մութ ալիքներ,
Թե իմ աչքից կորչեիք,
Կողջունեի ժայռ, անապատ,
Բարի՛ զիշեր, հայրենի՛ք:

(ՉՅՈՒ՝ I, XIII-10-11)⁴⁵⁸

Սուրբ մենակություն, դո՛ւ, իմ օազիս,
դո՛ւ, երազների աղբյուր զովաբեր:
(ՍԼՄ՝ III, 18)⁴⁵⁹

Բայրոնի և Իսահակյանի այլ ստեղծագործություններում նույնպես
նկատվում են բազմաթիվ նմանություններ ու ընդհանրություններ:
Համեմատելով Բայրոնի *Գերության մեջ* (անգլերենում անվերնագիր է) և
Իսահակյանի *Իսրայելացիք Բաբելոնում* բանաստեղծությունները,
որոնք ներկայացնում են Աստվածաշնչի 137-րդ սաղմոսը՝ հաղիպում
ենք բավականին նման տողերի.

Բաբելոնի գետի ափին նստած էինք լուռ ու տխուր,
Հիշում Սիոնը հայրենի, մորմոքալով աղեկտուր.
Հիշում էինք օրերն ահեղ, երբ թշնամին վայրագ ու չար
Ավերակեց Սաղեմը սուրբ, գերեց երկիրը վայրաբար.

.....
Երբ թշնամին սպառնաց մեզ. «Ղե՛, երգերը ձեր երգեցեք»:
Սեր երգե՞րը, թշնամու մո՞տ, մեր սուրբ երգե՞րը, օ՛, երբե՞ք...⁴⁶⁰
(թարգմ. Ս. Տարոնցի)

⁴⁵⁸ Բայրոն, *Երկերի ժողովածու*, էջ 107-108:

⁴⁵⁹ Ա. Իսահակյան, *Երկերի ժողովածու*, էջ 62:

⁴⁶⁰ Բայրոն, *Երկերի ժողովածու*, էջ 56:

- «Ինչո՞ւ էք լալիս...» մեր գերիչները
 Ասում էին մեզ - «Ինչո՞ւ չէք հնչում
 Չքնաղ Սիօնի անուշ երգերը...»
 Եւ ի՞նչ – մենք մի՞թէ օտար աստղերի
 Ցօլլանքի տակ կարող ենք երգել...⁴⁶¹

Այս տողերի նմանությունը միգրացե նույն թեմայի ընտրության արդյունք է: Վերոհիշյալ սաղմոսում, որն իր հայրենիքից վտարված հրեա ժողովրդի դառն ճակատագրի արտացոլումն է, հրեաները ողբում են իրենց գերեվարությունը: Բնական է, որ այդ թեման, համահունչ լինելով հայ ժողովրդի ազատագրական տենչերին ու ձգտումներին, պետք է որ ստեղծագործական լիցք տար նաև հայ բանաստեղծներին: Սակայն, մեր կարծիքով, հատկապես այդ սաղմոսին անդրադառնալը, առաջին հերթին կապված է հայ բանաստեղծների վրա Բայրոնի թողած ազդեցության հետ: Բացի Իսահակյանից, այդ թեմային անդրադարձել են նաև Րաֆֆին և Թումանյանը: Րաֆֆին սաղմոսի ինն առանձին կետերն արտացոլող իր ինը քառյակից բաղկացած *Իսրայելը Բաբելոնում* բանաստեղծությունը գրել է 1856-ին: Բերենք մեկական հատված Բայրոնի և Րաֆֆու բանաստեղծություններից.

Չորանա՛ն թող ձեռքերը մեր և լեզուն մեր լալկի իսպառ, Թե նրանց մոտ մի երգ հնչենք, թե շարժենք գեթ տավղի մի լար⁴⁶²:	Իմ աջ ձեռքս թող չորանա, Երբ մոռանամ քո⁴⁶³ սերն անճառ: Երբ չըհիշեմ քեզ մի լուսե, Թո՛ղ իմ լեզուս փակչի քիմքիս, Եվ հավիտյան թո՛ղ մունջ մնամ, Երբ քեզ համար չըտամ հոգիս⁴⁶⁴:
---	--

Հավանաբար գտնվելով Բայրոնի բանաստեղծության ազդեցության տակ՝ նույն թվականին Րաֆֆին գրում է մեկ այլ ընդարձակ բանաստեղծություն՝ *Գերին Ավարայրի (Վարդանանց պատերազմի ժամանակ)* խորագրով, որը նվիրված է պարսից բռնակալների դեմ հայ ժո-

⁴⁶¹ Ա. Իսահակեան, *Բանաստեղծութիւններ*, Տպարան «Արօր», Բագու, 1903, էջ 133:

⁴⁶² Բայրոն, *Երկերի ժողովածու*, էջ 56:

⁴⁶³ Խոսքը Իսրայելի մասին է:

⁴⁶⁴ Րաֆֆի (Հակոբ Մելիք-Հակոբյան), *Երկերի ժողովածու*, տասը հատորով, ութերորդ հատոր, Հայպետհրատ, Երևան, 1957, էջ 9:

ղովորդի մղած ազգային-ազատագրական պայքարին: Այս բանաստեղծության մեջ հանդիպում ենք ճիշտ նույն մտքին.

Թո՛ղ իմ բազուկս չորանա իսպառ,
Թո՛ղ լեզուս լռվի, չըխոսի մի բառ,
Երբ պատերազմում, քո թշնամու դեմ,
Չըզոհեն արյունս քո սիրո համար⁴⁶⁵:

Իսկ Յ. Թումանյանի *Գերության մեջ* բանաստեղծությունը *Նմանություն* ենթավերնագրով (հավանաբար, Բայրոնի *By the rivers of Babylon we sat down and wept* բանաստեղծության թարգմանիչ Ս. Տարոնցին այդ պատճառով է թարգմանության ժամանակ օգտագործել նույն վերնագիրը) առաջին անգամ տպագրվել է 1916-ին⁴⁶⁶: Այստեղ նշենք, որ Բայրոնն ավելի հարագատ է մնացել սկզբնաղբյուրին, քան Թումանյանը: Բայրոնի բանաստեղծության մեջ հրեուհիները չեն վերցնում տավիղներն ու չեն երգում, այլ «մորմոքալով աղեկտուր», պարզապես ցավով ու կարոտով են հիշում «Սիոնը հայրենի»՝ ուխտելով «չերգել բնավ, քանի հողը գերի է մեր. ... քանի մեջն ենք մենք գերության»: Իսկ Թումանյանի բանաստեղծության մեջ գերիները երգում են: Նրանց երգը հայրենիքին հավատարիմ մնալու երդում է ու վրեժի կոչ: Այդ երգից հետո գերեվարողները զարմանքով նկատում են, որ անկարող են սպանել գերյալների ոգին: Դա լիովին բացատրվում է Թումանյանի այդ տարիների հոգեվիճակով: Լինելով 1915-ին երիտթուրքերի կազմակերպած հայերի ցեղասպանության ժամանակակիցն ու ականատեսը՝ Թումանյանը, նույնիսկ հայկական ջարդերից ու կոտորածներից հետո էլ, չէր կորցրել հավատը հայության ապագայի նկատմամբ: Այդ հավատն այլաբանորեն իր արձագանքն է գտել վերոհիշյալ բանաստեղծության հետևյալ տողերում, երբ գերիների երգելու ժամանակ

... զարմանքով հարցնում էին գերիները մեկմեկու.

- Մի՞թե դեռ էլ կենդանի է Իսրայելը աշխարհում,

Մի՞թե նրան չըսպանեցինք պատերազմի դաշտերում...⁴⁶⁷

⁴⁶⁵ Անդ, էջ 11:

⁴⁶⁶ Տե՛ս «Համբաւաբեր» (1915-1917 թվականներին Թիֆլիսում լույս տեսած հայ հասարակական-գրական շաբաթաթերթ), 10 ապրիլի 1916, № 16, էջ 507:

⁴⁶⁷ Յ. Թումանյան, *Երկերի ժողովածու*, տասը հատորով, հատոր առաջին, Հայկական ԽՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1988, էջ 285:

Եզրափակելով մեր խոսքը, նշենք, որ Բայրոնը ազատ, ինքնիշխան, «համաշխարհային թախծի» անհատականություններ զովերգող ստեղծագործող էր: Այս առումով ուշագրավ են պատանի Իսահակյանի գրառումներն ու մտորումներն իր «Հիշատակարանում». «...ես ունեմ համաշխարհային վիշտ, մեկանխուլիա...»⁴⁶⁸, «ես սիրում եմ ինքնուրույնություն, տարօրինակություն, անհատականություն. միապետ, միահեծան, ինքնիշխան... «ես» ունենալ, տիզերքի մեջ՝ աշխարհ ունենալ...»⁴⁶⁹:

Ուսումնասիրելով հայ-անգլիական գրական առնչությունները՝ մենք նկատում ենք, որ շատ անգլիական բանաստեղծներ (Ու. Շեքսպիր, Ռ. Բեռնս, «լճային դպրոցի» ներկայացուցիչներ՝ լեյկիստներ, Թ. Մուր, Պ. Շելլի, Ջ. Բայրոն և այլն) են թարգմանվել հայերեն, բայց, այնուամենայնիվ, Բայրոնը թերևս անգլիացի միակ բանաստեղծն է, ով հայերի նկատմամբ ունեցած իր սիրո ու հարգանքի համար միշտ հիշվում է և արժանանում բարձր գնահատականի հայ իրականության մեջ:

Մեր ուսումնասիրությունը ցանկանում ենք ավարտել Բայրոնի մասին Թ. Մեդվինի կատարած հետևյալ հիանալի եզրահանգմամբ. «Մեծ բանաստեղծը ոչ մի երկրի չի պատկանում. նրա ստեղծագործությունները համընդհանուր սեփականություն են, իսկ հուշագրությունները՝ հասարակության համընդհանուր ժառանգություն»⁴⁷⁰: Իրոք, թե՛ Բայրոնի, թե՛ Իսահակյանի ու Թումանյանի ստեղծագործությունները վաղուց արդեն դուրս են եկել ազգային նեղ շրջանակներից և դարձել համընդհանուր սեփականություն՝ պատկանելով բոլոր ժողովուրդներին և զարդարելով համաշխարհային գրականության էջերը:

⁴⁶⁸ Ա. Իսահակյան, *Հիշատակարան*, էջ 179:

⁴⁶⁹ Անդ, էջ 45:

⁴⁷⁰ Thomas Medwin, *Journal of the Conversations of Lord Byron, noted during a residence with his lordship at Pisa, in the years 1821 and 1822*, in two volumes, vol. 1, Paris, published by L. Baudry, 1825, p. XXI.

ՋՈՐՋ ԳՈՐԴՈՆ ԲԱՅԵՐՆ

Լարա

Անգլ. թարգմ.
Հենրիկ Սևան



„Հայաստան. հրատարակչություն Երևան 1974“

1974-ին Երևանում տպագրված *Լարա* պոեմի տիտղոսաթերթը
The title-page of *Lara* published in Yerevan in 1974

ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով սույն աշխատության մեջ կատարած մեր ուսումնասիրության արդյունքները՝ հանգում ենք հետևյալ եզրակացությանը.

1. 18-րդ դարի ընթացքում հայրենիքից հեռու գտնվող Վենետիկի փոքրիկ ու գողտրիկ կղզյակի Մխիթարյան միաբանությունը, որը Նապոլեոնի հատուկ հրովարտակով հռչակվել էր որպես հայ կրթության և գիտության կաճառ, դառնում է հայագիտական կարևորագույն կենտրոն, որի կատարած ծավալուն ազգանպաստ ու գիտական գործունեությանն անդրադարձել են ինչպես հայ մտավորականները (Լեո, Բաֆֆի, Միքայել Նալբանդյան, Արշակ Չոպանյան և ուրիշներ), այնպես էլ բազմաթիվ օտարազգի քաղաքական գործիչներ, պատմաբաններ, բանասերներ և գրողներ (Վիկտոր Լանգլուա, Լորդ Ռոբերտ Քրիզոն, Ալֆոնս Լամարթին և ուրիշներ):

2. Եվրոպական քաղաքակրթությունից հոգնած անգլիացի մեծ բանաստեղծ Բայրոնը, «երբ 1816 թվականին» ժամանել է «Վենետիկ... նույնպես, շատ ճանապարհորդների նման, խիստ» տարվել է «Ս. Ղազար վանքի միաբանությամբ, որը միավորում է կղերական հաստատության բոլոր առավելությունները, առանց նրա մոլորություններից որևէ մեկի...»: Ս. Ղազար մայրավանքում էլ, ծանոթանալով հայ բազմադարյան հարուստ մշակույթին ու գրականությանը, սկսում է ուսումնասիրել հայերենը՝ երազելով ներթափանցել հայ պոեզիայի գաղտնարանները, ինչպես նաև թարգմանել հայ պատմիչների երկերը: Միաժամանակ նշենք, որ Բայրոնի քնարերգության վենետիկյան շրջանը, երբ բանաստեղծը բուռն ոգևորությամբ տարված էր հայերենով, հայ գրականությանը և մշակույթով, նշանավորվում է նաև վառ ու համարձակ քնարական նորարարությամբ (*Մանֆրեդ, Տաստյի գանգատը, Չայլդ Հարոլդի ուխտագնացության* վերջին մվագը, *Սարդանապալ, Կայեն* և այլն):

3. Բայրոնի 1816-1818 թվականների «հայկական» հանդիպումները նպաստեցին թե՛ Բայրոնի, թե՛ Մխիթարյանների փառքի տարածմանն ամբողջ Եվրոպայում: Նույնիսկ անգլիական հասարակության բարձր շրջանները, որոնք մինչ այդ խիստ բացասական և արհամարհական վերաբերմունք ունեին Բայրոնի նկատմամբ, սկսեցին հետաքրքրվել նրա հայկական ուսումնասիրություններով:

4. Բայրոնի և Մխիթարյանների հանդիպումներն առիթ հանդիսացան, որ Ս. Ղազար այցելեն բազմաթիվ օտարերկրացիներ՝ Թոմաս Մուրը (1819), Լը Վայան դը Ֆլորիվալը (1828), Վալտեր Սկոտը (1832), Հայնրիխ Պետերմանը (1833), Ալֆրեդ դը Մյուսեն (1834), Ժորժ Սանդը (1834), Էդուարդ Թեյլորը (1851), Ժակ Օֆենբախը (1870), Էլեոնորա Դուգեն (1886) և շատ ուրիշներ: Այդ հանդիպումներից տասնյակ տարիներ անց (առ այսօր) նույնպես բազմաթիվ օտարազգի մտավորականներ են այցելում Ս. Ղազար և հետաքրքրվում Բայրոնի և Մխիթարյանների առնչություններով:

5. Սկսած 1840-ական թվականներից՝ Բայրոնի քնարերգությունը հայ մամուլում ձեռք է բերում առանձնակի հետաքրքրություն: Հայ իրականության մեջ հետաքրքրությունը Բայրոնի անհատականության, նրա գրական ժառանգության նկատմամբ պատահական երևույթ չէր, այլ պայմանավորված էր հայ մտավորականության ներկայացուցիչների հասարակական և քաղաքական դժգոհությամբ, քանի որ Բայրոնի իտալական շրջանի բանաստեղծությունները նրանց մեջ արթնացնում էին ազատագրական ծագումներ և պատասխանում նրանց հետաքրքրող հարցերին: Դրան նպաստեց նաև այն հանգամանքը, որ Բայրոնը 1816-1817 թվականներին Վենետիկի Ս. Ղազար կղզում սովորել էր հայերեն:

6. Մխիթարյաններն առաջիններից էին հայ իրականության մեջ, որ անդրադարձել են Բայրոնին ու նրա ստեղծագործությանը: Բայրոնի բազմաթիվ ստեղծագործություններ և նրա մասին հոդվածներ տեղ են գտել Մխիթարյանների հրատարակած գրքերում, ժողովածուներում և գրական հանդեսներում:

7. Բայրոնի հայագիտական ուսումնասիրություններին, նրա և Մխիթարյանների առնչություններին անդրադարձել են ոչ միայն Մխիթարյաններն ու մյուս հայ բանասերները, այլև բանաստեղծի շատ համերկրացիներ և օտարազգի հեղինակներ (նույնիսկ սովորական զբոսաշրջիկներ), ընդ որում, ոչ միայն գիտական, այլև գեղարվեստական գրականության մեջ:

8. Բայրոնի հարուստ նամականին, որի մեջ իրենց ուրույն տեղն ունեն հայերին և հայ մշակույթին վերաբերող էջերը, լայն հնարավորություն է ընձեռում խորամուխ լինելու բանաստեղծի անձնական կյանքի և ստեղծագործության ամենամոլորական գաղտնարանների մեջ: Բայրոնը պատմությանն է թողել արժանահավատության ու նորույթի տեսակետից հազվագյուտ փաստեր պարունակող և իր տեսակի մեջ

միակը հանդիսացող հարուստ նյութ Մխիթարյանների գործունեության վերաբերյալ:

9. Բայրոնի «հայկական» նամակները վառ ապացույցն են այն մեծ դերի, որ կատարել է անգլիացի բանաստեղծը հայ մշակույթն օտարներին ծանոթացնելու գործում: Դրանց միջոցով է անգլիախոս ընթերցողն առաջին անգամ ծանոթանում դեռևս 18-րդ դարի սկզբից ամբողջ եվրոպայում մեծ համբավ ու հռչակ վայելած հայագիտական խոշոր կենտրոնի՝ Վենետիկի Մխիթարյանների կատարած գիտական ու լուսավորական աշխատանքին և գաղափար կազմում նրա կարկառուն դեմքերի մասին:

10. Մխիթարյան միաբանության անդամներ Ս. Սոմայանը և Ս. Թեոդորյանը հնդկահայ մեծահարուստներ է. Ղարամյանի և Ս. Մուրադյանի վարժարաններ բացելու համար կտակած գումարը ձեռք բերելու նպատակով 1817 թվականի հունվարի 16-ին մեկնել են Մադրաս՝ լիազորված ոչ միայն Ս. Ղազար վանքի բոլոր վարդապետների ստորագրությամբ վավերացված փաստաթղթերով, այլև Բայրոնի հանձնարարական նամակով՝ ուղղված Ջոն Մըրրեին: Սակայն, Բայրոնի նամակը թվագրված է 8 հունիսի 1817: Մեր կարծիքով, Բայրոնի նամակը ամենայն հավանականությամբ թվագրված է եղել 8 հունվարի 1817, սակայն ըստ երևույթին Բայրոնի նամակների և օրագրերի առաջին հրատարակության մեջ Թ. Մուրը թյուրիմացաբար նշել է 8 հունիսի 1817: Այդ թյուրիմացությունը հետագայում տեղ է գտել մյուս հրատարակություններում:

11. Բայրոնի «հայկական» նամականին խոսում է նաև այն մեծ հետաքրքրության մասին, որ ցուցաբերել են օտարազգի գիտնականները հայոց լեզվի ուսումնասիրության նկատմամբ: Այդ նամականիի ուսումնասիրությունը թույլ է տալիս ավելի խորը բացահայտել 18-19-րդ դարերի հայ-անգլիական գրական առնչությունները, միաժամանակ նաև նոր և արժեքավոր տեղեկություններ ձեռք բերել նույն ժամանակաշրջանի հայ-եվրոպական գրական կապերի մասին (այստեղ առաջին հերթին նշենք ֆրանսիացի անվանի հայագետներ Սեն-Մարտենին, Բելլոյին և Ֆլորիվալին, որոնց թողած հսկայական ժառանգությունը նշանակալից դեր է խաղացել ինչպես ֆրանսիական, այնպես էլ, ընդհանրապես, եվրոպական հայագիտության զարգացման պատմության մեջ):

12. Վենետիկի Ս. Ղազար կղզում Բայրոնը, բացի հայերեն սովորելուց, զբաղվել է նաև հայագիտական ուսումնասիրություններով՝ Զ. Ավգերյանի հետ կազմել է *Հայերեն-անգլերեն քերականության և Անգլե-*

րեն-հայերեն քերականության ձեռնարկներ, կատարել թարգմանություններ հայ մատենագրությունից:

13. Բայրոնի երկերը հայերեն թարգմանությամբ հրատարակվել են ավելի քան հարյուր անգամ, ընդ որում, առանձին գրքերով՝ ավելի քան քսան անգամ: Բայրոնի երկերը հայերեն թարգմանել են քառասունից ավելի հայ գրողներ և թարգմանիչներ, այդ թվում՝ Մեսրոպ Թաղիադյանը, Յովհաննես Մասեիյանը, Ղևոնդ Ալիշանը, Յովհաննես Թումանյանը, Լեռնեցը, Յովսեփ Միրզայանը, Վահագն Դավթյանը, Յենրիկ Սևանը և շատ ուրիշներ: Հատկապես շատ են հրատարակվել *Չայլդ Դարուլդի ուխտագնացությունը*, *Դոն Ժուան* և *Շիլլոնի կալանավորը* պոեմները (կամ հատվածներ դրանցից), ընդ որում, միայն *Չայլդ Դարուլդի ուխտագնացությանը* անդրադարձել են վեց թարգմանիչներ՝ Ղ. Ալիշանը, Վ. Անտոնյանը, Լեռնեցը, Յ. Միրզայանը, Յովհ. Թումանյանը և Յ. Սևանը:

14. Շատ հայ բանաստեղծներ (Սմբատ Շահազիզ, Յովհաննես Թումանյան, Ռուբեն Որբերյան, Վահրամ Թորգոմյան, Եղիա Փեչիկյան, Արամայիս Սրապյան, Մառի Աթմաճյան, Նաիրի Զարյան, Յրաչյա Յովհաննիսյան, Անահիտ Պարսամյան, Սուրեն Մուրադյան, Վահագն Կարենց և շատ ուրիշներ) անմիջական մղումով և անսահման անկեղծությամբ ու անմիջականությամբ բազմաթիվ սրտառուչ տողեր են նվիրել հայ ժողովրդի անկեղծ բարեկամ Ջ. Բայրոնին, որոնց միջոցով բնորոշել են ազատության համար մարտնչող Բայրոն-մարտիկին, ինչպես նաև հայոց լեզուն, հայ գրականությունն ու մշակույթն ուսումնասիրող մեծ անհատին՝ տալով նրա խռովահույզ հոգու, խոհերի և պոռթկումների իրական նկարագիրը:

15. Հայ գրական-հասարակական միտքը Բայրոնին և նրա ստեղծագործություններին անդրադարձել է սկսած դեռևս XIX դարի առաջին կեսից: Առ այսօր հայ մամուլում (թե՛ պարբերական մամուլում, թե՛ առանձին ժողովածուներում), առանձնապես Մխիթարյանների մամուլում, զետեղվել և զետեղվում են բազմաթիվ հոդվածներ Բայրոնի մասին, ընդ որում հայ պարբերական մամուլում, բացի հայ հեղինակների գործերից, տեղ են գտել նաև Բայրոնին, ինչպես նաև նրա և հայերի առնչություններին վերաբերող օտար հեղինակների ստեղծագործություններ: Կան նաև մի շարք մենագրություններ: Ցավոք, որոշ աշխատանքներում տեղ են գտել թերություններ և անճշտություններ, որոնք հետագայում ոչ միայն չեն ուղղվել, այլև նույնությամբ կրկնվել են:

16. 19-րդ դարում բայրոնիզմը որպես մի հզոր ուժ՝ ազատության, կենսասիրության, անհոգության ու սիրո գովքով՝ իր ոլորտի մեջ էր ներառել Արևմուտքի և Արևելքի տարբեր լեզուներով ստեղծագործող

բանաստեղծներին, այդ թվում՝ նաև հայ բանաստեղծներին: Սկսած 19-րդ դարի առաջին քառորդից Բայրոնը հայ գրականության մեջ թողել է իր «հետքը», որտեղ ունեցել է իր «մշտական ներկայացուցիչը» կամ «ներկայացուցիչները»:


17. Բայրոնիզմը հայ գրականության մեջ ներթափանցել, տարածվել և զարգացել է անընդհատորեն՝ տարիների, տասնամյակների ընթացքում՝ հարստանալով, խորանալով և ընդգրկելով հայ բանաստեղծների նորանոր սերունդներ և անուններ, որ այս կամ այն չափով կրել են Բայրոնի անձի և ստեղծագործության ազդեցությունը, ինչպես նաև ունեցել են բազմաթիվ նմանություններ և ընդհանրություններ Բայրոնի կյանքի և ստեղծագործության հետ: Բայրոնիզմի դրսևորումը հայ գրականության մեջ բացատրվում է Բայրոնի բազմաճյուղյա և բազմաբովանդակ ստեղծագործության մեջ տեղ գտած ազատասիրական, հակաբռնակալական պայքարի ձգտումներով, ինչպես նաև անհատականության, ինքնահաստատման գաղափարներով: Բայրոնի պոեզիայի ազատատենչ տրամադրությունները, արդարացի պայքարի ռոմանտիզմը, մարդասիրությունը և լավատեսությունը հայ գրականության մեջ, առանձնապես հայ քաղաքական պոեզիայի վերելքի ժամանակահատվածներում, ըմբռնվել են առավել պարզությամբ, հարազատորեն ու արտասովոր ուժով, արձագանքել են հայ ժողովրդի ազատագրական ձգտումներին: Այս իմաստով «հայկական» բայրոնիզմը համաշխարհային բայրոնիզմի զարգացման մեջ գրավում է իր ուրույն և հատուկ տեղը:

18. Թե՛ Բայրոնի ու Շեքսպիրի, թե՛ Իսահակյանի ու Թումանյանի, թե՛ մյուս մեծերի ստեղծագործությունները վաղուց արդեն դուրս են եկել ազգային նեղ շրջանակներից ու դարձել համընդհանուր սեփականություն՝ պատկանելով աշխարհի բոլոր ժողովուրդներին և զարդարելով համաշխարհային գրականության էջերը, քանի որ «մեծ բանաստեղծը ոչ մի երկրի չի պատկանում. նրա ստեղծագործությունները համընդհանուր սեփականություն են, իսկ հուշագրությունները՝ հասարակության համընդհանուր ժառանգություն» (Թ. Մեղվին):

ԻՏԱԼԻԱ



ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐԱՔ

1889

1889-ին Վենետիկում տպագրված *Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը* պոեմի չորրորդ նվագի (*Իտալիա* խորագրով՝ հայերեն և անգլերեն) տիտղոսաթերթը

The title-page of the fourth canto of *Childe Harold's Pilgrimage* (entitled *Italy*, in English and Armenian) published in Venice in 1889

ՀԱՎԵԼՎԱԾ I

ՀԱՏՎԱԾՆԵՐ ԲԱՅՐՈՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

1. Պ-ՐՆ ՄԸՐՐԵԻՆ

4 դեկտեմբերի 1816, Վենետիկ

...Սկսել և շարունակում եմ հայոց լեզվի ուսումնառությունը, որին տիրապետում եմ հնարավորություններիս սահմաններում. ամեն օր գնում եմ հայկական վանք՝ դասեր առնելու մի գիտնական վանականից¹, և որոշ բացառիկ ու օգտակար տեղեկություններ եմ արդեն ձեռք բերել արևելյան այդ ժողովրդի գրականության և սովորությունների մասին: Նրանք այստեղ ունեն հաստատություն՝ եկեղեցի և իննսուն վանականից բաղկացած միաբանություն: Նրանցից ոմանք շատ ուսյալ և կիրթ մարդիկ են: Ունեն նաև տպարան և մեծ ջանքեր են գործադրում իրենց ազգը լուսավորելու համար: Իմ հանդգամաբ հայոց լեզուն (որ **երկունս է՝ գրաբար և աշխարհաբար**) դժվարին է, բայց ոչ անհաղթահարելի (համեմայն դեպս, ես հուսով եմ): Կշարունակեմ ուսումնառությունս: Հարկավոր է միտքս մարզել ավելի խիստ ուսման բնագավառում, և այս լեզուն, ամենադժվարինը լինելով ինձ համար, նույնպիսի անհրաժեշտություն է, որպիսին՝ պոչը օձի համար:

.....
Կարծում եմ, որ ձմեռը կանցկացնեմ **նրա** հետ և կգրադվեմ հայկական այբուբենով: Բարեբախտաբար տիկինը² իմ հանդեպ նվազ անողոք է, քան լեզուն. այլապես երկուսի միջև խելքիս մնացած մասն էլ կթոցների: Ի դեպ նա հայուհի չէ, այլ վենետիկուհի, կարծում եմ, որ այդ մասին արդեն գրել եմ:

¹ Խոսքը Հ. Ավգերյանի մասին է:

² Վենետիկում Բայրոնը սիրահարվում է վենետիկցի հարուստ վաճառական Սեզատիի քսաներկուամյա տիկնոջը՝ գեղեցկուհի Մարիանային, որին ծնողները բռնությամբ ամուսնացրել էին ծեր վաճառականի հետ: Այդ մասին Բայրոնն ավելի մանրամասն գրում է 1816-ի նոյեմբերի 17-ի նամակում՝ հասցեագրված Թ. Մուրին (տես Th. Moore, *The Life, Letters and Journals of Lord Byron*, London, John Murray, 1908, p. 329):

2. ՊՐՆ ՍՈՒՐԻՆ

5 դեկտեմբերի 1816, Վենետիկ

Իբրև հաճելի ժամանց, ամեն օր հայերեն եմ սովորում հայկական վանքում: Պարզվեց, որ միտքս պայծառացնելու համար ինձ հարկավոր է մի տաժանակիր աշխատանք: Սա ամենադժվարին աշխատանքն է, որ ես կարողացա գտնել այստեղ իբրև ժամանց՝ միտքս տանջահար անելու և կենտրոնանալու համար: Ինչևէ, սա մի հարուստ լեզու է, և լիովին փոխհատուցվում եմ սովորողի չարչարանքները: Ես ջանք եմ թափում և կշարունակեմ, բայց չեմ կարող երաշխավորել ոչ հաջողություններիս, ոչ էլ ձգտումներիս իրականացման համար: Վանքում կան մի շարք չափազանց հետաքրքիր ձեռագրեր, գրքեր, ինչպես նաև թարգմանություններ այժմ կորած հունարեն բնագրերից, նաև պարսկերենից, ասորերենից և այլն՝ չհաշված իրենց ժողովրդի բնիկ երկերը: Չորս տարի առաջ ֆրանսիացիները հիմնեցին մի հայկական ամբիոն: Երկուշաբթի առավոտյան ներկայացան քսան աշակերտ՝ լի ազնիվ եռանդով, սրտաբաց երիտասարդությամբ և անգուգական աշխատասիրությամբ: Նրանք իրենց ազգի և աշխարհակալ հաղթությանն արժանի քաջությամբ դիմացան մինչև հինգշաբթի: Այնուհետև Այբուբենի քսանվեցերորդ տառի վրա **քսանից տասնհինգի** ուժերը սպառվեցին: Իբրև նրանց արդարացում պիտի ասել որ, դա, հիրավի, Այբուբենի մի վաթերևո է: Եվ սակայն որքա՜ն բնորոշ է այդ մարդկանց (ֆրանսիացիներին – Ա. Բ.) հրաժարումը. այս անգամ էլ նրանք վարվեցին այնպես, ինչպես սովոր եմ վարվել իրենց միապետների հետ՝ հին ոտանավորի պարողիայի պես. «Վերցրո՛ւ մի բան, և տո՛ւր մի բան», «Վերցրո՛ւ արքա, և տո՛ւր արքա»:

3. ԱՎԳՈՒՍՏԱ ԼԻՆ

18 դեկտեմբերի 1816, Վենետիկ

Ամեն առավոտ գնում եմ հայկական վանք (**հայրերի**, փոքրիկս, **ոչ միանձնուհիների**) լեզու սովորելու, նկատի ունեմ **հայոց լեզուն** (քանզի քեզ կարծեմ հայտնի է, որ ես խոսում եմ իտալերեն ավելի սահուն, քան ճիշտ): Եթե դու հարցնես, թե իմ ինչին է պետք այդ հազվագյուտ լեզուն, կարող եմ միայն պատասխանել, որ դա արևելյան է, և դժվարին է, և գրավում է ինձ. սրանք այն պատճառներն են, որ իմ մտածելակերպի դեպքում, որն, ինչպես քեզ հայտնի է, նույնպես Արևելյան է և դժվարին, բավարար եմ:

4. ՊՐՆ ՄՈՒՐԻՆ

24 դեկտեմբերի 1816, Վենետիկ

...Իմ «կյանքի ընթացքը» խիստ կարգավորվում է: Առավոտները մակույկով գնում եմ Ս. Ղազար վանքի հայրերի հետ հայերեն թոթովելու և օգնելու նրանցից մեկին (խոսքը Յ. Ավգերյանի մասին է – Ա. Բ.) անգլերենն ուղղելու անգլերեն-հայերեն քերականության մեջ, որը շուտով հրատարակվելու է:

5. ՊՐՆ ՄԸՐՐԵԻՆ

27 դեկտեմբերի 1816, Վենետիկ

Առավոտյան շարունակում եմ հայերենի պարաֆունդներս, միաժամանակ խրախուսելով և աջակցելով Ս. Ղազար վանքում այժմ տպագրվող անգլերեն-հայերեն քերականության անգլերեն բաժինը կազմելուն:

Հայրերի առաջնորդը եպիսկոպոս է, մի հրաշալի ծերունազարդ մարդ՝ ասուպածն մորուքով³: Հայր Պասկալը⁴ նույնպես զարգացած և բարեպաշտ մարդ է: Նա երկու տարի ապրել է Անգլիայում:

6. ՊՐՆ ՄԸՐՐԵԻՆ

2 հունվարի 1817, Վենետիկ

Մեկ այլ ծրարով ուղարկում եմ Ձեզ մի քանի թերթ անգլերեն-հայերեն քերականությունից՝ հայերի օգտագործման համար, որի հրատարակմանը ես իրոք խթանել և աջակցել եմ: (Այն ինձ վրա նստեց ընդամենը հազար ֆրանկ՝ ֆրանսիական լիվր): Դեռ շարունակում եմ հայոց լեզվի դասերս, ճիշտ է ոչ բոլոր առաջադիմությամբ, բայց և օրեցօր եղածին մի բան ավելացնելով: Հայր Պասկալը իմ աննշան օգնությամբ (նրա իտալերենը անգլերենի եմ թարգմանում) շարունակում է պատրաստել հայերեն-անգլերեն քերականության (անգլիացիների համար) ձեռագիրը, որը նույնպես կտպագրվի, երբ ավարտվի:

Կուզենայինք իմանալ, թե կա՞ն, արդյոք, հայերեն տպատառեր և հայ մամուլ Անգլիայում՝ Օքսֆորդում, Քեմբրիջում կամ մի որևէ այլ տեղ: Դուք, իհարկե՛, տեղյակ եք, որ շատ տարիներ առաջ Վիստոնները Անգլիայում

³ Խոսքը Ազոնց Ստեփանոս Գյուվերի մասին է:

⁴ Նույն ինքը՝ Յ. Ավգերյանն է: Բայրոնը սիրում էր այդպես անվանել նրան:

հրատարակեցին *Հայոց պատմության* բնագիրը՝ իրենց իսկ լատիներեն թարգմանության հետ մեկտեղ: Գոյություն ունե՞ն, արդյոք, այդ տպատառերը և որտե՞ղ են: Խնդրում են հարց ու փորձ արեք Ձեր լավատեղյակ ծանոթներին:

Երբ այս քերականությունը (ես նկատի ունեմ այժմ տպագրվողը) պատրաստ լինի, չե՞ք առարկի, արդյոք, վերցնել քառասուն կամ հիսուն օրինակ, որոնք հինգ կամ տասը գինեայից ավելի չեն արժենա, և դրանց վաճառքով շարժել ուսյալների հետաքրքրությունը: Պատասխանեք՝ այո կամ ոչ, ինչպես կկամենաք: Կարող եմ վստահեցնել, որ նրանք ունեն մի շարք հետաքրքիր գրքեր և ձեռագրեր, գլխավորապես թարգմանություններ այժմ կորած հունարեն բնագրերից: Բացի այդ, նրանք այստեղ ներկայացնում են մի շատ հարգելի և ուսումնասիր միաբանություն, և դեռ Բոնապարտի օրոք ֆրանսիացի մի շարք գիտնականներ մեծ եռանդով ձեռնամուխ են եղել նրանց լեզվի ուսումնասիրությանը:

7. Պ-ՐՆ ՄԸՐՐԵԻՆ

3 մարտի 1817, Վենետիկ

Հայերեն քերականությունը հրատարակվում է, բայց հայերենի դասերս առայժմ ընդհատվել են, մինչև որ գլխացավս մի քիչ մեղմանա:

8. Պ-ՐՆ ՄԸՐՐԵԻՆ

25 մարտի 1817, Վենետիկ

Հայերեն քերականությունը հրատարակվում է, այսինքն, միայն մեկը, մյուսը դեռևս ձեռագիր վիճակում է⁵: Անցյալ ամիս հիվանդությունս խանգարեց ինձ տեղիցս շարժվելու, և ես ոչ մի նոր բան չեմ արել հայերենի հետ կապված:

9. Պ-ՐՆ ՄԸՐՐԵԻՆ

